

9(47925)

Ա-87

ԱՐԻՍՏԱԿԵՍ  
ԼԱՍՏԻՎԵՐՅԻ

9(3)  
Ա-87

← Ա Յ  
Մ Ա Տ Ե  
Ն Ա Գ Ի Ր  
Ն Ե Ր

# ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ

## Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Թարգմանությունը Վ. Ա. Գևորգյանի



ՆԱԽԱՍՏԱԾ

հրատարակությունը

Երևան  
1971

Առաջաբանը և ծանոթագրությունները Գ. Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Խմբագրական կոլեգիա՝

ԱՐԲԱՀԱՄՅԱՆ Ա. Ա., ԱՐԲԱՀԱՄՅԱՆ Ա. Գ., ԴԱՎԹՅԱՆ Մ. Հ.,

ԽԱԶԻԿՅԱՆ Լ. Ս., ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա. Գ.,

ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Կ. Ա., ՄԻՐԻՋԱՆՅԱՆ Լ. Վ., ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վ. Ս.,

ՈՒԲՄԱԶՅԱՆ Հ. Մ.

Խմբագիր՝ Ա. Գ. ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

Аристакес Ластиверци

ИСТОРИЯ

(На армянском языке)  
Издательство «Айастан»  
Ереван, 1971

ԱՌԱՋԱԲԱՆ

Միջնադարյան հայ մատենագրության ականավոր դեմքերից մեկն է Արիստակես Լաստիվերցին, որը հանդես է եկել հայ ժողովրդի պատմության փոթորկահույզ մի ժամանակաշրջանում (11-րդ դար)։

Իններորդ դարի իննսուներկու թվականներին, ինչպես հայտնի է, արաբական խալիֆայության դեմ մղած ծանր ու երկարատև պայքարից հետո վերջապես հայ ժողովրդին հաջողվեց վերականգնել Հայաստանի քաղաքական անկախությունը Բագրատունիների նախարարական տան ղեկավարությամբ։ Հայաստանի քաղաքական անկախությունն ձեռք բերելուց հետո Բագրատունիների կողքին հանդես են գալիս Վասպուրականի, Սյունիքի, Վանանդի և Տաշիր-Ձորագետի անկախ իշխանությունները, որոնք ոչ մի փորձ չեն անում քաղաքականապես միավորվելու ուղղությամբ, ընդհակառակն, ցուցարհրում են կենտրոնախույս ձգտումներ։

Չնայած Բագրատունի զահակյաներին շահողվեց միավորել ողջ Հայաստանը և ստեղծել ավատական կենտրոնացած ուժեղ պետականություն, օտար լծի տապալումը ունեցավ իր դրական նշանակությունը, ստեղծվեցին նպաստավոր պայմաններ երկրի տնտեսական կյանքի աշխուժացման, արտադրողական ուժերի զարգացման համար։ Այդ շրջանի տրևած տևական կյանքում նկատվող ամենից բնորոշ երևույթը ավատական հողատիրության մասնատումը և քաղաքների բուռն զարգացումն է։ Հայաստանի հին քաղաքների (Վան, Դվին, Արճնշ, Վաղարշապատ և այլն) կողքին երևան են գալիս բազմամարդ ու հարուստ անպիտի խոշոր քաղաքներ, ինչպիսիք են Անին, Արծնը, Կարսը և ուրիշներ, որոնք գանձում են տարանցիկ և ներքին առևտրի խոշոր կենտրոններ։ Առևտրի զարգացումն իր հերթին խթանում է արհեստագործության զարգացմանը։ Տեղի է ունենում աշխատանքի հասարակական երկրորդ մեծ բաժանումը՝ արհեստագործությունը բաժանվում է երկրագործությունից ու կենտրոնանում քաղաքներում։ Արհեստավորներն ստեղծում են իրենց համարական կազմակերպությունները։ Հայ և արաբ պատմիչների վկայությամբ, մետաղա-

գործութեան, ասեղնագործութեան, օսկերչութեան, զինագործութեան արտադրանքները արտահանվում էին երկրից դուրս:

Տնտեսական կշիռի զարգացման այս շրջանում, սակայն, հայ շինականի և քաղաքաբնակ ուսմիկի դրուձյունը ոչ միայն չի բարելավվում, այլ գնալով ավելի է վատթարանում: Աշխարհիկ և հոգևոր հայ ավատատերերը սկսում են ձեռք մեկնել ղեպի գյուղական համայնքները՝ գրավելով նրանց վավազույն հողամասերը: Ուշագրավ է, որ հարկերի մի մասը սկսում են դանձել ոչ թե բնամթերքով, այլ՝ դրամով: Տարածվում է վաշխատութիւնը: Այս ամենը ավելի է խորացնում դասակարգերի ներհակութիւնը, որի հետևանքով 9—10-րդ դարերում հանդես է գալիս թոնդրակյան սոցիալական խոշոր շարժումը՝ ցնցելով ավատատիրական հասարակութեան հիմքերը: Փոնդրակեցիները ժխտում էին եկեղեցին ու կրոնական ծիսակատարութիւնները՝ պայքարի սայրերը փաստորեն ուղղելով ընդդէմ ավատատիրական անարդար իրականութեան: Տասնմեկերորդ դարի սկզբում նոր թափով է բռնկվում ճնշված խավերի այդ շարժումը, որի մասնակիցներին նկատմամբ պետութիւնը և եկեղեցին շարունակում են հաշվհարգար տեսնել:

Տնտեսական և հասարակական կյանքում կատարվող լուրջ փոփոխութիւնները հիմք են հանդիսանում հայկական մշակութի վերելքի համար: Նոր պայմաններում գրականութեան, արվեստների և ճարտարապետութեան մեջ մասնակիորեն տեղի է ունենում աշխարհիկացում, ուժեղանում է բնականին նմանվելու ձգտումը, արժեքավորվում է ոչ միայն մարդու հոգեկանը, այլև՝ ֆիզիկականը, ստեղծվում են գրական նոր ժանրեր: Հայ մատենագիրները նոր առաջացող երևույթները դրսևորում և հաստատում են նաև կրոնական-կանոնական գրականութեան առանձին մտքերի նոր ու լուրահատուկ մեկնարանութիւնը: Խոսքը մասնավորելով մատենագրութեան մեջ գրսևորված երևույթներին, պետք է ասել, որ հայ մատենագիրները պեղել են հայ և համաշխարհային մշակութի գանձերը, առաջին հերթին դիմել 5-րդ դարի հայկական պատմագիտագրական արձակին, որի միջոցով էլ՝ հեթանոսական շրջանի հայկական բանահյուսութեանն ու գրականութեանը, ինչպես նաև՝ հին հունական հարուստ գրականութեանը: Այդ ամենից նրանք վերցրել են կենսահաստատը, լուսավորն ու ղեկեցիկը, օգտագործել ժողովրդական բառ ու բանը, արվեստի որոշ կողմեր (անմիջականութիւնը, պարզութիւնը, պատկերավորման արվեստի գյուտերն ու գույները, ռիթմիկան ու հանգավորումը) և միջնադարյան հույակապ ճարտարապետութեանն ու մանրանկարչութեանը զուգընթաց ստեղծել մի լուրահատուկ վերածնութիւն գրականութեան մեջ:

Տասնմեկերորդ դարում բարդ ու հակասական էր Հայաստանի արտաքին քաղաքական վիճակը:

Մինչև Անի-Շիրակյան Բագրատունյաց հզոր թագավոր Գագիկ I-ին (1020) դարակազմի երկրում շուրջ տասնչորս տարի խաղաղութիւն էր տիրում: Սակայն արդեն զգալի էր շունչը քաղաքական այն փոթորիկների, որոնք պետք է անցնեին Բագրատունյաց Հայաստանով: Այս

շրջանում Բյուզանդիան համառորեն ձգտում էր ղեպի արևելք՝ նվաճելու Հայաստանն ու Վրաստանը: Դեռևս 949 թ. կայսրութիւնը գրավեց Կարին քաղաքը, իսկ 966/7 թ. կայսրութեանը միացվեց Տարսուր: Սակայն Վասիլ 2-րդը (976—1025), կնկնով կայսրութեան ներքին և արտաքին աննպաստ վիճակից, ժամանակավորապես հրաժարվեց Հայաստանն ու Վրաստանը գրավելու մտքից, անգամ ապստամբ Վարդ Ավերսոսի (976—979) պարտութեանն օգնելու համար Տալիի Գավիթ Կյուրոպաղատին հանձնեց Խազտ Ասիճը, Բասնը, Հարբը, Ապահունիքը և այլ վայրեր: Բայց նրա այդ քաղաքական խաղը կարճ տևեց: Կարգավորելով կայսրութեան ներքին խեղդիները, նա արշավեց արևելք և 1000 թ., Կիլիկիայի Տարսուր քաղաքում ձմեռելիս, կր լսեց Գավիթ Կյուրոպաղատի մահվան լուրը, շտապեց գրավել Տալի: Կյուրոպաղատը ժողովրդ շունենալու պատճառով, Վասիլ 2-րդի ճնշման տակ Տալի կտակել էր Բյուզանդիային: Փաստորեն կայսրը վարում էր վաղուց ծանոթ մի քաղաքականութիւն՝ նենզ ղիվանագիտութեամբ սկսում է արևելքում երկրներ նվաճել: Նա ստիպում է Բագրատունյաց թուլակամ թագավոր Հովհաննես-Սմբատին (1020—1041) 1021 թ. վերջերին Տրապիզոնում Պետրոս Ա կաթողիկոսի ձեռքով ստորագրել տալու մի կտականամակ, որի համաձայն այս անժողովրդ թագավորի մահից հետո Անին նուձպես անցնելու էր Բյուզանդիային: Ուշագրավ է, որ կայսրն առաջ չէր քաշում հավատարի վերաբերյալ վեճեր՝ ցուցաբերելով հակաքաղկեդոնականներին նկատմամբ հանդուրժողականութիւն, բանի որ սովյալ ժամանակում այդ անհրաժեշտ չէր նվաճողական ծրագիրն իրականացնելու համար: «Բայց այնտեղ (այսինքն՝ Տրապիզոնում—Գ. Մ.) զրվեց հայերի կորստյան կտականամակը»,— սրտի ցավով և խորիմացորեն նկատում է Արիստակես Լաստիվերցին:

Դեպի Հայաստան արշավանքներ են ձեռնարկում նաև այլ վաշխատուն խուձաղուձ ցեղեր: Այսպես, դեռևս 10-րդ դարի 30-ական թվականներին Ատրպատականում իշխանութիւն կազմած ղեյմիկները բազմիցս արշավում են Վասպուրական: Նրանց են միանում նաև թուրքական զանազան հրոսակախմբեր:

1016—1021 թ. արշավանքների և բյուզանդական նվաճողական քաղաքականութեան հետևանքով Սենեբերիմ Արժրունին (1003—1026) Վասպուրականը 1021/22 թ. հանձնում է Վասիլ 2-րդին, փոխարենը ստանում Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքն իր շրջապատով: Անշուշտ, սա խիստ թուլացրեց հայերի համատեղ ջանքերը՝ դիմադրելու օտար նվաճողներին, լուձելու ներքաղաքական բազմազան հարցեր:

Գագիկ I-ինի մահից հետո զահակալական սուր վեճեր են սկսվում նրա երկու որդիների՝ Հովհաննես-Սմբատի և Աշոտի միջև: Հզորանում է կենտոնախույս ուժերի, հատկապես վասալ իշխանութիւնների պայքարը Անի-Շիրակյան Բագրատունյաց, իրականում երկու մասի բաժանված, պետութեան դեմ: Այս ժամանակ աշխուձանում է նաև Դվինում նստած ամիրա Ապու-լ-Ասվարը: Սուր բախում է տեղի ունենում երկրի ներսի երկու համարտ կուսակցութիւնների միջև: Բագրատունյաց պետութեանը հավա-

տարիմ, ազգայնասեր կուսակցությունը ձերունագարդ ու փառապանծ սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ ամեն կերպ պայքարում էր Բյուզանդիայի նվաճողական ձգտումների դեմ, վստահ լինելով, որ Բագրատունյաց պետությունը ունի կենսունակ ուժեր՝ կարգավորելու երկրի ներքին և արտաքին բազմաբարդ խնդիրները: Նրանց շանքերով էր, որ Անիի Բագրատունյաց գահը բարձրացավ դեռևս պատանի Գագիկ Զ-րդը (1042—45), այդ նրանք էին, որ համառորեն ցանկանում էին ետ պահել երիտասարդ թագավորին Կ. Պոլիս գնալուց, որպեսզի չընկնի խարդախ Կոստանդին Մոնոմախի (1042—1055) ծուղակը: Վերջապես, այդ նրանք էին, որ գլխավորում էին անեցիների պայքարը ընդդեմ բյուզանդական լեզոնների: Սկզբնապես այս թեկն էր հարում ժամանակի մեծ մտածող և հզոր իշխան Գրիգոր Պահլավունին, իսկ հետո, ընկնելով հայրենադավների ցանցը, առանձնապես խարվելով կաթողիկոս Պետրոսից, աստիճանաբար հեռացավ նրանցից, ունենալով որոշ երերումներ, սակայն երբեք չդավաճանեց իր ժողովրդին ու հայրենիքին:

Բագրատունյաց թագավորությանը հակամարտ, հռենամու կուսակցությունը գլխավորում էին իշխան Վեստ Սարգիսը և կաթողիկոս Պետրոսը, որին հետագայում անվանեցին Գետադարձ Այս ուժերը նախ ցանկանում էին Բյուզանդիայի օգնությամբ գահ բարձրացնել Վեստ Սարգիսին: Տեսնելով զրա անհնարինությունը, նրանք գերադասեցին Պետրոս Գետադարձի ձեռքով Անիի հանձնել Բյուզանդիային՝ հույս ունենալով ձեռք բերել մեծ հարստություններ, Բյուզանդիայի օգնությամբ ճնշել թուրքակալյան շարժումը և ետ վանել հետզհետե մոտեցող Թուրք-սելջուկյան վտանգը: Հետագրքի է նշել, որ նրանք երկիրը հանձնելով Բյուզանդիային, քաղկեդոնություն չէին ընդունում: Հենց ինքը՝ Պետրոս կաթողիկոսը պայքարում էր քաղկեդոնության դեմ: Որ իսկապես նրանք ունեին իրենց յուրահատուկ ծրագիրը, ակնհայտորեն ցույց է տալիս այս կարևոր փաստը: Դեպքերի ողբերգական ընթացքը շատ շուտ փ հայտ բերեց նրանց կատարած մեծ սխալը, դրանում համոզվեցին անգամ իրենք՝ հայրենադավները: Վեստ Սարգիսը հեռացավ քաղաքական ասպարեզից, իսկ կաթողիկոսը զղջումով անցկացրեց իր կյանքի վերջին տարիները: Այդ ժամանակ իրարդարձությունները զարգանում էին այնպես, որ հազով կարողանար դրանք այլ ընթացքի մեջ դնել Գագիկ Զ-րդը: Նա խաթուրությամբ կանչվում է Կ. Պոլիս, կայսր Կոստանդին Մոնոմախը խարդախությամբ և բռնի ուժով 1045 թ. գրավում է Անին:

Ահա այս դառնադի ժամանակաշրջանում (1047/48) սկսվում են Թուրք-սելջուկյան ավերիչ արշավանքները: Թուրք-սելջուկները այս և հետագա արշավանքների ընթացքում քարուքանդ են անում երկիրը, կողոպտում կուտակված հարստությունը, սրի են քաշում խաղաղ բնակչությանը՝ հայոց աշխարհը վերածելով իսկական դժոխքի: Մասնավորապես 1064 թ. արյունարբու Ալի-Արսլանը (1063—1072) գրավում է գեղեցկատես ու հարուստ Անին, դաժանորեն մորթոտում բնակչության մի զգալի մասին, կողոպտում, ավերում, քանդում ու հրդեհում:

Հայ ժողովուրդը օրհասական պայքարի է ելնում օտար զավթիչների դեմ, երբեմն զենքի ուժով ետ է վանում նրանց, սակայն, շունենալով միասնական պետություն և խոշոր զորքանակ, չի կարողանում երկրից դուրս հանել թշնամուն: Թուրք-սելջուկներին անզոր էր դիմադրելու ներքին պայքարից բզկտված և անհետատես քաղաքականությամբ իր իսկ սահմանաչին պետությունները քայքայած կամ վերացրած բյուզանդական երրեմնի հզոր կայսրությունը: Գործը հասնում է այնտեղ, որ Բյուզանդիայի Ռեմանոս 4-րդ Գիոզենես կայսրը (1068—71) 1071 թ. Մանազկերտի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտվում է Ալի-Արսլանից, գերեվարվում: Ճիշտ է, Ալի-Արսլանին փոխարինած սուլթան Մելիքշահը (1072—92) վարում է համեմատաբար մեղմ քաղաքականություն, սակայն հայոց աշխարհը այնպիսի խորտակիչ հարված էր ստացել, որ երկար ժամանակ անզոր էր սեփական երկրում համախմբելու իր ուժերը: Սկսվում է բնակչության մասսայական արտագաղթ աշխարհի տարբեր կողմերը, այդ թվում նաև Կիլիկիա: Այստեղ 1080 թ. Բյուզանդիայի դեմ ապստամբելով, Իսգիկ 2-րդի մերձավորներից մեկը՝ Ռուբեն իշխանը, հիմնում է հայկական մի իշխանություն, որը հետագայում վերածնում է Կիլիկյան հայկական թագավորության՝ զոյատենելով շուրջ 300 տարի:

\* \* \*

Ահա այս փոթորկալից դարաշրջանում է ապրել ու ստեղծագործել Արիստակես Լաստիվերցին: Ցավոք, նրա մասին կենսագրական փաստերը կցկտուր են: Ձեռագրական տեղեկություններից երևում է, որ Լաստիվերցին 11-րդ դարի աշբի ընկնող մատենագիրներից մեկն է եղել: Նա այդ դարի միակ ականատես պատմիչն է, որին հատկապես մեծ ճանաչում է բերել իր գրած նշանավոր Պատմությունը:

Դեռևս Մ. Չամչյանը, հենվելով հենց իր՝ Արիստակես Լաստիվերցու տեղեկությունների վրա, գրել է, որ նա Կարին գավառի Արծն քաղաքի մոտակա բնակավայրերից է, Լաստիվարդ կամ Լաստիվերտ ավանից: Սակայն նոր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արիստակեսի ծննդավայրը կոչվել է ոչ թե Լաստիվարդ կամ Լաստիվերտ, այլ՝ Լաստիվեր, այստեղից էլ մեր մատենագրի վերագրի անվանումը՝ Լաստիվերցի: Իսկ թե որտեղ է Լաստիվերը, մեզ անհայտ է: Ինչ վերաբերում է Արծնի մասին նրա ասածին՝ «ամբ քաղաքը» («քաղաքս մեր»), այն չի կարող ապացույց լինել, որ Լաստիվերը անպայման Արծնին մոտ կամ կից է եղել:

Մատենագիրը հարածուփ ու շարժուն կանք է ունեցել. իր Պատմությունում մեկ տեղում ենք նրան Մանանազի գավառում, Սմբատի լեռների վրա, մեկ՝ Արծնում կամ այլուր: Նա տեղեկացնում է, որ ինքը ականատես է եղել Փոքր Քախալում 1022 թ. Վասիլ 2-րդի դեմ Մոսվիդի (իմա՝ Նիկեիտր Փոկասի) կազմակերպած ապստամբությանը: Միաժամանակ հայտնի է, որ Պատմությունում նկարագրված վերջին փաստը՝ Ալի-Արսլանը:

1 Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1785, էջ 988:

լանի մահը, տեղի է ունեցել 1072 թ., հետևաբար, Պատմությունը ավարտելիս (1072—79)<sup>1</sup> նա պետք է պատկանելի տարիք ունեցած լինի Այնպես որ կարելի է նրա ծնունդը մոտավորապես դնել 1002 թ., իսկ մահը՝ 1080 թ.: Իսկ թե որտեղ է ուսանել, ում մոտ, հայտնի չէ: Մի բան պարզ է, որ նա կրթված անձնավորություն է եղել, առանձնապես խորացել է աստվածաբանության և ճարտասանական արվեստի մեջ, սովորել է հունարեն, հավանաբար՝ նաև այլ լեզուներ, լավատեղյակ է եղել հայոց մատենագրությունը, իմացել է Հայաստանի և Բյուզանդիայի պատմությունները: Լաստիվերցին մինչև Պատմության շարագրելը, անշուշտ, ունեցել է գրական աշխատանքի զգալի փորձ: Ձեռագրերում նրա հեղինակությունը կան մեկնություններ և ճառեր: Կան գործեր, որոնք թյուրիմացաբար վերագրվել են հետագայում ապրած այլ հեղինակների, օրինակ՝ նրա «Բ նոր կիրակեն» գեղեցիկ ճառը համարվել է 18—19-րդ դարերում ապրած ինչորև Պրիստական վարդապետի գործ<sup>2</sup>:

Նրա բոլոր աշխատությունների մեջ, անշուշտ, ամենաարժեքավորը սույն Պատմությունն է, որը վերնագրված է այսպես՝ «Պատմություն Արիստակիսի Լաստիվերցու վարդապետի վասն անցյեցն անցելոց ի յայլասեռն ազգաց որք շուրջ զմեզ են»: Պատմությունը մեզ է հասել գրեթե լազճատված, տասնյակ ձեռագրերով, որոնցից ամենահինը ընդօրինակված է 13-րդ դարում, այն այժմ գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում (N 2865):

Միջնադարի հայ մատենագիրներից Մատթեոս Ուռնայեցին (XII դ.), Մխիթար Անեցին (XII դ.) Կիրակոս Գանձակեցին (XIII դ.), Մխիթար Այրիվանեցին (XIII դ.) և Առաքել Գավրիժեցին (XVII դ.) ծանոթ լինելով Լաստիվերցու Պատմությանը, այն համարել են ճշտագատում և արժեքավոր գործ: Միջնադարում առանձնապես բարձր է եղել սույն Պատմության հմայքը նաև գեղեցիկ լեզվի, քնարական հույզի և պատկերավոր գրելաձևի համար: Լաստիվերցու երկը իր պատշաճ արժեքավորումն է ստանում նաև նոր ժամանակներում: Առաջինը նշանավոր պատմաբան Մ. Չամչյանն էր, որ իր «Պատմություն Հայոց»-ում լայնորեն օգտագործում է Լաստիվերցու, այն ժամանակ դեռևս անտիպ, Պատմության փաստական հարուստ նյութը՝ բազմաժամար բերելով նրանից ողբական ընդարձակ հատվածներ, Վենետիկի Մխիթարյաններից Ղուկաս Ինճիճյանը պատմաաշխարհագրական իր կարևոր աշխատություններում բազմաթիվ փաստեր է բազել Լաստիվերցու Պատմությունից: Այս երկի բառական հարստությունը մանրամասնորեն օգտագործված է «Նոր բառգիրք Հայկազնան լեզուի» անդուզական բառարանում: Պատմիչին ու նրա զուգու-գործոցը բարձր է գնահատել նաև մեծատաղանդ Ղևոնդ Այրիշանը. «Եղական կամ իսկատիպ գրել մ'է Արիստակիս»:

<sup>1</sup> Ամենայն հավանականությամբ Արիստակիսն իր գիրքն ավարտել է մինչև Գագիկ 2-րդի մահը (1079), այլապես այդ մասին կհիշատակեր:

<sup>2</sup> Տե՛ս Երևանի Հայկ. մանկ. ինստիտուտի «Գիտական աշխատություններ», Երևան, 1968, N 1, էջ 377—387:

տակիս,— գրել է նա,— հստակ ու վալիուշ լեզուով գրող, քիչ կամ ոչ մանրամասն պատմող, այլ շատ լացող և լացքեղ սրտազգաց հայրենասեր մը:» Նոր ժամանակներում պատմաբանները, բանասերները, տնտեսագետները, փիլիսոփաները, իրավունքի պատմության մասնագետները և ուրիշներ 11-րդ դարի որևէ խնդրի անդրադարձնալիս միշտ դիմել են Լաստիվերցու Պատմությանը: Խիստ ուշագրավ է մեծ հայագետ Մանուկ Աբեղյանի բարձր գնահատականը Լաստիվերցու գրքի հորդաբուխ հայրենասիրության, աշխարհասիրության, դրսևորած Եւր ոգու, գրելաձևի վերաբերյալ:

Այս համբողջանոր հետաքրքրությունը մատենագրի ու նրա Պատմության նկատմամբ պատահական չէ: Լաստիվերցին որպես պատմիչ ճշտագատում է, նրա հաղորդած իրական տվյալներն ու պատմական տեղեկությունները աներկբալի ինչ. դրանք հիմնականում հաստատում են հայ և օտար այլ աղբյուրներով: Նրա երկը, չնայած իր փոքր ծավալին, բովանդակությամբ խորն է ու բազմազան: Այնտեղ ուշագրավ փաստեր կան հայրուզանդական, որոշ չափով՝ հայ-վրացական հարաբերությունների վերաբերյալ: Նա առաջին հայ մատենագիրն է, որ պատմում է թուրք-սելջուկների ավերիչ արշավանքների մասին, կարևոր տեղեկություններ է հաղորդում Բագրատունյաց Հայաստանի ներքին կյանքի, տնտեսական կացության, այդ թվում՝ թոնդրակյան աղանդավորական-սոցիալական շարժման վերաբերյալ: 1000—1072 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանից ընդամենը հինգ տարվա (1000—1004) պատմական զեպքեր է շարագրել Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկը): Այս ժամանակի հայոց պատմությանը մասամբ անդրադարձել են Մատթեոս Ուռնայեցին, Սամվել Անեցին, Վարդան Արևելյան, Ամբատ Սպարապետը, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը և ուրիշներ, սակայն նրանցից ոչ մեկը ժամանակակից չէ այդ պատմական իրադարձություններին: Ինչ վերաբերում է Հովհաննես Տարոնեցու և Հովհաննես Իմաստասերի Պատմություններին, ապա դրանք (հավանաբար և այլ հեղինակների գործեր), գծրախտաբար, մեզ չեն հասել: Հարուստ չէ նաև այս ժամանակահատվածի՝ հատկապես հայ ժողովրդին վերաբերող օտարագրի պատմագրությունը: Այստեղից հեշտ է եզրակացնել, թե որքան անգնահատելի սկզբնաղբյուր է Լաստիվերցու Պատմությունը: Ինքեին հետաքրքիր է հենց դարաշրջանը, որտեղ կատարված իրադարձությունները բազմաբարդ են և առավել անհասկանալի կդառնային, եթե մեզ չհասներ այս գեղեցիկ մատչանը:

Լաստիվերցին, անշուշտ, ավատատիրական հասարակության գաղափարախոս է և հայոց ուղղափառ եկեղեցու ջերմ պաշտպան: Սակայն նա զեմ է այդ հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում դրսևորված ժայրահեղություններին: Մատենագիրը կրթով քննադատում է աղքատներին և որբերին գերաշահագործող մեծատոններին, անհոգի վաշխառուներին՝ նրանց

1 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 2-րդ, Երևան, 1946, էջ 32—43, 580:

արարքը համարելով անարգար և հակամարդկային: Ահավասիկ, ցուցադրել ցանկանալով Արծն քաղաքի կոտորածի պատճառները, նա զայրույթով գրել է: «...արդարություն օրենքը փոխվեց անիրավություն, արծաթափորությունը ավելի հարգի դարձավ... այն ժամանակ ամեն կարգի համեստությունը խոտորվելով՝ վերածվեց անկարգություն: Սրա իշխանները դարձան զոդերի զոդակից, վրիժառու և արծաթի ծառաներ, դատավորները՝ կաշառակեր և կաշառքի համար արդարությունը խորհրդակցեց, ոչ որբերի իրավունքն էին պաշտպանում, ոչ ալյուրների դատը հանձն առնում: Վաշխների ու տոկոսների համար օրենքներ հաստատվեցին, իսկ ցորենի փոխաբերության համար բազմապատկություն սահմանվեց... Ով խաբուս էր իր ընկերոջը, պարծենում էր, որ խելացի է, իսկ ով հափշտակում էր, ասում էր «ես հողը եմ»: Դրացի աղքատների տներն ու նրանց արտերի սահմանները հարուստները հափշտակում էին...»:

Պատմիչը դեմ է կենտրոնախույս ուժերի գործունեությանը, պաշտպանում է միասնությունը գաղափարը, որն այն ժամանակաշրջանում միանգամայն դրական էր: Զուրկանալով մեկհնաս, նա Պատմությունը գրել է առանց կողմնակի միջամտության, որտեղ դարի պատմական դեպքերը ներկայացրել է Հայաստանի ինքնուրույն քաղաքականության կողմնակից հայրենասեր կուսակցության տեսանկյունից: Այդ պատճառով էլ նա ատելություն է ցցված բյուզանդական նվաճողական ծրագրերի դեմ, քննադատել է կայսրության ներսում գահակալական սուր վեճերի հետևանքով տիրոջ խառնակությունները և կայսրության անկարողությունը՝ ետ մղելու թուրք-սելջուկների խորտակիչ արշավանքները: Նա կտրականապես դեմ է հայրենի հողերը բյուզանդիային հանձնելուն՝ լավ հասկանալով դրա կործանարար հետևանքները:

Լաստիվերցին իր երկը բաժանել է քսանհինգ մասերի՝ վերջինց ավելացնելով չորսհատուկ մի հիշատակարան: Առաջին գլուխը սկսվում է քանաստեղծական նախերգով, որտեղ հեղինակը ամփոփ ձևով հաղորդում է իր գրելիք նյութի մասին՝ զրսևորելով Պատմության մի շարք առանձնահատկությունները՝ քնարական հագեցվածությունը, ընդգրկած հարցերի լայնությունը ու խորությունը, գաղափարական որոշակի նպատակադրվածությունը, լեզվի ու ոճի պարզությունը: Այստեղ, և բուն շարադրանքում, գրսևորվել է հեղինակի հուզաթաթափ հայրենասիրությունը: Ամենուր իշխում է այս գորեղ զգացումը, ամեն ինչ ենթարկված է նրան և շափվում, գնահատվում է նրանով: Բանաստեղծական հոգու տեր մատենագիրը որդիական անկեղծ նվիրումով սիրել է հայրենի քաղաքները, գյուղերն ու ավանները, զովասուն լեռները, հասուն արտերի ծփանքը, իր ժողովրդի ուրախ երգերը: Ժսկ երբ նկարագրում է օտար հեծերի ավազակաբարո գործողությունները, վիշտ ու հառաչանք է զուրս փռում նրա բերանից: «Երբ որ հիշում եմ ևեթրձայանն ու Հանձնեթը և բոլորն, ինչ որ այնտեղ կատարվեց, արտասուքներից շունչս է կտրվում, սիրտս փղձկում է, միտքս՝ ցնորվում, ձեռքս՝ շողում, շարադրանքս չեմ կարողանում էլ առաջ տանել»:

Լաստիվերցին լացող, հոռետես պատմիչ չէ, ինչպես կարծել են ոմանք:

Պեղհակառակն, նա երբեք հուսահատություն չի քարոզել իր ժողովրդին: Շատ բան կրոնով բացատրող պատմիչը հողեկան փոթորիկների պահերին, երբ նկարագրում է ժողովրդի տառապանքները, բարեշեն քնակավայրերի ավերումը, մի շարք անգամ պոռկվում է՝ կշտամբանքի խոսքեր ուղղելով աստծուն, դիտելով հայոց զխին եկածը, ակամա զարմանում է աստծու համբերության ու ֆոլովության մրս: Սակայն վարդապետ մատենագիրը ավելի շատ զղացել է աստծու հող ուժը ու խոնարհված՝ իր սիրասուն հայրենիքի համար աղաչանք-աղոթքներ է մղմնջացել:

Լաստիվերցին սիրով հիշատակել է թշնամիների դեմ տարած բազմաթիվ հաղթանակներ, գովերգել քաջերին: Օրինակ՝ նկարագրելով արլունարքու, մարգարտոջ սուլթան Տուղրիլի ավերածությունները ասիակաների կրկրում, բարձրացնում է քաջության մի շարք գործեր: Ուշագրության է արժանի նաև Մանազկերտի հերոսական պաշտպանության նկարագրերը: Նա հաճախ ծանր խոսքեր է ասում վասիկոսների, հեշտությանը թշնամուն անձնատուր եղողների հասցեին և գտնում, որ պատերազմի օրենքն է՝ կրոնի, թեկուզև մարտում նահատակվել հանուն հայրենիքի ազատության և անկախության: Դրանով էլ նա ետրենացու, Եղիշի պես փառաբանում է սուրը, որը տվյալ դեպքում գործի է դրված արդար նպատակով:

Պատմական անձերի հետաքրքիր պատկերամրհ է այս երկը, որոնց զնահատման համար քիչ թե շատ խոսք է ասել մատենագիրը: Նա ատել է օտար թշնամիներին, քննադատել հայրենադավներին, աղ թվում բացահայտորեն՝ Վեստ Սարգսին, Կիրակոս քահանային, զուսայ՝ Պետրոս կաթողիկոսին, գովերգել հայրենիքը և հայոց ուղղափառ եկեղեցուն նվիրվածներին՝ թագավոր Գագիկ 1-ինին, նրա որդի Աշոտին, սպարապետ Վահրամ Պահլավունուն, Գագիկ 2-րդին, Մանազկերտի իշխան Վասիլին, Քաթուղի գորավարին, կաթողիկոսներին՝ Սարգիս Սևանցուն, Խաչիկ Բ-ին: Հայտնի է, որ Գրիգոր Նարեկացին, Ասողիկը, Գրիգոր Մազիստրոսը, Հովհաննես Կոզեռնր խիստ մեծարել են Վասիլ 2-րդին: Փաստորեն Լաստիվերցին հեղքել է այդ լուսապսակը՝ հաճախ սուր քննադատելով Վասիլ 2-րդի անմարդկային, հայակործան քաղաքականությունը և դաժանությունները ալլ ժողովուրդների նկատմամբ: Դեմ լինելով կենտրոնախույս ուժերին և պաշտպանելով միասնությունը, նա քննադատում է Վասիլ 2-րդի դեմ ապստամբողներին: Մեծարում է այս կայսրի կենտրոնական պետության շահերից ելնող քաղաքականությունը, զորքի ամրապնդումը, կրոնական վեճեր շարժարձեցը, որպեսզի ավելի կոնկրետ ու սուր քննադատի ալլ քաղաքականությունը վարող բյուզանդական հաջորդ կայսրերին:

Ուշագրավ է Լաստիվերցու վերաբերմունքը ժամանակի նշանավոր անձնավորություններից մեկի՝ Գրիգոր Մազիստրոսի նկատմամբ: Պատմիչը իր քաղաքական առանձին հայացքներով հաճախ հակառակ է նրան, օրինակ՝ Մազիստրոսի բյուզանդասիրության խիստ զրսևորման, հայրենագավ Պետրոսին պաշտպանելու և ալլ հարցերում, սակայն հայրենիքի դա-

վաճանութիւն չի վերագրել նրան՝ իսկապէս հայրենասեր, մեծ գիտնական, բանաստեղծ Գրիգոր Պահլավունուն:

Ըստ Լաստիվերցու, հայոց աշխարհի դժբախտութիւնն պատճառներէջ մեկը սոցիալական անհավասարութիւնն է, իսկ մյուսը կապոված էր զազափարականի հետ: Այս հարցերը քննելիս հայրենասեր պատմիչը նաև խիստ աստվածաբան է, հայկական եկեղեցու իրավունքների եռանդուն պաշտպան: Այս հոդի վրա էլ նա սուր քննադատել է Թոնդրակյան շարժումը, այն դիտելով աստծու և եկեղեցու դեմ ուղղված աններելի հանցագործութիւն: Այս ամենով հանդերձ նա անդնահատելի փաստեր է հաղորդել Թոնդրակեցիների, նրանց սկզբունքների և գործելակերպի վերաբերյալ:

Հայրենասեր մատենագիրը ատելութիւն բորբոքելով օտար թշնամիների և հայրենազավ անհատների նկատմամբ, միաժամանակ հարգանքով է խոսել զրացի խաղաղասեր ժողովուրդների մասին: Ծրինակ՝ իր գրքի տարբեր էջերում սրտի խոսքեր է ասել հայերի պես օտարներից տառապող փոխազ և վրաց ժողովուրդների հասցեին: Ուշագրավ է, որ նա իր ողբական պատմութիւնը սկսում է Վասիլ 2-րդի՝ Ափխազիա և Վրաստան կատարած արշավանքներից:

Լաստիվերցին իր երկը հիմնականում շարադրել է զեղարվեստորեն, հայոց աշխարհին իջած լուրաբանչլուր հարված անցկացնելով իր զգայուն սրտի միջով և հորդարուխ քնարականութիւնով, զգայացունց պատկերներով, հակադրութիւնով, ճարտասանական դիմումներով, զրական շփազանցութիւնով, բազմակի համեմատութիւններով և անձնավորումով է ներկայացրել դեպքերը: Մատենագիրը ժամանակագիրների պես փաստերը չի նշել ու անտարբեր անցել, այլ զրանք խոսեցրել էլ նա փաստական նյութին հյուսել է իր խոհը, մտածումը, նուրբ ու սրտաճուղ ողբերին շաղված հայրենասիրական ոգորումները: Այս ամենը նրա Պատմութիւնը զարժրել է նաև զրական-զեղարվեստական կարերո հուշարձան: Առանց Լաստիվերցու գրքի ոչ միայն հնարավոր չէր լինի մեր հին զրականութիւնն պատմութիւն մեջ հավաստի խոսք ասել 11-րդ դարի արձակի մասին, այլև կկտրվեր հայ պատմագեղարվեստական արձակի զարգացման շղթան: Ահա թե ինչու նրա ստեղծագործութիւնը պետք է հավասարապես դնահատվի ոչ միայն պատմագրութիւն, այլև բանասիրութիւն կողմից:

Վաղ շրջանի պատմական դեպքերը շարադրելիս Լաստիվերցին մասամբ օգտվել է Ստեփանոս Տարսնեցու «Տիեզերական պատմութիւն» համապատասխան հատվածներից: Բյուզանդական կայսրերի մասին գրելիս նա, անկասկած, ձեռքի տակ ունեցել է զբավոր աղբյուր, իսկ մնացածը շարադրել է իբրև ականջալուր և ականատես հեղինակ: Ողբական հատվածները հյուսելիս Լաստիվերցին ազդվել է Երեմիայի հուշակվոր ողբից, ազդվել է նաև Մովսէս Խորենացուց, Եղիշեից, Հովհաննէս Մանդակունեց, Դավթակ Քերթոզից, Գրիգոր Նարեկացուց և ուրիշներից: Մատենագիրը

ստեղծագործարար վերցրել է իր նախորդների ձեռք բերածը և առաջ ընթացիլ: Խոսքնելով արձակ ողբի քնարական կողմը, այն ավելի է մոտեցրել շափածոյին: Նույնիսկ առանձին հատվածներ շարադրել է թանգես, որ տողատելով, հեշտութիւնով կարելի է վերածել շափածոյի:

Ողբը դարձնելով միջոց ընթերցողների վրա ավելի խորը ազդելու համար, Լաստիվերցին զիտակցարար հայ իրականութիւն մեջ առաջին անգամ լայնորեն գործ է ածում հակադրութիւն կողմած ճարտասանական ձևը: Կողք-կողքի է դնում Հայաստանի ոչ հեռավոր անցյալի փառքը, շրեղ իրականութիւնը, երբեմն հասնելով շափազանցութիւն, և առօրյա թշվառ վիճակը ու ողբում: Այդ ողբը, ինչպէս ճիշտ նկատել է Մ. Արեղյանը, քնում է նրա աշխարհասիրութիւնից և հայրենասիրութիւնից: Արիստակեսը իր քնատուր տաղանդի շնորհիվ կարողացել է 11-րդ դարում վերականգնել 5-րդ դարի հայ հանճարեղ պատմիչների ստեղծած պատմագեղարվեստական արձակի հիմնական առանձնատկութիւնները թե՛ առաջադեմ զազափարների և թե՛ արվեստի առումով՝ մեղ համար նրանց նման դառնալով թանկ ու հարազատ:

Արիստակէս Լաստիվերցու Պատմութիւնը մեծ ազդեցութիւն է թողել Հետագա դարերի բազմաթիվ հայ հեղինակների վրա:

\* \* \*

Լաստիվերցու Պատմութիւնը 1844 թ. 18—19-րդ դարերի ձեռագիր քնդօրինակութիւնների հիման վրա բարեխղճորեն տպագրել են Վենետիկի Մխիթարյանները: Այդ բնագիրը վերահրատարակվել է երկու անգամ՝ 1901 թ. Վենետիկում և 1912 թ. Թբիլիսիում: Այն, առանց ողբական հատվածների, ֆրանսերեն է թարգմանել է. Պրյուդոնը և 1864 թ. հրատարակել Փարիզում: Դրանից առաջ, 1859 թ., առանձին զուլաներ ֆրանսերեն է թարգմանել է. Դյուլորինը, իսկ 1898 թ. երկու զուլաներ (ԺԳ, ԻԲ) անգլերեն է թարգմանել է. Դյուլորինը, իսկ 1893 թ. Մինաս քահանա Տեր-Պետրոսյանցը առաջին անգամ աշխարհաբար է թարգմանում Լաստիվերցու երկը (Ալեքսանդրապոլ): Անշուշտ, այդ թարգմանութիւնը, թերութիւններով (հակառակագրապոլ): Անշուշտ, այդ թարգմանութիւնը, թերութիւններով հանդերձ, ունի իր զնահատելի արժանիքները: 1963 թ. Կ. Յուզբաշյանը Մաշտոցի անվան մատենադարանի ինը (նաև մասնակիորեն՝ լեհերգրագ-



յան մեկ) գրչագրերի հիման վրա նրեանում հրատարակել է Պատմութեան  
գիտական-համեմատական քննադիրը, իսկ 1968 թ. Մոսկվայում լույս է  
ընծայել նույնի ուսանողն արժեքավոր թարգմանությունը:

Պատմութեան աշխարհաբար ներկա թարգմանությունը կատարված է  
վենետիկյան 1844 թ. և հրեանյան 1968 թ. հրատարակությունների հիման  
վրա: Առանձին հատվածներ ճշգրտվել են ձեռագրերի համեմատութեամբ,  
տեղ-տեղ բնագրին տրվել է նոր մեկնաբանում՝ հաշվի առնելով երբեք  
ուսումնասիրությունները:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԼԱՍՏԻՎԵՐՑՈՒ՝

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

մեր շրջապատի այլացեղ ազգերից մեզ  
հասած արհավիրքների մասին

Ք լ ո խ Ա

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԱՏԱՐՎԱՅ ԱՆՅՈՒԿԱՐՁԵՐԸ

Պարշարանքների օրեր մեզ հասան,

Մեզ նեղութիւններ գտան անպատում,  
Որովհետեւ մեր մեղքերի չափը լցվելով՝ թափվեց,  
Եվ վեր բարձրացավ աղաղակը մեր Աստծու առաջ.  
Ամեն մարդ եղծեց իր ճանապարհը,  
Ու լցվեց երկիրն անօրինութեամբ.  
Արդարութիւնը սաստիկ նվազեց,  
Անառակութիւնն աճեց-բազմացավ.  
Ժողովուրդը և քահանան դրժեցին Աստծուն:  
Այդ պատճառով էլ օտար ազգերը  
Օտարացրին մեզ մեր բնաշխարհից.  
Մեր փառքը փոխվեց ապականութեան.  
Շունչ իսկ չմնաց մեր մեջ, և կորանք հուսալքումից.  
Զորացավ մահը, լափեց անհագուրդ,  
Գերեզմաններն էլ սքալական՝ ասել չուզեցին երբեք.  
Բռլորը մոլի սանձարձակութեամբ ընկան մեզ վրա.  
Մեր հոգեվարքի օրերին նույնիսկ չբավարարվեց  
Ժամանակն՝ արդեն անցյալում կրած պատուհասներով:  
Հաշորդներն այսպես հաշորդողներին փոխարինեցին,  
Եվ կյանք արծարծող շունչը նվազեց.  
Երկրի հաստատուն բնակիչները  
Վտարանդիներ դարձան ստամբակ օտարի ձեռքով  
Եվ պանդխտեցին պանդխտութեան մեջ նորից ու նորից<sup>3</sup>.

Միրելիներէց բաժանվածները,  
 Եթէ սրահար շկոտորվեցին,  
 Տիրուցան եղան մոլորակ կոչված աստղերի նման<sup>1</sup>։  
 Օրավուր մեր դեմ բոլոր կողմերից  
 Հառնեցին անգույն որ պատերազմներ.  
 Արեւելքից սուր, արևմուտքից մահ,  
 Հյուսիսից սպանդ և հարավից հուր.  
 Ուրախութիւնը երկրից վերացավ.  
 Ամենուր լոցեց ձայնը քնարի,  
 Լոցեց թմբուկի բոմբոլունը զվարթ,  
 Բարձրացան ողբի ազաղակները։

Այս մասին այսքան։ Բայց ժամանակն է, որ մենք անցնենք այս պատմութիւնը և սկսենք հենց այստեղից, որպեսզի պարզ ու հասկանալի դառնան ասածներս<sup>5</sup>։

Դավիթ Կյուրապաղատը<sup>6</sup> հզոր, աշխարհաշեն, առատաձեռն ու ազքատասեր մարդ էր, իսկապես խաղաղութիւն սահմանող, քանի որ նրա օրերում, ինչպես մարգարեն է ասում, ամեն մարդ հանգստանում էր իր որթի ու թզնուներքո. իսկ նրա մահվանից հետո Հոռոմոց ինքնակալ Վասիլ թագավորը իր գահակալութիւն քսանհինգերորդ տարում<sup>7</sup> շարժվեց ծանր զենքով ու շրջանցելով շատ օթեաններ՝ եկավ հասավ Եկեղյաց գավառը<sup>8</sup>։ Տայքի<sup>9</sup> ազատագունդ զորքը զիմավորեց նրան և առատատուր պարզեցնելով նրանից մեծարված, յուրաքանչյուրն ըստ իր արժանիքի հասնելով իշխանութիւն, փառքի ու պատվի՝ ցնծալով մեծապես ուրախացավ։ Բայց նրանց նկատմամբ կատարվեց Դավիթ հոգեբոգոյի մարգարեութիւնը, թե՛ «Առավոտյան կանաչի պես կրուսեն, առավոտյան կանաչի պես կծաղկեն ու կպայծառանան, երեկոյան կթառամեն, կչորանան ու կընկնեն»՝ թագավորն անցնելով Աղորի աշխարհը՝ Հավաճի<sup>10</sup> կոչված բերդի մոտ զիշերեց։ Զգիտեմ ինչ պատճառով՝ Ընտելը կոչված արևմտյան զորքը<sup>11</sup> և ազատագունդը իրար հետ ընդհարվեցին. այդտեղ ազատների ամենապատվաւորներից երեսուն մարդ մեռավ։ Եվ այս ոչ թե անտեղի, իզուր պատահեց նրանց, այլ այն պատճառով, որ նրանք ավագ

հինգշաբթի օրը մահաթույն խառնելով պատարազի հաղորդութիւնը՝ իմեցրին երանելի անձին ու խեղդամահ անելով նրան՝ զրկեցին կյանքից, նրանից ձանձրացած և թագավորից սպասվող խոստումների ակնկալիքով<sup>12</sup>. այդ պատճառով էլ՝ Աստծու օրդար դատաստանը ըստ նրանց գործի հատուցեց նրանց։ Այն օրից մինչև այժմ երբեք չհաշողվեց ազատ դուրս գալ Տայքից, թեպետ այդ աշխարհը երկարաձգեց իր գոյութիւնը, բայց նրանք վաղահաս մահով զրկվելով կյանքից վերջացան։ Այդպիսիներին կշտամբելով ու հանդիմանելով մեծ Եսային ասում է. «Քանի որ այդ ժողովուրդը չհավանեց Սելովմի հանդարտահոս ջրերը, այլ կամեցավ իրեն թագավոր դարձնել Տայքի որդի Հոսսիմին, այդ պատճառով էլ տերն այսպես է ասում. «Ես կբերեմ ձեզ վրա հզոր ու հորդահոս գետի ջրերը՝ Ասորեստանի արքային ու նրա փառքը»<sup>13</sup>։ Այս մասին այսքան։

Այդտեղ գալիս Հոռոմոց թագավորին են հանդիպում Ափխազաց թագավոր Բագարատը և նրա հայր Գուրգենը<sup>13</sup>։ Ինքնակալը մեծապես պատվում է նրանց. Բագարատին տալիս է կյուրապաղատութիւն պատիվ, իսկ նրա հորը՝ մագիստրոսութիւն<sup>14</sup> և խաղաղութիւնը հանապարհ դնում, իսկ ինքը գնում անցնում է Հարքով<sup>15</sup> ու Մանաղկերտով<sup>16</sup> և արշավելով դառնում է Բագրեանդի<sup>17</sup> վրա, գալիս է Ուխտյաց<sup>18</sup> քաղաքը և տիրում շատ գավառների, բերդերի ու քաղաքների. նրանց վրա նշանակում է գործակալներ, դատավորներ ու վերակացուններ, իսկ ինքը հանգիստ վերադառնում է իր ճանապարհով և հասնում իր թագավորական քաղաքը՝ Գոստանդնուպոլիս։ Այս կատարվեց չորս հարյուր հիսուն թվականին. և երկիրը խաղաղվելով՝ հանգստացավ տասնչորս տարի<sup>19</sup>։

Իսկ ինքը՝ թագավորը գնում հոգում է արևմտյան կողմի գործերը, տիրում է Բուլղարաց աշխարհին, նրանց գավառներին ու քաղաքներին, որոնք, իր թագավորութիւն սկզբից, երկարատև ու անհանգիստ պատերազմներով ձեռքի տակ գցել չէր կարողացել. իսկ այժմ հանգամանքները նպաստեցին դրան. քանի որ երկրի տիրակալը՝ պատերազմներում հաղթողը, իր մահով վախճանվեց, իսկ նրա որդիները միմյանց չհնազանդ-

\* Եսայ. Ը, 6—7

<sup>5</sup> Սողմ. 2Թ. 5—6

վելով՝ անձնատուր եղան թագավորին ու զնացին նրա մոտ, որովհետև՝ «Ամեն թագավորություն, որ իր մեջ բաժանված է, չի կարող ապրել»<sup>\*</sup>: Այսպես առնվեց Բուլղարաց թագավորությունը: Ինքնակալը Բուլղարաց բռնակալի որդիներին ազգով ու ցեղով հանեց իրենց երկրից և նրանց տեղ տվեց Հոռոմոց աշխարհում, իսկ երկրի գործը խաբեությունք մի տեղ հավաքեց իբր թե նրանց պարզեններ տալու համար և գրավոր հաշվառում կատարելով՝ անվերադարձ ուղարկեց դեպի արևելք: Նրանք եկան և երկիրը ավեր դարձրին. վա՛յ նրանց արևելք գալուն, վա՛յ այն երկրին, ուր նրանք անցուցարձ արին: ահա շար ու անողորմ մի ազգ, ազգ դաժանասիրտ և ջարդարար. հարմար է ասել նրանց մասին մարգարեի այս ողբը. «Նրա առջևում դալարագեղ դրախտ է, իսկ հետևում՝ ամայացած դաշտ»<sup>\*\*</sup>: Այս մասին այսքան. բայց մենք վերադառնանք պատմությանս ընթացքին:

Մեր՝ շորս հարյուր վաթսուներորս թվականին Ափսաղաց Բագարատ թագավորը մեռավ և թագավորեց նրա որդի Գեորգը: Վասիլ ինքնակալ թագավորը նրան գրեց այսպիսի հրովարտակ. «Ինչ որ Կյուրապաղատի բաժնից պարզե տվի բո հորը, թո՛ղ և իշխի՛ր միայն բո հայրենիքի վրա»: Իսկ Դա հանձն շառավ. այլ իր մանկական հասակով հպարտացած՝ հակառակ պատասխան տվեց, թե՛ «Ինչ որ իմ հայրը իշխանությունք ունեցել է, նրանից մի տուն անգամ չեմ տա մեկին»: Այս լսելով՝ ինքնակալը գորք ուղարկեց երկիրը բռնությունք տիրելու համար: Ուխտյաց մեծ ավանի մոտ նրանց դեմ դուրս եկան Տայքի բաջերը և հոռոմոց զորքը փախուստի մատնեցին, բայց բազաբին և մյուս շինանիստ տեղերին ոչ մի վնաս չհասցրին: Այս եղավ Տայց աշխարհի կործանման սկիզբը:

\* Մատթ. ԺԹ. 25, Մարկ. Գ. 24—25, Ղուկ. ԺԱ. 17

\*\* Յովկ. Բ. 3

Այն ժամանակ Հայոց աշխարհի թագավորն էր Բագարատնյաց ցեղից Աշոտի որդի, Սմբատի և Գուրգենի եղբայր Գագիկը<sup>20</sup>, որը հզոր և պատերազմներում հաղթող մարդ էր: Սա խաղաղության մեջ պահեց Հայոց աշխարհը: Սրա ժամանակ պայծառացան եկեղեցական կարգերը, և սուրբ ուխտի մանուկները լուսավորվեցին. սրա օրերում, ըստ մարգարեի կանխագուշակության, «Երկիրը լցվեց տիրոջ գիտությունք այն բազմառատ ջրերի նման, որ ծածկում են ծովերը»<sup>21</sup>, որովհետև հայրապետական աթոռը տնօրինում էր տեր Սարգիսը<sup>21</sup>, որը սրբությունք սնվել էր եկեղեցու ծոցում և կրոնական ճշգրտությունք կրթվել այն մենաստանում, որ Սևանա կղզի է կոչվում. սրան, ըստ իր արժանիքի, Աստու հաճությունք, հրավիրեցին նստեցրին մեր լուսավորչի աթոռին. սա էլ նրա պես առաքինի կյանքով ապրելով, բարի գործերով ավարտեց իր կյանքը:

Այն ժամանակ վարդապետներ էին Սարգիսը, Տիրանունը և Ենովբը<sup>22</sup>՝ կաթողիկոսարանում, Սամվելը, որ Կամրջաձորի<sup>23</sup> վանքի առաջնորդն էր, Հովսեփը, որ Հնձուց<sup>24</sup> նախագահն էր, Ստեփաննոս Տարոնացին<sup>25</sup>, որ աշխարհապատում գիրքը շարագրեց սքանչելի ոճով, սկսելով այն առաջին մարդուց՝ վերջացնում է Գագիկի վախճանով, որի մասին էլ այս պատմությունն է, նույն գավառացի Հովհաննեսը, որին Կողբեն<sup>26</sup> էին մականվանում, որը և մեր հավատի վարդապետությունը գրեց, շափաղանց բանադետ Գրիգորը<sup>27</sup> և շատ ուրիշներ, որոնց օրերում ուղղափառ եկեղեցու զորությունք շատ բարձրացավ: Իսկ նրանք, որոնք խեթ աչքերով էին նալում մեղ, սրանց վարդապետական գործերից ամբած՝ մկենբի նման պատերի ծակերն էին սողոսկելով մտնում: Այս մասին այսքան:

Իսկ Գագիկ թագավորը երկար ժամանակ վարելով թագավորությունը և բարի հիշատակի արժանանալով՝ խոր ծերություն հասած վախճանվեց: Իշխանությունը ժառանգեցին նրա

\* Նսայ. ԺԱ. 9—10

որդիները՝ Սմբատը, որին Հովհաննես էին կոչում, և նրա հարազատ եղբայր Աշոտը<sup>28</sup>։ Սմբատը հաղթանակում էր ու շատ գեր, բայց իմաստությամբ, ասում են, շատերից բարձր էր, իսկ Աշոտը վայելչակազմ էր, քաջասիրտ ու պատերազմասեր։ Սրանք երկիրը բաժանելու համար իրար դեմ թշնամանալով՝ ընդհարվեցին և կարիք ունեցան արդար միջնորդի։ Ափսազաց Գեորգ թագավորը գալով՝ համոզելով հաշտեցրեց նրանց և Երկանուն Սմբատին, անդրանկության պատճառով, բաժին տվեց Անի ամրոցը իր շրջակա գավառներով, իսկ Աշոտին՝ երկրի ներքին մասը, որը սահմանակից է Պարսկաստանին ու Վրաստանին։ Սմբատը համաձայնելով վերադարձավ իր քաղաքը, բայց ճանապարհին մարմնի ծանրության պատճառով իջևանելով՝ անհոգաբար քնեց։ Աշոտի կողմի իշխաններից մեկը Գեորգի առաջ կանգնելով բողոքում և ասում է. «Շատիկը<sup>29</sup> իմ սեփական հողն է, որը Սմբատը անիրավաբար խլեց ինձանից»։ Գեորգն այդ լսելով՝ սաստիկ ցասմամբ բարկացած՝ զորք ուղարկեց Սմբատի ետևից, որոնք գալով՝ հանկարծ հարձակվեցին նրա վրա։ Սմբատը մարմնի ծանրության պատճառով չկարողացավ երիվար նստել։ Իսկ նրա հետ եղած իշխանները արագորեն փախուստի դիմեցին։ Հետապնդողները նրանց շատ դիակույտեր փոռեցին ճանապարհին մինչև Անիի դուռը, իսկ այնտեղից դառնալով՝ կաթողիկոսարանի եկեղեցիները զարդերից կողոպտեցին և խաչի բեռները հանելով՝ նախատինքով ասում էին. «Տանում ենք ձերին պայտեր շինենք»։ Բայց արդարադատ Աստված պատե՞ ժամին հոռոմների ձեռքով հատուցեց նրանց, որը իր տեղում կպատմենք։ Իսկ Սմբատին բռնելով տարան Գեորգի մոտ, որը հրամայեց նրան պահել հսկողության տակ. բայց հետո երեք բերդ առնելով արձակեց։

Որովհետև Աշոտի սահմանի շուրջը եղած մեծամեծները նրա տիրություններից շատերը անիրավաբար զավթել էին, նա չկարողացավ հանդուրժել և այդ պատճառով էլ թողնելով իր աշխարհը՝ գնաց հասավ Հոռոմոց արքունիք և թագավորի կողմից ընդունվելով սիրով՝ օգնության համար զորք խնդրեց և ստանալով եկավ իր աշխարհը։ Աստծու հաջողությամբ նա տիրեց շատ գավառների ու բերդերի։ Նա հզորացավ բոլոր

իրենից առաջ եղածներից, այնպես որ, մեծամեծներից շատերը իրենց հայրենի հողերը թողնելով նրան՝ կամովին հնազանդվեցին։ Մինչև այստեղ այս պատմությունը մեզ հասնի է։

Մեր՝ Նորս հարյուր վաթսունյոթ թվականին ինքնակալ թագավորը ուղարկում է նիկոմիդիացի մի իշխանի, որը գալով մարզահարկ է գնում երկրի վրա և հավաքելով մարդկանց բազմություն՝ վերստին սկսում է շինել Թեոդոսպոլիսը<sup>30</sup>։

Չորս հարյուր վաթսունութ թվականին, տեր Սարգիսը դեռևս կենդանի, կաթողիկոս է ձեռնադրվում տեր Պետրոսը<sup>31</sup>։ Չորս հարյուր յոթանասուն թվականին ինքնակալ թագավորը դարձյալ շարժվում է մեծ զորքով, գալիս է դեպի արևելք և իջևանում է Կարնո ընդարձակ դաշտում։ Գեսպաններ է ուղարկում Վրաստանի թագավոր Գեորգի մոտ, որ հնազանդվի իրեն։ Ազգություն մի քանիսի կախկոպոս, որ նստում էր Վաղարշակերտ քաղաքում<sup>32</sup>, թագավորին դիմավորելով հավատացրեց, թե՛ «երբ Եկեղյաց կամ Կարին հասնես, նա քեզ ընդառաջ կգա»։ Եվ նա հավատալով այս խոսքերին ու հույս դնելով սրա վրա, օթևանից օթևաններ փոխադրվելով սպասում էր Գեորգի գալուն։ Բայց նա հանձն չառավ գալ թագավորի մոտ, որովհետև յուրայիններից շատերը ահաբեկում էին նրան, թե քեզ տեսնելուն պես կամ կսպանի, կամ կբանտարկի, և քո պատվին չես հասնի։ Իսկ թագավորը գնալով Բասեն, երկու-երեք պատգամավոր ուղարկեց, որովհետև շատ էր ցանկանում իր ճանապարհորդությունը խաղաղությամբ ավարտել ու աշխարհը շեն թողնել։ Այա երբ պատգամավորությունն ապարդյուն անցավ, թագավորը բարկանալով՝ հրաման տվեց հրով, սրով ու գերություն ավերել Օկոմի<sup>33</sup> կոչված մեծ ավանն ու նրան շրջապատող այդ մասի գյուղերն ու ագարակները, հրամայեց այստեղից վերցրած զբրիններին տանել Խաղտյաց<sup>34</sup> գավառը, իսկ ինքը Բասենից անցնելով՝ գնաց հասավ Վանանդ գավառը, Կարմիր Փորակ<sup>35</sup>։ Իսկ Գեորգը հարմար ժամանակ գտնելով՝ հասավ Ուխտյաց քաղաքը և զորքին հրամայեց հրկիզել նրա գեղեցիկ դաստակերտները, կողոպտել ունեցվածքը, բայց մարդկանց ամենևին չվնասել։ Երբ թագավորն այս լսեց, ավելի ու ավելի բարկանալով՝ գնաց նրա վրա։

Հորքերը հանդիպելով Պաղակացիս<sup>36</sup> կոչված ծովակի մոտ՝ սարսափելի զորդունով իրար բախվեցին: Սուսերների շողալու և սաղավարտների փայլելու ժամանակ հրաշոգ փայլակները լեռների վրա էին տարածվում, և սրերի հարվածներից դուրս ցայտած կրակի կայծերը գետին էին բնկնում: Նայելով սրան, նույնիսկ ինքը՝ թագավորը դարձանում էր կռվողների քաշուխան վրա, որովհետև գետերի՝ ժայռերին խփվող հորձանքների նման Հոռոմոց զորքերը նրանց բախվելով՝ ետ էին բնկրկում: Այդտեղ մեռավ մեծ իշխան Բուսե<sup>37</sup>, որի ձին ճահճի պատահելով՝ չկարողացավ անցնել, և վրա հասնելով սրահար սպանեցին գեղելի մարդուն, որը մեծ սուգ պատճառեց Տայոց աշխարհին:

Գևորգին իր զորքով գնաց ամրացավ Ափխազաց բերդում, իսկ թագավորը զորքեր ուղարկեց երկրի տարբեր կողմերը, ասպատակներ տարածեց, խստագույն հրամանով պատվիրելով չխնայել ո՛չ ծերին, ո՛չ երիտասարդին, ո՛չ մանկան, ո՛չ շահահասին, ո՛չ տղամարդուն, ո՛չ կնոջը և ո՛չ մի հասակի. և այս ձևով քանդեց-ավերեց տասներկու գավառ: Ինչպիսի՞ ողբալի և անսպառ արտասուքների արժանի տեսարան էր երևում այնտեղ. քանզի արքունաշեն բարձրաբերձ պալատներն ու պարանքները, որոնք մեծամեծ ծախսերով ու ճարտարապետների հնարագիտությամբ կառուցվել էին որպես սրանչելիք՝ տեսնողների և ուրախություն ու վայելք՝ բնակվողների, հրաճարակ փրվեցին ու կործանվեցին, իսկ նրանց տերերը հենց նրանց կողքին սրակոտոր եղան: Ավա՛ղ այս պատմությանը, ավա՛ղ դառնաղետ այդ անցքերին. ինչպե՞ս կարող եմ ես՝ գիտություն արքատու և ամենքից տխմարս, նկարագրել այն ժամանակ կատարվածները և կամ արժանապես ողբալ մեր թշվառությունները: Սրանք Երեմիայի<sup>38</sup> հոգուն են պատկանում, որը գիտի թշվառության համապատասխան ողբեր հորինել. բայց մենք սակավ խոսքերով արձանագրում ենք այս երկար պատմությունը՝ ի գիտություն գալիք ազգի, որ ծնվող սրդիները հաշորդաբար պատմեն այս իրենց որդիներին, որպեսզի շմոռացվեն Աստու գործերը, որն արգարապես հատուցում է բոլորին, ովքեր խոտորվում են նրա օրենքներից:

բստ Հորի խոսքերի. «Կհատուցի փոխարենը, — ասում է, — իրեն ատողներին և չի ուշացնի»:

Արդ ե՛կ ու թվի՛ր ինձ այն ժամանակ կատարվածների օրինակները. պատվական ու հարգարժան ծերերի արյունաթափախ ալիքները, սրակոտոր երիտասարդներին, անթիվ ու անհամար կույրերին, որոնց աչքերը հանեցին: Կարծում եմ, այս բոլորը տեղին պատահեցին նրանց, որովհետև աստվածագրոշմ նշանի բեռները հանելով՝ կաթողիկեի դոանը անարգանքով ասում էին՝ «ձիերին պայտեր կշինենք»: Այս և սրանցից էլ ավելի սարսափելի աղետները արդարություն արգարհեցին նրանց: Ազնվական կանայք հրապարակներ դուրս եկած, բողբ զլիսներից վեր առած՝ արևի դեմ անպատկառ կերպով խայտառակվում էին. նրանք, որ ոտքով հազիվ էին գնում հիվանդներին տեսության կամ ուխտատեղի, այժմ բաց գլխով ու բոկոտն, զարդերից մերկացած, պատվից ընկած, բյուր անարգանքների ենթարկված, գերողների առջևից էին գնում: Իսկ կաթնասուն երեխաների մի մասին մայրերի գրկերից առնելով՝ քարերին էին խփում, ուրիշներին գրկերի մեջ աշտեներով խոցոտելով՝ արյունը մայրերի կաթին էին խառնում, իսկ մյուսներին՝ ճանապարհների խաչմերուկներում ձգելով՝ ձիերի սմբակների տակ բոլորին էլ սպանում էին: Ո՛վ Աստված, քո այն ժամանակվա ներողությունը, ո՞վ թագավոր, քո անողորմ հրամանները: Բայց այս ամենով նրա բարկությունը չմարեց, այլ ձեռքը բարձրացրել է դեռևս ուրիշ աղետներ էլ սրանց վրա ավելացնելու: Եվ այսպիսի գործով բարեշեն երկիրը անմարդաբնակ, ավեր ու ամայի դարձրեց մինչև ձմեռվա գալը:

Բայց չգիտեմ, թե այս բոլորը ինչի համար պատահեց նրանց. խրատի՞, երկրի բնակիչների շահին անցած ամբարըշտություն, թե՞ խուժադուժ ազգերից ժողոված՝ արևմտյան զորքերի դժնաբարո վարքի: Թագավորը վերադարձավ բարեխառն Պոնտոս<sup>39</sup> ձմեռանոց և մտնելով Խաղտյաց գավառը՝ գիշերեց: Պետրոս հայրապետը ետևից գնալով՝ հանդիպեց նրան աստվածահայտնության մեծ տոնի օրերում և պատվով մեծարվեց նրա կողմից:

Իսկ հայտնութեան օրը, ընդունված կարգով, բարեպաշտ քրիստոնյա թագավորներն ու իշխանները եկեղեցու առաջնորդներին հավասար՝ նրանց հետ ոտքով պիտի գնան դեպի ջուրը ու այնտեղ կատարեն Քրիստոսի մկրտութեան խորհուրդը. ահա այդ օրը թագավորը հրամայեց Պետրոս հայրապետին ջուրը օրհնել ըստ մեր կանոնի, իսկ հոռոմների եպիսկոպոսներին, որոնք այնտեղ պատահեցին, ըստ իրենց կանոնի. նրք հայրապետը մյուսոնը ջուրը լցրեց, հանկարծակի ճառագայթող լույսի ցնցուղներ դուրս ելան ջրից. այդ տեսան առհասարակ բոլորն էլ և փառարանեցին Աստծուն, և մեր հավատի գորութիւնը բարձրացավ: Պետրոս հայրապետը առավել ևս մեծարվելով թագավորից ու մեծամեծերից՝ վերադարձավ իր տուն: Բայց այնտեղ գրվեց հայերի կորստյան կտակ-նամակը, որովհետև Հովհաննես-Սմբատը պատվեր էր տվել հայրապետին, թե գրութիւն գրիր և կտակ տուր թագավորին, որ իմ մահից հետո իմ բազմքներն ու երկիրը նրան եմ հանձնում որպէս ժառանգութիւն. ինքը թագավորութեանը Յազակալ ժառանգ շունք, քանի որ նրա որդի Երկաթը շուտ վախճանվեց և հոր պատվին չհասավ: Թագավորը գնաց հասավ սկզբում հիշատակած ձմեռանոցի տեղերը, իսկ զորքերը գերիններին վաճառեցին հեռավոր ազգերին:

Այս ժամանակ վախճանվեց սուրբ և արժանավոր հայրապետ տեր Սարգիսը, և նրա գերեզմանը գտնվում է Հոռոմոսի<sup>40</sup> վանքում:

### Գ Լ Ո Ւ Ս Գ

ԻՆ ԽՉՊԵ ՔԱՅԱՎՈՐԸ ԵՐԿՐՈՐԳ ԱՆԳԱՄ ԱՐԵԱՎԵՑ ՏԱՅՈՑ ԱՇԽԱՐԻՎՐԱ, ՈՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՐՏՎԵՑԻՆ ՎՐԱՑ՝ ԶՈՐՔԵՐԸ

Իսկ ինքնակալը, ամբողջ ձմեռը անցկացնելով բարեխառն Պոնտոսում, գարնանաբեր ժամանակն հասնելուն պես կրկին շարժվեց Տայքի վրա և անցնելով շատ օթեաններ՝ եկավ բանակ դրեց Բասենի գավառում: Իսկ Հոռոմոց իշխաններից շատերը, որոնց տարբեր ժամանակներ այլևայլ պատճառներով

թագավորը գցել էր պատվից ու իշխանութիւնից և որոնք վաճառվեցին որոշ փակված առուծների նման մոնղոլ էին, այժմ հարմար ժամանակ գտնելով՝ մի տեղ հավաքվեցին և շարխորհուրդ արին, որը չկարողացան կատարել. մտածեցին միաբանված ապստամբել թագավորի դեմ և իրենց ցանկացածին դարձնել թագավոր: Երբ այդ հաստատ որոշեցին, մինչև լույս դբաղվեցին դրանով և ընդարձակ դաշտում բանակ դրին. այդտեղ անթիվ մարդկանց բազմութիւն հավաքվեց, բայց նրանք սկսեցին թագավորական պատիւը իրար վրա ձգել: Վերջը բոլորը միաբանվելով՝ բռնեցին Փոկասի որդուն, որին Մուսկի<sup>42</sup> էին կոչում և որը իր հոր հանցանքի պատճառով վաղուց արդեն իշխանական պատվից ընկած էր: Սա անհամաձայն լինելով՝ հանձն շտապ, բայց նրանք չդադարեցին խնդրելուց և բռնադատելով համոզեցին, մինչև որ համաձայնվեց:

Երբ այս լսեց ինքնակալը, մեծ անհանգստութեան մեջ ընկած՝ գնաց ամբողջով Մաղաթ<sup>43</sup> կոչված բերդի ամրոցներում, որովհետև այդ Հունաց արքունիքի հին սովորութիւնն էր Բայց չգիտեմ, թե աստվածային օրհնք է այդ, որ ժառանգը տիրերի վրա չպետք է հարձակւն, թե՞ թագավորն այն ժամանակ առանձին բարեհոգութիւն ուներ, միայն այս հավաստի գիտեմ և իմ աչքով էլ տեսա, որ նրանք, ովքեր գնացին նրա վրա, ծիծաղելի մահով մեռան, ինչպես եղավ առաջին անգամ, իր թագավորութեան սկզբում, երբ նրա դեմ ապստամբեց Վարդը, որ կոչվում է Սիկլաոս<sup>44</sup>, և համարյա բոլոր Հոռոմներին տարավ իր հետ, այնպես որ թագավորը օգնութեան համար զորք խնդրեց վրաց Կյուրապաղաւից և նրանցով հաղթելով բռնակալին՝ փախցրեց երկրից, իսկ սա գնաց-ընկավ Բարեխորհուրդի բազարը<sup>45</sup>: Ապա սրահից հետո նույն ախտով ախտավորվեց սրա անվանակից Փոկասը<sup>46</sup> և յոթ տարի տիրեց ամբողջ արևելքին: Թագավորը միայն շորս հազար մարդով գիշերը ծովն անցնելով՝ հարձակվեց ապստամբի բյուրավոր զորքերի վրա, բայց այդքան բազմութեան մեջ ոչ ոք չմեռավ, բացի հենց նույն ապստամբ Փոկասից, որի զուխը կտրելով՝ հրամայեց խաղաղութեան փող հնչեցնել. պատերազմը դադարելուց հետո զինվորները

ամեն մեկը վերադարձավ իր տուն, իսկ ինքը՝ թագավորը մեծ հաղթությամբ գնալով մտավ իր քաղաքը՝ Կոստանդնուպոլիս:

Այդպես էլ այստեղ նրանց մանկական խաղի գործը երկար շտեկեց, այլ, ինչպես ավագի վրայի շինվածք՝ հեղեղների բախվելու հետևանքով անմիջապես փլվելով կործանվեց՝ ահա թե ինչպես. Դավիթը, որը Սենեքերիմ<sup>47</sup> էր կոչվում, պարսիկներից նեյվելով՝ իր հայրենի ժառանգությունը՝ Վասպուրականը<sup>48</sup>, ավել էր ինքնակալ Վասիլին ու փոխարենն ստացել Սերաստիա<sup>49</sup> քաղաքը իր շրջակա գավառներով: Սրանք կատարվեցին ոչ թե հեռավոր ժամանակում, այլ երկու կամ երեք տարի առաջ. ահա այն ժամանակից մինչև այժմ արևելքը ընկավ Հոռոմոց արիւթապետության տակ: Այն ժամանակ Սենեքերիմը խորհրդակից միաբան էր ապստամբներին ու նրանց հավատարիմ: Բայց հանկարծ քնից արթնացածի կամ հզոր մի մարդու նման, որ սթափվում է գինարբությունից, տեսնելով այդ անվաշել գործերը և այդ շար միաբանությունը, խափանելու ալլ հնար չգտնելով, մի օր, անսպասելի ժամի վերջնում է նրան, որին թագավոր էին անվանում, գուրս է գալիս բանակից, իբր թե առանձին խորհրդակցելու համար, և հանկարծակի սրահար սպանում է նրան ու գլուխը կտրելով՝ իր ծառաների միջոցով փութապես հասցնում է թագավորին:

Իսկ հավաքվածները, երբ այս այսպես եղավ, մեկ-մեկուց առաջ էին վազում շուտափույթ ծածուկ իրենց տները հասնելու համար. և նրանց բոլոր մտադրությունները իսկույն խափանվեցին:

Իսկ թագավորը, տեսնելով բռնակալի գլուխը, հրամայեց ձողի վրա բարձրացնել ի տես ամբողջ բանակի, քանի որ նրանցից շատերը թեպետ անձամբ թագավորի հետ էին, բայց մտքով ապստամբին էին միաբան: Նա այս կատարեց ըստ իր խորին իմաստությունից, որպեսզի այդ տեսնելով՝ նրանք հեռանան իրենց փուչ մտադրությունից և ուղղված սրտով՝ հնազանդվեն իրեն:

Սրանից հետո թագավորը զորքով իջավ Բասենի ընդարձակ դաշտը և հեթանոս զորքից հեծյալներ ուղարկեց ապրստամբ Փերսիս<sup>50</sup> կալանավորելու համար, իսկ ինքը շարժվելով հասավ Բասենի սահմանագլուխը, այն տեղը, որ Սալբու-

րա<sup>51</sup> է կոչվում, և բանակի շուրջը խոր փոսով պատնեշելով՝ դադար առավ մեկ ամբողջ ամիս կամ ավելի:

Իսկ թագավորից ուղարկվածները բռնելով Փերսիս և նրա փեսա Անդրոնիկին, որ նրա համախոհն էր, բերին մինչև Կարենո սահմանագլխում գտնվող Խաղատ Առիճ<sup>52</sup> կոչված բերդը և հասնելով ամբողջի դիմաց գտնվող ագարակը՝ իջևանեցին:

Փերսիս ու Անդրոնիկոսին առաջ բերելով՝ գլուխները կրտրեցին: Այդպես էր պատվիրել նրանց թագավորը, քանի որ նրանք իրենց ապստամբելու ժամանակ դաշնակից եղան ափխազներին և խոստացան մինչև այդ տեղը տալ նրանց բաժին, որովհետև առաջ այդ մասին տիրում էր Դավիթ Կյուրապաղատը, բայց ոչ որպես իր հայրենի ժառանգություն, այլ իբրև թագավորից ստացած պարգև՝ իր հավատարիմ ծառայության համար: Բայց որ նա խոստացել էր իր մահվանից հետո այդ գավառը հանձնել թագավորին, նրանք այդ չէին մտաբերում, այլ առատաձեռն պարգևներ էին բաշխում, որ իրենցը չէր: Այդ պատճառով էլ թագավորը հրամայեց այնտեղ գլխատել նրանց:

## Գ Լ Ո Ւ Ս Գ

ՇՂՓԱՅՈՒՄՅՈՒ ԵՂԱՍ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Թագավորը այն օրերին, որ Սալբուրայում մնաց, որովհետև Գեորգից պահանջում էր այն երեք բերդերը իրենց դաստակերտներով, որոնք Գուրգենն էր անիրավաբար խլել Կյուրապաղատի բաժնից, ղեսպաններ ուղարկեց նրա մոտ և քաղցրը խոսքերով զրեց նրան, թե՛ «Ինչ որ քո հայրենի ժառանգությունը չէ, թո՛ղ և ապրի՛ր խաղաղությամբ քո բաժնում և իմ Պարսկաստան գնալու ճանապարհին արգելք մի՛ եղիր»: Բայց նա հանձն չառավ. հետո ուղարկեց Վաղարշակերտի եպիսկոպոս Զաքարիային, որին փոքր-ինչ առաջ հիշեցինք. սա գնում, համոզիչ խոսքերով խաբում է Գեորգին, որը և հանձն է առնում ու գրում է թագավորին, թե տալիս է այն,



ինչ որ նա պահանջում է. եպիսկոպոսը գրուելունն առնելով՝ ուրախությամբ վերադառնում է:

Բայց մի օրվա ճանապարհ գալուց հետո, այն իջեանում, ուր օթևանելու էր, սուրհանդակները փութանակի հասան նրա ետևից՝ գրուելունը պահանջելու, քանի որ անմիտը զղջացել էր, և վերցնելով կրկին ետ դարձան: Իսկ եպիսկոպոսը գնալով ներկայացավ թագավորին ու պատմեց կատարվածը. ապա թագավորը հարցրեց նրանց զորքերի և պատերազմական պատրաստության մասին: Զարքարիան պատասխանելով ասում է, թե՝ «Ամենքից շատ զորք ունի, զորությամբ հզոր է ու պատրաստ պատերազմելու»: Այս լսելով՝ թագավորը բարկացած ասում է. «Ռու էլ ապստամբների կողմից ես եկել, որ ահարեկես ինձ»: Եվ հրամայում է տանել նրան Կոստանդնուպոլիս, ասելով՝ «Բնա հանգստացի՛ր այնտեղ, մինչև որ ես փախստական գամ քեզ մոտ»: Իսկ տանողներին հրամայում է կտրել նրա լեզուն: Նա գնալով՝ այլևս չվերադարձավ իր տեղը, այլ մնաց այնտեղ մինչև իր մահվան օրը:

Սրանից հետո թագավորը թողնելով Սալբորա իջևանի բանակատեղը, զորքով առաջ գնաց դեպի Շոփա կոչված վայրը: Ափխազն<sup>54</sup> այս իմանալով, քանի դեռ նրանք բանակ չէին գրել ու պատնեշով ամրացել, դիմում է այսպիսի խորամանկության. իր գլխավոր եպիսկոպոսներից մեկին դեսպան է ուղարկում, իսկ ինքը զորքով գնում է դեսպանի ետևից, որպեսզի, իբր թե, անսպասելի վրա հասնելով՝ ահարեկելով նրանց փախուստի մատնի, Եվ այսպես, նրանք աշխույժ ձիերով անկանոն առաջ էին գնում, ոչ թե պատերազմական կարգով, այլ իբր թե ավարառության: Բայց ինչպես հնում, Հովրամի օրերում, Մովրացիները Իսրայելի վրա հարձակվելով՝ իրենք դաժանորեն սրակոտոր եղան\*, նույնպես էլ սրանց հետ պատահեց: Չիբրին նստած նրանք հանդգնաբար վրա հասան, բայց որովհետև երկաթակուռ ծանր զենքերի և արագ անցած երկար ճանապարհի պատճառով ուժից ընկել էին, ուստի Հոռոմոց զորքերը խկույն առանց դժվարության նրանց շրջապա-

\* Գ. Թագ. Գ. 1—27: Աքաաբի որդի Հովրամը Իսրայելի թագավորն էր:

տելով՝ կոտորեցին անթիվ բազմություն: Իսկ մնացածները իրենց թագավորի հետ փախչելով ընկան Ափխազաց բերդը. Հոռոմոց զորքերը նրանց հետապնդելով՝ կոտորեցին մինչև արևամուտ: Ապա թագավորը հրամայեց սպանվածների գլուխները հավաքել մի տեղ և ամեն մի գլխի համար բերդոսնորին խոստացավ տալ մեկական դահեկան. նրանք ամենուրեք որոնելով՝ սպանվածների գլուխները բերեցին թագավորի առաջ և հավաքեցին մի տեղ. սա հրամայեց ճանապարհի վրա կույտ-կույտ դնել՝ որպես սարսափ ու երկյուղ տեսնողներին:

Սրանից հետո, երբ Գեորգը տեսավ, որ կտրվել են բոլոր հույները, թագավորին աղաչեց գալ հաշտության: Սա այդ լսելով՝ խղճաց նրան և գրեց այսպիսի հրովարտակ. «Մի՛ կարծիր,— ասում է,— թե քեզ հաղթելով՝ ավելի մի բան կպահանջեմ քեզանից, քան առաջ. տո՛ւր իմ հայրենի երկիրը, որը Կյուրապաղատն էր ինձ տվել և տո՛ւր որդուդ պատանդ, և իմ ու քո միջև խաղաղություն կլինի»: Գեորգը սրան համաձայնելով՝ հանձն է առնում: Թագավորը գավառի վրա վերակացուններ նշանակեց, որոնք գավառը բաժանեցին տուն առ տուն, գյուղ առ գյուղ և ագարակ առ ագարակ, ինչպես նախկինում էր եղել: Վասիլ թագավորը պատանդները վերցնելով՝ խոստացավ երեք տարուց հետո վերադարձնել. իսկ ինքը զորքով շարժվելով՝ պտտվեց Հայաստանի շուրջը և հեծելազորով իջավ բանակ գրեց Հերի<sup>55</sup> ընդարձակ դաշտում և զորքերին հրամայեց կտրատել քաղաքի ծառատունկերը: Իսկ քաղաքի իշխանը աղաչեց հարկատու լինել և հնազանդ մնալ թագավորին:

Եվ մինչդեռ նա այս մտքերի մեջ էր, քանի որ ամբողջ Պարսից աշխարհը սարսափով ու երկյուղով պաշարված՝ փրկության հնարներ էր փնտրում, հանկարծակի երկինքը խտացավ ամպերով, և հորդ անձրևներ հոսեցին երկիր, դրանից հետո փշեց հյուսիսային սառնաշունչ քամի և անձրևը փոխեց կարկտի, ձյան ու սառույցի և թանձրամած նստվածքով ծածկեց երկրի երեսը. հենց ժամանակն էլ նպաստավոր էր դրա համար, քանի որ ձմեռը խիստ մոտեցել էր: Հորդառատ ձյան ու խստաշունչ սառնամանիքների երկարելու պատճառով ձիե-

քի ու ջորինների ջոկերը փայտացած՝ չէին կարողանում շարժվել. հետևակ զորականների ոտների ու ձեռների ծայրամասերը, սուս հրկիզված, կտրվելով թափվում էին, իսկ վրանների լարերն ու ցցերը դաժան փորձության սաստկությունից գետնին կպած անշարժ մնացին: Եվ այս, ինչպես ինձ թվում է, հատուցումն էր նրանց անողորմ սրի, որը նրանք քրիստոնյաների վրա քաշեցին, որովհետև թեպետ նրանք իրենց մեղքների համար մատնվեցին, բայց սրանք պետք է խնայեին, ինչպես Աստվածն էր ասում բարեկացուն. «Ես մատնեցի իմ ժողովուրդը բո ձեռքը, և դու նրանց շիղճացիր»<sup>54</sup>: Այդ պատճառով էլ դաժան սառնամանիքով տանջվեցին ոչ թե բարձր լեռների վրա, այլ խոր ու խիստ ջերմ դաշտավայրերում, իրենց թշնամիների աչքերի առաջ, ինչպես Մովսեսի ժամանակ եղիպտոսը պատժվեց եղյամով ու կարկտով՝ այն երկրի բնության հակառակ, որից այդ բարբարոսները հայտնապես իմացան, որ ամենակարող ձեռքն է պատերազմում իրենց դեմ: Եվ երբ այս այսպես եղավ, նրանք, որոնց վրա ուժ ու զորություն էր մնացել, ձիերը նստելով, թագավորի հետ, սառնամանիքից՝ ինչպես թշնամիներից հալածված, ունեցածների մասին ամենին շտաժելով՝ փախան Արժրունյաց գավառը: Քաղաքի բնակիչները երբ այս տեսան, հանկարծակի խուռն բազմություն մը դուրս նետվեցին և մեծ ուրախությամբ վրա հասնելով՝ լիացան ձիերի, ջորիների, վրանների և այլ պիտույքների ավարով, որոնց համար, ցրտից մոլորված<sup>55</sup>, նրանք չէին կարողացել հոգ տանել, իսկ թագավորը ավարառուների կողմից նախատվելով՝ հայտնապես հասկացավ, որ տիրոջ ձեռքն էր վրացիներին մատնել իր ձեռքը, ինչպես թագավորության գերբում է գրված. «Հզորը իր զորությամբ չի զորանում, այլ տերն է տկարացնում հակառակորդին»<sup>56</sup>: Ապա թագավորը իր զորքերով շարժվելով, շատ օթեաններով անցնելով, զնաց-հասավ իր քաղաքը՝ Կոստանդնուպոլիս: Երեք տարի մնալուց հետո բազմաթիվ պարզներով նա արձակեց Ափիսազի որդուն<sup>57</sup>, իսկ ինքը մահվան ցավով հիվանդացավ:

<sup>54</sup> Եսայ. ԽՃ. 6

<sup>55</sup> Ա. Թագ. Բ. 9

Բայց քանի որ Կոստանդինը՝ իր հարազատ եղբայրն ու թագակիրը, նիկիացիների զավառում<sup>58</sup> էր, հրամայեց խընդ-բակներ ուղարկել, որ շուտափույթ իր մոտ հասնի: Իսկ հրամանատարները խոսքով համաձայնություն տվին, բայց թագավորի հրամանը թաքցրին իրենց մեջ, որովհետև չէին ցանկանում, որ Կոստանդինը թագավորի Հրամայական շատ խոսքերից հետո ինքնակալը հասկանալով նրանց խորամանկությունը՝ սպասավորներին հրամայեց ձի բերել իր համար և մահճից վեր կենալով՝ նստեց ձիու վրա ու պալատից դուրս ելավ քաղաքի բնակիչների աչքի առաջ. շատերն այդ տեսնելով՝ սարսափած զնացին ու պահվեցին խավարշտին տներում: Ապա խնդրակները գալով՝ Կոստանդինին շուտափույթ այնտեղ հասցրին. թագավորը նրան տեսնելով՝ արբայական թագը գրեց նրա պլսին ու հաստատեց թագավոր և պատվեր տվեց, ինչպես Դավիթը Սողոմոնին, որ թագավորության խոռվարարներին և նրանց, ովքեր չէին կամենում նրա թագավորությունը իրենց վրա, կենդանի շթողնի, բայց ո՛չ Դավիթի նման, որ ուրիշ պատճառների էլ սպասի: Եվ ինքը անկողին մտնելով՝ երկու օրից հետո վախճանվեց, նա, որ թագավորեց հիստոն տարի: Բայց նրա մահվան ժամանակ երկնքից հրաշքի մի նշան երևաց. այն իրիկվա ժամին, երբ նա հոգին ավանդեց, վերին եթերը ճեղքելով հրո փայլալը հանկարծակի ներքև ընկավ. բոլորը միասին տեսնելով այդ՝ ասացին. թագավորի մահն է գուշակում<sup>59</sup>:

## Գ Լ Ո Ւ Խ Ե

### ԿՈՍՏԱՆԴԻՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վասիլից հետո շորս տարի թագավորեց նրա հարազատ եղբայր Կոստանդինը<sup>60</sup>. որովհետև նա խաղաղասեր ու բարի մարդ էր, իր թագավորության առաջին տարում մնաց հանդարտության մեջ, և երկիրը հանգստացավ մեծամեծ տազնաւից: Այն իշխաններին, որոնց Վասիլը զավառակալներ էր նշանակել, հաստատեց նույն պաշտոնում: Կոմիանոս<sup>61</sup> անու-

նով մեկը, որ քաջ ու պատերազմասեր մարդ էր, որին Վասիլը տեր էր նշանակել Վասպուրական գավառին, մեծամեծ քաջագործություններ ցույց տվեց Պարսկական արքունիքում և անվանի դարձավ ամբողջ Արևելքում. սա թագավորի մեռնելու ժամանակ վատ մտադրությամբ դաշնակցեց Գեորգի հետ՝ Արևելքում թագավորելու համար: Կապաղովկիացի<sup>62</sup> զորքերն այդ մտադրությունն իմանալով՝ միաբանված հանկարծակի հարձակվեցին, վրանի լարերը կտրելով՝ վրան գցեցին և նրան ու նրա խորհրդակիցներին բռնելով՝ մի բերդում բանտարկեցին ու հայտնեցին թագավորին: Այս եղավ Կոստանդիանոսի թագավորության առաջին տարում, որը մեր թվականի շրջա հարյուր յոթանասունհինգ տարին է: Թագավորը երբ այս լսեց, տեղում ոչ մի պատիժ չտվեց նրան, այլ մի ամբողջ տարի համբերեց, մինչև լավ վերահասու դարձավ իրողությանը: Ապա երկրորդ տարվա սկզբում դահիճ ուղարկեց, որը գալով կուրացրեց նրա ու նրա հետ եղած ութ մարդկանց աչքերը<sup>63</sup>: Շատ ցավալի է, որ այնպիսի բարի հիշատակի արժանի պատվական մարդը, որը Հոռոմոց ձեռքի տակ գրեց Արճեշը իր գաստակերտներով, այդպես հիմարանալով ընկավ վատ գործերի մեջ: Երկրորդ տարվա սկզբում թագավորը երկրի արևելյան կողմին վերակացու ուղարկեց Նիկիա<sup>64</sup> անունով մի ներքինու, որը գալով անցավ Վրաց գավառը և երկրի աշխականներից շատերին խաբեությամբ հայրենիքից հանելով՝ ուղարկեց թագավորի մոտ: Սա նրանց տեսնելով՝ ուրախացավ, մեծամեծ պարգևներով ու իշխանությամբ պատվեց նրանց և ամեն մեկին ըստ իր արժանիքի տվեց գյուղեր ու ավաններ, որպես հավիտենական ժառանգություն, գրությամբ ու կնիքով հաստատելով այդ:

Իսկ երրորդ տարվա սկզբում բազմաթիվ զորքով դեպի արևելք շարժվեց Սիմովն ներքինին, որն ուներ կես-թագավորական իշխանություն և որին հունարեն լեզվով պառնկիմանոս<sup>65</sup> են անվանում. սա գալով անցավ Վրաց աշխարհը, բայց չհասցրեց որևէ գործ կատարել, որովհետև իսկույն եկավ թագավորի մահվան բռթը. երբ նա այդ լսեց, առանց հապաղելու զորքով վերադարձավ ու զնաց Կոստանդնուպոլիս:

Թագավորների մեջ հզորն ու պատերազմներում միշտ հաղթող Վասիլը, որը շատ երկրներ ոտնատակ արեց, քաջագործություններից ազատ ժամանակ շտապով ամուսնանալու և թագաժառանգ ունենալու համար, ինչպես կարգ է բոլոր թագավորներին: Նրանից հետո գահակալեց նրա հարազատ եղբայր վերևում հիշված Կոստանդիանոսը, որը նույնպես արու զավակ չունեց, այլ երկու դուստր. անդրանիկ դստերը՝ Զոյեին<sup>66</sup>, նա կնուցյան տվեց Ռոմանոսին, որը Հոռոմոց զորքերի սպաներից էր, և թագավորեցրեց իր փոխարեն, իսկ ինքը մահվամբ շտապեց հետևել բոլոր երկրածիններին:

Ռոմանոսը իր թագավորության առաջին տարում զորքեր հավաքեց ու շարժվեց դեպի Անտիոքի կողմերը. նա ցանկանում էր զնալ Հալպ<sup>67</sup> կոչված քաղաքի վրա, առնել ու ավերել այն: Եկավ-հասավ Սև կոչված լեռան<sup>68</sup> և այնտեղ տեսավ վանականների ու մենաստանների. ճգնավորների բազմություն, որոնք մարմնավոր լինելով՝ նմանվում էին անմարմինների, բավարարվում էին միայն այժի մազե ծածկույթով կամ քանկոնով, ինչպես Հովհաննես (Մկրտիչը), միայն թե նա կերակրվում էր մարախով ու վայրի մեղրով, իսկ սրանք երկաթի բրիչ ձեռքն առած՝ անհանգիստ աշխատում էին զարու հատիկներից օրապահիկ կերակուր պատրաստելու համար: Մյուս գանազան խորտիկներն ու քաղցրահամ կերակուրները՝ ուրախարար դիմելով հանդերձ, որ խաղողի այգիներն են տալիս, թողած աշխարհիկ կյանք սիրողներին, սարի գլուխը բարձրացած նախամարգարեին դասակից դառնալով՝ սրանք միշտ խոսում էին Աստծու հետ:

Սրանց տեսնելով՝ թագավորը հարցրեց իր մեծամեծներին. «Այս ի՞նչ հերետիկոսների բազմություն է»: Նրանք ասացին. «Սրանք բոլորը աղոթողների խմբեր են, որոնք միշտ մաղթում են աշխարհին խաղաղություն և ձեր կյանքին առողջություն»: Թագավորը պատասխանելով ասաց. «Սրանց աղոթքն ինձ պետք չէ. բոլոր վանքերից հավաքազրե՛ք<sup>69</sup> աղեղնավորներ իմ թագավորությանը ծառայելու համար», քանի որ

Քաղկեդոնի<sup>70</sup> սահմանադրութիւնը շատ էր հավանել՝ ատելով օղոր ուղղափառ հավատները: Նա ասորիների եպիսկոպոսին տարավ Կոստանդնուպոլիս, ծաղր ու ծանակի ենթարկելով՝ հրամայեց խուզել մորուքը և էջի վրա նստած պտտեցնելով հրապարակներում ու փողոցներում՝ բարկոծել նրան. հետո հրամայեց արսորել, որտեղ և նա մեռավ: Այսպիսի խակամիտ մեկն էր թագավորը. նա շմտաբերեց նախորդ թագավորներին, թե ինչպիսի հոգատարութիւն էին ցուցաբերում նրանք զեպի այն ազգերը, որոնք իրենց իշխանութիւն ներքո էին գտնվում, այլ ինքնակամ հրամանով ուզում էր նորաձեւութիւն մտցնել Աստու եկեղեցիների մեջ, շփոխելով տերունական այն անսուտ հրամանը, թե՛ «Ով բախվի այս ժաշոյն, կփշրվի, իսկ ում վրա ընկնի, կոչնչացնի նրան»<sup>71</sup>: Այդ պատճառով շուտով հասավ նրա վրա Աստու արդար դատաստանը. նույն ճանապարհին տաճիկներին<sup>72</sup> զորքից ոչ ավելի բան ութ հարյուր կամ հազար մարդ հարձակվելով բլուրավոր բազմութիւն վրա՝ անշափ կոտորեցին և թագավորի ու զորքերի գանձերը ավար առնելով՝ վերադարձան իրենց քաղաքը: Իսկ թագավորը, մեծ անարգանքով փախստական եղած, ձիարշավ ընկավ իր թագավորութիւն քաղաքը: Ապա իր սասաիկ ամբարտաւանութիւնը թողնելով՝ կարողացավ մտաբերել Դավթի երգի խոսքերը, որ ասում է. «Լավ է հույս զնել տիրոջ ու սրբերի աղոթքների վրա, բան իշխանների ու գանձերի առատութիւն, որովհետեւ հարստութիւնը ամենեկին չի օգնի բարկութիւն օրը»<sup>73</sup>: Ե՛վ դրանից հետո, և՛ հետագայում՝ մինչև իր մահվան օրը նա այլևս զոչոս չեկավ թագավորանիստ քաղաքից:

## Գ Լ Ո Խ Է

### ՈՒՌՉԱ ՔԱՂԱՔԻ ԱՌՈՒՄԸ

Ուռհա քաղաքի իշխանը, որին իրենք ամիրա էին կոչում, որն իր նախնիներից էր ժառանգութիւն ստացել այդ տեղը,

\* Մատթ. ԻԱ. 44

\*\* Մաղմ. ԾԺԷ. 9

մեռավ անորդի, իսկ նրա կինը իր ծառաներից մեկին, որն անունը Սալամա էր, տուփական ցանկութեամբ սիրելով՝ ամուսնու փոխարեն քաղաքին տեր դարձրեց:

Սա վախենալով քաղաքի մեծամեծներից, որ իրեն չէն հնազանդվի, իր հավատարիմ ծառաներից մեկին ուղարկում է Մանյակի մոտ, որն այն ժամանակ Հոռոմոց գավառի սահմանազխի մոտ իշխանութիւն ուներ և նստում էր Սամուսա<sup>74</sup> քաղաքում, որը, ասում են, հնում Սամսոն էր շինել, որպէսզի Մանյակի միջոցով իմաց տա թագավորին, որ սա Հոռոմոց աշխարհում տա իրեն իշխանութիւն և հավիտենական ժառանգութիւն՝ գրով ու կնիքով հաստատված. «Իսկ ես, — ասում է, — առանց պատերազմի կհանձնեմ նրան իմ այս քաղաքը»: Ռոմանոս թագավորն այս լսելով՝ համաձայնութեան գրութիւն է գրում և նրան դարձնում է անթիպատոս պառիկ, իսկ նրա կնոջը պատվում է մեծ ու երեւելի պատվով:

Իսկ քաղաքի բնակիչները երբ լսեցին աղաղակի ձայնն ու փողերի հնչյունը, սրտաբեկ ու դողահար դուրս գալով, վարհուրած ու խռովահույզ, ծովի ալիքների նման կուտակվելով միմյանց վրա էին թափվում: Եվ երբ ոչ մի ելք չկարողացան գտնել, քաղաքի մահմեղականները գիշերով մոտակա քաղաքները մեկնեցին ու պատմեցին նրանց իրենց գլխին եկած հանկարծահաս վտանգը: Հոռոմները երբ այդ լսեցին, ձայն տալով մի տեղ հավաքեցին զորքի բազմութիւնը և հարձակվելով քաղաքի վրա՝ պարիսպը քանդեցին ու ներս մտնելով կոտորեցին շատերին: Ուստի քաղաքացիներից շատերը մեծ կաթողիկէն մտնելով ամրացան, իսկ ուրիշները՝ ամուր տեղերում կամ աշտարակներում: Պաշարողները շատ տեղեր հըրկիղեցին, մինչև իսկ սուրբ կաթողիկէն և բացելով այդ սուրբ տան գանձարանը, որը ամբարել էին Հայոց առաջին թագավորները ի սպաս տիրոջ տաճարի կարիքների, ամեն ինչ կողոպտեցին և մեծ շտապով գնացին իրենց տեղերը: Այն օրվանից մինչև այժմ Ուռհա քաղաքն ընկավ Հոռոմոց ձեռքը<sup>75</sup>,

Գ Լ Ո Ւ Խ Ը .

ՌՈՄԱՆՈՍԻ ՄԱԶԸ

Ռոմանոս թագավորը, բարի հիշատակների ամենակին շարժանաւալով, մեծ հինգշարթի օրք պալատ գուրս եկավ իր գորքի հետ հրապարակախոսելու. մինչև կեսօր նա իշխանութեան համաձայն արքունատուր պարզեներ տվեց, ապա գործը վերջացնելով՝ հրամայեց ոսկի ավազանում ջուր պատրաստել լողանքի համար: Բայց երբ նա մտավ տաք ջրով լցված ոսկի ավազանի մեջ, սպասավորները բռնելով նրա գլխի մազերից՝ բնկղմեցին ջրի տակ և պահեցին մինչև որ մեռավ: Այդ կատարեցին համաձայն թագուհու կամքի: [Ռոմանոսը] զահալալեց յոթ տարի<sup>75</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Թ .

ՄԻՆԱՅՆԵԼԻՆ<sup>76</sup> ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ

Դանիելին մարդարեութեան մեջ մի տեսիլք երեաց, որի գլուխը ոսկի էր, թիկունքն ու ձեռքերը՝ արծաթ, իսկ կողերը՝ պղինձ. սա անցյալ է. իսկ խեցու հետ խառնված երկաթի սրունքն ու ոտները Հոռոմոց թագավորութունն է, որովհետև ուրիշ ազգերի նման հոր թագավորութունը որդին չի ժառանգում: Նա, ով հայրերից ու պապերից է ժառանգում թագավորութունը, երկաթն է, իսկ զրօից եկածը, որ թագավորական տոհմից չէ, խեցին է: Եվ խեցիներ հաճախ են պատահում նրանց մոտ, ինչպես տեսնում ենք հենց այժմ, ներկա թագավորին: Սա արքայական տոհմից չէ, ո՛չ էլ թագավորի որդի և ո՛չ էլ նույնիսկ երեկի սեպուհ կամ իշխան, այլ մի աննշան մարդ պալատի ծառայողներից, որին թագուհին սիրելով պոռնկական մոլեգին ախտով՝ նրա պատճառով ջրահեղձ արեց իր ամուսնուն. ասում են նաև, որ սպանողներից մեկն էլ սա էր: Այդ սատանայական գործերը գլուխ բերելուց հետո թագուհին հրամայում է իր մոտ կանչել քաղաքի մեծամեծերին և ցույց տալով վախճանված թագավորին՝ հայտարարում

է որ հանկարծամահ է եղել: Ապա հետզհետե այս Միխայելին առաջ քաշելով՝ թագավորեցնում է, դարձնելով իրեն ամուսին. այս գործը հայտնի դարձավ բոլորին:

Որովհետև Միխայելը շատ ազգականներ ու եղբայրներ ուներ, ամենաբարձր իշխանութունը տվեց նրանց ձեռքը: Եղբայրներից մեկին մագիստրոս դարձրեց, Թեսաղոնիկեն<sup>76</sup> հանձնեց նրան ու նրան վատահեց Բուլղարաց ու արևմտյան կողմերի հոգաբ. մեկին անվանեց Դեմեստրիկոս և ուղարկեց մեծ Անտիոք<sup>77</sup>: Տաճկաստանի և հարավային կողմի հոգաբ հանձնելով նրան: Իսկ եղբայրներից երրորդին, Օռթանոս<sup>78</sup> անունով, որը ներքինի էր ու արեղա, նշանակեց Կոստանդնուպոլիս թագավորական քաղաքում, դարձնելով սինկլիտոս և պալատի ամբողջ հոգան ու իրավունքները հանձնելով նրան:

Ինքը սաստկապես դիվահարվեց. մինչև իսկ եկեղեցիներ ու սրբերի հանգստարաններն էր գնում, միայն թե չգիտեմ, այդ Ռոմանոսի անարգար մահվան վրեժխնդրութունն էր, թե՛ ի բն ուներ այդ դիվահարութունը: Բայց ասում են նաև այլ պատճառներ. որովհետև թագավորութունը նրան չէր հասնում, դրա համար նա գնում էր Թեսաղոնիկե քաղաքը, մի կախարդ կնոջ մոտ, ինչպես, պատմում են, հնում, Բարսեղի ժամանակ, մի երիտասարդ էր կախարդի միջոցով այգպիսի գործեր կատարել, հանձնեց իրեն բոլոր շարիքների հոր ծառայության, և պոռնկության դևի միջոցով թագուհին սիրահարվեց նրան, ամուսնացավ հետը ու երկրների վրա թագավոր դարձրեց: Բայց գործը գլուխ բերելուց հետո, թագավորական կարգի համաձայն, տերունական տոներին նա հարկադրված գնում էր եկեղեցի. շար դեբ այդ շխարհացավ ներել նրան, իրենից ապստամբ կարծելով: Եվ այս հաստատում են նրանով, որ, ասում են, թագավորը հաճախ Թեսաղոնիկեում էր մնում, հավանաբար կախարդի մոտ: Այսպես էր, թե այնպես, սակայն մինչև մահը դեբ չհեռացավ նրանից և լվում էր նրան:

Սրա թագավորության ժամանակ Հոռոմոց գորքերի մեծ կոտորած եղավ Արծրունյաց աշխարհի Բերկրի<sup>79</sup> կոչված բերդաքաղաքում, որը իր դաստակերտներով հանդերձ վաղուց հափշտակել էին պարսիկները և իրենց իշխանութեան տակ

էին պահում: Վասպուրականի գավառապետ ունեւոր Կավասիւլասը մեծ զորքով եկավ պարսիկների վրա, քաղաքն առավ և հեծյալ զորքերը կանգնեցրեց վրան պահապան: Այն ժամանակ մեկ ուրիշը փոխարինեց նրան և զորքն առնելով՝ գնաց իջևանեց ավելի հեռավոր մի տեղում, որն Արծակ<sup>80</sup> է կոչվում, հեծելագործի ուտեստի և այլ անհրաժեշտութիւնների առատութեան պատճառով: Իսկ քաղաքի տերը, որի անունը խորիկ էր, բերդում փակված՝ իմաց տվեց Պարսից աշխարհի գլխավորներին: Պարսիկները հանկարծակի միմյանց ձայն տալով՝ մի տեղ հավաքվեցին և գալով քաղաքի վրա՝ պատնեշով պաշարեցին այն: Հոռոմոց զորքերն անառակութեամբ ու գինիով թմրած՝ չկարողացան պաշտպանել իրենց, մանավանդ որ Իսրայելի պահապանը նրանց զրկեց իր օգնութիւնից: Պարսիկները սրի քաշելով կոտորեցին նրանցից մոտ քսանչորս հազար մարդ: Անշուշտ, այդ պարսիկների արդարութեան պատճառով շեղավ, այլ մեր զորքերի անիրավութեան, որոնք դաժանորեն սրի քաշվեցին տիրոջ խոսքի համաձայն՝ «Չարեւրին շարով կկորցնի»\*: Իսկ Արծակում եղած զորքերը չհասան նրանց օգնութեան: Պարսից զորքերը կողոպտելով սպանվածների ունեցածները՝ գնացին իրենց աշխարհը: Բայց ճանապարհին, քանի որ շատ կայանավորներ ունեին, խորիկը հրամայեց մի իջևանում գետինը մարդաչափ փորել և կապվածներին նույն փոսի վրա մորթել, մինչև որ արշուճով լցվի, և ինքը մտավ լողացավ սպանվածների արյունով, որպեսզի հանգստացնի իր վառված սիրտը:

Հաջորդ տարվա սկզբում թագավորը դարձյալ զորքեր ուղարկեց, որոնք եկան և մեքենաներով ու մանգղիոններով սկսեցին քանդել ամրոցի պարիսպը: Ամրոցում գտնվողները տեսնելով, որ փրկութեան հնար չկա, որովհետև նույնիսկ նրանցից շատերը մեռան, զորագլուխներին աղաչեցին, որ իրենց անվնաս արձակեն զեպի իրենց աշխարհը և տիրեն ամրոցն ու նրա դաստակերտները: Նրանք երբ լսեցին, արին սրանց ասածի պես. այնուհետև պարսից իշխանութիւնն ընդմիշտ վերացավ այդտեղից:

\* Մատթ. ԻԱ. 41

Սրա [Միխայելի] թագավորութեան սկզբում արեգակը խափարեց Արաց ամսի ուրբաթ օրը, ճաշից հետո, մեր թվականի չորս հարյուր ութսուներկու տարում<sup>81</sup>: Գիտուններից շատերն այդ տեսնելով՝ կարծեցին, թե այդ օրը նեոլ<sup>82</sup> պիտի ծնվի կամ մեծամեծ փորձանքներ պետք է գան: Այդ իսկապես էլ կատարվեց մեր օրերում, ինչպես սույն պատմութիւնը հետազոտեց ցոյց կտա մեզ. մեր աչքերով տեսանք Աստու բարկութեան հարվածները և անսովոր պատահասը, որ եկավ Հայոց աշխարհի վրա մեր մեղքերի պատճառով: Դրանից առաջ էլ մի ուրիշ մեծ նշան երևաց, որ սաստիկ հաճախեց տեսնողներին. նա նման էր Երուսաղեմի վերջին ավերածի նշաններին. որի մասին Փրկիչն սպանալով ասում էր. «Այն օրերը կլինեն այնպիսի տառապանքների օրեր, որպիսիք չեն եղել արարչութեան սկզբից ու այլևս չեն լինի երկնքի ներքո»\*. որովհետև իրենց արարչի ու տիրոջ զեմ կատաղեցին, մարդ կարծելով նրան: Անանիաս անունով մի մարդ Երուսաղեմ քաղաքի մեջ կանգնած՝ բարձրադաշակ ողբալով ասում էր. «Վա՛յ քեզ, Երուսաղեմ, վա՛յ քեզ, արյան քաղաք, հասանք ու վրեժխնդրութեան օրերը» և այլն, որ մեծ եմբարտոք, իր Եկեղեցական պատմութեան<sup>83</sup> մեջ գրել է: Նույնպես և այստեղ, մեր օրերում, նրա նման բոլորովին անձանոթ, անտուն ու անտերունչ մի մարդ, արեւելյան կողմից եկած, Աստուծոյի, Հարք ու Մանանդի գավառներով անցած, գալով Եկեղեցաց գավառը՝ ընդմիշտ մնալու համար, այս խոսքերը բերանն առած գիշեր-ցերեկ անդադար ասում էր բարձրաձայն. «Վա՛յ ինձ, վա՛յ ինձ» և էլ ուրիշ ոչինչ չէր ասում: Եթե մեկը հարցնում էր, թե ո՞րտեղից ես կամ ո՞ր գավառից կամ ինչո՞ւ ես այդ ասում, պատասխան չէր տալիս, այլ շարունակ նույնն էր կրկնում ու չէր դադարում ասելուց: Անմիտ մարդիկ նրան տեսնելով՝ խելակորույս էին համարում, բայց իմաստուններն ասում էին. «Այդ վայր ամրոցը երկրին է լինելու»: Այժմ թող այս խոսքերը այստեղ էլ ընդհատվեն, իսկ մենք, պատմութեանս կարգով, վերադառնանք թագավորին:

Միխայելը իր բրոջ որդուն<sup>84</sup> կեսար է անվանում և յոթ տարի ութ ամիս թագավորելուց հետո հիվանդանալով մեռ-

\* Մարկ. ԺԳ. 19

նում: Թագուհին կեսարին դարձնում է իրեն որդեգիր և ամուսնու փոխարեն թագավորեցնում. սայց սա թագուհու արած բարիքի դիմաց փոխանակ երախտահառույց լինելու, որոշում է նրան իր ազգականներով հանդերձ աքսորել հեռաբնակ կղզիներ, որպեսզի իշխանությունը հաստապահս իրենց մնա, որը և կատարեց էլ: Բայց թագուհու քույրը, որի անունը Թեոդորա էր, կանչում է քաղաքի զխավորներին ու հայտնում կատարվածը: Նրանք երբ այս լսեցին, արևմտյան զորքը կանչելով իրենց մոտ՝ հավաքվեցին և բռնությունը վրա հասնելով պահանջեցին, թե՛ «Յո՛ւյց տուր մեզ մեր ծիրաննփառ թագուհուն, որն իր պապերից ու հայրերից այս թագավորության ժառանգորդն է», որովհետև շատերը կարծում էին, թե թագուհին իսկապես մեռած է: Իսկ նա երբ տեսավ սրանց բռնությունն ու միաբանությունը, երկյուղով պաշարված՝ հրամայեց թագուհուն ետ բերել աքսորից: Երբ Թեոդորան տեսավ իր քրոջը, իսկույն հրամայեց բռնել թագավորին իր ազգականներով ու մտերիմներով հանդերձ: Իսկ թագավորը փախչելով՝ ցանկանում էր մտնել ավագ եկեղեցին ու սեղանի տակ թաքնվելով ազատվել, բայց շհասցրեց՝ որովհետև հետամուտներն անմիջապես հասնելով ու բռնելով վերագարձրին և մի անմաքուր տեղում գետին զցելով՝ աչքերը կուրացրին, այդպես վարվեցին նաև Դեմեստրիկոս կոչվածի և ուրիշ շատերի հետ: Ապա Թեոդորան հրամայեց նրանց աները թալանել ու ավերել: Բոլոր քաղաքացիներն առհասարակ գնալով կողոպտեցին և նրանց մեծամեծ ու գեղեցիկ ապարանքները մինչև հիմքերը բանդելով՝ տակնուվրա արին, ոչնչացրին: Եվ այսպես բազմացավ խոռվահույզ ամբոխը, ավարառության մոլուցքով վառված՝ մարդիկ մինչև անգամ պալատի պարիսպը ճեղքելով՝ թագավորական զանձարանից շատ զանձեր դուրս տարան. քաղաքի մեծամեծները հազիվ կարողացան հանդարտեցնել ամբոխին և այն էլ արեգակի օգնությամբ, որն արդեն ամփոփում էր իր ճառագայթները:

Իսկ թագավորը, որ երեկ ոսկի աթոռին բազմած հրաման էր տալիս քշխարհին, այսօր կուրացած, նստած է ունայնության ու նախատինքի աթոռին, և նրանք, որ կարծում էին, թե հավիտենապես տիրելու են ծովին ու ցամաքին, մի վայրկյա-

նում կորցրին իրենց իսկ փրկությունը: Արդարև, նրանք նմանվեցին տանիքի խոտին, որը, ըստ մարգարեի, դեռ ձեռք չդիպած շորացավ. նրանով ո՛չ հնձողի բուռը և ոչ էլ խրձերը հավաքողների գրկերը լցվեցին. նաև անցորդների բարեբանությունը շհասավ նրա լսողությունը\*։ Այս է կարճատև պատմությունը կեսարի, որը վեց ամիս թագավորեց:

## Գ Լ Ո Ւ Ջ

ԲԵՆԴՈՍԻ ԱՐԿԻՑՑ ՄՈՆՈՄԱԽ ԿՈՉՎԱՍ ԿՈՍՏԱՆՊՈՒԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԷ

Ըստ մարգարեի տեսիլքի, սա էլ խեցի մասիցն էր, որովհետև սրա հայրը պալատում ուներ դայուսություն<sup>86</sup> պատիվ, որի կողմից ուղարկվում էին երկրի բոլոր դատավորները: Կեսարի կարճատև թագավորությունից հետո մատակ առյուծը իր խշտերում մոնչում էր ընկերոջ համար, քանի որ շատ հոգսեր էին պաշարել նրան, որովհետև յուրայիններից ոչ ոք չուներ թագավորությանն արժանի, իսկ որին որդեգրեց ու օտարձրեց երկրի տեր ու թագավոր, փոխարենն այն հատուցեց նրան, ինչ որ քիչ առաջ նշեցինք: Ի՞նչ է անում հապա. կանոնական կարգերից դուրս գալով՝ առաջ է քաշում այս մարդուն, ամուսնանում հետը ու նստեցնում թագավորական աթոռին: Շտաբը սրան նրա սիրականն էին համարում, բայց ես չզիտեմ, այսպե՞ս է, թե՞ այնպես, միայն ինքը իր հրովարտակում գրել էր, որ հանուն երկրի բարօրության ու խաղաղության լինայեցի ինձ և այս անարժան գործը համարձակվեցի կատարել:

Սրա առաջին տարում ապստամբեց Մանյակ<sup>87</sup> որդին, քաջ ու անվանի մի տղամարդ, որն իշխում էր արևմտյան կողմին. սա շատերին միաբանեց իր հետ և մեծ զորքով եկավ մինչև թագավորական քաղաքի դուռը և իր ուժով ու քաջությամբ այնքան բռնացավ նրանց վրա, որ շատերը կամա թե ակամա ենթարկվեցին նրան ու հնազանդվեցին, կարծելով, թե թագավոր կլինի այն հաջողությունների պատճառով, որ ուղեկցում էին նրան. թագավորի զորքերը երկու-երեք անգամ

\* Հմմտ. Սաղմ. ճԻԸ. 6—8

դուրս եկան կովեցիներն նրա դեմ և պարտաւելելով, անարգված վերադարձան թագավորի մոտ: Իսկ վերջին ճակատամարտն սկսելիս բոլորն էլ մտքում դրել էին այս անգամ էլ հաղթելուց հետո հնազանդվեն նրան ու դարձնեն թագավոր: Բայց որովհետև նա շմառածեց Աստծով թագավորել, այլ Արիստղոսի նման, ամբարտաւանութեամբ հղիացած, հույսը իր ուժի վրա դրեց, Արիստղոսի պատժով էլ Աստված հատուցեց նրան, նրան դտան պատերազմի մեջ ընկած, առանց մեկի հետ ընդհարված լինելու. հզոր հրեշտակն էր ավանդել նրա հոգին: Այս ամբից ու անում է ամենախմաստուն կերպով բոլորի արարիչն ու տերը, որ բոլոր թագավորներից ահավոր լինելով՝ կարող է հանել երկրավոր տերերի հոգին, որպեսզի ձեռն հզորը պարծենա իր հզորութեամբ, ո՛չ մեծը՝ իր մեծութեամբ և ո՛չ էլ իմաստունը իր իմաստնութեամբ, ինչպես որ գիրքն է ուսուցանում, այլ պարծեցողը պարծենա Աստծով, երկրի վրա արդար դատաստան անի ու արդարութուն գործի՞»: Այսպիսի մարդն է արդարև արժանի մեծամեծ գովեստների ու պարծանքի. նրա անունը հավիտենապես կմնա, կբարձրանա ու կփառաբանվի<sup>\*\*</sup>, ինչպես սաղմոսարանում է գրված: Այսպիսին էր մեծն Դավիթը, որը թեպետ մարգարեի կողմից թագավոր օծվեց և օծման հետ ստացավ մարգարեական ոգի ու զորութուն, այնպես որ դազաններին բռնելով՝ այծերի ուկերի նման ճեղքում էր, և այդ զորութեանն ապավինելով՝ մարտնչելով անպարտելի հսկայազնի դեմ՝ պարսաբարով նրա գլուխը ջարդելով գետնին փռեց, վերացնելով Իսրայելի նախատիները, սակայն Սավուղից շատ անգամ հալածվելով՝ ներում էր նրան և ենթարկվում<sup>•</sup> կոշտի հրամանին. ոչ միայն չէր ձգտում բռնութեամբ տիրել նրա թագավորութեանը, այլև երկու անգամ ձեռքն ընկնելիս, իր հալածողին խնայեց, ինչպես բարերարի, և նրան սպանել ցանկացողին սաստելով՝ ասաց. «Չեոք մի՛ տուր գրան, որովհետև Աստծու օձյալն է»<sup>\*\*\*</sup>: Այդ պատճառով էլ Աստված սիրելով նրան՝

ասում էր. «Գտա իմ սրտով մի մարդ, որն իմ կամքը պիտի կատարի»: Իսկ սա (Մանայակն) այսպես շմառածեց ու շանսաց Աստծու հրամանին և առանց Աստծու անձամբ ուղեց թագավորել, մոռանալով աստվածային այն հրամանը, որ մարգարեի միջոցով Իսրայելի թագավորներին նախատելով՝ ասում էր. «Վա՛յ նրանց, ովքեր կամեցան թագավորել ոչ իմ միջոցով» և այլն:

Արդ, ոչ թե այս թագավորը որևէ գովեստի արժանի է, դրա համար Աստված խղճաց նրան, այլ ավոտն է պատվում և ամբարտաւանութեան աղբյուրը փակում, ինչպես հրեաներին բարոզելով Փրկիչն էր ասում. «Մովսեսի ավոտին նստեցին դպիրներն ու փարիսեցիները»<sup>\*\*</sup>, որոնք թեպետ կեղծավորներ էին, բայց ավոտի պատճառով հրամայում է հնազանդ լինել: Ուստի մեծ Պողոսն էլ, զատիբարակված այդ երանելի խոսքերով, գրում է հոռմայեցիներին. «Ամեն մարդ, որ իշխանութեան ներքո է, հնազանդ պիտի մնա, որովհետև իշխանութունը այլ տեղից չէ, այլ Աստծուց»<sup>\*\*\*</sup>. իշխանի մասին չի ասում, այլ իշխանութեան, այսինքն՝ ավոտի, որովհետև բոլոր իշխաններին Աստված չի կարգում. և ավելացնում է. «Ով որ հակառակ է կանգնում իշխանութեանը, Աստծու հրամանին է հակառակ կանգնում, իսկ հակառակողները պիտի պատժվեն»<sup>\*\*\*\*</sup>, ինչպես և սրան պատահեց, որովհետև սա ոչ թե որևէ մարդուց պատժվեց, այլ Աստծու արդար դատաստանից, որ բոլորին դատում է ճիշտ և արդարացի. նա արթուն աչք է, և մեր բոլոր գաղտնիքները հայտնի են նրա ամենատես գիտութեանը, ինչպես երանելի Դավիթն է սաղմոսելով խոստովանում. «Դու իմացար իմ անելիքն ու արածները»<sup>\*\*\*\*\*</sup>: Սրա նման և առաքյալն է գրում եբրայեցիներին. «Չկա մի արարած նրանից անտես»<sup>\*\*\*\*\*</sup>: Մանուկներն էլ հնոցում գովելով էին ասում. «Դու, որ նստում ես քերովքների մեջ և դե՛

\* Ա. Թագ. Բ. 9, երեմ. Թ. 23—24

\*\* Հմմտ. Սաղ. ԸԺԱ. 9—10

\*\*\* Ա. Թագ. ԻԳ

\* Գործ. ԺԳ. 22

\*\* Մատթ. ԻԳ. 2—3

\*\*\* Հոովմ. ԺԳ. 1

\*\*\*\* Հոովմ. ԺԳ. 2—3

\*\*\*\*\* Սաղմ. ԸԼԸ. 5

\*\*\*\*\* ԵՐՐ. Գ. 13



պի անդունդները նայում, հավիտյան գովված ես և առավել փառաբանված\*, որովհետև տեղի բարձրությունից նրա ճշմարիտ գիտությունը ազդարարեցին, ըստ սաղմոսի երգի, թե՛ «Տերը նայեց երկնքից երկիր»։ Այսպես էլ մեծ Ծսային է ասում. «Տիրոջ աչքերը բարձունքում են, իսկ մարդը խեղճ, ողորմելի. ամբարտավանների հսարտությունը կխոնարհվի, և միայն տերը կբարձրանա արդարապես, ու սուրբը կփառավորվի»\*\*։ Մրանք կատարվեցին Կոստանդինի թագավորության սկզբում, մեր շորս հարյուր իննսուն թվականին։

Իսկ երեք տարուց հետո հասավ Հայոց աշխարհի կյանքի վերջը, որովհետև մի տարվա ընթացքում վախճանվեցին մեր աշխարհի երկու թագավորներն էլ՝ հարազատ եղբայրներ Աշոտն ու Հովհաննեսը<sup>68</sup>։ Այդպես էլ նրանց հաստատուն ամուր տեղից շարժվելով՝ այլևս շտեղակայվեց. իշխանները զրկվեցին իրենց հայրենի ժառանգությունից ու պանդխտեցին օտար երկիր. գավառներն ավերվեցին ու կողոպտվեցին հույների կողմից, շինանիստ ավանները դարձան գաղանների բնակավայր, իսկ նրանց անդաստանները՝ երկների արոտատեղի. զեղեցկատես, բարձրահարկ ու մեծամեծ տները վերածվեցին ճիվաղների ու հուշկապարիկների բնակարանների, ինչպես ողբում են սուրբ մարգարեները Իսրայելի ամայանալը. «Այնտեղ ողնին ձագեր հանեց և առանց երկյուղի պահպանեց իր զավակներին»\*\*\*։ Ավազակների բույն դարձան վանքերի հանդիսավոր տեղերն ու նրանց մեջ եղած եկեղեցիները, որոնք երկնքի էին նմանվում՝ իրենց պայծառ շինվածքներով ու գեղաշուք զարդարանքներով, իրենց անշեջ լապտերներով ու ջահերով, որոնց լույսի պայծառությունը, օդի հետ տարածվելով, այստեղ-այնտեղ ճռվելով, նմանվում էր ծովի ալիքներին, որոնք, խաղաղ եղանակին, մեղմաշունչ զեփյուռի տատանումներից վետ-վետ՝ միմյանց վրա են բարձրանում ու պատում իրար։ Իսկ առատորեն նվիրաբերած խնկի զուր-շին, որ անուշաբույր բարձրանում էր վեր՝ հրի զորությունը,

\* Հմմտ. Դանիել 9, 54, 52

\*\* Եսայ. Բ. 11

\*\*\* Եսայ. ԼԳ. 15

զարնան օրերին, նման էր բարձր լեռան կատարին նստած մշուշի, որ փակում է, ծածկում արևի ճառագայթները։ Իսկ նրանց մեջ բնակվողներին ո՛ր խոսքը կզորի ներկայացնել նրանց երգերի քաղցրաձայնությունը, անդադար սաղմոսերգությունը, աստվածային գրքերի ընթերցումները, տերունական տոների հանգեսներն ու նահատակների պատիվը, մեկ սրտով մտածողների կամքն ու դեպի աստվածային ունեցած ջերմեռանդությունը և այլն, և այլն։

Այսպես էր մի ժամանակ. այժմ մնացել են ամեն ինչից թափուր ու անարգ, ամեն բարեփառությունից զուրկ ու կողոպտված. երգերի քաղցրաձայնության փոխարեն բվերն ու տտաղեղներն են դասազուխներ, սաղմոսերգության փոխարեն տատրակներն ու աղալնիներն են երգում, ինչպես ասել է մարգարեն՝ «Քաղցրաձայնությամբ կանչում են իրենց ձագերին»։ ջահերը մարել, անուշահոտ խնկաբուրումները վերջացել և խորհրդի այն սուրբ սեղանը, որ մի ժամանակ նորահարսի պես զարդարված էր շքնաղագեղ զարդերով, փառքի պսակը կրելով դեմքին, այժմ վերածվել է ողորմելի ու անսպառ արտասուքների արժանի մի տեսարանի. մերկացել է զարդերից, փռշիով լցվել, դարձել է հանգրվան ազոավների։ Այս բոլորը պատմելու համար շատ խոսքեր են պետք և, նամանավանդ, երկնային շնորհի օգնականությունը, որ կարողանանք գործը ավարտել։ Վերջապես ժամանակն է հառաջ տանելու այս պատմությունը։

Երբ մեծ Կոստանդինը պսակած էր այն հիվանդությամբ, որից և մեռավ, հրաման տվեց մտեր եղածներին. «Դո՛ւրս եկեք, փնտրեցե՛ք մի մարդ Հայոց աշխարհից և ում որ գտնեք, բերե՛ք այստեղ»։ Խնդրակները գնալով գտան Կիրակոս<sup>69</sup> անունով մի երեցի, որը կաթողիկոսարանի հյուրընկալն էր, և բերին թագավորի մոտ։ Թագավորը Հայոց աշխարհի վերաբերյալ նամակը տվեց նրան և ասաց. «Այս գրությունը տա՛ր և տո՛ւր Հայոց թագավորին ու ասա՛, թե որովհետև բոլոր հողածինների նման մահվան հրավերը նաև մեղ հասավ, ա՛՛ն քո գրությունը և քո թագավորությունը տուր որդուդ, իսկ քո որդին իր որդիներին մինչև հավիտյան»։ Եվ ինքը մահճում պսակած վախճանվեց, իսկ Կիրակոսը նամակը պահեց

իր մոտ մինչև Միխայելի թագավորելը և նրան վաճառելով՝ ստացավ շատ գանձեր: Ավագ այն ցավալի առևտրին, որքան մարդկանց արյունապարտ դարձավ, ինչքան եկեղեցիներ ավերվեցին այդ վաճառքի պատճառով, քանի՜ գավառներ դարձան անմարդարնակ ու ամալի, քանի՜ մեծանիստ ավաններ զրկվեցին բնակչությունից: Բայց ամբողջը կպատմենք իր տեղում, իսկ մենք մեր պատմությունը առաջ տանենք սկսած կարգով:

Երբ Հոռոմոց ինքնակալը լսեց հայոց թագավորների մահվան լուրը, Հայաստանին վերաբերող նամակը գտնելով՝ ձեռնամուխ եղավ Անի քաղաքն ու երկիրը առնելուն՝ իբրև իր սեփական ժառանգություն: Իսկ Հայաստանի գլխավոր իշխաններից մեկը, Սարգիս<sup>90</sup> անունով, մտադրվեց թագավորել Երբակի ու նրա շրջակա գավառների վրա, մանավանդ որ Հովհաննեսի տան ամբողջ գանձերը վերցրել էր իրեն, քանի որ մահանալիս ինքն էր նրան խնամակալում: Բայց վահագամը<sup>91</sup>, որը մի հզոր, անվանի, բարեպաշտ ու վեհ մարդ էր, այնպես որ ոչ ոք չկար նրան հավատար, իր ազգակիցներով, որդիներով ու եղբորորդիներով հանդերձ, թվով մոտ երեսուն իշխաններ, չմիաբանվեցին նրա հետ, այլ հրավիրելով իրենց մոտ Աշոտի որդի Գագիկին<sup>92</sup> թագավորեցրին իրենց վրա և հնարամտորեն քաղաք բերին:

Իսկ Սարգիսը երբ տեսավ կատարվածը, թագավորական գանձերն առնելով մտավ միջնաբերդը՝ անտոկ Անին: Գագիկը տղամարդու քաջասրտությամբ միայնակ գնաց նրա մոտ և հորդորելով համոզեց նրան. և նա ամբողջը դուրս գալով՝ գնաց Սուրմառի<sup>93</sup> կռչված բերդաքաղաքը, բայց ամբողջ և իր ձեռքի տակ եղած մյուս բերդերը Գագիկին չհանձնեց. ավելին, այնտեղ (Սուրմառի) գնալով՝ նա դարձյալ թոնվում է անմիտ ու շար գիտավորությամբ՝ իր ունեցածը հանձնել Հոռոմեներին ու գնալ նրանց մոտ: Գագիկը սակավ մարդկանցով գնալով մտավ բանակամեջ, այն վրանը, ուր Սարգիսն էր և նրան ձերբակալելով՝ վերադարձավ իր քաղաքը: Ապստամբին սպանել էր պետք. մինչդեռ Գագիկը Սավուդի նման երկրորդ Ագադին խնայելով՝ իր հետ կառք նստեցրեց, որի համար և Սա-

Պուդի պատիժն ստացավ. ապրեց մի կյանքով. որ ծանր է մահից:

Այս օրերում Հոռոմոց զորքերը չորս անգամ ըրար ետևից մտան Հայոց աշխարհը, սրով, հրով ու գերությամբ անմարդարնակ դարձրին ամբողջ երկիրը: Երբ մտաբերում եմ այդ աղետները, խելքս թռչում է, միտքս՝ ցնորվում և ահավոր ռարհուրանքից ձեռներս դողալուց՝ չեմ կարողանում շարունակել շարադրանքս, որովհետև դառն է այս պատմությունը և անհատնում ողբերի արժանի:

Կար ժամանակ, որ այս երկիրը ճանապարհորդների դեմ բացվում էր իբրև տնկախիտ, կանաչազարդ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք ու երջանիկ մի դրախտ, քանզի իշխանները զվարթատես դեմքով բազմում էին գահին, իսկ նրանց առջև, զարնանաբեր երփնավառ ծաղկանոցների նման, կրդ ու զրույցների հանդեսներ էին միայն լինում, ուր փողերի ու ծնծղաների և այլ նրգարվեստների ձայները մարդկանց սիրտն ու հոգին համակում էին ուրախությամբ ու բերկրանքով, այնտեղ նստում էին նաև ծերերը, պատվական ու փառահեղ ալիքներով զարդարված, իսկ մայրերը մանուկներին գիրկն առած, մայրական գթով սուշորուն, անհուն բերկրանքից մոռանալով երկունքի ցավերի տխուր ժամանակը՝ աղավնիների նման իրենց նորափետուր ձագուկներով էին միշտ հրճվում: Ի՞նչ պատմեմ հապա առազաստում գտնվող հարսների, փեսաների սիրառատ ու հրաբորբոք անզուսպ ցանկությունների ու հակամիտության մասին: Բայց անցնենք դեպի վեր, դեպի հայրապետական աթոռն ու թագավորական գահը, որովհետև մեկը հոգու պարգևներով թանձրացած ամպերի նման վարդապետական շնորհի միջոցով կենսատու անձրև էր ցողում, պարարտացնելով եկեղեցու պտղաբեր դրախտը, իր կողմից ձեռնադրված արթուն պահապաններ՝ անդնեցնելով պարիսպների վրա, իսկ թագավորը, երբ դուրս էր դալիս քաղաքից, նմանվում էր առազաստից ելնող փեսայի կամ արեղակին, որ բարձրանալով արարածների գլխավերևում՝ դեպի ինքն է ձգում բոլորի հայացքը. նա նույնպես շողշողում էր փայլիլուն հանդերձներով ու մարգարտազարդ թագով և բոլորի ուշադրությունն էր գրավում ու զար-

մացնում. ոսկեզօծ դարդերով սպիտակ նժույզը, որ գնում էր տոչեից, արեգակի ճառագայթներն անդրադարձնելով՝ բազրի աչքերն էր շլացնում. առջևից ընթացող զարթերն իրենց խուռն բազմությամբ նմանվում էին ծովի ալիքներին, որոնք իրար վրա են կուտակվում: Եսև ճգնատեղերն էին լցված ու խճողված կրոնավորների բազմությամբ. մինչև իսկ գտուղերն ու ագարակները, բարի նախանձից մղված, կրոնավորների պես էին բնակվում: Այսպիսի բաներ մեր աշխարհը շատ ուներ: Ես այս դրեցի, որ երբ սրանց հակառակը պատմելու լինեմ, բոլորի արտասուքները շարժեմ<sup>94</sup>:

Այժմ թագավորը պատվից ընկած՝ իրեն դերի կալանավոր նստած է հեռավոր աշխարհում, այդպես էլ հայրապետական աթոռը զրկված աթոռակալից<sup>95</sup>՝ այրի մնացած նորահարսի պես դեմքով տխուր է երևում: Հեծելազորը շրջում է անտեր՝ սրբ Պարսկաստանում, որը Հունաստանում, որը Վրաստանում: Ազնվականներն ու իշխանավորները հայրենիքից անդահան, փառքից ընկած, ամեն մեկը մի տեղ մռնչում է, ինչպես առյուծների կորյունները իրենց խշտիներում: Արքունական պալատները ավերակ են ու անմարդի. մարդաբնակ երկիրը թափուր է բնակիչներից: Ո՛չ այգեկութի ուրախության ձայներն են լսվում և ոչ էլ հնձանում՝ արորողներին ուղղված գովեստի խոսքեր: Ո՛չ մանուկներն են խաղում ծնողների առաջ և ոչ էլ ծերերը աթոռով նստում են հրապարակներում: Ո՛չ հարսանիքի ձայն է լսվում և ոչ էլ զարդարվում են հարսնարանի առազաստները: Այս բոլորը կորա՞ն, վերացա՞ն և այլևս չեն կենդանանալու, ինչպես ասել է սաղմոսողը: Այժմ ամեն ինչ մեզ համար փոխվեց ողբ ու արտմոթյան, և ուրախության այն պատմուճանը փոխվեց արջնաթույր խորզազգեստի: Ո՛ր լսելիքը կարող է տանել այս պատմությունը մեր թշվառության, ո՛ր քարեղեն սիրտը չի նվազի հառաչելով և չի կտրատվի հեծծելուց: Ժամանակն է մեր հառաչանքներին խառնելու Երեմիայի ողբերից. «Միովնի ճանապարհները սգում են, որովհետև ոչ ոք չկա, որ անցնի»<sup>96</sup> է

\* Ողբ Երեմ. Ա. 4

Սրանք ասվեցին այն ժամանակ Երուսաղեմի ավերման առթիվ, բայց կատարվեցին այժմ:

Այս բոլորը Հայաստանին պատահեցին այն վաճառքի պատճառով, որ քիչ առաջ հիշեցինք<sup>96</sup>: Այս վաճառքն ինձ ավելի անմարդկային է թվում, քան Հուդայինը, որովհետև այն ժամանակ, թեև վաճառվողը անարգանքի ենթարկվեց, բայց վաճառք գին եղավ ամբողջ աշխարհի փրկության, ինչպես մեծ Պետրոսն է գրում ընդհանրական թղթերում. «Ոչ թե ոսկեզեններով կամ արծաթեղեններով գնվելով ազատվեցիք ձեր պապենական սնտախ պաշտամունքներից, այլ Աստծու որդու արյունով»<sup>97</sup>: Իսկ այստեղ՝ վաճառողը չափազանց տմարդի էր ու անգույթ, որովհետև այսքան շարիքների պատճառ դարձավ, որովհետև այն այգին, որ տերը տնկեց և մեր Լուսավորիչը իր տասնհինգամյա քրտնաջան աշխատանքով մշակեց, սա, ցանկապատք քանդելով ու աշտարակները կործանելով, դարձրեց օտարների ոտքի կոխան: Ըստ Գավթի երգի, մինչև իսկ անտառի խողբ ապականեց այն և վայրի կինճը արածեց նրանում: Այս բոլորի լուրը թող տիրոջը հասնի, և նրա դատաստանը թող տերը տեսնի. իսկ մենք դառնանք մեր պատմությունը:

Չորս հարյուր ինստունչորս թվականին առնվեց Անին, բայց ոչ թե պատերազմական կարգով, այլ խաբեական խոսքերով, որովհետև ավետարանով ու խաչով երգվելով համոզեցին Գազիկին՝ թագավորի հրամանով, որ ստում է. «Միայն քեզ տեսնելուց հետո թագավորությունդ կտամ քեզ և քո քաղաքին ու երկրին հավիտենական ժառանգ կհաստատեմ»: Ինչպես ասել են իմաստունները, իմաստունը երգվում է, և անմիտը՝ հավատում. և դարձյալ. «Մտողների խոսքերը լուրի պես պարարտ են, և հիմարները կլանում են դրանք»<sup>97</sup>: Երդումների ու խաչի, թե խակամտություն ու երկյուղած բնավորության պատճառով, չգիտեմ, Գազիկը հավատաց և քաղաքի բանալիները տվեց Պետրոսին, որ այն ժամանակ մեր Լուսավորչի հայրապետական զահի աթոռակալն էր, և մեծամեծ ուխտ ու պայմանով երկրի բոլոր հոգսերը հանձնեց. նրան:

\* Ա. Պետր. Ա. 18—19

նա Վահրամի և իրեն թագավորեցնող մյուս իշխանների խորհուրդը շլեց, այլ ենթարկվելով նենգավոր Սարգսի սազրանքին՝ դուրս եկավ քաղաքից ու գնաց Հունաստան անգառնալի ուղևորութամբ՝ կարթով բռնված մի ձկան նման կամ ծուղակն ընկած մի թռչունի պես: Թագավորը նրան տեսնելով՝ ա՛յ երդումները մտաբերեց և ոչ էլ խաչի միջնորդությունը, այլ փակեց նրան իր մոտ ու պահանջեց. «Տո՛ւր ինձ Անին, և փոխարենը ես քեզ կտամ Մելիտինեն իր շրջակա գավառներով»: Բայց նա հանձն չառավ:

Երբ այս խնդիրը երկարաձգվեց, քաջ Վասակի որդի Գրիգորը<sup>98</sup>, որը իմաստուն և աստվածաբանությունը հույժ քաջամուտ մարդ էր, որի նմանը ոչ ոք չկար, վեր կացավ գնաց թագավորի մոտ: Երբ տեսավ, որ Գագիկին չեն թողնելու վերադառնա իր երկիրը, թագավորին ներկայանալով՝ հանձնեց նրան Բջնու բանալին ու իր հայրական բոլոր կալվածները<sup>99</sup> և նրա կողմից մեծարվելով ստացավ մագիստրոսություն պատիվ<sup>100</sup> ու բնակություն տեղ Միջագետքի սահմաններում՝ գյուղեր ու քաղաքներ, գրով ու ոսկյա կնիքով հաստատված, որպես ազգեպագ հավիտենական ժառանգություն:

Իսկ քաղաքացի զլխավորները, որ Անիում էին նստում, տեսնելով, որ Գագիկը արգելափակվեց Հունաստանում, երբեմն մտածեցին քաղաքը հանձնել Դավթին<sup>101</sup>, երբեմն՝ զվնեցուն, որովհետև սրա բույրը Դավթի կինն էր, իսկ երբեմն էլ՝ Ափիսազաց Բագարատ<sup>102</sup> թագավորին: Պետրոս հայրապետը այդ մտադրություններն իմանալով ու հասկանալով, որ քաղաքը, միևնույնն է, անցնելու է մեկնումեկի՝ ձեռքը, նամակ է ուղարկում արևելյան կողմին տնօրինող իշխանին, որը նստում էր Սամուսատ քաղաքում (ասում են, որ այն հնում կառուցել է Սամփսոնը). «Հայտնի՛ր թագավորին, թե փոխարենը ի՞նչ կտա մեզ հատուցում, եթե ես հանձնեմ նրան այս քաղաքն ու երկիրս մյուս բերդերը»: Երբ նա այս իմացավ անմիջապես հայտնեց թագավորին: Այս լսելով՝ թագավորը, զանձերով ու իշխանությամբ գոհացնելով հայրապետին՝ տիրեց Անիին ու ամբողջ երկիրին:

Իսկ Գագիկը անմխիթար մնաց թագավորի մոտ. սա մարդասիրությունից դրդված նրան տվեց իր կամեցած տեղը<sup>103</sup>,

որը արժեքով շատ ավելի ցածր էր Անուց ու մնացած երկրից. շնորհակալությունն ու վարձատրությունը կաթողիկոսին հատուցեցին, որից քաղաքն առան: Գագիկը թագավորի հրամանով իրեն կին առավ Սենեքերիմի որդի Դավթի<sup>104</sup> դստերը և տեր դարձավ նրա բաժնին, որովհետև Դավթի վախճանվել էր առանց այլ ժառանգ ունենալու:

Թագավորը Անի քաղաքին տեղակալ ուղարկեց Ասիտ<sup>105</sup> անունով մի իշխանի, որն առաջ արևելյան կողմի կուսակալն էր: Սա գալով անշափ պատիվ տվեց ու մեծարեց Պետրոս հայրապետին, երկիրը նվաճեց իր ձեռքի տակ և մեծաբանակ զորքով շարժվեց-գնաց Դվին քաղաքի վրա: Բայց քաղաքի տեր Ապուստաբը պատերազմելով նրա դեմ՝ անշափ կոտորած է գործում քաղաքի դռները որտեղ մեռավ և Հայոց մեծ իշխան Վահրամը՝ իր որդով հանդերձ, մեծ սուգ պատճառելով հայերին: Մեր՝ շորս հարյուր իննսուներեք թվականին Ասիտի փոխարեն Հայաստանի իշխանությունն ստացավ Կամենաս<sup>106</sup> անունով մեկը. սա գալով՝ նախկինի պես շղատվեց ու մեծարեց հայրապետին, սկսեց նրա մասին ամբաստանադրեր ուղարկել թագավորին և խաբեություն մտնեց նրան քաղաքից, ասելով՝ «Թագավորը հրամայել է, որ դու բնակվես Կաբին գավառի Արծն<sup>107</sup> ավանում»: Հայրապետը դուրս գալով՝ եկավ մեր այս մեծանիստ ու արքայական քաղաքը, մեծ ուրախություն պատճառելով տեսնողներին, որոնք կարոտ էին նրան: Աստվածահայտնության տոնի ժամանակը մոտեցել էր. տոնի օրը, մեծ քաղմություն գնալով դեպի այն հորդահոս ջուրը, որ հյուսիսակողմի դաշտի լեռներից էր գալիս, ինչպես որ վայել էր, փառավորապես կատարեց օրվա արարողությունը: Բայց տերունական յուրը ջրի մեջ լցնելու ժամանակ մի տաճիկ մարդ քաղմությունից առաջ գալով՝ խնդրում է մկրտվել ջրում: Իսկ նա պատճառը հարցնելով և իմանալով, որ ուզում է քրիստոնյա դառնալ, նրան հրամայեց ջուրը մըտնել. մեռոնակիրը, նրա մոտ կանգնած, շիշը վերցնելով ձեռքը, ձեռով խփելով կոտրեց ու առատապես մեռոնը թափեց նորակնուքի ու ջրի վրա. բայց ապակուց մի բեկոր դիպչելով ծանրը վիրավորեց նրա ձեռքը, հորդահոս արյուն թափելով դեմին. շատերն այդ տեսնելով գուշակեցին, որ լավ բանի նշան

չէ, որը և հենց նույն օրն էլ կատարվեց, քանի որ մինչդեռ ճաշածամին սեղան էին նստած, կալանողներն եկան, նրան բռնեցին ու տարան-գրին Խաղտո Առին կողմած բերդը: Հետո էլ Հայաստանից նրա Խաչիկ անունով քնորդուն բերին գրին Ան քար<sup>108</sup> կողմած բերդը. նրանք այնտեղ մնացին մինչև գատիկ մոտերը: Ապա նրանց այնտեղից հանելով՝ տարան Կոստանդնուպոլիս, թագավորի մոտ. մինչև այս նաև Խաչիկի ավագ եղբորը՝ Անանիային էր իր հետ այնտեղ տարել մի ներքինի<sup>109</sup>, որն ուներ կես թագավորության պատիվ:

### Գ Լ Ո Լ Ի Ժ Ա

ԱՅՆ ԿՈՏՈՐԱՍԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՂԱՎ ԲԱՅԵՆԻ ԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ՍՄԲԱՏԻ  
ԿՈՉՎԱՍ ԼԵՌԱՆ ՎՐԱ<sup>110</sup>

Այս տարիներին երկեքի բարկութիւն զուր բացվեց մեր աշխարհի վրա. Թուրքեստանից եկան բազմաթիվ զորքեր, որոնց երիվարները սրբնթաց էին արծիվների պես. նրանց ամբակներն ամուր էին ինչպես ապառաժ: Նրանք սաստիկ սպառագինված էին. աղեղները լարված, նետերը միշտ սուր. երբեք չարձակեցին իրենց կոշիկների կապերը: Հասնելով Վասպուրական գավառը՝ քաղցած ու անհագուրդ գայլերի նման հարձակվեցին քրիստոնեյաների վրա և հասնելով մինչև Բասան գավառը ու Վաղարշավան<sup>111</sup> կողմած մեծ դաստակերտը, սրով, հրով ու գերութիւնք քանդելով ավերեցին քանչորս գավառներ: Կսկծալի և անսպառ ողբ ու արտասուքների է արժանի այս պատմութիւնը: Նրանք սուրացին ինչպես առյուծներ և առյուծների կորյունների պես անողորմաբար փռեցին շատերի դիակները՝ որպես գիշակուր գազաններին ու երկնքի թռչուններին, և նույն նպատակով էլ ցանկանում էին գալ Կարին քաղաքը: Բայց նա, ով ծովին սահման է դրել, ասելով՝ «Մինչև այստեղ պիտի գաս, ավելի այն կողմ չպիտի անցնես. այլ հենց այս տեղում քո ավերները պիտի խորտակվեն նոցից քո մեջ», թանձրամած խավար

փռեց: Նրանց առաջ և արգելակեց նրանց առաջընթացը: Նա այս արեց իր անպատում խնամութեամբ, որպեսզի նրանց անով մենք խրատվենք, իսկ նրանք էլ հասկանան, որ այն, ինչ կատարեցին, իրենց զորութեամբ չկատարեցին, այլ այն ձեռքը, որ հզորապես արգելեց իրենց, այդ նույն ձեռքն էլ հենց իրենց գնալու ճանապարհն էր հաջողի:

Այժմ նա թափեց մեզ վրա իր բարկութիւնը օտար ազգի ձեռքով, որովհետև մեղանշեցինք իր դեմ, բայց դարձաւ խղճաց ու նոր փորձութիւնների շնթարկեց մեզ, որովհետև ողորմած է. այդ պատճառով էլ ընդմիշտ բարկացած չի մնում և համբույնն ու շի պահում: Մի կողմից՝ մեղանից հարկադրվում է իրավացի դատաստան անել, քանի որ արդար դատավոր է, մի կողմից՝ շտապում է ողորմել, որովհետև գիտատես հայր է, իսկ մյուս կողմից էլ՝ ցավում, ավստում՝ է, քանի որ ողորմած Աստուծո է: Ինչպես և հենց այստեղ երկուսն էլ ցուցաբերեց մեր նկատմամբ. նախ արժանահաս վրեժով ծանրացրեց իր ձեռքը մեզ վրա, ապա դարձավ ու փութացրեց իր բարկութիւնը, որպեսզի մեզ իսպառ չընաշնջի: Բայց մենք վարակվեցինք Փարսիների և նրա ախտակիցներից ամենահիմարի կարծրատեսութեամբ, որը երբեմն տանջվելով խոստովանում էր, ասելով՝ «Աստու մատն է այս», բայց երբ անցնում էր Աստու բարկութիւնը, ամբարտաճանութեամբ հղիացած ասում էր. «Տիրոջը շնմ ճանաչում և իսրայելացիներին բաց շնմ թողնի»\*: Երբ որ ստացավ վերջին պատիժը՝ դառնալով խորախոր անդունդների բնակիչ, անդամն ստույգ սասց, թե՛ «Աստու մատն է այս». ինչպես որ ձեռքը տասք մատներով է կատարյալ գործ կատարում, այնպես էլ այնտեղ մեկից սկսելով՝ տասով ավարտեց խրատների պատիժը, և հետո սա բաց թողեց իսրայելացիներին:

Այժմ էլ մենք բարկութիւնը հրահրելուց, կրակը բորբոքելուց և եղեռնալի՛ աղետները մեզ վրա շարժելուց հետո սաստիկ անարեկված ու դողահար զորհուրեցինք. բայց Աստված ողորմեց, խավարով փակեց նրանց ճանապարհը և խափա-

\* Յովր. ԼԸ. 11—12

\* Եւր. Ը. 19

\*\* Եւր. Ե. 2

Նեց անօրենների արշավանքը: Կասկածելի համարեցինք մենք այդ բարիքը և տմարդի գտնվեցինք շնորհակալության համար. մինչդեռ անհրաժեշտ էր մեր եղբայրների կրած պատժի շնորհիվ ողջախոս դառնալ ու շտապել սովորել մարգարեի՝ փրկարար խրատը. «Վե՛րջ տվեք ձեր շարիքներին և սովորեցե՛ք բարիքներ գործել»<sup>\*</sup> ու սրան հետևող խոսքերը և մեր շխտակությամբ հաշտեցնել Աստուծուն, գեհնաբորոք պատուհասը մարել ու բարկությամբ բարձրացած ձեռքը իջեցնել, որ մեզ ների. մենք այդ մոռացանք, մտքով իսկ շանցկացրինք, և նա, ով անօրինելու էր, անօրինում էր, իսկ որը անիրավելու՝ անիրավում, այնքան որ վարազների նման ինքներս մեզ սրի վրա մղեցինք, բոլոր հանցանքները մեզ վրա կրելով: Մեզ թվում էր, թե նրանք մեզավոր լինելով՝ պատիժը կրեցին, իսկ մենք մեր արդարության պատճառով փրկվեցինք, և չէինք մտաբերում տերունական պատվերն ու զգաստացնող այս խրատը. «Այն դալիլեացիները, որոնց արյունը Պիղատոսը խառնեց նրանց զոհերի հետ, կարծում եք, թե բոլոր մարդկանցից ավելի մեղավոր էին, ո՛չ, եթե շապաշխարեք, ամենքդ էլ նույնպես կկորչեք»<sup>\*\*</sup>: Իսկ մենք վարվում էինք Ամովսի խոսքերի համաձայն, որոնցով նա նախատում էր իսրայելացիներին, որոնք զտված գինի էին խմում, անուշաբույր յուղերով փափկանում, փղոսկրյա զահավորակների վրա հանգստանում և այլն<sup>\*\*\*</sup>, բայց չէին ցավում Հովսեփի թշվառության համար, որովհետև Աստված պահանջում է, որ երբ ումանց տանջանքների է ենթարկում, մերձավորները նրանց վշտակից լինեն՝ «լացողների հետ լան»: Բայց նրանք սրա հակառակն էին անում. մի արյունից էին, բայց Հովսեփի ցեղի գերության համար չէին ցավում, դրա համար էլ մարգարեն երգելով ամբաստանում է նրանց: Այդպես էլ մեզանում եղավ:

Մեր՛ շորս հարյուր իննսունյոթ թվականին<sup>112</sup>, որը մեր գերության երկրորդ տարին էր, Պարսից աշխարհից բարկությամբ լեցուն դառը մրուրը ահեղ ծփանքով դարձյալ եկավ ու

լցվեց Կարնի ու Բասնի ընդարձակ դաշտերը, և այդ հեղեղի ցայտերը հասան-բռնեցին երկրի շորս անկյունները. դեպի արևմուտք՝ մինչև Խաղտյաց գավառը, դեպի հյուսիս՝ մինչև Սպեր<sup>113</sup>, մինչև Տայբի ու Արշարունյաց բերդերը, իսկ դեպի հարավ՝ մինչև Տարոն, մինչև Հաշտենից գավառն ու Խորձենի<sup>114</sup> անտառները: Տասնչորս օր զազար անելով ու ծովանալով՝ ծածկեց լեռներն ու մացառուտները, բռնեց ամբողջ աշխարհը: Ինձ թվում է, որ այս եղավ այն անապակ դինուց, որ մանուկ Երեմիան իր տեսիլքի մեջ ոսկի բաժակով մատովակելով՝ խմեցրեց թագավորներին, ազգերին, քաղաքներին, իշխաններին ու նրանց զորքերին, իսկ հետո՝ նաև Միսակա տանը՝: Ահա այդ մարգարեությունը ստույգ կատարվեց: Հայոց աշխարհը խմեց այն անապակ դինուց և հարբեց, հարբեց շարապես և թմբելով հիմարացավ, խմեց այնքան, որ բոլոր պատուհասներն ընդունեց իր վրա. և այժմ ընկած է բոլոր ճանապարհների խաչմերուկներում մերկ, խայտառակված, և կոխկրտում են նրան նախատինքով ճանապարհների բոլոր անցորդները: Ելած հայրենի աշխարհից, օտարացած ծանոթներին, հեռացած ընտանիքից, բարեկամներին ու ազգականներից, դարձել է գերի ու կալանավոր բոլոր ազգերին:

Ժամանակն է մարգարեի այն խոսքն ասելու, թե՛ «Թրթուրի մնացորդը ժորեխը կերավ, մորեխի մնացորդը ջորեկը կերավ, իսկ ջորեկի մնացորդը՝ գրվիճը»<sup>\*\*</sup>: Սրանք էլ մեզ են վերաբերում, քանի որ մարգարեների բոլոր կանխագուշակությունները մեր նկատմամբ կատարվեցին: Այժմ այն թրթուրն ու մորեխն անցել են, իսկ ջորեկն ու գրվիճը սրանք են, որոնց մասին մեր այս պատմությունն ենք սկսել: Առաջին<sup>115</sup> անգամ երբ պարսիկներն ու այլ խուժաղուժ հեթանոս ազգեր եկան և մարդակոտոր սպանդով բնաջնջեցին շատ գավառներ և բաղուժ ավար ու գերի առած՝ գնացին իրենց աշխարհը, ավետիք տվին ազգերին ու թագավորներին և նրանց հրավիրելով ասացին մարգարեի նման. «Անապատի գազաններ, եկեք կերե՛ք

\* Եսայ. Ա. 16—17

\*\* Հմմտ. Ղուկ. ԺԳ. 1—6

\*\*\* Հմմտ. Ամովս. Զ. 4—7

\* Հմմտ. Երեմ. ԻԵ. 26—27

\*\* Յովել Ա. 4—5

այս անտառում եղածը\*։ Իսկ հաջորդ տարվա սկզբում<sup>10</sup> աղեղ-  
նափոր ու սուսերամարտիկ զորքերի անհամար բազմություն-  
ներ հավաքվեցին, ինչպես արժիվները կերակրի վրա, և մեծ  
խթախուսանքով՝ շտապ մտան մեր աշխարհը սեպտեմբեր ամ-  
սին, սուրբ խաչի տոնի շրեքշարթի օրը։ Այս ժամանակը մեզ  
համար եղավ ողբ ու վայերի պատմություն, և իմ այս երկն էլ  
հրավիրում է ամենքին կոծի։ Եթե նիւմեցիք, մարգարեի  
սպառնալիքի և այն բանի պատճառով, որ տարաշխարհիկ,  
բոլորին անծանոթ ու աննշան մի մարդ էր մտել իրենց քաղա-  
քը, այնքան ահաբեկվեցին, որ թագավորից սկսած մինչև  
ջրաղացապանը հավասարապես կոծեցին, ամենքը բուրձ հա-  
զած ու սևազգեստ, ամենքը կերակրից կտրված՝ իրենց բռնա-  
դատում էին առատանալ ողբով, այլև եղերամայր կանանց էլ  
էին հրավիրում իրենց ձայնակցելու։ «Ի՛հրեւ, — ասում էին, —  
Աստված գթա, և մեր դեմ ունեցած նրա բարկությունն անց-  
նի», հապա մեր կյանքը որքա՛ն ավելի ողբալի է, որ ոչ  
միայն սպառնալիքը, այլև բարկության պատճառն է վրա  
հասել ու կատարվել։ մենք շարաշար տանջված, կործանված  
աշխարհին տեսաբան ենք դարձել, ինչպես ասել է առաքյալը  
սրբերի մասին, ու մեր ետեքց աղցեազգ թողել ենք միայն  
տխուր պատմություն, քանի որ մեր քաղաքներն ավերվել  
են, տները՝ այրվել, ապարանքները հնոցների են վերածվել,  
իսկ արքայաշեն գահիճները՝ մոխրի։ Տղամարդիկ կոտորվել  
են հրապարակներում, իսկ կանայք տներից քշվել գերություն.  
կաթնակեր երեխաները խփվել են քարի, և թառամել է պատա-  
նիների գեղեցիկ դեմքը, կույսերը խալտառակվել են հրապա-  
րակներում, իսկ երիտասարդները ծերերի առաջ սրախողխող  
եղել։ պատվական ծերերի դիակները, արնաշաղախ ալիքնե-  
րով, վայրում են թափալուր։ Թշնամյների սրերը բխացան,  
ձեռներն ու մասպառովեցին, աղեղների լարերը կտրվեցին, կա-  
պարճները դատարկվեցին նեւերից, իրենք հողմեցին, բայց  
նրանց սիրտը խղճմտանք չընկավ։

Ո՛վ քո ողորմությունը, Աստված, որ այնքան հանդուրժե-  
ցիր անօրիններին խրոխտանալու քո արտոի հոտի վրա։ Հի-

շի՛ր քո ժողովրդին, որին ստացար քո միածնի գալստյան  
սկզբից և փրկեցիր օծյալիդ արյամբ։ Ինչո՞ւ մերժեցիր մեզ  
բուլբուլին, սաստիկ բարկացար և մատնեցիր մեզ անօրին,  
դժնդակ ու ապստամբ մարդկանց ձեռքը։ Մի՛ հիշիր մեր մեղ-  
քերը և մեր մեղքերի պատճառով մի՛ դարձրու քո երեսը մե-  
զանից, այլ հիշի՛ր, որ տիրում էիր մեզ քո հզոր ձեռքով ու  
բարձր բազկով, և քո անունը կոչված էր մեզ վրա։ Այժմ ահա  
դու բարկացար, և մենք մեղանշեցինք, որի պատճառով զե-  
րուսյամբ թափանեցինք շատ աղցերի մեջ ու պղծվեցինք բո-  
լորս էլ։ Հողմերը ցրեցին մեզ, և չկա մեկը, որ օրհնի քո  
անունը և մտածի ապալինել քեզ, որովհետև դարձրիր քո  
երեսը մեզանից և մատնեցիր մեզ մեր մեղքերի պատճառով։  
Մի՛ մնա հավիտյան բարկացած և ժամանակին մի՛ հիշիր մեր  
մեղքերը։

Ավա՛ղ այն օրվա լուսանալուն, քանզի այն զույար, որ  
արարչության առաջին օրը Աստծու խոսքով անմարմին տես-  
քով գոյացավ, իսկ չորրորդ օրը մարմնով պարուրված՝ բա-  
ժանվեց լուսատուների, որոնք դարձան ցերեկվա ու գիշերվա  
իշխաններ, աշխարհի հավիտենական ձանապարհորդներ,  
մեկը մարդուն է գործի հանում, իսկ մյուսը ցաղաններին հա-  
մարձակություն տալիս, այսօր կեօթով մեզ համար փափարի  
փոխված՝ վերածվեց գիշերի, և հեթանոս աղգերը, որ վարուց  
ի վեր իրենց խշտիներում դադանաբար մանչում էին, ըստ  
մարդարևի, և Աստծու հոտից կերակուր ուղում, երբ գիշերա-  
ցավ այն օրը մեզ համար, դուրս ելան տեղից ու տարածվե-  
ցին երկրի երեսով. դտան քաղում որս, կերան, հագեցան և  
դեռ իրենց զավակներին էլ բաժին թողին շատ տարիների  
համար։ Թեպետ ամենուրեք նրանց համար քավականաչափ  
պատրաստի որս եղավ, որովհետև երկիրը դալարագեղ որախ-  
տի պես պտուղներով լի տարածված էր նրանց առաջ, բայց  
ամենից ավելի Մանանաչի գալխոում, այն զեռան վրա, որը  
կոչվում է Ամբատաբերդ, քանի որ այնտեղ հավաքվել էին  
փախստականների անթիվ քաղմություն և անասուններ,  
որոնց թիվ չկար։ Անօրինները հարձակվելով ավերեցին բեր-  
պերը ու ներս մտնելով բուրբին արակոտոդ արին։

\* Եսայ. ԾՁ. 9—10

Ողբալի էր ու սրտաճմլիկ այնտեղ երևացող տեսարանը, որովհետև նրանցից ոմանց, որոնց ձեռք էին գցում, սրամահ էին անում, որոնք առապար տեղեր մտնելով ամբանում էին, նետերով խոցոտելով էին սպանում, իսկ շատերին, անձավների վրա բարձրացած, մեծամեծ քարերով էին կոտորում, որոնց դիակները զորելով ու կտրատված փայտերի նման միմյանց վրա դիզելով՝ դիմացի ձորն էին լցնում: Վա՛յ և ալա՛ղ այն օրվա դժնդակ լույսին. բաշ տղամարդիկ դինավառված ու բարկությամբ բորբոքված՝ կովի էին պատրաստվում, վախկոտները թալկացել էին, կանացիները սարսափից խելքներն էին թռցնում, երիտասարդները խիզախում էին, բայց ոչ մի ելք չէին կարողանում գտնել, որովհետև թշնամու պատենը բոլոր կողմերից պաշարել էր նրանց: Չկար այնտեղ սիրելիների սեր, ոչ էլ կարեկցանք բարեկամների. հայրը մոռացավ որդիների գուլթը, իսկ մայրը՝ սերը նորածին մանուկների: Նորահարս կինը չէր կարող հիշել փեսայի սերը, ոչ էլ այր մարդը՝ գեղեցկությունը ցանկալի կնոջ. լոնցին պաշտամունքի երգերը բահանաների բերաններից, ու կտրվեց սաղմոսների ձայնը սաղմոսողների շրթունքներից. բոլորին առհասարակ պատեց սարսափ ու երկյուղ. շատ կանայք այնտեղ հղի լինելով՝ սաստիկ տագնապից վիժում էին երեխաներին. որսորդների պես ասես ցանցերով շրջափակել էին ամբողջ լեռը, մինչև բոլորն էլ թուլացան ու ընկան զորությունից:

Իսկ երբ իջավ երեկոն, վերցնելով ավարը, գերիներին ու սպանվածների կողպուտը՝ հեռացան այնտեղից: Բայց նրանց գնալուց հետո բացված տեսարանն էր. շատ ավելի սրտաճմլիկ ու ողբալի: Բազմատեսակ էին այնտեղ մահվան օրհասները. ընկածներից ոմանք, դեռևս կենդանի, լեղունները ծարավից պապանձված, թույլ ու նվաղ ձայնով ջուր էին հայցում, բայց տվող չկար. ոմանք, շարաշար վիրավորված ու ձայնը կորցրած, ծանր էին շնչում, ոմանք, կոկորդից մորթված, դեռևս կիսամեռ լինելով՝ հազիվ խոխոտում էին. ոմանք էլ ծանր վերքերից սաստիկ կակիծ զգալով՝ ոտներով գետինն էին դոփում ու ձեռների եղունգներով ճանկատում էին հողը: Բայց սրանից ավելի զարհուրելի տեսարան էլ կար, որ նույնիսկ քարերի

և այլ անշունչ արարածների ողբ ու հառաչանքն էր շարժում: Որովհետև երբ անօրենները գերիներին սարից իջեցրին, ծնողների գրկից երեխաներին հափշտակելով նետեցին գետին, որոնց բազմությունից ամբողջ բանակատեղը եռում էր. նրանցից ոմանք խփվելով քարի՝ սպանվել էին, ոմանց կողքերն էին պատառոտվել, ու փորտոփրը թափվել էր գետին, իսկ կենդանի մնացածների կառաչը ո՛ր լսելիքը կարող էր տանել. նրանք, որ կարողանում էին քայլել, այս ու այն կողմ հածելով՝ իրենց մայրերին էին փնտրում, որոնց բարձրաձայն լացին լեռները արձագանքում էին. որոնք դեռ ոտի չէին հաստատվել, ծնկների վրա սողալով կառաչում էին. իսկ սրանցից է՛լ ավելի փոքրահասակները՝ թոտներով գետինն էին դոփում և սողալով, ձայները նվաղած՝ չէին կարողանում շունչ արձակել և այսպիսի սրտաճմլիկ ձայներով ու անվերջ աղաղակներով նմանվում էին այն գառնուկներին, որոնք մայրերից դեռ նոր բաժանված, բնությամբ անհամբեր լինելով՝ անհանգիստ այս ու այն կողմ էին խփվում, անդադար զողանջներով վիրավորելով օդն ու ձանձրացնելով լսողների լսելիքը:

Այս է դառնաղետ քո պատմությունը, ո՛վ լե՛ն, ամո՛ւր լեռ Սմբատի, բայց ոչ այն, որի վրա կամենար Աստված բնակվել, այլ արշան, ոտնակոխության ու կորստյան լեռ. քեզ չի կարելի նույնիսկ լեռ կոչել, այլ ամբողջ երկրի բնակիչների՝ տիղմի խորխորատ, քանդի քեզ վրա հիմա գազաններն են իջևանում, ցիներն ու անգղները բնակություն հաստատեցին, և աղվեսներն են խմբերով խաչտում՝ կերով լիացած: Հերմոնի նման երկնքից իջած ցողով չէր, ո՛վ լե՛ն, որ պարարտացար, այլ վրադ եղած կոտորածների դիակների արշամբ ու ճարպերով: Ո՛վ լե՛ն, դու շեղար Սինայի նման միջնորդ Աստծու հետ Մովսեսի խոսակցության, այլ լոնցրիք բահանաներին սաղմոս երգելուց, որոնք աղոթքով խոսակցում էին միշտ Աստծու հետ: Եղիան մահվանից սարսափահար՝ Հեղաբելից փախչելով Քորեբ սարն ընկավ ու փրկվեց, մինչդեռ սրանք քեզ ապաստանելով՝ մատնվեցին սրի ու աղվեսների կերակուր դարձան: Ո՛վ լե՛ն, նման ես դու Գեղբու [սարին], ուր Իսրայելի զավակներն ընկան, այդ



պատճառով էլ տեղին է հիմա այն օտրի մասին Գալթի  
ասածն ողորդ նաև թող: Մեքատի լեռներ, ձեզ վրա անձրև ու  
ցող թեղ չիջնի, քանզի հագեցար ձեզ ապավինած այր ու կին  
մարդկանց առատ պրոսեանով: Սակայն դառնալուք այս պատ-  
մութիւնը այն լեռան մասին, թող որ դադարի, թեպետ շա-  
տերից քիչ քան սրտով եղի:

### Գ լ ու ի թ Բ

#### ԱՐՄԵՆ ԱՆՈՂՈՐԾ ԿՈՏՈՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Այժմ կաշխատեմ ուժերս ներածին շափ ընդարձակ գրել  
մեր պատմութիւնը, որպէսզի բոլորին տեսնեմ արտասովելու  
կեանքն նաև նրեմիայի հետ ձայնարկու կանանց<sup>118</sup>, որ ինձ  
հետ ողբեր հօրինեն: Քանզի անում եմ այս պատմութիւնը  
ոչ թե լեռների, քարանձաւների ու անապատ տեղերի մասին,  
ուր խածամուժ ֆառիֆուտիները փախչելով հասան ու քնակ-  
վեցին, այլ քաղաքի, և այնպիսի քաղաքի, որ հոյակապ էր  
ու նրեմիի ամբողջ աշխարհում: Իբրև մի քաղաք, որ կանգնած  
է լեռան վրա, և ծով ու ցածար աշխատում-վատակում էին  
ու ջանում էին այստեղ կրել իրենց կարողութիւնը, ինչպես  
մեծ Եսային էր մարդարեանում Երուսաղեմի համար: Նախ-  
կինում, երբ քարիքների առատութիւնը խճողված՝ ամեն ինչ  
ուղածի պես էր, սա նմանվում էր այն նորահարս կնոջ, որն  
իր վաշխազեղութիւնը ու շքեղ դարդերով սիրելի է լինում  
բոլորին: Արա իշխանները մարդասեր էին, դատավորները՝  
արդարադատ ու անկաշառ, վաճառականները՝ եկեղեցի շինող  
ու դարդարող, կրօնավորներին՝ օֆեանող, աղքատներին՝ ողոր-  
մացող ու խնամող: Չկար խաբեութիւն վաճառքի մեջ և ոչ էլ  
խարդախութիւն՝ առևտրի ու փոխանակութեան ժամանակ:  
Նախատինքի էր ենթարկվում վաշխերի և տոկոսների շահը,  
խոտելի ու անարդ էր համարվում նվերների ու ընծաների ան-  
վան տակ արվող կաշառքը: Բոլորն էլ բարեպաշտութեան նա-  
խանձախնդիրներ էին. քահանաները սրբակցաց էին և աղո-  
թասեր, եկեղեցու կարգերին հլու-հնազանդ, այդ պատճառով

էլ սրա վաճառականները վաշխաւաւ մարդիկ էին, իսկ  
գնորդները՝ ազգերի թագավորներ<sup>119</sup>: Եվ իբրև պատվական  
մի ալ մեր այս քաղաքը լուսադեղ պայծառութիւնը փայլում  
էր բոլոր քաղաքների մեջ, ամեն ինչով գեղեցիկ, ամեն ինչով  
պարզարուն:

Յայց այնուհետև մեր եկեղեցիները մտան սերասացի-  
ներն ու պիհոնացիները<sup>120</sup>, և արդարութեան օրերը փոխվեց  
անիրավութեան, արծաթասիրութիւնը ավելի հարգի դարձավ,  
քան աստվածասիրութիւնը, և մամոնան ավելի քան  
Քրիստոսը. այն ժամանակ ամեն կարգի համեստութիւնը  
խոտորվելով՝ վերածվեց անկարգութեան: Արա իշխանները  
դարձան զոգերի զոգակից, վրիժառու և արծաթի ծառաներ:  
դատավորները՝ կաշառակեր և կաշառքի համար արդարու-  
թիւնը խարդախողներ, ո՛չ որբերի իրավունքն էին պաշտպա-  
նում, ո՛չ այրիների դատը հանձն առնում: Վաշխերի ու տո-  
կոսների համար օրենքներ հաստատվեցին, իսկ ցորենի փո-  
խաւովութեան համար թագմապատեղութիւն սահմանվեց, որի  
պատճառով հողը պղծվելով՝ արգելակիչ է դառնում իր ար-  
գանդի ժամանակին պաղարեղելուն՝ մարդկանց կերակրելու  
համար: Ով խաբում էր իր ընկերոջը, պարծենում էր, որ ին-  
չացի է, իսկ ով հափշտակում էր, ասում էր՝ լեւ  
հզոր եմ: Դրացի աղքատների տներն ու նրանց արտերի  
սահմանները հարուստները հափշտակում էին և չէին մտա-  
բերում տիրոջ ծառա: Մովսեսի ձեռքով գրված աստվածա-  
պատկեր անեծքը. «Անիծյալ է նա, ով հափշտակում է ըն-  
կերոջ արտերը», կամ մեծ Եսայու այգայիսիներին սաստող  
կշտամբանքը. «Վա՛յ նրանց, որոնք տունը տան և արաց ար-  
տին են միացնում, որպէսզի ընկերոջը խլեն: Ահավասիկ այդ  
բոլորը լսեց զորութեան տերը»<sup>\*\*</sup>. շարունակութիւնը չեմ  
գրում, խնայելով ձեզ: Նրանք չէին հիշում, թե ինչեր կրեց  
Հեզաբելը՝ հափշտակելով նաբոլթի այգին, թեև այդ միջն  
այսօր փողհարվում է ի լուր բոլորին: Վերացավ նաև ըստ-

\* Հմմտ. Բ. օրէնք Իէ. 18

\*\* Եսայ. Ե. 8—9

☞ Պաղմ. Կէ. 31

նաների երկյուզն ու սուրբ ընտրութիւնը. սողոսկելով շանում էին մտտենալ այն սեղանին և կատարել այն անճառելի խորհրդի սպասավորութիւնը, որ հրեշտակների համար է զարհուրելի, ո՛ր մնաց մարդկանց և այն է՝ արծաթի միջոցով, ոչ թե Աստուծո, մոռանալով սաղմոսական այն երգը, որ ասում է. «Ք՛ո՛ղ անարգվեն ու չբվեն նրանք, ովքեր արծաթով են ընտրովել»:

Իսկ ի՞նչ ասեմ կանանց պարսավելու համար. մեր խոսքերի կարգը չի զգացվում, բավական են միայն Ծայու ասածները, որը Երուսաղեմի կանանց լկտի պճնասիրութիւնը նախատում է այսպես. «Քանի որ, — ասում է, — Սիրովնի դըստրերը հպարտացան և քայլում էին բարձրապարանոց ամբարտավանութիւնով»\*. նախ սկսում է բոլոր շարիքների արմատից՝ ամբարտավանութիւնից, որովհետև սա է բոլոր զբժբախտութիւնների մայրն ու սկզբնապատճառը, որ մարդկանցից դեեր է ստեղծում ու դարձնում նրանց տանջանքներին վիճակակից: Բոլորի համար էլ այս արտը վնասակար է, քայց առավել ևս կանանց սեռի համար. այդ պատճառով էլ նախ նրանց է դատապարտում, իսկ հետո հերթով հիշում ստոր ու երկրաբար իրերը՝ գինդերը, մատանիները, ապարանջանները, բողները և այլ բազմապիսի զարդերը: Տե՛ս, ունկնդի՛ր, նաև նրանց հատուցումը. «Ոսկի զարդերի փոխարեն՝ գլխի կնդութիւն»<sup>1</sup>. որովհետև նրանց գլուխը զարդերից մերկացնելով՝ ծաղրելու համար խողեցին: «Ոսկի գոտիների փոխարեն՝ շուրճի գոտի, իսկ պատվական զգեստների փոխարեն՝ քուրճի հանդերձներ»<sup>2</sup>, որովհետև գերեվարելիս գերողները նրանց այդ շնորհներն:

Ծս այս բոլորը իզուր չպատմեցի, այլ որպեսզի ցույց տամ, թե ինչպես մեր հանցանքն էր նրանց նման, այնպես էլ մենք պետք է նրանց պես, և նույնիսկ ավելի խիստ, պատիժ կրեինք. և թե նրանք մեղանչում էին առանց օրինակ ունենալու, ապա մենք որքա՛ն ավելի պատժապարտ ենք, որ մեղանչեցինք նրանց օրինակն ու Քրիստոսի խրատը ունենալուց հե-

տո, որ ազազակում ու ասում է. «Եթե ձեր արդարութիւնը չավելանա ու չգերազանցի դպիրների ու փարիսեցիների արդարութիւնը, երկնքի արքայութիւնն չեք մտնի»<sup>3</sup>: Բայց մենք ոչ թե արդարութիւն, այլ մեղքերով գերազանցեցինք նրանց, էլ ի՞նչ ներում կամ թողութիւն պիտի ստանանք:

Այժմ տե՛ս արդար պատիժների նմանութիւնը. պարսիկները հարձակվեցին Երուսաղեմի վրա, հարձակվեցին նաև մեզ վրա. Երուսաղեմն ավերվեց, ավերվեցին նաև մեր քաղաքները: Հեթանոսները մտան սուրբ տաճարը, պղծեցին այն ու կողոպտեցին նրա զարդարանքները, նրանք հանդգնեցին մտնել նաև մեր եկեղեցիները, որ անմտանելի էին իրենց համար, պիղծ գարշապարներով պղծեցին նրանց սրբութիւնները և կողոպտեցին ու ավերեցին բոլոր զարդերը: Հրաճարակ եղավ սուրբ տաճարը. մեզանում այդ մեկի փոխարեն այլ վեցին շատ եկեղեցիներ. նրանցից անհամար քահանաները քանկան սրամահ, իսկ մերոնց թիվը ո՛վ կարող է հաշվել: Այժմ ժամանակն է ինձ հետեւել Դավթին ու նրա խոսքերով մեր ողբերը հորինել. «Ինչո՞ւ, տե՛ր, հեռու կանգնեցիր և լքեցիր մեզ մեր նեղութիւն ժամանակ»<sup>4</sup>, երբ անիրավը անօրինում էր քո սրբարաններում և ատողներդ պարծենում էին տոներդ ժամին. հեթանոսները ահա մտել են ժառանգութիւնդ, պղծել քո սուրբ տաճարը, այրել սրբութիւններդ, հողին են հավասարեցրել քո եկեղեցու փառքը, նրանք ջրի պես թափեցին քո ժառանգի արյունը, ոչ թե ինչպես այն ժամանակ, միայն Երուսաղեմի շուրջը, այլ ամբողջ աշխարհը լըցվեց սպանվածների արյամբ. իսկ նրանց թաղածների թիվն ու հաշիվը անհնարին է նույնիսկ երեւակայել:

Բայց մեր այս քաղաքի բազմապիսի ու անհնարին աղետները ո՛վ կարող է գրի առնել, որովհետև, ինչպես գրված է Սողոմի մասին, թե՛ «Արեգակը ծագեց երկրի վրա, իսկ տերը հուր ու ծծումբ տեղաց Սողոմի վրա և այրեց այն»<sup>5</sup>, ճիշտ այդպես էլ եղավ նաև այստեղ. արեւածագին անօրեկների ո՛ւ-

\* Ծայ. Գ. 16

\*\* Ծայ. Գ. 24—25

\* Մատթ. Ե. 20—21

\*\* Սաղմ. (Ժ) 1

\*\*\* Սենդ. ԺԹ. 23—24

մակները քաղցած շների նման հարձակվեցին քաղաքի վրա, շրջապատեցին և ներս խուժելով, ազարակները հնձողների պես իրենց սրերը գործի դնելով՝ հնձեցին այնքան, մինչև որ քաղաքը զրկվեց կենդանությունից, իսկ տներ կամ եկեղեցիներ փախչողներին կրակի մատնելով՝ անողորմաբար այրեցին, քարեգործություն համարելով այդ, ինչ որ կանխավ փրկիլն էր ասել. «Կգա ժամանակ, որ ձեզ սպանողը կհամարի այդ Աստուծոն ծառայություն»<sup>121</sup>. և պատճառն էլ ինքն է հայտնում. «Այդպես կվարվեն ձեզ հետ իմ անվան պատճառով, որովհետև չճանաչեցին ինձ ուղարկողին»<sup>122</sup>:

Այդ կործանիչ օրվան նպաստում էր նաև օղբ. սաստիկաշունչ հողմը փչելով՝ ուժգին բորբոքում էր կրակը, որի ծուխը ծառանալով երկինք էր հասնում, իսկ բոցի ցնցուղները հաղթում էին արեգակի ճառագայթներին: Տեսարանը շատ ողբալի էր ու զարհուրելի, ամբողջ քաղաքը՝ վաճառափողոցները, նրբափողոցներն ու ընդարձակ բակերը լի էին ընկածների դիակներով: Իսկ այրվածներին ո՞վ կարող է հաշվել, բոլոր նրանք, որոնք սրի փայլից փախած թաքնվեցին: աներում, հրաձարակ եղան: Քահանաներից նրանց, որոնց եկեղեցիներում բռնեցին, այրեցին, որոնց դրսում՝ ումանց սպանեցին ու մեծամեծ խողեր դրեցին գրկները՝ մեղ նախատելու և խաչտառակելու համար, սրով ու հրով սպանված միայն թեև ու եկեղեցի անօրինո՞ղ քահանաների թիվը հարյուր հիսունից ավելի եղավ: չհաշված նրանց, որոնք տարբեր տեղերից ու երկրներից եկած՝ այնտեղ էին գտնվում, նրանց թիվն արդեն ո՞վ կարող է հաշվել<sup>121</sup>:

Այս է դառնաղետ քո պատմությունը, ո՞վ երանելի, երջանիկ, հղիացած ու աշխարհահռչակ քաղաք: Այժմ բարձրացրու՛ւ աչքերդ և տե՛ս գերություն քչված քո զավակներին, քո մանուկներին՝ անողորմաբար քարերին խփված, կրակով այրված քո երիտասարդներին, քո մեծապատիվ ու պատկառելի ծերերին՝ ընկած հրապարակում, քո հովասուն ու բարեկեցիկ կույսերին, կանանց՝ խալտառակված ու անարգված,

\* Յովհ. ԺՁ. 2

\*\* Յովհ. ԺԵ. 21

ոտքով քշված գերություն...Մեր հանդես կատարվեցին Ռավթի ողբական երգերը. «Նրանց դրությունը մատնեց գերության, իսկ նրանց դյուղերը՝ թշնամիների ձեռքը»<sup>\*</sup> և հետևաբար. քայց Քրիստոսը ուշանում է արթնանալ, այն ժամանակվա պես չէ:

Արժնի այս տխուր պատմությունը այստեղ էլ թող դադարի. մենք բոլոր աղետալի անցքերը չկարողացանք գրի առնել, քայց մեր քայց թողածը ցանկացողը կարող է իմանալ ավերակներից: Մենք գրեցինք երկու տեղերի՝ լեռան և այս քաղաքի, ողբալի պատմությունը, այսինքն՝ միայն այն, ինչ աչքով տեսանք, անցնելով նրա շարաղետ փորձությունների միջով. իսկ մյուս գավառների ու քաղաքների աղետալի անցքերը ո՞վ կգորի գրել. դրա համար երկար խոսել ու ժամանակ է պետք, մինչդեռ մենք մեզր հնարավորին շատ համարողներ:

#### Գ Լ Ո ւ Ս Ժ Գ

ՈՅՆ ՄԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՂԱՎ ԲԱՍԵՆԻ ԴԱՇՏՈՒՄ, ՈՐՏԵՂ ՀՈՌՈՄՆԵՐԸ ՊԱՐՏՎԵՑԻՆ

Եսայի մարդարեն, երբ եզրպատսի ավերվելու մասին մարդարենանում էր, այս խոսքերն ասաց. «Տալանի իշխանները, որ թագավորի իմաստուն խորհրդականներն էին, հիմարացան»<sup>\*\*</sup>, որը և մեզ պատահեց: Հոռոմները արևելյան կողմին պահապան քիչ հեծելազոր չունեին. նրանց բանակի թիվը, ատում են, հասնում էր վաթսուն հազարի, որոնց ղիխավորներն էին Կամենասը<sup>122</sup>, որ թարգմանվում է կրակ, և որ իշխում էր Հայոց աշխարհին, Բուղարի որդի Ահարոնը<sup>123</sup>, որ իշխում էր Վասպուրականի կողմին, և հայ իշխան Գրիգորը<sup>124</sup>, որ մագիստրոսություն պատիվ ուներ: Բայց ինչպես Սուրբ գիրքն է ասում, թե բազմիշխանությունը խառնված է, ան-

\* Մաղձ. 2է. 61—62

\*\* Եսայ. ԺԹ. 11

հարմար ու քայքայման ենթակա, այնպես էլ սրանց պատահեց. մինչդեռ սրանց պետք էր միահամուռ միաբանությունը պատերազմում հաղթություն տվող տեր Աստուծուն կանչել օգնության, ինչպես սովորություն ունեին նախկինում հաղթողները. «Քանզի հզորը զորանում է ոչ թե իր զորությունը, այլ տերն է թուլացնում հակառակորդի զորությունը»\*, սրանք այսպես չմտածեցին, այլ անօրենք անօրինություն էր գործում, և կարծում էին, թե մարդկային հնարագիտությամբ կկարողանան մարել այն ահուկի կրակի բոցը: Այդ պատճառով էլ շփոթության մեջ ընկած՝ մեկմեկի խոսքին չէին համաձայնում, որովհետև Աստված, իրեն շինողը ձյառձառով, վերացրեց իմաստությունը նրանց մտքերից. և այս պարզ երևում է նրանից, որ կիպարիտին<sup>125</sup> խնդրեցին գալ օգնության: Նրանք դիվահար Սավուղի նման վհուկի մոտ էին գնում կամ նման էին այն հրեաներին, որ իրենց գանձերը ուղտերի բեռնած՝ տանում էին մի ազգի, որից օգնության ոչ մի հույս չկար: Նրանք շատաբերեցին Դավթի արածը, որի պարսատիկի մի քարը միայն բավական եղավ Իսրայելին հանդգնաբար նախատող մասրուր Գուլիաթի ուղեղի խելապատակը շարդելու համար, կամ եղեկիային, որ միայն աղոթքով ասորիներից հարուր ուխտուն հազարը, հրեշտակի միջոցով, աներևույթ սրով, թիկունքին փռեց:

Շատ աղաչանքներից հետո, առատ պարգևներ ստանալով, կիպարիտը եկավ. բայց նրանով էլ ոչինչ գլուխ չեկավ, որովհետև հենց իրենք միմյանց հետ միաբան չէին: Ուստի պատերազմն սկսելիս Բուղարի որդին յուրայիններով փախուստի դիմեց՝ վստահություն տալով թշնամիներին, որոնք բարձրաձայն աղաղակելով, միմյանց քաշալերելով, կիպարիտին իր քաջ մարդկանցով շրջապատելով՝ ոմանց սպանեցին, իսկ իրեն, երիվարի շերք սուսերով կտրելով, գերի վերցրին: Մյուս զորքերն այս տեսնելով փախան. թշնամիները նրանց հետապնդելով անշափ կոտորեցին՝ ոմանց սրով, իսկ շատերին, քանի որ գիշերը վրա էր հասել, բարձր տեղերից ու բարանձավներից դահավեժ անելով, իսկ մնացածները, մերկ ու կո-

\* Ա. Քաղ. Բ. 9

զուպոված, ուլքեր կարող էին, ոտքով ծլկեցին: Թշնամիները շափից դուրս մեծ ավարով ու կողոպուտով լիացած՝ ուրախացան, իսկ մերոնք մնացին ողբ ու վայնասունով լի: Այն օրվանից մինչև այժմ<sup>126</sup> գիշակեր շների կամ արաբացի գայլերի նման քրիստոնյաների արյունով նրանք երբեք չհագեցան, մինչև սպառեցին ու վերացրին մեջտեղից: Ամբողջ երկիրը նմանվեց ասես հնձելու հասած մի անդաստանի, ուր հնձողների հետքից գնում են խուրձ կապողները, հետևում թողած միայն հասկարաղն ու խոզանն իբրև անասուններին արոտատեղի:

Հաղթական պատերազմից հետո նրանք առնելով կողոպուտն ու գերիներին՝ մեկնեցին իրենց աշխարհը և անշափ ավարով լիացրին ամբողջ երկիրը, իսկ վրաց իշխանին տարան տվին խալիֆային, իբրև մի մեծ գանձ, որ բոլոր գերիներից հաճելի էր նրա համար. սա շնորհակալությամբ ընդունելով նրան՝ մեծ պարգևներով ճանապարհ գրեց խաղաղությամբ դեպի իր աշխարհը<sup>127</sup>: Այս մասին այստեղ այսքան:

#### Գ Լ Ո Ւ Ս Ժ Գ

ԹԵ ՈՐՉԱՓ ՄԵԱՅ ՊԵՏՐՈՍ շԱՅՐԱՊԵՏԸ ԿՈՍՏԱՆԿՆՈՒՊՈԼՍՈՒՄ  
ԿԱՄ ԽԵՉՊԵՍ ՎԵՐԱԿԱՐՉԱՎԻ<sup>128</sup>

Թագավորը տեսնելով նրան [Հայրապետին]՝ ընդունեց մեծ հարգանքով ու մեծարանքներով և հրամայեց առատ ուճիկով պատվել նրան. բայց երեք տարի նրան պահեց իր մոտ, կասկածելով, որ եթե նա Հայաստան վերադառնա, կարող է ապստամբեցնել Անին: Իսկ Սենեքերիմի որդի Ատոմը<sup>129</sup> երաշխավորությամբ վերցնելով նրան՝ բերեց իր Սեբաստուպոլիս<sup>130</sup> քաղաքը, որպես բնակատեղի նրան տվեց սուրբ Նշանի<sup>131</sup> հանգստավայրը, որ ինքն էր շինել բազմահարդար զարդարանքներով ու մեծապայծառ վայելչությամբ. հենց այստեղ էլ նա վախճանվեց, ապրելով երկու տարի: Պետրոսի տեղը հաստատեցին նրա քեռորդի Խաչիկին, որը հայրապետական ձեռնադրությունը վաղուց էր ընդունել: Թագավորը երբ այս լսեց, պատգամավորներ ուղարկեց և նրան ու ամբողջ գանձերը, որ գտան թե՛ այնտեղ, թե՛ Հայաստանում, տարավ իր մոտ.

որովհետև Պետրոսը սաստիկ դանձաւոր էր, որի պատճառով  
և շատերը պախարակում էին նրան: Երբ տարւոյ հետո իս-  
րայիմ արձակվեց թագաւորանիստ քաղաքից և դաւով Երկրորդ  
Հայքի սահմանը, Տարնտա<sup>132</sup> կոչված գաւառը, մնաց այն-  
տեղ, որովհետև նրան հրամայված էր այնտեղ բնակվել: Իսկ  
նրա Կոստանդնուպոլսում ուշանալու պատճառն այն էր, որ  
նրան ուզում էին հարկի տակ դրել, իսկ ինքը հանձն չէր առ-  
նում, ասելով, թե՛ «ինչ որ մինչև իմ ժամանակը չի եղել, նա  
էլ չեմ ընդունի»: Հետո թեև շատ հարցուփորձի ենթարկեցին  
և նույնիսկ սպառնալիքներ էլ տվեցին, թե՛ այնտեղից դուրս  
չես գա, եթե մեր հրամայածը հանձն չառնես, բայց այդ երա-  
նելի մարդը և մեր մեծ կուսակցի փոխանորդը ամենեկին  
չվախեցավ նրանց խոսքերից և իր ասածին հաստատուն  
մնաց: Գրանից հետո հոռոմներից երկու մարդ՝ մեկն իշխան,  
իսկ մյուսը վանական, նրա նախանձը զրգռելու համար, թե  
ճշմարիտ մտքով, չգիտեմ, առաջ գալով խնդրեցին իրենց տալ  
եկեղեցու վերակացութունը, խոստանալով հատուցել պա-  
հանջված հարկը. նրանք երկուսն էլ շարաշար մահով սպան-  
վեցին: Ապա թագաւորը զղջալով՝ արձակեց նրան առանց  
հարկի, գրությամբ ու թագաւորական կնիքով՝ տալով նրան  
Հայաստանում ոճնեցած իրենց տեղերը և երկու վանք էլ  
Տարնտայում:

Գ Լ Ո Լ Խ Ժ Ե

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՉԱՐԱՉԱՐ ՊԱՏԺՎԵՏ ԱՅՆ ՀՂՓԱՅԱՄ ՔԱՂԱՔԸ, ՈՐ  
ԿԱՐՍ Է ԿՈՉՎՈՒՄ<sup>133</sup>

Կարս քաղաքը վաղուց ի վեր աղետալի փորձութեան չէր  
ենթարկվել, որի պատճառով էլ նրա բնակիչներն ապրում էին  
անհոգ ու ապահով, դիզելով ծովից ու ցամաքից եկած մեծ  
հարստութուն: Բայց ահա տիրոջ հայտնութեան մեծ տոնի գի-  
շորը, իբր քահանաների դասը քաղմամբոյս ժողովրդով հան-  
ջերձ ուրախ ձայներով օրվա արարողութունն էր կատարում,  
հանկարծակի վրա հասան անօրենների զորքերը և որովհետև

քաղաքը գիշերապահներ չուներ, ներս խուժելով, սուրը քա-  
շած՝ անողորմաբար կոտորեցին բոլորին. մեծ ողբերի է ար-  
ժանի այս պատմութունը: Քաղաքների կարգն է, որ տեղու-  
նական տոների ժամանակ թե՛ տղամարդ, թե՛ կին, թե՛ ծեր,  
թե՛ երեխա, ամեն մեկն իր ուժի ու կարողութեան չափ, զար-  
նան ծաղկանոցների նման մեծ վայելչագեղութեամբ զար-  
դարվեն: Թշնամիները սրանց այսպես էլ գտան. բայց հան-  
կարծակի քաղաքը լցվեց ողբ ու կափանով: Քահանաներին  
ժամերգութունից լռեցրին, սաղմոսասացներին՝ սաղմոսա-  
կան երգերից. կտրվեց օրհներգութունը գպիրների ու մա-  
նուկների բերանից: Խիստ կսկծալի էր այնտեղի տեսարանը,  
որ նույնիսկ քարերին ու անշունչ արարածներին էր ստիպում  
ողբալ ու հառաչել, ո՛ւր մնաց զգայուններին ու շնչավորներին.  
որովհետև պատվական ու երեւելի վաճառականները շարաշար  
մահով էին սպանված, երիտասարդներն ու քաջ մարտիկները  
փողոցներում սրակոտոր եղած, ծերերը, պատկառելի աղիքնե-  
րը արյունաշաղախ, նրանց մոտ էին ընկած. քաղաքը զրկվեց  
մարդկանցից. փրկվեցին միայն նրանք, ովքեր հասցրին քա-  
ղաքի վերևում գտնվող ամրոցը մտնել: Զորքերն ամբողջ օրը  
մնալով այնտեղ՝ կողոպտեցին ու քարուքանդ արին տները.  
հետո կրակ տալով այրեցին քաղաքը, իսկ իրենք առնելով  
ավարն ու գերին՝ զնացին իրենց երկիրը:

Գ Լ Ո Լ Խ Ժ Զ

ՄՈՒԹԱՆԻ ԳԱՐՈՒ ՄԱՍԻՆ<sup>134</sup>

Այս պատմութեան հաշորդ տարվա (մեր՝ հինգ հարյուր  
երեք թվականին) նույն ամսվա նույն օրն էր<sup>135</sup>, երբ մեր չըբ-  
նաղ աշխարհը գերի տարան. Արծնը և մյուս քաղաքներն ու  
ավանները այրեցին. մեզ վրա շարժվեց մահաշունչ ու արյու-  
նարբու գազանը՝ մարդախոռոչ Սուլթանը<sup>136</sup>, անհամար զոր-  
քերով ու փղերով, կառքերով ու երկվարներով, կանանցով ու  
կրեյաներով և ամենամեծ պատրաստութեամբ: Շրջանցելով  
Արճեշն ու Բերկիրն, եկավ<sup>137</sup> բանակ դրեց Ապահոնյաց գա-

վառի Մանազկեբտ կոչված քաղաքի շուրջը, բռնելով ամբողջ ընդարձակ դաշտավայրերը: Ասպատակներ ուղարկեց աշխարհի երեք կողմերը. դեպի հյուսիս՝ մինչև Ափխազաց բերդը, մինչև Պարխար<sup>138</sup> կոչված լեռն ու Կովկասի ստորոտը, դեպի արևմուտք՝ մինչև Ճանեթի<sup>139</sup> անտառները, իսկ դեպի հարավ՝ մինչև Սիմ<sup>140</sup> կոչված լեռը. այսպես բռնեցին ամբողջ աշխարհը արտ ու ագարակ հնձողների պես:

Այն աղետները, որ այն ժամանակ նրանք հասցրին, ո՞վ կարող է գրի առնել, և կամ ո՞ւմ միտքը կզորի թվել, որովհետև ամբողջ երկիրը լցված էր դիակներով. շեներն ու անշեն վայրերը, ճանապարհներն ու անապատ տեղերը, քարանձավներն ու առապարները, անտառախիտ ու ապառաժոտ վայրերը. բոլոր շինանիստ տեղերում հրկիզելով ավերեցին տներն ու եկեղեցիները, որոնց կրակի բոցը ավելի էր բարձրանում, քան Բաբելոնի հնոցինը<sup>141</sup>. այս միջոցներով, ոչ թե մի անգամ, այլ երեք անգամ իրար ետևից, ամբողջ աշխարհը քարուքանդ արին մինչև երկիրը իսպառ կտրվեց բնակիչներից, լռեց անասունների բառաչը:

Այս աղետները կրելով՝ երկիրը սուգ հագավ ու կործանվեց, որովհետև ոչնչացան նրա բնակիչները. ամբողջ աշխարհից իսպառ վերացավ ուրախությունը, ամեն տեղ միայն ողբ ու հառաչանք, բոլոր տեղերում միայն լաց ու կոծ, ո՛չ մի տեղ չեն լավում քահանաների երգերն ու Աստծու փառաբանության ձայնը, ո՛չ մի տեղ չեն բացվում գրքերը՝ լսողներին խրատելու և մխիթարելու համար, որովհետև ընթերցողները սրամահ եղան հրապարակներում, իսկ լսողները՝ այրվեցին ու մոխրացան: Ո՛չ մի տեղ չի լավում հարսանիքի ձայն, ոչ էլ նորածին մանկան ավետիք. ո՛չ ծեր մարդիկ են ավոտով նստում հրապարակում և ոչ էլ նրանց առաջ խաղում են ժիր մանուկները. արտոներում էլ չի խմբվում նախիր, ոչ էլ գառներն են դաշտերում խայտում. էլ ո՛չ հնձվորն է դիզում խրձերը<sup>142</sup> և ոչ էլ լսում անցնող մարդկանցից գովեստի խոսքեր, չեն լցվում կալերն այլևս ցորենով, և հնձաններում չի ճողփում գինին. ո՛չ այգեկութի<sup>143</sup> ժամանակ ուրախ ձայներ են լավում, ո՛չ ծանրանում են պահարանները կուծ-սափորներով: Այս բոլորն ահա վերացան-կորան ու չեն երևում:

Ո՞ր Երեմիան պիտի ողբա մեր այս կործանումը, ճանապարհներից ու լեռներից միշտ ողբեր երգելով. էլ ո՞ր Եսային պիտի չսի սփոփողներին, որ ողբերով հագնեա: Վա՛յ ինձ, որ ես եմ վիպերգում սրանք. հիմենացի այն երիտասարդի՞ պես գուժարկու եղա, ոչ թե մի գլուղի կամ մի քաղաքի, այլ բոլոր երկրների՝ ազգեազգ մինչև աշխարհի վերջը: Քանզի չկա մի ժամանակ կամ գործ, որ կարողանա մերը հնացնել, բացի Սուրբ գրքի հիշած Անապատի պղծից: Հիմա ի՞նչ անեմ, ձեզ խնայելով՝ դադարե՞մ պատմելուց բոլոր անհնարին այն աղետները, որ եկան քրիստոնյաների վրա, թե՞ բորբոքեմ բոլորիդ ողբ ու հառաչանքները, որ հանդիսակից եք այս գծոխալուր պատմությանը. բայց զիտեմ, որ ուզում եք լսել ուստի և ես մի կողմ թողնելով ծուլությունս՝ մեկառմեկ կգրեմ զլիսավոր տեղերի սոսկալի աղետները:

Երբ որ հիշում եմ Խորձյանն ու Հանձեթը և բոլորը, ինչ որ այնտեղ կատարվեց, արտասուքներից շունչս կտրվում է, սիրտըս փղձկում է, միտքս՝ ցնորվում, ձեռքս՝ դողդողում, շարադրանքս չեմ կարողանում էլ առաջ տանել: Տեղի ամբուխյան պատճառով վերին գավառներից անթիվ-անհամար մարդիկ էին հավաքվել այնտեղ. արագաթուխ՝ թռչունների պես, անգութ՝ անողորմ գազանի նման, կատաղությունից բորբոքված՝ որպես վրեժխնդիրներ, անօրենները վրա տվեցին և, որոնելով քարանձավներում, ծառախիտ մայրի անտառների մեջ, որին որ դտան, անհազաբար կոտորեցին: Ինչպես որ գարնան գալու ժամանակ օդի ջերմությամբ ջուրը ծորալով՝ կլնում է, ձյան մեջ առունք կազմում, վիժելով բանդում, հեղեղատում է հետևից հողը, այդպես էր լինում և այն ժամանակ. սպանվածներից ելած հորդահոս առուններն արյան՝ զառիվայր հոսելով՝ հետքից հողն էին բանդում:

Բայց մտաբերի՛ր դու այն ժամանակ կատարվածները. այնտեղ գտնվող կրոնավորների ու քահանաների դասը կամ ծերերի խմբերն ու երիտասարդների բազմությունը, որոնց նորաբույս մորուքները վայելչագեղ ու սաստիկ ներդաշնակ մեկարի պես այտերն էին դարդարում, իսկ վարսերի խոպոպ-

\* Հմմտ. Ա. Քազ. Գ. 12—17

ները ճակատի վրա փայլելով՝ վարդերի նման վառվռուն գույներով երեսներն էին պայծառացնում, և թե ինչպես հանկարծակի, ասես կարկուտահար, թշնամու սրից գետնին փռվելով՝ թավալազոր թաքտում էին: Աչքի առաջ բե՛ր և այն անհամար երեսաներին, որոնց խլելով ծնողների գրկից՝ նետում էին գետին և անտարբեր նրանց՝ մայրերին կանչող աղնկուտը վայնասուններին, ծնողներին էլ գանահարելով հապշտապ հեռացնում էին նրանցից: Ո՛ր քարեղեն սիրտը կարող է շնեղովել արտասուքներից՝ լսելով այս անհամար ու բազմատեսակ աղետները, կույսերն ընկած խայտառակության մեջ, նորահարսերը ամուսիններից բաժանված ու ըջված գերության. այն երկիրը, որ բնակչախիտ մի քաղաքի պես մարդկանց բազմությամբ խճողված էր, մի վայրկյանում դարձավ անմարդ ու ամալի. երկու մաս եղած՝ կա՛մ սրահոտոր դարձան, կա՛մ գերի: Վա՛յ, Քրիստոս, քո այն ժամանակվա ներողությանը, վա՛յ մեզ պատահած արհալիրքների. որքա՛ն մատնվեցինք շարաշար մահվան:

Իսկ այն կոտորածը, որ եղավ Դերջան ու Եկեղյաց գավառներում և նրանց միջասահմաններում, ոչ ոք չի կարող նկարագրել, բայց դու պատմածներովս շափի՛ր այն: Իսկ նրանք, որ Տալք մտան, ամբողջ երկիրն առնելով՝ հասան մինչև Ճորոխ կողված մեծ գետը, ապա գետի ընթացքով իջան Խաղտյաց գավառը և կողոպտելով ու գերելով՝ վերադարձան ու եկան հասան մինչև Քաբերդ<sup>144</sup> կողված բերդաքաղաքը. այստեղ սրանց պատահամբ հանդիպեց հոռոմոց զորքից մի գունդ, որոնք վռանդներ<sup>145</sup> են կողվում, և ընդհարվելով կովեցին միմյանց զեմ: Աստծու ողորմությամբ հոռոմների զորքերն ուժեղացան ու նրանց հաղթելով՝ զորագլխին ու նրա հետ շատերին սպանեցին, իսկ մյուսներին փախուստի մատնելով՝ խլեցին ամբողջ ավարն ու գերին, բայց փախչողներին երկար հետապնդել չհամարձակվեցին՝ վախենալով, թե գուցե հանկարծ մեծ զորքի հանդիպեն: Ազատված գերիներն Աստծուն փառք տալով զնացին իրենց տները: Իսկ նրանք, որ հայերի վրա զնացին, ում որ գտան, կամ սրի քաշեցին, կամ վերցրին գերի և ավարով լիացած նորից վերադարձան: Բայց երբ հասան Վանանդի սահմանները, սրանց զեմ դուրս եկան Աբասի որդի Գա-

գիկի<sup>146</sup> քաջազուն իշխանները և այդտեղ շատերին կոտորեցին: Բայց անօրենների վրա հասած զորքերը շրջապատեցին նրանց և որովհետև պատերազմի երկարելու պատճառով ու այն սարսափելի կոտորածից թե՛ իրենք և թե՛ իրենց ձիերը ուժից ընկել էին, շկարաղացան պատռել թշնամու պատնեշը և դուրս գալ. անօրենները սուրբ գործի զնելով՝ կոտորեցին ազատներից երեսուն մարդ:

Ազատներից մեկին, որի անունը թաթուլ էր<sup>147</sup>, և որը քաջ ու պատերազմասեր մարդ էր, բռնելով տարան Սուլթանի մոտ: Որովհետև պարսից Արսուբան ամիրայի որդուն թաթուլը կարևոր վերավորել էր, Սուլթանը նրան տեսնելով ասաց. «Եթե դա ապրի, քեզ կազատեմ, բայց և թե մեռնի, կհրամայեմ, որ քեզ դրան մատաղ անեն»: Իսկ թաթուլը պատասխանեց. «Եթե իմ զարկածն է, չի ապրի, իսկ թե ուրիշինն է, այդ չգիտեմ»: Քիչ օրերից հետո նա մեռավ: Երբ Սուլթանն այդ լսեց, հրամայեց թաթուլին սպանել և նրա աչքազուկի՛ կրտրելով՝ ուղարկեց Արսուբանին որպես միթիթարություն, թե քո որդին վատ բազկից չի մեռել:

Այժմ ի՞նչ կարիք կա ինձ մեկատմեկ գրի առնել քրիստոնյաների անկասելի կործանումը. ինչպես որ ծովը սաստիկ հողմերից փոթորկված՝ ահռելի ծփանքներով ու փրփրաղեղ ալիքներով բոլոր կողմերից ալեկոծվում է, այդպես էլ մեզ հետ պատահեց. ամբողջ աշխարհը լցվեց հանկարծ խռովությամբ, և ոչ մի տեղ չկար ապավինելու, քանզի անհնարին աղետների պատճառով վերացավ կյանքի, ապրելու անհնարին աղետների պատճառով վերացավ կյանքի, ապրելու հույսը բոլոր մարդկանցից: Այս դեռ շա՛տ վաղուց Փրկիչն էր զուշակել, եղեռնալի աղետները նմանեցնելով խռովահույզ ծովի, որի մեջ մարդկանցից շատերը ահ ու սարսափից թալկացած՝ ուշակորույս էին լինում:

Բայց դու այս թողած՝ եկ զարմացի՛ր Սուլթանի անմտության և Աստծու բազմապատիկ իմաստության վրա. նրա անմբտության վրա՞ որովհետև ինքն իրեն ամենակալ էր հռչակում և Աստծուն աթոռակից, իսկ Աստծու իմաստության վրա՞ որ մի տան<sup>148</sup> միջոցով խաղաց նրա հետ, անարդանքով լի վերադարձրեց իր աշխարհը: Այժմ լսի՛ր ասածներս. առաջին անգամ, երբ անհամար զորքով եկավ շրջապատեց Մանազկերտ

ներք ճակատի վրա փայլելով՝ վարդերի նման վառվառն գույներով երեսներն էին պայծառացնում, և թե ինչպես հանկարծակի, ասես կարկտահար, թշնամու սրից գետնին փռվելով՝ թավալողը թաքտում էին: Աչքի առաջ բե՛ր և այն անհամար երեխաներին, որոնց խելով ծնողների գրկից՝ նետում էին գետնին և անտարբեր նրանց՝ մայրերին կանչող աղեկտուր վաչնաստեններին, ծնողներին էլ զանահարելով հապշտապ հեռացնում էին նրանցից: Ռ՛ր քարեղեն սիրտը կարող է չխնդրվել արտասուքներից՝ լսելով այս անհամար ու բազմատեսակ աղետները. կույսերն ընկած խայտառակության մեջ, նորահարսերը ամուսիններից բաժանված ու բշված՝ գերության. այն երկիրը, որ բնակչախիտ մի քաղաքի պես մարդկանց բազմությամբ խճողված էր, մի վայրկյանում դարձավ անմարդ ու ամայի. երկու մաս եղած՝ կա՛մ սրակոտոր դարձան, կա՛մ գերի: Վա՛յ, Քրիստոս, քո այն ժամանակվա ներողությանը, վա՛յ մեզ պատահած արճալիրքներին. որքա՛ն մատնվեցինք շարաշար մահվան:

Իսկ այն կոտորածը, որ եղավ Դերշան ու Եկեղյաց գավառներում և նրանց միջասահմաններում, ոչ ոք չի կարող նկարագրել, բայց դու պատմածներովս չափի՛ր այն: Իսկ նրանք, որ Տալք մտան, ամբողջ երկիրն առնելով՝ հասան մինչև Ճորոխ կոչված մեծ գետը, ապա գետի ընթացքով իջան Խաղտյաց գավառը և կողոպտելով ու գերելով՝ վերադարձան ու եկան հասան մինչև Թաթերգ՝<sup>144</sup> կոչված բերդաքաղաքը. այստեղ սրանց պատահմամբ հանդիպեց հոռոմոց զորքից մի զունդ, որոնք վռանդներ<sup>145</sup> են կոչվում, և ընդհարվելով կովեցին միմյանց զեմ: Աստծու ողորմությամբ հոռոմների զորքերն ուժեղացան ու նրանց հաղթելով՝ զորագլխին ու նրա հետ շատերին սպանեցին, իսկ մյուսներին փախուստի մատնելով՝ խլեցին ամբողջ ավարն ու գերին, բայց փախչողներին երկար հետապնդել չհամարձակվեցին՝ վախենալով, թե դուցե հանկարծ մեծ զորքի հանդիպեն: Ազատված գերիներն Աստծուն փառք տալով զնացին իրենց տները: Իսկ նրանք, որ հալերի վրա զնացին, ում որ գտան, կամ սրի քաշեցին, կամ վերցրին գերի և ավարով լիացած նորից վերադարձան: Բայց երբ հասան Վանանդի սահմանները, սրանց զեմ դուրս եկան Աբասի որդի Գա-

գիկի<sup>146</sup> քաջազուն իշխանները և այդտեղ շատերին կոտորեցին: Բայց անօրենների վրա հասած զորքերը շրջապատեցին նրանց և որովհետև պատերազմի երկայնելու պատճառով ու այն սարսափելի կոտորածից թե՛ իրենք և թե՛ իրենց ձիերը ուժից ընկել էին, չկարողացան պատռել թշնամու պատնեշը և դուրս գալ. անօրենները սուրբ գործի զնելով՝ կոտորեցին ազատներից երեսուն մարդ:

Ազատներից մեկին, որի անունը Քաթուլ էր<sup>147</sup>, և որը քաջ ու պատերազմասեր մարդ էր, բռնելով տարան Սուլթանի մոտ: Որովհետև պարսից Աբսուբան ամիրայի որդուն Քաթուլը կարևոր վիրավորել էր, Սուլթանը նրան տեսնելով ասաց. «Եթե դա ապրի, քեզ կազատեմ, բայց եթե մեռնի, կհրամայեմ, որ քեզ դրան մատաղ անեն»: Իսկ Քաթուլը պատասխանեց. «Եթե իմ զարկածն է, չի ապրի, իսկ թե ուրիշինն է, այդ չգիտեմ»: Քիչ օրերից հետո նա մեռավ: Երբ Սուլթանն այդ լսեց, հրամայեց Քաթուլին սպանել և նրա աչք բազում ի կրտսերիով՝ ուղարկեց Աբսուբանին որպես միտթարություն, թե քո որդին վատ բազկից չի մեռել:

Այժմ ի՛նչ կարիք կա ինձ մեկամեկ գրի առնել քրիստոնյաների անկասելի կործանումը. ինչպես որ ծովը սաստիկ հողմերից փոթորկված՝ ահռելի ծփանքներով ու փրփրադեղ ալիքներով բոլոր կողմերից ալեկոծվում է, այդպես էլ մեզ հետ պատահեց. ամբողջ աշխարհը լցվեց հանկարծ խռովությամբ, և ոչ մի տեղ չկար ապավինելու, քանզի անհնարին ազետների պատճառով վերացավ կյանքի, ապրելու հույսը բոլոր մարդկանցից: Այս դեռ չա՛տ վաղուց Փրկիչն էր զուշակել, եղեռնալի աղետները նմանեցնելով խռովահույզ ծովի, որի մեջ մարդկանցից շատերը ա՛հ ու սարսափից թալկացած՝ ուշակորույս էին լինում:

Բայց դու այս թողած՝ եկ զարմացի՛ր Սուլթանի անմտության և Աստծու բազմապատիկ իմաստության վրա. նրա անմբտության վրա՞ որովհետև ինքն իրեն ամենակալ էր հռչակում և Աստծուն աթոռակից, իսկ Աստծու իմաստության վրա՞ որ մի տան<sup>148</sup> միջոցով խաղաց նրա հետ, անարգանքով լի վերադարձրեց իր աշխարհը: Այժմ լսի՛ր ասածներս. առաջին անգամ, երբ անհամար զորքով եկավ շրջապատեց Մանազկերտ



բաղաբը, բնակիչները թե՛ մարդկանց և թե՛ անասունների կողմից անպատրաստ էին: Եթե նա տասն օր շարունակեր պաշարումը, ապա քաղաքը առած կլիներ. բայց Աստված, որ ընդմիջտ բարկացած չի մնում և ոչ էլ ոխ է պահում հավիտյան, ոչ էլ անում է ըստ մեր մեղքերի, նրա միտքը մոլորեցրեց. երեք օրից հետո ամբողջ բանակով շարժվելով՝ գնաց իջավ Տվարածատափ<sup>149</sup>, իսկ այնտեղից էլ՝ Բասենի ընդարձակ դաշտը, Ավնիկ<sup>150</sup> կոչված անառիկ ամրոցի մոտ. այնտեղ տեսնելով մարդկանց ու անասունների աշխարհաժողով և միայն նայելուց ղգալով, որ անառիկ է, ոչ մի բան չձեռնարկեց և նրա մոտով անցնելով՝ եկավ Բասենի զլուխը, այն գյուղի մոտ, որ Դու<sup>151</sup> է կոչվում: Այնտեղից, շիմանալով, քիչ մարդկանցով ելնելով հենց այն բարձունքի վրա, որ նայում է դեպի Կարին, տեսավ, որ քաղաքը դիմել է ամեն պատրաստությունը. երկար ժամանակ նայելուց հետո կրկին ետ դարձավ: Իսկ Մանազկերտի բնակիչները, քանի որ հենց հնձի ժամանակն էլ էր, առանց վախենալու դուրս գալով քաղաքից՝ մարդկանց ու անասունների համար առատ պաշար պատրաստեցին: Եվ մինչև Սուլթանը այս ու այն գործն անելուց հետո նորից կվերադառնար այնտեղ, նրանք արդեն անհոգ ապահովված էին: Ապա նա կատաղությունը բորբոքված գալով՝ սկսում է պատերազմել քաղաքի դեմ: Իսկ քաղաքի վերակացու իշխանը<sup>152</sup>, քանի որ բարեպաշտ մարդ էր, ամենակալ Աստծուն էր օգնության կանչում, պահս ու աղոթքներով կրթվելով իրեն և դրանով սպառազինված՝ քաջալերվում էր անսասան հավատով ու Աստծուն սաղմոսելով ասում. «Ծն շեմ վախենում շարից, որովհետև դու, տե՛ր, ինձ հետ ես», և ապա. «Ծն շեմ վախենում նրանց բյուրավոր զորքերից, որ իմ շուրջն են»\*: Իսկ քաղաքի մարդկանց ու զորքերին խորխուռ սելով՝ ասում էր. «Քաջալերվեցե՛ք, իմ ընկերներ և եղբայրներ, քաջալերվեցե՛ք և մի՛ վախեցեք. սա մի հեշտ գործ է Աստծու համար. նրանք մեզ վրա գալիս են կառքերով ու երիվարներով, իսկ մենք մեր տիրոջ անունը հիշենք և Աստծով

\* Սաղմ. Իբ. 4

\*\* Սաղմ. Գ. 7

պարծենանք հավիտյան, և նրա անունը փառաբանելով՝ հավատանք, որ կտա նա իր ժողովրդին ուժ ու ամրություն, նա, որ օրհնված է հավիտյան»: Քահանաներին հորդորում էր աղոթել ու սաղմոսներ երգել, որոնք և անհատնում աղաղակներով գիշեր ու ցերեկ խաչով ու զանգերի բարձրաձայնությամբ դիմում էին Աստծուն, պարիսպների վրա աղաչում էին նրան զալ օգնության վտանգվածներին: Բռնավորը լսելուց ձանձրանալով՝ հարցնում է, թե այդ ի՞նչ անվերջ աղաղակ է, իսկ իմացողները պատասխանում էին, թե Աստծուն են դիմում:

Այսպես մի ամիս քաղաքը պաշարած պահեց. օրը երկու անգամ՝ մեկ լուսանալիս և մեկ էլ երեկոյան, կովի բռնվելով քաղաքի հետ: Բայց այստեղ դու տե՛ս Աստծու իմաստությունը, թե ինչպես դիտի հակառակներով էլ հակառակի համար օգուտ առաջ բերել. մինչդեռ քաղաքն այս ծանր դրության ու վտանգի մեջ էր, մի բարի միտք է ծնեցնում մի իշխանի մեջ, որը Սուլթանի ամենամտերիմներից էր. սա Սուլթանի մտադրությունները կա՛մ բանավոր, կա՛մ գրավոր հայտնում էր քաղաքին: Շատ անգամ թղթի վրա գրելով և այն նետի սլաքին կապելով՝ պատերազմի կարգով մոտենում էր պարսպին ու նետը քաղաք ձգում և դրանով կովի բուր հանդամանքները հայտնում էր նրանց՝ թե վազը այսպիսի կամ այնպիսի ձևով է լինելու կոփվը, կամ թե այս նշված տեղում գիշերը ցանկանում են պարսպի տակը փորել ու ներս մտնել. բայց դուք ամո՛ւր կացեք և այդ տեղերի վրա հսկեցե՛ք:

Այս անում է Աստված, որ գիտի մեծամեծ գործերի հիմքը դնել հեռվից. նա, որ Բաղաամին Բաղալի ժամանակ մարգարե դարձրեց՝ ժողովրդին կառավարելու համար և անխոս անասունին խոսել տվեց մարդկային լեզվով, Եղիային Քիրիաթի ձորում սովի ժամանակ երեք տարի ազոավներով կերակրեց, ի՞նչ զարմանալի է, որ այստեղ էլ հակառակորդների ձեռքով քաղաքի փրկությունը տնօրինեց:

Այսպիսով, թե՛ գիշեր, թե՛ ցերեկ, որ կողմում նրանք ճակատամարտ սկսեցին, սրանք զինավառված ու պատրաստ այնտեղ էին գտնվում: Դրանից հետո մեքենաներ պատրաստելով՝ նրանցով էին պատերազմում: Բայց մերոնցից մի ծեր

բահանա, որ քաշատեղյակ էր այդ արհեստին, ինքն էլ իր վիճիկանը<sup>153</sup> շինեց. երբ նրանք բարը մեքենայի պարսատիկի մեջ դնելով՝ դեպի քաղաքն էին ձգում, քահանան իր քարը ուղիղ դեպի նրանց քարն էր արձակում, որը դիպչելով նրանց քարին՝ իրենց վրա էր գցում: Անօրենները լոթ անգամ այս կրկնելով՝ ոչինչ չկարողացան անել, որովհետև երեցի քարը ավելի զորեղ էր նրանցից:

Ապա այլ պատերազմական գործիք պատրաստելով, որը իրենք բաբան էին կոչում, որը շատ զարհուրելի էր, այնպես որ, ասում էին, թե շորս հարյուր սպասավորներ ուներ, որոնք պարաններն էին քաշում և վաթսուն լիտր<sup>154</sup> քար դնելով պարսատիկի մեջ՝ դեպի քաղաքն էին ձգում. նրանք դրա դիմաց բամբակի<sup>155</sup> բեռներից ու այլ շատ նյութերից պարիսպ կանգնեցրին, որպեսզի երեցի քարը նրան չդիպչի: Եվ երբ այս այսպես կարգավորեցին, արձակեցին մի քար, որը ուժգնորեն դիպչելով պարսպին՝ փլցրեց և անցք բացեց. այս տեսնելով՝ քաղաքի բնակիչները սաստիկ ահաբեկված, ողբ ու հառաչով Աստծուն էին աղաղակում, որ հասնի օգնության. իսկ անօրենները հրձվում էին: Հաշորդ օրը առավոտյան գել-միկների<sup>156</sup> զորավարը, որովհետև քաջ մարդ էր, իր զորքն առնելով ու գալով՝ սկսեց կռվել մերոնց դեմ. հարձակվելով քացվածքի ուղղությամբ՝ նա ցանկանում էր ուժով ներս մտնել, բայց հանկարծ ինքն իրեն գնալով ընկավ: Պարսպի վրա եղողները երկաթի ճանկը ձգելով՝ նրան բռնեցին ու քաշելով զցեցին պարսպից ներս. նրա զորքերն այդ տեսնելով՝ տրտմությամբ վերադարձան իրենց բանակը, իսկ քաղաքի համար գա եղավ մեծ ուրախություն:

Այն ժամանակ Հոռոմների զորքերից մի կտրիճ մարդ նսավթով ու ծծմբով կրակ պատրաստելով և լցնելով ապակյա ամանի մեջ, քաշասիրտ արիությունը, վահանով միայն թիկունքը ապահոված, նստելով ազնվացեղ նժույզը՝ քաղաքի դռներից դուրս եկավ ու մտավ այլազգիների բանակը, իրեն մանդառոր<sup>157</sup>, այսինքն՝ թղթաբեր հայտարարելով. գնալով մինչև բաբանը, պտավեց նրա շուրջը և հանկարծակի վերցնելով շիշը թափեց նրա վրա. անմիջապես բորբոքված կրակի ծիրանի բոց բարձրացավ, իսկ ինքը շտապով վերադար-

ձավ: Անօրեններն այդ տեսնելով, ապշած, ձիերը նստելով՝ ընկան նրա ետևից, բայց հասնել չկարողացան. նա անվնաս մտավ քաղաք, Աստծու օգնությամբ ոչ մի վիրք չունենալով: Իսկ Սուլթանը կատարվածը տեսնելով՝ մեծ բարկությամբ հրամայեց պահապաններին սրակոտոր անել:

Տեսնո՞ւմ ես Աստծու մարդասիրական խնամքը, թե ինչպես մոտ է նրա փրկությունը իր երկյուղածներին. տեսնո՞ւմ ես, թե ինչպես գիտի փոքր բաներով հաղթել մեծերին, ինչպես Մովսեսի ժամանակ վիթխարի Ովդին, որի բարձրությունը հսկայի ինը կանգուն էր, կամ մանուկ Դալթի ձեռքով՝ Գողթաթին, կամ Փաբերի կնոջ՝ Հայելի ձեռքով՝ այլազգիների հսկայազն Սիսարին, կամ էլ մի այլ կնոջ ձեռքով՝ Հողոփեռնեսին: Այս ասացի, որպեսզի չվհասվենք, երբ ընկնենք անտանելի փորձությունների մեջ. որովհետև Աստված սովոր է թողնել առժամանակ այնպիսի վտանգավոր դժվարությունների մեջ, որ համբերողները արժանանան փառքի պսակի, իսկ անօրեններն արդարադատ դատաստանից ստանան իրենց շարիքների հատուցումը: Այդ տեսնում ենք կատարված հնոցում՝ մանուկների հանդեպ. Աստված թույլ տվեց, մինչև որ թագավորն արտահայտեց իր ամբողջ զայրույթն ու բարկությունը, պատրաստվեց հնոցը, որի բոցի բարձրությունը հասնում էր քառասունինը կանգունի, իսկ նա սաստիկ ամբարտավանությամբ ասում էր. «Աստվածն ո՞վ է, որ ձեզ փրկի իմ ձեռից»: Սրա կողքին տե՛ս նաև մանուկների անսասան հավատը, ինչպիսի՞ գազանի հետ ատյանում կանգնած՝ նրա արհամարհանքից ավելի համարձակ պատասխան էին տալիս. «Մեզ ամենևին պետք չէ,— ասում են,— դրա համար քեզ պատասխանելը»: Եվ հետո ի՛նչ եղավ, երբ թագավորի սպառնալիքները վերջացան, և նրանք կապանքներով նետվեցին հնոցի մեջ. այնժամ նրանց շուտափույթ օգնության հասավ Աստված, որը չի ամաչեցնում ճշմարիտ հավատով իրեն օգնության կանչողներին: Տե՛ս այստեղ Աստծու խորախոր իմաստությունը, որին չի հասնի ոչ ոք. կրակը քաղդեացիներ-

\* Դանիել 9. 16

\*\* Դանիել 9. 16—17

րին բաժանեց երկու մասի, որին հասնում՝ վառում էր, իսկ մանուկներին հրեշտակը ցողում էր, և կրակը ամենևին չէր մոտենում նրանց, չէր տրամեցնում ու նեղում. այս սթափեցրեց բարբարոսին, որն այդ անպատում սքանչելիքների պատճառով զղջալով արածները՝ ասաց. «Ի՞նչու եկեք, Աստուծառաններ, որ ես էլ ձեզ հետ օրհնեմ նրան, որն օրհնված է հալիտյան»։ Այստեղ նույնպես մի աննշան մարդու ձեռքով ցույց տվեց մեծամեծ սքանչելիքներ։ Այժմ թող այս մեզ համար լինի խրատ ու դաս։

Իսկ Վասիլը, որ Մանազկերտ քաղաքի իշխանն էր, ուսմիկներին հրամայեց պարսպի վրայից բարձրաձայն աղաղակելով անարդել ու հայհոյել Սուլթանին։ Սա երկու օրից հետո իր բանակով շարժվելով հեռացավ այնտեղից և գնալով հանգիստեց Արծիկե<sup>158</sup> քաղաքին, որը գտնվում է Բղնունյաց<sup>159</sup> ծովում և իր մոտ ունի մի ամուր ու անառիկ բերդ. քաղաքացիները հույսը դնելով ծովի ու ամրոցի վրա՝ անհոգ էին։ Իսկ այն արյունարբու զազանները՝ որևէ մեկի՞ առաջնորդությամբ, թե՞ իրենց հնարագիտությամբ, ծովում ծանծաղ տեղ գտնելով՝ մտան քաղաք և սրի բաշելով կոտորեցին բոլորին. ապա վերցնելով ավարն ու գերիներին՝ գնացին այնտեղից։ Սա Սուլթանի սիրտը թեթևացրեց, բայց նա իր աշխարհը գնաց մեծ տրամությամբ, որովհետև ինչ որ ուզում էր, չկարողացավ կատարել։

## Գ Լ Ո Լ Խ Ժ Է

ՄՈՆՈՄԱԿԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԸ

Երջանկահիշատակ ու աստվածային Սողոմոնը գրում է, թե արդար թագավորը շինացնում է աշխարհը, իսկ անօրենը՝ կործանում<sup>\*\*</sup>։ Դրա ճշտությունը հաստատվեց նաև այժմ, հենց մեր աչքի առաջ, սրա օրինակով. թագավորների պարտականութունն է հոգալ աշխարհի խաղաղությունն ու բարեկարգությունը, ինչպես Աստված է նախատեսում իր կողմից բոլոր

\* Հմմտ. Գանիէլ 9. 93

\*\* Առակ. 10. 4

ստեղծվածներին։ Իսկ սա այդպիսին չէր. միշտ կերուխումերով զբաղվելով՝ աղբյուսներն էր մեծացնում ու գանձերը, որ բոլոր երկրների հարկերից էր կուտակում, մինչդեռ պարտավոր էր այդ օգտագործել հեծելազորի կարիքների ու այն բազմացնելու համար, որպեսզի նրանք կարողանային թշնամուն դիմակայել ու հաղթել՝ աշխարհը պահելով խաղաղության մեջ, ինչպես անում էր երանելի Վասիլը, որը հիսուն տարի թագավորեց, և թշնամիներից ոչ մեկը չհամարձակվեց նրա աշխարհը մտնել։ Իսկ սա հավաքած ամբողջ գանձերը բողբերի վրա էր ծախսում ու վատնում և ամենևին չէր ցավում աշխարհի ավերման համար, որովհետև այնքան պոռնիկ ու բողբասեր էր, որ միայն Կոստանդնուպոլսի կանանցով չհագեցավ, այլև հեռավոր աշխարհներից կանայք բերել տվեց և ամբողջ օրը նրանցով էր զբաղվում։ Այդ պատճառով էլ սրա ժամանակ թշնամիները համարձակորեն, այն քաղցած գալլերի նման, որոնք տեսնում են հոտը առանց պահապանի, անխնա կոտորում են, արևելքից ու արևմուտքից առհասարակ կործանեցին քրիստոնյաներին, որը վերևում փոքրիշատե նշեցինք։ Ահա այսպիսի ընթացքով վարելով իր կյանքը՝ տասներեք տարի<sup>160</sup> թագավորելուց հետո սա մեռավ, ամենեվին շարժանանալով բարի հիշատակի։

Թագավորութունն իր ձեռքն առավ Կոստանդին թագավորի դուստրը՝ Թեոդորան, իբրև իր սեփական հայրենի ժառանգությունը, որի դեմ ոչ ոք չպիտի կարողանա դուրս գալ։ Տաճիկների Սուլթանը<sup>161</sup> դեսպան է ուղարկում սրա մոտ և գրում այսպիսի հրովարտակ. «Կա՛մ տուր ինձ այն քաղաքներն ու գավառները, որ քո նախնիները խլել են տաճիկներից, կա՛մ տուր ամեն օր հազար դահեկան»<sup>162</sup>։ Իսկ սա տվեց ձիեր ու սպիտակ ջորիներ, ինչպես նաև նրան ուղարկեց շատ գանձեր ու ծիրանի հանդերձներ։ Սուլթանը դրանք ընդունելով ի միջի ալլոց ու գանձերը տանողին իր մոտ պահելով՝ նրան էլ հետը առած՝ ճանապարհ ընկավ դեսպի Բաբելացվոց<sup>163</sup> աշխարհը. դա եղավ մեր թվականի հինգ հարյուր չորս տարում։

Նույն թվականին պարսից զորքերն էլ եկան Հայոց աշխարհ՝ Սուլթանի անվան տակ, թեև ասում էին, որ դրանք Ապուստարի զորքերն էին, որը Դվինի ու Գանձակի իշխանն

էր և Հայոց Աշոտ թագավորի փեսան<sup>164</sup>։ Սրանց ասպատակներից փախչելով՝ ասրբեր տեղերի բնակիչները հավաքվեցին Անի քաղաք, բայց ոչ բոլորը հասցրին ներս մտնել, որովհետև մութն քնկավ, և քաղաքի դռները փակեցին։ Իսկ պարսից զորքերը գիշերով եկան, քաղաքի դուռը բռնեցին և անօգնական ժողովրդի վրա սուրը գործի դնելով՝ անհնարին կոտորած գործեցին և վերցնելով ավարն ու գերին՝ գնացին իրենց երկիրը։

Իսկ Տարունի կողմերում, թեև առանց գրավոր հաստատման, գավառի իշխանն էր Ահարոնի որդի Քեոզորոսը, որին իրենց լեզվով Ավան էին կոչում<sup>165</sup>։ Քուրքեստանից նրա մոտ մի գունդ զինվորներ գալով՝ հնազանդվեցին նրան ու կամենալով իրենց նվիրվածությունը ցուցադրել՝ մտան ելաթի գավառը և առատ ավար բերեցին Տարուն։ Պարսկաստանից ու Քուրքեստանից զորքեր հավաքելով և ուղարկելով Քեոզորոսի մոտ՝ պահանջեցին. «Կա՛մ հանձնիր մեզ այդ ասպտամբներին, կա՛մ, եթե ոչ, երկիրդ կգերեզմարենք»։ Քեոզորոսը հանձն չառավ, որի պատճառով նրանք գալով սկսեցին պատերազմել. երկու անգամ ճակատամարտեցին միմյանց դեմ. իշխանը ցուցաբերելով մեծ արիություն՝ ի վերջո ծանր վիրավորվեց և քիչ օրերից հետո վախճանվեց. նրա տարածյալ վախճանը շատ ցավալի էր, որովհետև իր մատղաջ հասակով ու վայելչագեղ տեսքով նա նման էր Գավիթ մարգարեին, իսկ իր քաջությունը՝ բարձր էր շատերից։

Հաջորդ ձմռանը, աստվածահայտնության տոնի օրերին, անօրենների զորքերը գիշերով եկան Հարբի Մանկան Գոմ կոչված դյուղաքաղաքը. կրք բնակիչները դեռ գիշերվա արարողությունն էին կատարում, վրա հասած անհավատները սրի բաշելով կոտորեցին բոլորին՝ թե՛ նրանց և թե՛ շրջապատի գյուղերի ու ագարակների բնակիչներին և վերցնելով ավար ու գերիներ՝ գնացին Արածանի<sup>166</sup> գյուղը, բանի որ հենց այնտեղով էին անցնելու Գերիներին ու ավարը հանեցին սառույցի վրա. սառույցը հանկարծ կոտրվեց և բոլորին, որ իր վրա էին գտնվում, տակովն արավ։

Ո՛հ, ինչքան դա՛ռն է այս պատմությունը ու ողբերի արձանի. բայց գուցե մեկը մեզ մեղադրի, թե մինչև ե՞րբ պիտի

մեր առաջ դնես վշտերի ու տառապանքների պատմություններ։ Մարգարեները որքան սպառնալի բաներ էին կանխագուշակում, որ ժամանակներ հետո էին կատարվելու. ժողովուրդը զրանց դժկամությամբ էր վերաբերվում, իսկ ես ոչ թե սպառնալիքներ եմ գուժարկում, այլ պատմում եմ եղած ու կատարված դեպքեր, որպեսզի բոլոր լսողների արտասուքը շարժեմ, թե որքան դաժան ժամանակի հանդիպեցինք։ Մեր այս կյանքը կյանք չեղավ։ Եթե մեր հայրերի մեղքերը մեզ վրա ընկան, ինչպես մարգարեն է ողբալով գանգատվում իր ժողովրդի առիթով, ապա վա՛յ մեզ, որ մենք մեր հայրերի պարտքերն ենք վճարում։ Հապա ո՞ւր է այն, որ Աստված Եզեկիի հետ խոսելով ասում էր. «Որդի՛ մարդո, այդ ի՞նչ առակ է, որ ասում եմ Իսրայելում, թե՛ «Հայրերն ազոխ կերան, բայց որդիների ատամներն առնվեցին»։ Ես կենդանի եմ,— ասում է տերը,— այդ առակը Իսրայելի մեջ այլևս չպիտի ասվի, որովհետև բոլոր մարդիկ էլ իմն են, ինչպես հայրը, նույնպես և որդին»\*. և որդուն ազատեց հոր պարտքից։ Իսկ եթե այս բոլորը մեզ վրա եկան մեր շարքերի պատճառով, ուրեմն բոլոր մարդկանցից ողորմելի ենք մենք. ամբողջ աշխարհը բնակվում է խաղաղության մեջ, իսկ մենք գերի ենք ու կալանավոր, սրակոտոր ենք ու տնավեր և ամեն ինչից կողոպտված։

Հայաստանը թագավորության շորս [գահակալական] աթոռներ<sup>167</sup> ունե՛ր, չհաշված կյուրապաղատական իշխանությունը և այն, որ հոռոմներից էր։ Ուներ նաև մեծ, բոլոր ազգերին նախանձնի հայրապետություն, գիտությունը խորահամուտ առաջնակարգ ու ճշմարտախոս վարդապետներ, որոնց խոսքերից հերձվածողների ոհմակները սմբելով ու գետինը մտնելով՝ չէին կարողանում հավատացյալների հոտի փարախը մտնել. քանի որ դոնապանն էլ, որը ճանաչում էր յուրաքիններին ու ճանաչվում նրանցից, չէր ընդունում նրանց։ Մեր եկեղեցիները վայելչազարդարված էին ամեն պերճանքով՝ անմահ փեսային դուր գալու համար։ Մեր մայր Սառայի անախտ արգանդի նորածին մանուկները աղավնիների ձա-

\* Եզեկ, ԺԸ. 1—4

գերի նման խմբված միասին՝ լիահունչ ձայնով հրեշտակներ  
րի երգն էին երգում:

Այժմ ե՛կ ու տե՛ս դառն, անմխիթար այն փոխարենը, որ  
մենք ստացանք. ո՛ր են անթոռները թագավորական, էլ չեն  
երևում. ո՛ր են ամպի պես նրանց առջևում խտացող զորքի  
բազմությունները, որ գարնանարույս ծաղիկների պես իրենց  
երփներանգ հանդերձանքներով փայլփրում էին. ահա էլ չկան  
ու չեն երևում: Ո՛ր է աթոռը հայրապետական, մեծ, հրա-  
շալի, որը Աստծու երանելի մարդ մեծ Գրիգորը, իշած հոր  
Վերայ, տասնհինգ տարի անլուր տանջանքով ջանք թափեց,  
դրեց առաքելական իր գահի վրա, այսօր թափուր է, զուրկ իր  
տիրոջից, մերկ իր զարդերից, ծածկված փոշով ու սարդոս-  
տայնով, աթոռական էլ որպես մի գերի ու կալանավոր քշված  
է օտար հեռավոր աշխարհ: Լսել են վարդապետների ձայնն  
ու քարոզները. հերձվածողների խմբերը, որոնք նրանց ժա-  
մանակ ծակերը փախչող մկների նման այստեղ ու այնտեղ  
էին թաքնվում, հալածված նրանց աստվածաբանական քա-  
րոզներից և ուղղադավան վարդապետությունից, այսօր քա-  
ջասիրտ առյուծների պես աներկյուղ դուրս են գալիս բներից,  
բերանը բացած, որ անմեղներից մեկին կլանեն: Ի՛նչ ասեմ  
հապա եկեղեցու մասին, որ առաջ այնպես դարդարուն էր ու  
վայելչագեղ, բազմածնունդ ու գերերջանիկ, որ նույնիսկ մար-  
գարեին հիացրեց. այսօր նստած է անշուք ու անզարդ, մեր-  
ուացած իր ողջ գեղեցկությունից, իրբև մի այրի ու անզավակ  
կին, զարդերից զրկված ու պատվից ընկած, պատռած շորե-  
րով ու անմխիթար. ջահերը մարել են, ճրագները՝ հանդել,  
խնկարուրումն ու անուշահոտությունը՝ վերացել, տերունա-  
կան սեղանի պսակը ծածկվել է փոշով ու մոխրով: Այն մա-  
նուկները, որ սրա դռան, պնակիտները<sup>168</sup> ձեռները առած, շա-  
րունակ Գավթի երգերն էին երգում, այսօր մզկիթ կոչված դի-  
վարնակ որջերի առաջ են կաթավում, սերտելով Մահմեդի  
ասած խոսքերը: Նաև պարկեշտ ու ողջախոհ կանայք, որ օրի-  
նավոր ամուսնությունը ամուսիններից թախանձանքով էին  
ընդունում, այսօր վարժվել են անառակ ու այլանդակ խառ-  
նակություն:

Եթե այս բոլոր պատմածներս մեր մեղքերի պատճառով  
հասան մեզ, ձա՛յն տվեք երկնքին և նրա մեջ ու նրա վրա  
գտնվողներին, ձա՛յն տվեք երկրին և նրա վրա բնակվող կեն-  
դանիներին, ձա՛յն տվեք լեռներին ու բլուրներին, ծառերին ու  
ստվարախիտ անտառներին, թո՛ղ լան և ողբան մեր կործանու-  
մը: Այս անում էին նաև մարգարեները ուրախության ժամա-  
նակ. լեռներին ու բլուրներին հրամայում էին խայտալ, գե-  
տերին՝ ծափ տալ, ծովին՝ զվարճանալ, անտառներին՝ ցնծալ.  
Քանի որ սրանք բոլորը ցեղակից են մեզ, մեր ուրախությու-  
նների ժամանակ ուրախանում են մեզ հետ, պարտավոր են  
նաև հաղորդակից լինել մեր սգին, ինչպես ռոաջներում՝ մեր  
տառապանքների ու խոնարհությունից ժամանակ խոնարհվեցին  
մեզ հետ, որովհետև մեզ համար էլ հենց ստեղծվել են: Բայց  
զրանից էլ մեզ համար չկա ո՛չ օգուտ, ոչ էլ մխիթարություն.  
մեռյալի վրա որքան էլ երկար լաց լինեն, կոծեն ու նրա հա-  
մար փակվեն խավարում, միևնույնն է, այդ չի փրկի նրան:  
Ի՛նչ օգուտ տվեց հրեաներին Երեմիայի ողբը, կամ Քրիս-  
տոսինը՝ Երուսաղեմին ու Հուդային, ասա՛ ինձ. և ո՛չ մի:  
Ահա այս հասկանալով՝ պետք է աշխատենք մեր արդարու-  
թյամբ հաշտեցնել Աստծուն. եթե այս կատարվի, ապա և  
թշնամիների սուրբ իսպառ կանհետանա, և՛ դժվարը մեզ հեշ-  
տի կփոխվի, և՛ առապարները հարթ ճանապարհի, և՛ ամեն  
մարդ կտեսնի Աստծու փրկությունը: Որովհետև, եթե Աստված  
մեր կողմը լինի, էլ ո՞վ կկարողանա մեր դեմ դուրս գալ. չէ՞  
որ հենց ինքն է օրենքների մեջ հրամայել. «Քո թշնամիներին  
թշնամի կլինեմ և բեղատողներին կոչնչացնեմ»\*. և դարձյալ.  
«Քեզ չեմ թողնի և վայր չեմ գցի»\*\*: Միայն թե Աստծու հետ  
պետք է հաշտ լինենք, անկեղծ սրտով դիմենք նրան՝ իբրև  
գրավական բարի գործեր ունենալով. այն ժամանակ ոչ մի  
հակառակորդ չի լինի, որ մեզ կարողանա վշտացնել: Տերու-  
նական են նաև այս խոսքերը, որը գտնում ենք Մասուր գրու-  
րում. «Դեռ դու չիսնդրած՝ ես կլսեմ բեզ, միսնդեռ խոսելիս  
կլինես, կասեմ, թե ինչ ես խնդրում»\*\*\*. այս խոսքն անց-

\* Հմմտ. Բ. Օրենք ԼԲ. 41—42, Սաղմ. ԺԷ. 41

\*\* Երբ. ԺԳ. 5—6

\*\*\* Եսայ. ԿԵ. 24—25

նում է բոլոր ջերմագույն հայրերի խոսքերից: Իսկ անարժան-  
ներից ձեռք բաշխելով ասում է. «Իմ անձը չի լինի նրանց  
հետ». և դարձյալ. «Գուցե աղաչեք ինձ, բայց ես չեմ լսի,  
շարերն ինձ կփնտրեն, սակայն չեն գտնի»\*, և դարձյալ՝  
«Երբ որ ձեր ձեռքերը կարկառեք դեպի վեր, երեսս կըրջեմ  
ձեզնից, և եթե շարունակ աղոթեք, չեմ լսի ձեզ»\*\*. քանի  
որ ինչպե՞ս կարող է լույսը հաղորդակցել խավարի հետ:

Վախենա՞նք, եղբայրներ<sup>169</sup>, և ակնածե՞նք երկնային  
պատգամներից. չլինե՞նք նրա անծանոթներից, որ շասի, թե՛  
«Չեմ ճանաչում ձեզ», այլ լինե՞նք նրա բարեկամների կար-  
գում, որ մեզ ասի. «Եկե՛ք, իմ հոր օրհնյալներ, ժառանգե-  
ցե՛ք հավիտենական կյանքը»\*\*\*:

## Գ Լ Ո Լ Ի Փ Ը

ԹԵՆԳՈՐԾԱՅԻ (ՈՐԸ ՔԱՐԳՄԱՆՎՈՒՄ Է ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ)<sup>170</sup>  
ԹԱԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մոնոմախի մահից հետո մատակ առյուծը առյուծային  
կատաղությամբ մոնչում էր իր խշտիքում, ինչպես առաջ երե-  
վացել էր Դանիել մարգարեին՝ իր տեսիլքի մեջ\*\*\*\*, և  
կանչելով քաղաքի գլխավորներին ու իշխաններից մեծամեծ-  
ներին՝ ասաց նրանց. «Չեզանից ով որ խիզախի զորքով մեկ-  
նել արևելք, վերջ տա պարսիկների թոհուրոհին և երկիրը խա-  
ղաղությամբ նվաճի, այն ժամանակ թող համարձակ գա և  
նստի թագավոր. Աստու օրենքով նա է արժանի թագավորու-  
թյան, իսկ եթե ոչ ոք ասածներս հանձն չառնի, ես բավա-  
կան եմ տեղապահ»: Իշխաններն այս լսելով՝ առանց պա-  
տասխան տալու գնացին ամեն մեկն իր պալատը:

Իսկ թագուհին Սուլթանին<sup>171</sup>, ինչպես քաղցած գաղանի,  
տուրքերի առատությամբ այնպես հագեցրեց, որ նա մոռա-  
նալով մեզ վրա հարձակվելը և, քանի որ պատերազմասեր

\* Առակ. Ա. 28

\*\* Եսայ. Ա. 15

\*\*\* Մատթ. ԻԵ. 12, 34

\*\*\*\* Դանիել է. 4

մարդ էր, նորից շարունակեց կոփվները Քարեղծում և նրա  
շրջակա կողմերում: Բայց մեր սահմանակիցներն ու դրացի-  
ները, բորբոքված, ամառ ու ձմեռ չգաղաթեցին Հայոց աշ-  
խարհն ավերելուց. նրանք լրտեսներով որոնում և իմանում  
էին մարդարնակ տեղերի մասին, գիշերը գնալով՝ հանկար-  
ծակի վրա էին ընկնում և անօրինակ տանջանքներով անտ-  
ղորմաբար կոտորում առհասարակ բոլորին. ոչնչից չվախե-  
նալով, անհոգ ու աներկյուղ՝ նրանք շարունակում էին շատ  
օրեր մնալ այդ տեղերում. խուզարկում էին տները, գտնում  
ու կողոպտում էին թաքցրած ամեն ինչ, ապա հիմնիվեր  
ավերելով ու քարուքանդ անելով բնակավայրը՝ ավարն ու  
գերին վերցրած՝ վերագանում էին իրենց աշխարհը:

Բասեն գավառում, Միրանիս<sup>172</sup> կոչված լեռան ստորոտի  
մոտ, Սկոմի անունով մարդաշատ ու հարուստ մի ավան կար-  
տատվածահայտնության մեծ տոնի օրվա գիշերը անօրենները  
շարժվեցին նրա վրա. գաշտի սառնամանիքի պատճառով  
մարդակերպ գազանների ձեռներն ու ոտները սառել էին. երբ  
հասան ավանի մոտ, տեսան մեծ քանակությամբ խոտ՝ դիզ-  
ված անասուններին կերակրելու համար, և հրդեհեցին. կրա-  
կի բորբոքումից ամբողջ դաշտը առհասարակ կեսօրվա նման  
լուսավորվեց, նրա մոտ կանգնելով՝ տաքացան և՛ իրենք,  
և՛ իրենց երիվարները: Ապա աղեղները լարելով ու զենքերը  
մերկացնելով՝ հարձակվեցին ավանի վրա և սրի քաշելով կո-  
տորեցին բոլորին, մոտ երեսուն հազար մարդ, շթողնելով  
տեղի բնակիչներից և ոչ մեկին, բացի նրանցից, որոնք որևէ  
տեղ ճանապարհորդության էին գնացել: Երեք օր նրանք  
մնացին այդտեղ, ապա եզների, էջերի ու ձիերի վրա բանա-  
լով ամբողջ ամբարված ցորենը, մթերքն ու կարողությունը և  
որոշ անհրաժեշտ բաներ ու վերցնելով գերիներին՝ գնացին  
իրենց աշխարհը: Բայց նրանց զործած բազմատեսակ շա-  
րիքները ո՛վ կարող է գրի առնել. այս աղետների հե-  
տևանքով ամբողջ երկիրը ամայացավ բնակիչներից, ոչ մեկը  
կենդանի չմնաց, բացի նրանցից, որոնք ամբողջներում էին  
գտնվում:

Իսկ թագուհին երկու տարի թագավորությունը վարելով և  
հասնելով խորին ծերության՝ հիվանդացավ և այդ հիվանդու-

թյամբ էլ մեռավ: Մինչև մեռնելը քաղաքի գլխավորները եկան նրա առաջ և խնդրեցին, թե՛ «Քանի կենդանի ես, մեկին թագավոր կարգիր, որպեսզի այս քաղաքը մնա առանց խռովություն»: Քաղաքին հրամայեց իր մոտ բերել քաղաքի գլխավորներից Միխայել<sup>173</sup> անունով մեկին, որն իր նախնիների մամանակ պալատի պաշտոնյաներից էր, հասակով արդեն ձեր ու շափազանց հարուստ: Քաղաքի համաձայնությամբ նրան թագավոր կարգեց, իսկ ինքը երեք օրից հետո զնաց այն հանապարհով, ուր, ըստ Դավթի երգի, երկրի բոլոր թագավորներն ու տնանկները միասին են լինում: Երկրի բոլոր կողմերի մեծ ու փոքր իշխանները, երբ լսեցին Միխայելի թագավորելը, բոլորն էլ հնազանդվեցին նրան: Քայց սա փոխանակ ամենքին էլ քաղցր խոսքերով ու առատ պարգևներով ուրախացնելու և իր իշխանության ներքո հնազանդություն արհեսելու, տամրդի լինելով, Ռորովամի\* ախտով վարակված, իշխաններից ոմանց, որոնք անարժան էին իշխելու, պահեց, իսկ մեծամեծների հետ ճառարանելով ասաց. «Կա՛մ դո՛ւրս եկեք պարսիկների դեմ պատերազմի և թույլ մի՛ տվեք երկիրը ավերել, կա՛մ, եթե ոչ, ձեր ռոճիկը պարսիկներին հարկ կտամ և երկիրը կպահեմ խաղաղության մեջ»: Իշխանները դրան չհամաձայնելով՝ առանց պատասխան տալու դուրս եկան թագավորի մոտից և միաբանության դաշինք կապելով՝ ծովն անցան. անթիվ զորքեր հավաքվեցին այնտեղ: Նրանց առաջնորդներն էին Կոմիանոսը<sup>174</sup>, որը և թագավորեց էլ, և Կամենասը. այսպես ապստամբեցին թագավորից և երգվեցին շահազանդվել նրա իշխանությանը: Այս կատարվեց մեր՝ հինգ հարյուր վեց թվականին, որը հոռոմների դիքտիոնի<sup>175</sup> տասն էր:

Վա՛յ այն տարուն, վա՛յ այն աշխարհավեր խորհրդին, երբ կործանվեցին ու ոչնչացան երկրի բնակիչները, որովհետև երկիրը վերածվեց առաջին անդարդության, աշխարհապատում խոսքի համաձայն. «Երկիրն, — ասում է, — ամայի

\* Հստ ս. Գրքի՝ Սողոմոնի օրդին և հաջորդը: Նա ըսեց իմաստուն ծերերի խորհուրդը և անմտություն սկսեց բռնություն գործադրել, որի պատճառով թագավորությունը բաժանվեց երկու մասի՝ Հուդայի և Իսրայելի:

ու անպատրաստ էր, որովհետև մարդ չկար, որ մշակեր հողը»: Քանի որ, ինչպես, օրինակ, մարդու գեղեցիկ գեմբը ծագիկ հասակում տեսնողներին միշտ երևում է շատ սիրուն, հաճելի, իսկ երբ նրանից մահվան միջոցով բաժանվում է իր զարդարիչ հոգին, զրկվելով նախկին պայծառությունից, գեղեցկությունից, արդեն տեսնողին թվում է տգեղ, անարգ, ահարկու, նույնիսկ խղճալ էլ չի լինում նրան, ըստ այն խոսքի, թե՛ «Մոռացվեցի ես, ինչպես սրտից մեռածը»\*\*, սրան նման է նաև երկիրը իր երևույթով, քանի ղեռ շեն է, լի է մարդկություններ, երկրագործները առատ սերմերով լցնում են նրա անդաստանները, օրոնք բուսնելով՝ կանաչով շոտյլ գեղազարդում են դաշտերը բոլոր, բարձրաբերձ անմամբ վեր են ընձյուղվում, իսկ երբ հասկերն են արձակվում նրանց ծայրերի վրա, իրենց թանձրախիտ բարձրությամբ մարդկանց ամպեր են թվում, որոնք ճոճվում են մեղմաշունչ քամուց, ճեմում են ծովի ալիքների պես. այդպես էլ նաև հոտ ու նախիրներն անասունների՝ կանաչ ու դալար հովիտների մեջ, սառն աղբյուրների ակունքների մոտ խայտում, խաղում են, իսկ երկիրն իբրև դայակ նրանցով տեսք է առնում ու գեղազարդվում է, ըստ այն խոսքի, թե՛ «Քող ցնծան դաշտերը և այն բոլորը, որ նրանց մեջ կան»\*\*\*:

Այժմ տեսնում ենք ճիշտ հակառակը. երկիրն ավերակ, թափուր է դարձել բնակիչներից, քաղաքներն ամբողջ ավեր ու կործան, անդաստանները խոպանացած են ու տատասկաբեր:

Անհետացել են նաև քաղցրաձայն երամները հավերթի, որոնք մարդասեր բնավորությամբ ընտանի լինելով մեր ցեղին, քաղցրանվագ գեղգեղանքներով կենդանացնում և առավոտյան ճովողուն երգերով ու բարձրաձայն կարկանդակներով կրկրագործներին քնի թմբիրից ասես խթանով զարթնեցնելով՝ յուրաքանչյուրին իր գործին էին նախապատրաստում. այժմ շեները ավերակներ են, ամայի ու անմարդ, և նրանք շունեն բնակության տեղ, ո՞րտեղ արագիլն իր բույնը շինի և

\* Մենդ. Ա. 1, Բ. 5

\*\* Մազմ. Լ. 13

\*\*\* Մազմ. ՂԾ. 12

Բռնություններից տկարները այնտեղ ո՞ւր ապավինեն\*, ըստ սաղմոսոգրի, և կամ ծիծառը ո՞րտեղ կարող է շարշարանքնե-րով բունիկն հարգարել, որ ձագուկներին սնի աներկյուղ: Սա-կայն այս մասին խոսքս այստեղ էլ թող դադարի, իսկ մենք սկսենք այս զովարալուր ու դաժան պատմության շարա-գրանքը:

Երբ Հունաց թագավորությունը բաժանվեց երկու մասի, և երկաթե զավազանը եղեգնյա զավազանի պես ջարդուփշուր եղավ (այսպես էր բնութագրում եգիպտական թագավորու-թյանը նախատելով ասորեստանցին), և Երեմիային երևա-ցած եռացող կաթսան, որ այն ժամանակ իր եռքի ցնցուղները հյուսիսից դեպի հարավ էր ձգում, այժմ աճավոր եռքով հարա-վից դեպի հյուսիս ձգելով՝ այրելով ոչնչացրեց քրիստոնյա ազգերին: Արդարև կատարվեց տիրոջ պատվիրանը, ըստ որի բաժանված թագավորությունը մնալ չի կարող, այլ կործան-ված է, քանի որ երբ պարսիկներն իմացան սրանց հակառա-կությունն ու կոխիլ միմյանց դեմ, համարձակ հարձակվեցին մեզ վրա և անդադար ասպատակելով՝ աշխարհավեր կոր-ծանումը վերջին ծայրը հասցրին:

Հենց այն տարվա սկզբից, որի հիշատակությունը վաղով արեցինք, ինչպես գիշախանձ գայլերը, որոնք անհովիվ հոտի են հանդիպում, շեն բավարարվում միայն իրենց կերով, այլ բոլորին են ջանում կոտորել, այդպես էլ Պարսկաստանից եկած զորքերը ոչ թե հագնում էին ավարով, այլ մեր բնա-ջնջման անհագուրդ քաղցն ունեին. ում որ տեսնեին, անհնա-րին էր, որ սա կարողանար նրանց ձեռքից ազատվել. և դա համարում էին մեծ բարեգործություն:

Հոտմոց պատերազմի ժամանակ Լիպարիտի որդի Իվա-նեն<sup>176</sup>, որին որպես պարզև բնակության տեղ էին տվել Հաշտենից գավառի Երիզա<sup>177</sup> մեծ ավանը իր շրջակա դաս-տակերտներով, երբ լսեց, որ Հունաց թագավորությունը եր-կուսի է բաժանվել, զնաց և խաբեություն մտավ Եղանց<sup>178</sup> բերդ կոչված ամրոցը և այն իր ձեռքի տակ առնելուց հետո նորից վերադարձավ Աղորի գավառը և այն ամրոցը, որ Հա-

վաճիչ է կոչվում: Քաղաքը նրան բարեկամաբար դիմավորեց: Երբ Իվանեն տեսավ այն իշխանին, որ արևելյան կողմի կա-ռավարին էր և այն ժամանակ այնտեղ էր գտնվում, հրամա-յեց անմիջապես բռնել. նրանից վերցրեց անշափ գանձ, ձիեր, ջորիներ և այն բոլորը, ինչ որ նա հավաքել էր արևելքից, իրեն էլ բանտարկեց Եղնուտում, իսկ ինքը շտապ գնաց Կա-րին ամուր քաղաքի վրա: Որոշ ժամանակ խաբեություն մը աշ-խատեց քաղաքն առնել, ասելով թե՛ «Թագավորից հրաման ունեմ, այդ քաղաքն իմն է, դռները բացե՛ք, որ ներս մտնեմ»: Երբ այդ միջոցով շարողացավ հնազանդեցնել, կոխի սկսե-լով՝ պատերազմով էր ուզում տիրել քաղաքին, իսկ քաղաքի իշխանը շուտափույթ հայտնեց Անիում նստող իշխանին, որը մագիստրոսության պատիվ ուներ: Երբ սա լսեց այդ, գլխա-վորներից մեկին զորքով ուղարկեց Իվանեի վրա: Իվանեն երբ այդ իմացավ, երկիրն ասպատակելով՝ վերադարձավ իր տեղը և մարդ ուղարկեց Պարսկաստան՝ օգնության համար զորքեր բերելու: Այս եղավ սկիզբն այն անհնարին աղետների, որ եկան մեզ վրա:

Անօրենները երբ լսեցին այս հրավերը, իրար ձայն տալով՝ իսկույն մի տեղ հավաքվեցին և փութով հասան նրա մոտ. իսկ նա երբ տեսավ զորքի բազմությունը, սարսափեց, սրով-հետև ոչ ոք չկար նրանց դիմադրող, քանի որ այն իշխանը, որի պատճառով նրանք եկել էին, երբ լսեց նրանց գալու աղ-մուկը, մտնելով մեծ բերդը՝ ամրացավ: Այն ժամանակ եկած զորքերն պսացին. «Մեզ ավարի ճանապարհ ցո՛ւյց տուր և դատարկ մի՛ վերադարձու»: Իսկ նա ճարահատված՝ իր մարդկանցից նրանց առաջնորդ տվեց, և նրանք գիշերն անց-նելով անապատ տեղերով՝ հարձակվեցին Խաղտյաց գավա-ռի վրա և բնակիչներին անհոգ գտնելով՝ ում որ հանդիպե-ցին, բոլոր տղամարդկանց սրակոտոր արին, մինչև Շանեթի երթի կոչված անտառը. անշափ ավար ու գերի առնելով՝ մեծ հաղթություն մը վերադարձան ու գալով այդ շարիքների առաջնորդի մոտ՝ մեծամեծ պարգևներով շնորհակալություն մատուցեցին նրան՝ այն մեծ հաջողության համար, որ իրենց հանդիպեց. ապա գնացին իրենց աշխարհը: Բայց որովհետև տեսան երկիրը անտերունչ է ու առանց պահապանի, այդ

\* Սաղմ. ձԳ. 17



պատճառով էլ շարի արբանյակները նորից վերադարձան և մտնելով Մանանդի գավառը՝ բաժանվեցին երկուսի. մի մասը գնաց Եկեղյաց գավառ և գիշերով հարձակվեց այնտեղ եղած քաղաքի<sup>179</sup> վրա. անօրենները քաղաքը գտան անպատրաստ ու անփույթ: Այնտեղ կատարված աղետավոր ու ողորմագին շարիքները ես անկարող եմ գրի առնել, քանզի երբ որ առավոտ լուսացավ, այնքան լալագին ու խռովահույզ մի տեսարան էր այնտեղ երևում, որ և՛ քարերին, և՛ բույր անշունչ արարածներին անգամ հառաչել, ողբալ էր տալիս. այդ ո՞ր տեսնողը չէր դողա ցավից, այդ որի՞ սիրտը չէր կտրատվելու, որի՞ աչքերը չէին խավարի՞ միզով մթամած. հրապարակները, տներն ու բնդարձակ սրահները, նրբափողոցներն ու այգիները լի էին դիակներով. քաղաքի գրեթե ամբողջ սահմանը ներկված էր կոտորվածների արյամբ. կային շատերը, որոնք դեռ հոգին չէին ավանդել. կտրված ձայնով ծանր էին շնչում. ոմանց շարաշար, անողորմաբար վիրավորելով՝ փորոտիքն էին դուրս թափել գետին, լյարդը հանելով՝ բերանը գրել և նույնիսկ ուտել էին ստիպում դեռևս կենդանի մնացածներին:

Վա՛յ, Աստված, այն ժամանակվա քո ներողությանը, վա՛յ սահմանն անցած մեր աղետներին. որովհետև այս տասներեք տարի<sup>180</sup> է, ինչ քրիստոնյաների ազգը այսպիսի անտանելի տառապանքներ է կրում, բայց տիրոջ բարկությունն ու դայրույթը չմարեց, այլ տակավին դառնությամբ լեցուն բաժակով բարձրացած է ձեռքը՝ մատովակելու մեզ նոր փորձություններ. ատելիներին դեռևս ներել, գթալ չի ուզում, այլ՝ պատուհասել: Քաղաք և նրա շրջակա գյուղերն ու ագարակները պաշարեցին այնքան, մինչև որ մարդկանցից ոչ ոք կենդանի չմնաց, բացի բերդերում եղածներից: Իսկ անօրենները, ավարով լիացած ու հագեցած, քաղաքն այրեցին և վերցնելով գավառի գերին ու կողոպուտը՝ կրկին ետ դարձան: Այս է վշտամբեր քո պատմությունը, ո՞վ քաղա՛ք, այլևս ոչ թե բնակիչներիդ համար ապաստանելու քաղաք, այլ կորուստյան խորխորատ. քո բազմատեսակ աղետներից մենք դեռ մե՞այն մի փոքրը հիշատակեցինք:

Անօրենները գալով հասան Կարին գավառի Բլուրս<sup>181</sup> կոչված գյուղի մոտ. այդտեղի բնակիչները բլուրը պարսպապատելով՝ հիմքը հողի վրա էին դրել, ըստ տերունական առակի, որի պատճառով էր անօրենները հորդահոս հեղեղի նման գալով բախվեցին նրան, մի վայրկյան անգամ շկարողացավ գիմակայել, այլ անմիջապես կործանվեց, ու նրա կործանումը եղավ աշխարհալուր և հավիտյանս հավիտենից անմոռանալի: Ինչը որ նրանք համարում էին փրկության հույս ու ապավենի տեղ, եղավ կորստյան գուր նրանց համար. այստեղ էին հավաքվել Եփրատ գետի այս Կողմի բոլոր գյուղերի ու վանքերի բնակիչները, ինչպես նաև շատերը՝ Արծն ավանից. թշնամիները հարձակվելով խակույն կործանեցին ամբողջուններն ու ներս խուժեցին: Սրերի փայլից ու աղեղների լարերի ձայնից բողբոջն ահաբեկ՝ սարսափից ասես պերկ շղթաներով կապված լինեին: Եվ որովհետև շկար ո՛չ իշխան, ո՛չ առաջնորդ, որ սաստելով կամ խրախուսելով սպեորեր ու բորբոքեր նրանց ընդդեմ թշնամու, մղեր քաջության ու խիզախումի, ինչպես վայել է բոլոր պատերազմողներին, այդ պատճառով էլ անտերունչ լինելով՝ հենց միայն նրանց տեսրից ահաբեկվեցին, իրենց կորցրին, հուսալքվեցին, և նրանց ամբողջ ողջամտությունն ասես չբացավ. սկսեցին միմյանցից թաքնվել. ոմանք գիշերը պարսպից իջնելով փախչում էին, ոմանք կամովին անձնատուր լինում, իսկ նրանք, որ ներսն էին մնացել, պատերազմի հոգսը թողած՝ փոսեր փորելով հողի տակ էին թաքնվում: Անօրենները հանդգնաբար հարձակվելով՝ սկսեցին նրանց կոտորել ոչ թե պատերազմական կարգով, այլ ինչպես փարախի մեջ փակված ռշխարների. ոմանց բռնելով ու առաջ բերելով՝ սուսերով զլուխներն էին կտրում. կրկնակի մահով էին սպանում. սուսերի՝ նրանց վրա շողալով, որը մահվանից ավելի ծանր է, և մահվան վճռով. ոմանց էլ պատահելով՝ գաղանաբար հարձակվելով վրան, սուրը սիրտն էին խրում և խակույն սպանում. իսկ գեր ու հաղթանդամ մարդկանց գետնի վրա ծնկի իջեցնելով, ձեռները պարզելով՝ ցցերի միջոցով գետնին էին պրկում և մաշկը եղունգներով հանդերձ բոլոր կողմերից պոկելով՝ բազուկով ու թիկունքով մինչև երկրորդ

ձեռքի ծայրը ուժով քաշելով հանում էին ու աղեղների լարեր պատրաստում. ո՛հ, որքա՛ն դառն է այս պատմությունը:

Իսկ երեցների ու կրոնավորների կրած շտանված շարձարանքները ո՛ր լսելիքը կարող է տանել. նրանց մաշկը կրծքի վերևից բերթելով՝ երեսով ու գլխով հանդերձ պոկում էին ու շրջում և այսպիսի դաժան տառապանքներով տանջելուց հետո սպանում. սրանից էլ դառն ու անտանելի էլ ի՛նչ տանջանքներ որևէ մեկը կարող է հնարել. նույնիսկ սրբերի վկայությունների մեջ որևէ տեղ չենք տեսնում կատարված:

Այսպիսով, բոլորին կյանքից զրկեցին. մինչև իսկ փնտրելով կենդանի թաղված-թաքնվածներին, շարաշար խոցոտելով՝ սպանեցին. տանջվողների վայնասուններին բոլոր լնաները արձագանք էին տալիս: Եվ երբ բոլորին էլ կոտորեցին, հետո մեռածների կողերը ծակելով ու լեղիները հանելով՝ ամանների մեջ հավաքեցին և ավեցին գերի կանանց՝ իրենց հետ տանելու համար: Այսպիսի վախճան ունեցավ այն կործանարար բանտը. այսպես մատնվեցինք շար ու անոզսմ մարդկանց ձեռքը, և մեզ օգնություն չեղավ տիրոջ կողմից, որովհետև չսեցինք նրան, քանի դեռ խաղաղության մեջ էինք: Նա կանչում էր մեզ աղերսական ձայնով մարգարեների միջոցով. «Եկե՛ք, — ասում է, — լսեցե՛ք ինձ, ու դուք կապրեք բարիքների մեջ, և եթե հաճույքով լսեք ինձ, երկրի բարիքները կվայելենք»<sup>6</sup>: Մենք քամահրեցինք նրա խոսքերը, դրա համար էլ նա մեզ չսեց նեղության ժամին ու իր երեսը դարձրեց մեզանից, և մենք մատնվեցինք մեր թշնամիների ձեռքը, ու մեզ ատողները տանջեցին մեզ. նրանց նետերը հագեցան մեր արյունով, իսկ սուրը կերավ մեր պատերազմող՝ վիրավոր բնկած մարդկանց մսերը, և վերագարձան այսպես հաղթություն մեր իրենց աշխարհը: Սպանվածների ու գերիների թիվը, ասացին, որ յոթ հազար է, իսկ կրոնավորներինը՝ վաթսուն:

ՄԻՋԱԳԵՏՔԻ ՈՒ ՆՐԱՆՈՒՄ ԵՂԱՍ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՎԵՐՄԱՆ  
ԵՎ ԱՆՉԱՓ ԿՈՏՈՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Այն որ սկզբում հիշատակեցինք, թե երբ [թշնամիներն] իշան Մանանաղիի սահմանը, երկու մասի բաժանվեցին, առաջինը այն կատարեց, ինչ որ գրեցի, իսկ երկրորդը արագընթաց ձիարշավով, առանց աջ ու ձախ խոտորվելու, աղեղնավորի ուժգին ձգումով դեպի նպատակ՝ անշեղ սուրացող մի նետի նման սլացավ դեպի Հանձեթ ու Խորձյան. գիշերագնաց լինելով, առանց աչքերին քուն ու արտևանունքներին նինջ տալու՝ նրանք քարախառն կարկտի պես հանկարծակի, անսպասելի ժամին թափվեցին հարավային քաղաքի<sup>182</sup> բնակիչների վրա: Քանզի քաղաքը ապաստանելու ոչ մի տեղ չուներ, դրա համար էլ բնակիչները ծովի ալիքների նման ետ ու առաջ ալեկոծվելով՝ ոչ մի ելք ու հնար չէին գտնում: Ավա՛ղ այն գործերին, որ այն ժամանակ այնտեղ կատարվեցին, անօրենները սուրը դործի գնելով կոտորեցին մորը մանկան մոտ, որդուն՝ հոր առաջ, և անմիջապես բարեշեն քաղաքը դարձավ արյան գուր: Սաստիկ խուճապից ու հանկարծահաս օրհասից մարդիկ մոռացան և սե՛ր սիրելիների, և՛ գու՛թ, կարեկցանք արյունակցական. յուրաքանչյուրը հնար էր փնտրում իրեն փրկելու գեհնաբորբոք այդ բարկությունից. դրա համար էլ փախչելով ընկնում էին քաղաքի շրջակա այգիները ու տերևախիտ որթերի տակ էին թաքնվում. անօրենները այդ իմանալով՝ փնտրելով գտան և բոլորին էլ աշտններով խոցոտելով սպանեցին. նրանց արյունով ներկվեցին խաղողի ողկույզները. կենդանի մնացածները հետք գտնում էին իրենց մեռելներին որթերի ներքո ու ծածկում հողի տակ: Բայց խղճերը չէր տանում, որ այգին քաղեին կամ խաղողն ուտեին, ասելով, թե մարդու աղյուն է: Իսկ անօրենները կոտորածը վերջնցնելով՝ վերադարձան քաղաք և սկսեցին տները խուզարկել. եթե որևէ մեկը որևէ տեղ կամ գաղտնարանում իր ունեցվածքը թաքցրել էր, մեծ հնարագիտություն մարդու դուրս էին հանում. ապա քաղաքը հրկիզելով ավերեցին և առնելով ավարն ու գերին՝ հեռացան այնտեղից. այդպես էլ սրով,

<sup>6</sup> Հմմտ. Եսայ. Ա. 19—20, Մծ. 2—3

հրով, գերությամբ ավերեցին նրա շրջակա բոլոր գյուղերն ու ավանները, մինչև որ ոչ մի տեղ մի մարդ չմնաց, որ բերանց բացեր ու ծպտուն հաներ:

## Գ Լ Ո ւ խ Ի

ԿՈՄԻԱՆՈՍԻՑԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Կոմիանոսը, քանի որ առատաձեռն էր ու գանձերով հարուստ, իր համար շատ զորքեր հավաքեց: Թագավորը, հրքահետավ, որ հանգամանքները նրա համար շատ նպաստավոր էն գասավորվում, սկսեց դեսպաններ ուղարկել նրա մոտ, խախանձագին աղաչելով՝ պարզեներ խոստացավ տալ նրան և արևելքի կուրապաղատության իշխանությունը՝ ասելով. «Թիսյն թե հաշտվես, որ քրիստոնյաների արյան համար չ'ըրեժինդիր լինենք»: Բայց նա չհավատաց ու հանձն չառավ: Երբ դեսպանությամբ ոչինչ գուրս չեկավ, թագավորի մտեցումները աշխատում էին պատերազմով հաղթելով հնազանդեցնել նրան:

Եվ կատարելով մեծ զորաժողով՝ եկան նրա վրա. հասնելով միմյանց՝ ճակատամարտեցին. ասում են, որ այդպիսի մեծ արյունահեղություն ու կոտորած Հոռոմոց երկրում երբեք ոչ ոք չի տեսել. այդտեղ ընկան նաև երկու կողմերի գլխավորներից շատերը, բայց Կոմիանոսի զորքը հաղթեց: Եվ որովհետև պատրիարքը Կոմիանոսի կողմն էր, բազաբի գլխավորներից շատերին միաբանեց իր հետ, և Կոմիանոսին ներս տանելով՝ թագավորեցրին: Իսկ Միխայելին արեղա դարձնելով՝ կղզի ուղարկեցին. բայց ասում են, թե ինքը հոժարությամբ գնաց: Այս ամբողջը սույն աշխարհավեր տալրում կատարվեց<sup>184</sup>:

## Գ Լ Ո Ւ խ Ի Ա

ՄԵԼԻՏԻՆԵ ՎԱՃԱՌԱՇԱՀ ՔԱՂԱՔԻ ԿՈՐՄԱՆՈՒՐԸ

Աստված իր ձեռքն առավ թուրքեստանն ու Պարսկաստանը որպես գավազան ոչ թե խրատի, այլ տանջանքների, նրանց միջոցով, համաձայն արդար իր դատաստանի, պատուհասեց մեզ. խրատի գավազանը հայրական է, իսկ տանջանքինը՝ դատավորի. Դավիթն ասում է մեղավորների տանջանքների մասին. «Մեղավորների համար շատ տանջանքներ կան, բայց բո խրատը կտվորեցնի ինձ»\*: Սրա համաձայն նաև Պողոսն է գրում եբրայեցիներին. «Եթե խրատի կարգի մեջ մնաք,— ասում է,— Աստված ձեզ մոտեցած կլինի իբրև որդիների»\*\*:

Քրիստոսը իր կենարար ավետարանությամբ մեզ մոտեցրեց իր երկնավոր հորը՝ նրան ընտանի լինելու համար և պատվիրեց ամեն ինչով նմանվել նրան ու հեղաբարձ վարքով հաստատուն պահել ազգականությունը. բայց մենք ապստամբեցինք մեր բաղջր ու բարի հորից և օտարացանք նրա ընտանությունից, այդ պատճառով էլ մեր նեղության ու շարժաբանքների ժամանակ աչքից ձղեց մեզ, և մատնվեցինք օտար ուղղի ձեռքը. մեր թշնամիները զորացան մեզ վրա, ոչնչացրին ու հողին հավասարեցրին մեզ: Ինչպես Մովսեսի ժամանակ տասնյակ պատիժներով Եգիպտոսին տանջելով՝ Աստված ասում էր. «Այս է իմ զորությունը», այդ բոլորն այժմ մեզ պատահեց, նրանց ջուրը փոխվեց արյունի, մեր գետերն ա լճերը, գրեթե ամբողջ երկիրը, ներկվեցին մեր արյամբ. նրանց մարմինները պալարներով բորբոքվեցին, մեր մարմինները սրահոտոր լինելով՝ հոշոտվեցին մաս-մաս, նրանց վրա շնաճանձեր ու մժեղներ նստեցին, որոնք տիրական դեմքերը խայթելով կուրացնում էին, մեզ վրա նետեր արձակվեցին, որոնք ավելի դաժան էին վիրավորում, նրանց լույսը երեք օր փոխվեց խավարի, իսկ մեր լույսը բուրբուկին մա-

\* Սաղմ. ԼԱ. 10, փժ. 36—37

\*\* Եբր. ԺԲ. 7

րեց, որովհետև լույսի ընդունարանը կործանվեց մահվամբ և այլևս իր կյանքում չի տեսնելու տիրոջ բարությունը. նրանց տները սողալով զազրատես ժժմակներ լցվեցին, մեր տներն ու եկեղեցիները, սարսափում եմ նույնիսկ ասել, ավերիչ աստերով, այլև զարշաքներով հոտելով ապականվեցին. նրանց անդրանիկներին խնայում էր մահաբեր հրեշտակը, մեր տները բոլոր բնակիչներով անխտիր ոչնչացվեցին. մեզանից միայն ծովն էր պահաս, բայց եթե դատես ըստ կատարվածի, այն էլ մեղանում եղած կտեսնես, որովհետև այդ ո՞ր անհատակ անդունդներն են Թուրքեստանից կամ երկրի եզերքից ավելի խոր, ուր հեռանալով կորան մեր գերիները, իբրև Կարմիր ծովում, որ նրանց գերիների արյամբ էր ներկված: Նրանց ծառայելու փոխարեն իսրայելացիները նրանցից որպես վարձ ոսկեղեն գարդ ու հանգերձներ խնդրեցին. մեզ ամեն ինչից կողոպտեցին ու զրկեցին, երբ մենք նրանց դեմ ամենակին շենք մեղանշելու Ո՛հ, ավա՛ղ և վա՛յ այս անմխիթար կործանմանը: Եզիպտացիների պատիժը արդարացի էր կըրկնակի. մեկը՝ այն դաժան գործերի համար, որոնցով նրանք նեղեցին իսրայելացիներին, իսկ երկրորդը՝ որ ծառայեցին արարածներին, ոչ թե արարչին, որը օրհնված է հավիտյան: Թեպետև զուրկ ենք բարի գործերից, բայց մենք ճշմարտագրավան ենք, խոստովանող լեզու ունենք, ինչո՞ւ ենք հապատանջվում նրանց պես. որքա՛ն ցավալի ու ողբալի է մեր վիճակը: Ո՛վ տե՛ր, արարի՛չ և Աստվա՛ծ, ինչո՞ւ մերժեցիր մեզ իսպառ ու դարձրիր կոխան հեթանոսների, մեր թշնամիների ծաղրուծանակի առարկա: Զարթնի՛ր, արթնացրո՛ւ բո զորությունը և ե՛կ մեզ փրկության ու յոթնապատիկ հատուցի՛ր մեր դրացիներին:

Ուրիշ քաղաքների ու գավառների ավերումներն ավարտվում էին տասը կամ մի քիչ ավելի կամ պակաս օրերում, իսկ այս քաղաքը, որի մասին գրում եմ, քանի դեռ շեն էր, երեք տարեկան երնջի նման ամրապինդ էր խիստ, քաջ էր և ուժեղ, Մովսրի<sup>165</sup> նման գիրգ էր, փափկասուն. սրա վաճառականները երկրի փառահեղ մարդիկ էին, իսկ գնորդները՝ ազգերի թագավորներ, որոնք հանգչում էին փղոսկրյա գահերի վրա, միշտ ըմպում էին անապակ գինի և օժվում էին ընտիր լուս-

ղերով: Հենց այստեղից էլ սկիզբ են առնում բոլոր շարիքները, ինչպես Մովսեսն է մեզագրում Իսրայելին. «Գիրացավ, — ասում է, — հաստացավ ու պարարտացավ, թողեց իր ստեղծող տեր Աստծուն»: Սողոմացիք նույնպես այսպիսի կյանքով տարվելով՝ ընկան անհնարին շարիքների մեջ, զմայլված հացի լիությամբ և հղիացած կյանքով, ինչպես հայտնում է Եզեկիելը. առաջին մարդն էլ դրախտում մի օր չկարողացավ անարատ վայելել բարիքները: Եվ որովհետև այս է նպատակը մեր բնության, աղքատանալիս տրտնջում ենք ու մեղադրում Աստծուն, իսկ հարստանալիս ամբարտաւանանում ենք, մեղ անմահներ կարծում և ամուր կառչում ենք աշխարհից, այդ պատճառով էլ մեր վիճակները միշտ փոփոխելով՝ սովորեցնում է մեզ շափի մեջ մնալ և մեր սահմանից ավելի չբարձրանալ, որ ավելի մեծ անկում չունենանք: Հողից ավելի անարգ ու ստոր ուրիշ ի՞նչ գիտի որևէ մեկը, իսկ մեր սկիզբը նրանից է, և նորից նրան ենք վերածվելու: Բայց մեր բնության արարիչը չի կամենում, որ մեկը կորչի, դրա համար էլ չի թողնում մեկը ապրի ցոփությամբ. որքան խրատի հարկ է լինում, քաղցրությամբ ու հայրաբար խրատում է, իսկ եբք շենք լսում նրա խրատը, տիրական իշխանությամբ է տանջում. մեղավորների մի մասին այստեղ է պատժում, որ այնտեղ ավելի թեթև տանջանքներ տա, իսկ մի մասին պահում է՝ հանդերձյալ կյանքում տանջելու. կան այնպիսիներն էլ, որոնք և՛ այստեղ են տանջվում, և՛ այնտեղ, ինչպես սողոմացիները, իսկ ոմանք՝ միայն այստեղ, ինչպես Ղազարոսը, ոմանք էլ միայն այնտեղ, ինչպես մեծատունը: Բայց այս մասին խոսքս այստեղ էլ թող դադարի, իսկ մենք վերադառնանք մեր պատմության շարունակությանը:

Այդ վշտաբեր տարվա աշնանը, մինչդեռ հոռոմները թագավորների աղմուկով էին զբաղված, Արեգ ամսվա սկզբում<sup>166</sup> Պարսկաստանից ուրիշ զորքեր դուրս ելան, նախկիններից էին, թե նոր՝ չգիտեմ, և անսպաս տեղերով անցան այնպիսի զգուշությամբ, որ ոչ ոք չկարողացավ իմանալ. հասան մինչև Կամախ<sup>167</sup> կոչված գավառը, ապա այնտեղ ռաժանվեցին եր-

\* Բ. Օրէնք ԼԲ. 15

կուսի, կեսը գնաց մինչև Կողոնիա<sup>188</sup> և, իրենց սովորութեան համաձայն, կողոպտեց երկիրը (նրանց անցնելը մենք հետո՝ վերագրածին իմացանք), իսկ կեսը ուշագրութեամբ դարձնելով դեպի Մելիտինե՝ գիշերով հարձակվեց նրա վրա. բայց որովհետև հոռոմների մի հեծյալ գունդ էր մնացել քաղաքին պահպանելու, հրոսակների հասնելու ժամանակ սրանք հանկարծակի գրոհ տալով դուրս ելան։ Հանդիպելով իրար՝ երկու կողմերից էլ մեծ կոտորած գործեցին։ Պատերազմի ժամանակ ով կարողացավ քաղաքից դուրս գալ, նա փրկվեց. մնացած կովոզներն էլ փախչողների ետևից գնացին։ Իսկ քաղաքում բռնածններին բոլորին սրակոտոր արին և տասներկու օր մնալով այնտեղ, քաղաքն ու նրա շրջակա դաստակերանները հիմնահատակ ավերեցին։ Այս եղավ նրանց ամբարտաձանութեան հատուցումը անկաշառ ու արդարագատ տիրոջ կողմից, որ ամեն մեկին արժանի հատուցում է տալիս՝ նրա գործերի համաձայն։

Բայց Եկեղյաց գավառից ներքև ընկած գավառները, որով անցան գիշերը, երբ իմացան Մելիտինեին հասած աղետները, աղեղնավոր զորքերի մեծ բազմություն հավաքեցին և բռնեցին ճանապարհի կիրճերը։ Անօրենները քանի որ այլ ճանապարհ չգիտեին, իսկ լեռները ծածկված էին թանձրամած ձնով, ճարահատված հինգ ամիս՝ ամբողջ ձմեռը մինչև Նավասարդ ամիսը<sup>189</sup>, այնտեղ մնացին և երկրի բնակիչներին կյանքի հույսից կտրեցին. այն անհնարին շարիքները, որ այնտեղ գործեցին, թողին աղզեազգ հիշատակ. երեխաներին և այլ դեռահասներին թիրախ դարձնելով՝ աշտներով ու նետերով խաղալով շարաշար խոցոտելով սպանում էին, և նրանց սրտի մեջ ողորմության գույթ չէր ընկնում. էլ չեմ ասում, թե ինչպես երեխաներին ծնողների գրկերից առնելով քարերին էին խփում, իսկ պարկեշտ կանանց և սենյակներում մնացած աղջիկներին խայտառակելը ի՞նչ հարկավոր է մեզ զրի առնել։ Տեսնո՞ւմ ես, թե որքան անհնարին են լինում շարիքները, երբ Աստված ձեռք է քաշում մեզանից։

Եվ որովհետև մարդկանց ու անասունների կերակուրը պակասեց, նրանք կարիքի սաստկությունից հարկադրված

բարձրացան դեպի Խորձյանն ի վեր. բայց որովհետև նրանց երկյուղից ճանապարհները կտրված էին, իսկ ձյունը թանձրութեամբ դեռ շարունակում էր պատել երկիրը, նրանք կըրկեցին ընթացքով էին գնում առաջ. ձիերն ու շորիները երամակներով դատարկ թշում էին և ճանապարհ բացում, իսկ հետո գերին և ունեցվածքը տանում. և այսպես եկան մինչև այդ գավառի ծայրը, Մորմրյանս կոչված գյուղը։ Որովհետև գյուղը բերդ ուներ, այդտեղի բոլոր բնակիչները հավաքվել էին այնտեղ։ Երբ պարսիկները հասան այնտեղ, իջևանեցին, որովհետև կարծեցին, թե հեծելազոր կա բերդում, ձյունը ամբարանդեղով՝ պատերազմի պատրաստություն տեսան։ Նրանց գլխավորը մոտենալով բերդին՝ սկսեց ինչ-որ բաներ ասել բերդի իշխանին. նա բազմաթիվ գորգերով ծածկել էր ձյունը և նրանց վրա նստած, վահանը պահած առջևում՝ մեծամիտ ամբարտաձանութեամբ դժոխալուր խոսքեր էր բարբառում։ Ամբոցի իշխանը, որ հարմար միջոցի էր սպասում, երբ մի կողմ ծովեց վահանը, նետով խփելով նրա կոկորդին՝ տեղ-նետեղը սատկացրեց։ Հետևից հոռոմների զորք էր գալիս, որոնք իսկույն փողեր հնչեցրին. անօրեններն այդ լսելով՝ փախան. բերդի բնակիչները դուրս գալով՝ որքան կարողացան գերի ու ավար տարան ներս. բայց հոռոմները առաջ շեկան։ Պարսիկները երբ տեսան, որ էլ ուրիշ զորք չկա, վերագարձան և ավարառուներից ում հանդիպեցին, կոտորեցին, իսկ մնացածներին վերցնելով՝ ետ դարձան։ Երբ հասան Եղնուտի սահմանների մոտ, այնտեղի մարդիկ ելան սրանց դեմ, կռվելով խլեցին շատ գերիներ ու պոստ ավար և մտան բերդը։ Իսկ արյունարբու գազանները պարտված ու շփոթված մտան Տարոնի սահմանը. այստեղ զորքեր իջան Սիմ կոչված օարից, որն ավանդությունը Սանասունը է կոչում, ըստ իրենց նախահոր անվան, կռվելով անօրենների դեմ՝ հաղթեցին ու կոտորեցին բոլորին և ազատելով ավարն ու գերին՝ վերագարձան ուրախութեամբ՝ փառաբանելով Աստծուն<sup>190</sup>։

Սույն տարում այրեցին Սուրբ Կարապետի գեղեցիկ ապարանքը, որը մեծ ջանքերով շինել էր Վասակի որդի մեծ Գրիգորի գործակալներից Հրահատ անունով մեկը, քանի դեռ այդ երկրի տերն էին, այրեցին նաև Սուրբ Կարապետի առջևի ժա-

մատուցել, որը վայելչագեղ ձևավորումով պատրաստել էր ի փառս և ի պատիվ մեծ վկայի և Քրիստոսի կարապետի, ինչպես և մյուս շինվածքներն ու փայտակերտ եկեղեցիներն, որը Սուրբ Գրիգոր են կոչում: Մեր՝ հինգ հարյուր յոթ թվականն էր, երբ այս այսպես եղավ:

## Գ Լ Ո ւ խ Ի Բ

ԹՈՆՎԵՐԱԿԵՑՈՒՆԵՐԻՅՈՒ ԶԱՐ ԱՂԱՆԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐԸ ԵՐԵՎԱՅ  
ՀԱՐՔ ԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ՄՈՂՈՐԵՑՐԵՑ ՇԱՍԵՐԻՆ

Հակոբոս անունով մի եպիսկոպոս, որ Հարք գավառի եկեղեցիների վերակացուն էր, իր իշխանության սկզբում ձևանում էր առաքինի՝ բուրջ էր հագնում, պաս պահում, քայլում էր բոկոտն: Իր համար նա ընտրեց քահանաներ, որոնք շարունակ իր հետ էին շրջում, կոշտ ու անպաճուճ շորեր հագնում, համեղ կերակուրներից հրաժարվում և մշտապես զբաղվում էին սաղմոսական երգերով: Այս ձևով նա զարմացրեց հեռավորներին ու մերձավորներին, և ամեն մեկն ուզում էր նրան տեսնել: Նրանք, որ իշխանության շնորհիվ շափազանց գոռոզացած ու ամբարտաձանացած էին, այնքան հնազանդվեցին նրան, որ եթե հրամայեր հողիները հանել, ոչ ոք չէր ընդդիմանա կամ համարձակվի բերանը բացել ու ծպտուն հանել: Բայց այդ բոլորը կեղծ էր և ոչ թե ճշմարիտ, որովհետև ծառը պտղից է ճանաչվում, ինչպես ասում է տերը, և սրա համաձայն զրել է նաև առաքյալը. «Նույնիսկ սատանան էլ է լուսո հրեշտակ ձևանում, թ՛նչ մեծ բան է, եթե նրա պաշտոնյաներն էլ կերպարանավորվեն Քրիստոսի առաքյալների տեսքով»: Ինչպես որ Վահագնյանն են սովորական կերակրին խառնում, և ընդունողը այն ճաշակում է իբրև կերակուր ու թուճավորվում, կամ չկնորսները կերով ծածկում են իրենց կարթերը, որպեսզի ձուլը կերով խաբված՝ կարթով բռնվի, այդպես էլ անօրինության մշակները, քանի որ իրենց կորստյան վիճը չեն համարձակվում բացահայտ կերպով մե-

կին ցուցադրել, այլապես այդ ո՞վ, որքան էլ խելքը կորցրած լինի, կհամաձայնի կամովին խորասուզվել մի խորխորատ, որից դուրս գալու հնար չկա, կերպարանվում են մեր բարեպաշտ կրոնով՝ պարզամիտներին խաբելու և անմեղներին քաղցր խոսքերով զլխից հանելու համար. այսպես նրանց խոսքերը ճարակում են քաղցկեղի նման, և ինչպես այդ պիտն է դժվար բժշկվում, այնպես էլ նրանց ցանցն ընկածները հազիվ թե կարողանան փրկություն գտնել:

Նույնիսկ մեր տերն է, նրանց նկատի ունենալով, իր կենարար ավետարանության մեջ պատվիրում. «Զգո՛ւյ՜ Նեղեք այն սուտ մարգարեներից, որոնք ձեզ մոտ են գալիս գառների հանդերձներով, մինչդեռ ներքուստ հափշտակող գայլեր են»\*. տերունական պատվիրաններից սովորելով՝ նույնն է ուսուցանում փիլիպեցիներին նաև առաքյալը. «Զգո՛ւյ՜ կացեք շներից, զգո՛ւյ՜ կացեք շարի մշակներից»\*\*: Արտաքին թշնամիներից զգուշանալն հեշտ է, բայց ցեղակիցների պատերազմներից դժվար է փրկվել, ինչպես այդ պատահեց Հաբելին ու Հովսեփին. այժմ, եթե սրանք այլալեզու ցեղից լինեին, մեզ հեշտ կլինեք զգուշանալ, բայց քանի որ, ինչպես երանելի Հովհաննեսն է գրում, «Մեզանից դուրս եկան, բայց նրանք բոլորն էլ մեզանից չէին»\*\*\*, նրանց ճանաչելն արգեն դժվար էր: Համալեզուներ ու համազգիներ, նույն ակից բխած, մեկը՝ քաղցր ջուր, մյուսը՝ դառն. թեև սուրբ Հակոբը անհնարին է համարում այս, բայց մեր օրերում ահա կատարվեց, հենց այս նույն քաղցր ակունքից, որը գերափառ մեր առաջնորդը՝ իջած խոր Վիրապ՝ տասնհինգամյա քրտնալի շարչարանքով երկրի խորքերից բխեցրեց մեզ համար հորդահոս աղբյուր, ըստ Եղեկիելի տեսիլի՝ վճիտ ու ականակիտ, որին հերձվածողական ժանգարուխ առունները շարողացան խառնել, որովհետև ճշմարտության պատվարը, մինչև վերջին ժամանակներս, հաստատապես ամրացած էր հավատի ժառի վրա. բայց նույնիսկ ինքը՝ մեր լուսավորիչը մարգարեական

\* Մատթ. է. 15

\*\* Փիլիպ. Գ. 2

\*\*\* Ա. Յովհ. Բ. 19

\* Բ, Կորնթ. ԺԱ. 13—15

հոգով տեսավ, որ գառները գալլեր դարձած՝ արյունահեղություն են գործում. և այս կատարվեց, երբ երկրի վրա բազմացավ մարդկանց անօրինությունը, և ննջեց ցորեն սերմանող բարի տանտերը. թշնամին հնար գտնելով՝ ցորենի մեջ որո՞մ ցանեց, ինչպես ասված է ավիտարանական առակում. դառը մրուրը խառնվեց այն կենարար ջրին, որը բխում էր տիրոջ տանից: Բայց այդ շուտ իմացան եկեղեցու վարդապետները, որոնք վնասակար որո՞մը արմատախիչ արին մեր հավատի անդաստանից և դառը մրուրը քամելով հեռացրին՝ ախտագերծելով ջուրը ճշմարտության աղով՝ Եզրիա Մարգարեի նման: Այս մասին այսքան. բայց ժամանակն է վերադառնալու այս բուն պատմությունը, որպեսզի հաստատվեն սասժներս:

Արդ, բոլոր շարիքների հոր այս համախոհն ու արբանյակը, երբ շափազանց մեծացնով իր կեղծ-բարի համբավը, որ անմիտ մարդիկ էին տարածում, այնուհետև սկսեց նպատակակետ դարձնելով՝ մեր հավատի վրա նետեր արձակել, որոնց սլաքները կոփված էին կաղնու կրակով, որովհետև այդ մարդը շատ պերճախոս էր և իր ճարտարաբանությունները կախարհում էր շատերին, կարծում էր, թե դրանով կկարողանա տապալել սուրբ եկեղեցին. չհիշեց տերունական պատգամներն ու Պետրոսին ուղղված ստույգ խոսքերը, թե՛ «Դու վե՞մ ես. այդ վե՞մի վրա կշինեմ իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի նրան»<sup>192</sup>: Սրան չհավատաց, այլ այս համարեց ինչ-որ մի մարդու սովորական խոսք. այդ պատճառով էլ պայքարի էլած՝ ուզում էր սափրել եկեղեցու փառքը. ինչպես որ հնում այն պոռնիկ կինը՝ Սամսոնի մազերը, որպեսզի այդ անպարտելի մարդուն մատնի այլազգիների ձեռքը. սա էլ ուզում էր սուրբ եկեղեցին մատնել ճշմարտությունը խառնակողների ձեռքը, այն եկեղեցին, որ իր պատվական արյունով գնեց մեր Հիսուս Քրիստոսը և փառագարգեց ու պսակեց ամենահաղթ խաչով, հաստատելով նրա մեջ խորհրդի սեղան՝ եզեմական կենաց ծառի պես, որի անմահական պտուղը կենարարի իսկական մարմինն էր, ըստ իր անսուտ պատվիրա-

նի, թե՛ «Ով որ ուտի իմ մարմինը, հավիտյան մահ չի տեսնի»<sup>193</sup>: Այժմ դու տես նրա նեղ խորամանկությունը, թե ինչպես օձանման խարդախությամբ հնարներ էր գտնում այն կործանիչ թույնը ներարկելու հավատով առողջների մեջ:

Առաջին անգամ սկսեց ընտրություն կատարել քահանաների մեջ ըստ արժանավորության, անարժաններին ստիպելով լռել. երբ այս միջոցով շատերին դուր եկավ, սրա վրա մի բան էլ ավելացրեց. արժանավորներին հրամայեց տարին միայն երեք անգամ պատարագ մատուցել. հայտնի է, որ նիկիական կանոններում<sup>192</sup> գրված է՝ թեպետև մեկը շափազանց մեղավոր լինի, պետք է նրա խոստովանությունն ընդունել. տերունական մարմնի ու արյան հաղորդություն տալ նրան և պատարագներին ու քրիստոնեական բոլոր ձեսերին արժանացնել. նա այս ամենեկին չէր էլ ուզում լսել, այլ այսպես էր ուսուցանում. եթե մեղանշողը ինքը անձամբ չապաշխարեց, նրան ո՛չ մատաղները կօգնեն և ոչ էլ պատարագները, և իր կամարարներով անասունը առաջ բերելով՝ կանգնեցնում և հեզնելով ու ծաղրելով այսպես էին ասում. «Ա՛յ տառապյալ շորքոտանի՛, ասենք թե նա իր ժամանակին մեղք գործեց ու մեռավ, դո՛ւ ինչ մեղք ես գործել, որ նրա հետ մեռնում ես»: Սրա նկատմամբ ժողովուրդը բաժանվեց երկու մասի՝ ոմանք ընդունեցին, ոմանք՝ ոչ. և այսպես բոլորը շփոթության ու տարակուսանքի մեջ ընկած՝ ելք էին փնտրում, նաև նրանք, որ այն ժամանակ անապատներում ու քարանձավներում մեռնակյաց ճգնություն միշտ աստծու կամքն էին կատարում, սաստիկ հառաչանքներով ու արտասովալից պաղատանքներով բարերար տիրոջից այցելություն էին խնդրում: Երկու անգամ հավաքվեցին շատ վանականներ, վանահայրեր, քահանաներ և խառնիճադանջ ժողովրդի անթիվ բազմություն, բայց որովհետև զավառի բոլոր իշխանները նրա երեսպաշտ ձևացումներից ասես շղթաներով կապկաված լինեին, սպառնում էին ավելի շուտ պատերազմելով մեռնել, քան նրան հավաքվածների ձեռքը տալ: Իսկ նա գրանից մեծապես բաջալերված, նեպտորարար<sup>193</sup> տանը նստած՝ պատգամավորների միջոցով

\* Մատթ. ԺԶ. 18—19

\* Հմմտ. Յովհ. Զ. 52—58

էր պատասխանում բազմութեանը, հույսը դրած իշխանների օգնութեան և ոչ թե Աստծո վրա, շփոթելով Դավթի երգի խոսքերը՝ «Լավ է ապավինել Աստծուն, քան թե իշխաններին»<sup>194</sup>: Անզգամը կարծում էր, թե մարդկանց օգնութեամբ կարող է հաղթել ճշմարտութեանը: Բայց Աստված, որը թույլ չի տալիս մեղավորների գորութունը արդարների շրջանում համարձակ գործի, որպեսզի արդարներն իրենց ձեռքերը չմեկնեն շարութեան, նա որ լսում է իր երկյուղածների աղոթքներն ու կատարում է նրանց կամքը, որը մի արդար մարդու աղոթքով մրրիկներն է դադարեցնում ու երաշտի ժամանակ անձրև բերում, ողորմաց մեզ ու փրկեց իր ժողովրդին. նա, որ գիտի իր խորին հիմաստութեամբ շատ հեռուից մեծամեծ գործերի հիմքը գցել, այստեղ ևս հոգ տարավ, որքան, հիրավի, ավելի օգտակար էր, և եղավ այսպես:

Եսայի անունով մի կրոնավոր, որը Կարին գավառից էր, բարեպաշտ տոհմից, բարի համբավի պատճառով գնացել ու հարել էր նրան. երբ որ սկսվեց նրա հետապնդումը, սա ուշագիշտ հետևեց նրան. որովհետև ինքը շատ խելացի էր, ձևացրեց նրան արտակարգ մտերիմ ու հավատարիմ, և ուսումնասիրելով նրա մտղնեական<sup>194</sup> կրոնն ու իրազեկ դառնալով՝ անմիջապես գնաց պատմեց սուրբ հայրապետ Սարգսին<sup>195</sup>: Սա լսելով ու վերահասու դառնալով գործին՝ քաղցր խոսքերով իր մոտ կանչեց այդ թշվառականին և ըստ արժանվույն պատժեց, որովհետև քահանայական կարգից զրկեց և աղվեսանկար դրոշմը խարանեց դեմքին. բարձրաձայն քարոզում էր ու ասում. «Ով որ սուրբ Լուսավորչի դավանանքը թողած՝ սողոսկելով մտնի թոնդրակեցի մարդակերպ գաղանների փարախը և միաբանվի նրանց, այս նույն դատն ու պատիժը կկրի»: Ապա հրամայեց այդ ամենաթշվառ մարդուն փակել բանտում, որովհետև ուզում էր, որ թերևս զղջա և խոստանա հեռու մնալ այդ պիղծ աղանդից, քանի որ շատ ցավում էր կորուսյալ հոգու համար:

Բայց, ինչպես Երեմիան էր ասում, ո՛չ կրակը կարող է այրվելը մոռանալ, ոչ հնդիկը՝ սևութունը, և ոչ էլ ինձը՝ խաչ-

տարդետությունը\*, այդպես էլ շարք չի կարող մոռանալ շարագործությունը. գիշերը նա բանտը ծակելով՝ փախավ, գնաց հասավ Հունաց աշխարհ, թագավորանիստ Կոստանդնուպոլիս քաղաքը. պախարակելով մեր հավատը՝ խնդրեց, որ իրեն մկրտեն ըստ նրանց կարգի: Նրանք ողջախոհությամբ տեղեկանալով ու վերահասու դառնալով գործին՝ հանձն չառան, ալլ ստացին. «Ում որ հայերը մերժել ու անարգել են կրոնի համար, մենք էլ չենք կարող ընդունել»: Երբ այս չհաջողվեց, նա եկավ-անցավ Ապահունյաց գավառը, սատանայի բնակատեղին, աստվածուրաց միաբանությունն ու գաղանների որջը, որը Թոնդրակ է կոչվում, և միառժամանակ ծածուկ որջավորվեց այնտեղ: Բայց ասում են, թե նրանք էլ սրան, իրենցից ավելի պիղծ լինելու պատճառով, չընդունեցին. այդ պատճառով էլ այնտեղից գնաց Խլաթի լեռը և այնտեղ գտնելով յուրայիներին, որոնք ապրում էին ագարակներում ու հեռավոր տեղերում, օթևանեց նրանց մոտ, իր օրերն անցկացնելով այնտեղ. ապա գնաց Մուհարկին<sup>196</sup> կոչված քաղաքը և այնտեղ էլ մեռավ շարաշար մահով: Սուրբ գրքի կանոններին չհետևողն ու քրիստոնյաներին չմիաբանվողը մերժելի է. այդ պատճառով էլ նա մեռավ էշի պես և թաղվեց լեշի պես, իրենից հետո վատ հիշատակ թողնելով, որպեսզի ամեն մեկը, ով լսի այս պատմությունը, անիծի նրան<sup>197</sup>:

## Գ Լ Ո Լ Խ Ի Պ

ԹԵ ԽԶՊԵՍ ԲՈՐՈՐՔՎԵՑ ԱՅՆ ՄՈՒՐՈՐԻԹՅԱՆ ՀՐԻՆԸ ԵՍԵՎ ՄԱՆԱՆԱԳՐԻ ՍԱՄԱՆՆԵՐՈՒՄ

Շիրնի<sup>198</sup> կոչված բերդաքաղաքի մոտ, որի անունով մինչև այսօր էլ աղարակն է կոչվում, ապրում էր Կոնստինտին շնանուն մի աբեղա, որը ծերացած լինելով՝ իր մեջ պահում էր պղծութեան խմորը. սա սովորել էր մի շնաբարտ աբեղայից, որը իր մասին տարածել էր, թե Աղվանքից է. բայց նա սատանայի անդրանիկն էր ու նրա գաղափարների շտեմարանը, ուստի նրա բերանից գհհհնի մշտաբորբոք հնոցի ծուխ էր դուրս գա-

\* Հմմտ. Երեմ. ԺԳ. 23

\* Սաղմ. ԺԺԷ. 9



լիս, որից շատերը թունավորվելով՝ շարամահ եղան: Այս կունծիկը սատանայի ժիր մշակը լինելով՝ որսաց Հրանուշ անունով մի կնոջ, որը նշանավոր ու սլատվական ազգից էր, ազարակների տեր ու նրան էլ սահմանակից: Երբ Հրանուշը նրա մահաշունչ թուլնից վարակվեց, չբավականացավ միայն իր կորստամբ, այլ շատերին էլ իրենց մոլորության գործակից պատրաստեց և առաջին հերթին իրեն տոհմակից երկու կանանց, որոնցից մեկի անունը Ախնի էր, իսկ մյուսինը՝ Կամարա, որն արգարև սատանայի կամարարն էր. սրանք երկուսն էլ հարազատ բույրեր էին, պոռնկական մոլեգին ախտով, որը հատուկ է նրանց փարախին, և կախարդական հնարանքներով եղան սատանայի վարդապետներ, որոնց գերիշխեց բոլոր շարիքների հայրը. սրանք «Սուսերի պես սրեցին իրենց լեզուները, — ինչպես ասված է սաղմոսական երգում, — և լարեցին իրենց աղեղները՝ շար գործերի համար»\* և նետեր արձակելով ազնվասիրտ մարդկանց վրա՝ կարեեր ու մահացու վիրավորեցին շատ անմեղ հոգիներ: Որովհետև իրենց հայրենի ժառանգությունից ունեին երկու գյուղ, դրանք դարձրին կամակոր վիշապ օձի որջ ու ապահով հանգրվան, որտեղ բույն դնելով նա սաստկապես դուրս թափեց իր մաղձը. իսկ իրենք մատուցվելով ու խմել տալով իրենց շուրջը բնակվողներին՝ մատնեցին կորսության. նրանց մասին Մովսեսը գրել է. «Նրանց գինին վիշապների ժահրն է, իժերի թուլնը, որ անհնարին է բժշկել»\*\*:

Վրվեռ անունով մի իշխան այս վհուկ<sup>99</sup> կանանց կամակատար եղբայրը դարձավ. սա առաջ ուղղահամալտ լինելով՝ առաջադեմ էր բարեպաշտական գործերում, այնքան, որ իր կալվածքում ընդարձակ սահմաններով մի մենաստան էր կառուցել և լիության մեջ էր պահում այնտեղ հավաքած ձգնավորներին, որոնց առաջնորդն էր կրոնական պատրաստությամբ շատ անվանի Անդրեասը: Իշխանը ամեն տարի մեծ պահքին գալիս էր սրանց մոտ և հանգիսակից էր լինում նրանց մինչև դատիկ օրերը<sup>200</sup> և ուրիշ շատ բարի գործերով էլ օգնում էր նրանց. նա շատերից ավելի առաջադեմ էր նաև

\* Սաղմ. 49. 4—5

\*\* Բ. Օրենք ԼԲ. 33

աղքատասիրության ու քահանաներին հնազանդվելու մեջ: Չարը սրան թակարդեց այն կանանց միջոցով, որոնք ապականագործ ախտով անխտիր պոռնկացան նրա հետ, շմտաբերելով արյունակցությունը<sup>201</sup>. սրանք են նրանց կորսության որջերը, այս է նաև Սողոմոնի ասած ազրուկի շորրորդ գուտաբը, որի մասին Աստծու առաքյալը պատվիրում է. «Մի ապականվեք ցանկամուկ կրքերով, ինչպես ուրիշ հեթանոսները, որ Աստծուն շին ճանաչում»\*: Տեսնո՞ւմ ես, որ այդ ախտը հեթանոսական է. տե՛ս, թե ինչպես է արտահայտվում այդ մասին աստվածային երջանիկ Սողոմոնը. «Որդյա՛կ, պահի՛ր քեզ օտար կանանց հետ խառնակվելուց, որոնք անմիտ տղաներից ում որ գտնում են, քաղցր խոսքերով համոզում են մնալ իրենց մոտ. որովհետև պոռնիկ կնոջ շրթունքներից մեղր է կաթում, որը մի ժամանակ քաղցրացնում է հավանողների քիմքը, իսկ հետո ավելի դառն է դուրս գալիս, քան լեղին. որովհետև իր հոմանիներին կապված շան նման քարշ է տալիս, անասունի պես տանում մորթվելու, այժյամի նման լլարդն է խոցոտում, որից բժշկվել անհնարին է, մինչև որ մահով հասցնի դժոխք, որովհետև նրա տունը դժոխքի հատակն է»\*\*:

Այս ողբալի Վրվեռը նրանց կողմից թակարդվելով՝ պարկեշտությունից զրկվեց, հավատը կորցրեց, դարձավ Աստծու ու նրա սրբերի թշնամին, թողեց տիրոջը, որի սուրբ ավազանում մկրտվեց, մոռացավ Աստծուն, որն իր մարմնով ու արյամբ կերակրեց նրան: Տնից դուրս եկած, պատվից ընկած, մոռացավ աստվածային ուխտը, հեռացավ ձգնավորական կարգերի հաղորդությունից: Այն տեղը, որ երբեմն կրոնավորների օթևան էր, որը ինքն էր շինել մեծամեծ ծախսերով ու շարշարանքներով, ուր սաղմոսասացների ու եկեղեցականների խմբերը երկնավորների ձայնակցությամբ քաղցրաձայն երգերով փառաբանում էին Աստծուն, այժմ լուռ է, ավեր ու ամալի: Իսկ հետո ի՞նչ. — Այդ թշվառականը զնալով միաբանվեց այն շարաղև կանանց հետ: Նրանց սեփական այն երկու ազարակները, որոնց մասին առաջ մի փոքր հիշե-

\* Ա. Թեսաղ. Գ. 5—6

\*\* Հմմտ. Առակ. Ե. 3—4, է. 22—23

ցինք, կոչվում էին Կաշե և Աղյուսո. սրանք իրենց միաբանեցրին նաև այդ ազարակների բոլոր բնակիչներին. հետո գիվային կատաղությամբ մոլեգնած՝ ավերեցին այն եկեղեցիները, որ վաղուց ի վեր կառուցված էին իրենց օձաբնակ տեղերում: Եվ գյուղերում, ուր որ հարմար ժամանակ էին գրանում, իրենց հոր՝ սատանայի համար վրեժխնդիր լինելով՝ ջարդում էին մեր փրկության նշանն ու տերունական հաղթության զենքը, որով խորտակվեց մահվան հաղթանակը և մեզանից վերացան կամակոր թշնամու փորձությունները, որով անտեսելով արարածներին, պարծենում էր երանելի Պողոսը. «Ես ոչնչով չէի պարծենա, բացի միայն՝ մեր տիրոջ Հիսուս Քրիստոսի խաչով»\*: Բայց որովհետև խաչը հիշեցի, պատմությանս մեջ կրեբեմ նաև մի զարմանահարաշ գրույց, որը բոլոր լսողներին սարսափեցնում է:

Պախրա լեռան հատվածներում, որ այժմ Գալլախազուտ է կոչվում, Բագմադքյուր անունով մի ավան կար, ուր բազմապայծառ վայելչությամբ կանգնած էր աստվածային նշանը, հանուն որի և գյուղը վերանվանվելով՝ մինչև այսօր կոչվում է Խաչ: Մեծ պենտեկոստեի օրը, որը Նոր կիրակի<sup>202</sup> է կոչվում, սատանայի կամակատար մշակները գիշերը գալով, մուրճով ջարդելով ու մանրելով աստվածընկալ նշանի թաղը՝ թափեցին գետին, և իրենք թաքուն գնացին-մտան իրենց օձաբնակ որջերը: Մրա վրա երկինքը վերևից ապշեց, և ամբողջ երկիրը սարսափահար դողաց. այս գործը ողբաց ու սգաց Արուսյակը մութ երեկոյին: Ըստ սովորական կարգի՝ արևոտակաշին երեցը վեր կենալով զնաց, որ խաչի առաջ մեծ կիրակեի ծեսը կատարի. տեսնելով այն զարհուրելի տեսարանը՝ ձեռքն օձիքը ձգեց ու հանդերձները պատառոտելով՝ բարձրաձայն աղաղակով տեղի բնակիչներին տազնապահար անմիջապես այնտեղ հավաքեց. նրանք տեսնելով այդ ապշեցուցիչ գործը՝ ողբ ու ճիշերով կրծքները ծեծելով վերադարձան. բոլորն անխտիր՝ տղամարդ ու կին, ծեր ու երեխա, միաձայն ողբում էին: Եվ մինչդեռ նրանք այս տազնապի մեջ էին, Աստծու անձառ իմաստությամբ նրանց մեջ հանկարծ միտք

ծաղեց. այն գիշեր, երբ այդ կատարվեց, հանկարծակի ձյուն էր եկել ու երկրի երեսը ծածկել սպիտակով. նրանք անօրենների հետքը բռնելով՝ հասան մինչև նրանց որջը: Այդ անմիջապես հայտնեցին երջանիկ Սամվել հայրապետին<sup>203</sup>. սա լսելով՝ մեծ բաղմությամբ հասավ այնտեղ և զավառի եպիսկոպոսներին, երեցներին ու վանականներին իր մոտ հավաքելով՝ նրանց հետ զնաց այրեց ու ոչնչացրեց անօրենների որջը, նզովելով նրանց կայքն ու կարողությունը, ինչպես նախկինում Հեսուն անիծեց Երիթով բաղաբի ունեցվածքը, որպեսզի ոչ ոք չհամարձակվի որևէ բան վերցնել. նրանցից վեցին, որոնց մասին ասում էին, թե այդ շար ու պիղծ կրոնի վարդապետներ են, ձերբակալելով՝ բաղմությամբ եկավ Ջերմա կոչված գյուղաբաղաբը և հրամայեց նրանց ղեմքին խարանելով դրոշմել աղվեսապատկեր, որ այդ լինի նրանց՝ բոլորին հայտնի ու ճանաչելի հավիտենական նշան, որպեսզի ոչ ոք անգիտաբար չհաղորդակցի նրանց հետ, և նրանք որպես շար գազաններ հալածվեն բոլոր մարդկանց կողմից: Դրանից հետո իրեն գործակցող ժողովրդին օրհնելով՝ խաղաղությամբ ճանապարհ գրեց:

Ամռանն այն երկրի գործերը բարեկարգելու համար թագավորի կողմից գատավոր ուղարկվեց<sup>204</sup>, որի անունն էր Եղիա: Երբ հասավ Եկեղյաց զավառը, սրան ղեմավորեց ամենաշար վրվեռը և բողոքեց մեծարգո հայրապետ Սամվելի և նրա հետ եղած մյուս եպիսկոպոսների ղեմ, թե՛ «Իմ տունը կողոպտեցին և գյուղը հրկիզելով ավերեցին»: Եվ շատ գանձերի ու կարողության պարտքեր բարոքեց նրանց վրա: Երբ դատավորն այս լսեց, ավելի ևս բարկությամբ բորբոքված՝ զինվորներ ուղարկեց երանելի եպիսկոպոսներին շուտափույթ իր մոտ բերելու. երբ զինվորները եկան, եպիսկոպոսների գլխավորը հրովարտականը գրեց եկեղեցու կղերականներին, երեցներին ու անապատականներին, որ անմիջապես իր մոտ հավաքվեն: Լուրը հասնելուն պես, ասես Աստծու տեսությունից աղդարարված, ոչ միայն բահանաները, այլև առավելապես աշխարհականներ, որոնց թիվը հաշվել ու գրել ես չեմ կարող, մեծ բաղմությամբ անհապաղ մի տեղ հավաքվեցին ու զնացին մինչև Եփրատ գետի եզրը, ուր Մանանաղին<sup>205</sup>

\* Գաղատ. 2. 14

է խառնվում նրան: Տեղատարափ անձրևից Եփրատը հորդացած հոսում էր ափերով լեփ-լեցուն: Զինվորները նավ բերելով՝ ծերունի եպիսկոպոս Սամվելին և նրա եղբորորդի Քեդոսին շտապեցնում էին անցնել այն ափը, Կոթեթ<sup>206</sup> կոչված ավանը, որովհետև դատավորը հենց այնտեղ էր գտնվում. բայց ժողովուրդը եպիսկոպոսներին պաշտպանելով՝ զինվորների ձեռքը չտվեց: Իսկ նրանք ասացին. «Նախ սրանց անցկացնենք, հետո՝ ժողովրդին»: Այս խոսքերով համոզելով նրանց՝ եպիսկոպոսներին վերցրին և նավով անցկացրին մյուս կողմ: Այնտեղ նավը կանգնեցնելով՝ եպիսկոպոսներին բանտարկեցին: Ժողովուրդը տեսնելով, որ նավը չվերադարձավ, ինչպես նրանք խոստացել էին, հասկացավ նրանց խորամանկությունը. բարձր ձայնով ու հորդորական խոսքերով միմյանց բաջալերելով՝ ավելի լավ համարեցին ջուրն անցնելով մեռնել, քան իրենց հավատի առաջնորդներին ուղղված լուտանքի խոսքեր լսել: Իրիկնաժամ էր. արեգակը ճառագայթների ցնցուղունքը իր մեջ ծրարելով մայրամուտ էր իջնում, համարձակություն տալով երկնազարդ աստղերին. քահանաները առաջ գալով, ոչ թե խաչի խորհրդով ջուրը բաժանեցին, այլ հենց այդ տերունական հաղթության նշանը ձեռներին բռնած և ուսերին վերցրած՝ աներեր հավատով ճեղքեցին բարձրակոհակ ջրակույտերը, որոնք ամեհի նժույգի նման, նրա զորությամբ ասես սանձահար, տեղի տվեցին ժողովրդին անցնելու. ամբողջ բաղմությունից ոչ ոք չվնասվեց: Երբ նրանք անցան, ամբողջ գիշերը Աստծուն ուղղված գոհունակության երգեր երգեցին, իրենց խմբին առաջնորդ ունենալով անարատ Մարիամին, որ սուրբ եկեղեցին է, ձեռներին բռնած թմբուկը, այսինքն՝ հավատի ճշմարտությունը. ոչ թե հերձվածողական անառակ ախտերից հաղթահարված՝ անձայն ու անարվեստ էին, այլ սուրբ հոգու ջերմությամբ անարատ լինելով՝ հնչուն երգերին պատրաստակամ՝ Դավթի քնարի կնիտնոցով հընչեցնում էին բողբոջին ի լուր. «Օրհնեցե՛ք տիրոջը, որ հրաշք գործեց»\* և սրան հետևող խոսքերը. այսպիսի երգերով Աստծուն աղոթելով լուսացրին ամբողջ գիշերը:

\* Սաղմ. ԴՆ. 1

Իսկ դատավորը, երբ լսեց Աստծու նախախնամությունն ու հրաշագործությունը, հասկացավ, որ տերը ողորմած է մեր ազգի հանդեպ, և սաստիկ սարսափից դողահարվելով՝ ապավինում է աղոթքներին և Աստծուն, կանչում է օգնության, որ «Տգիտարար,— ասում է,— շիտոտրվեմ քո արդարությունից, տե՛ր»: Երբ լուսացավ, օրը կիրակի էր. դատավորը գնալով այն եպիսկոպոսարանը, որ Փրրիս<sup>207</sup> է կոչվում, և ցանկանալով իրավացի դատաստան, դատավարությունը հանձնում է ժողովրդի զխավորներին. սրանք հրամայում են անարժան ու մեղապարտ վրվեռին՝ ներկայանալ արդարադատության ատյան: Կա մի կենդանի, որը սեպյան է կոչվում. սրա մասին ասում են, թե որսորդներից փրկվելու համար ամեն գույնի փոխվում է. այսպես էլ նա, երբ տեսավ, որ ճշմարտությունը զորացավ, որին ինքը դիմակայել չի կարող, որովհետև լույսը ծագելիս շքանում է խավարը, իսկ ճշմարտությունը հայտնվելիս կորչում է սուտը, հապա ի՞նչ անի, ինչպիսի՞նք՝ հնար գտնի. խոստանում է հոռոմ լինել և կաշառելով մի եպիսկոպոսի, որի անունը Եպիսառատ էր, գտնալ նրան որդեգիր: Եպիսկոպոսը ներկայանալով ատյան, աղերսանքով խնդրում է նրան շնորհել իրեն. դատավորը համաձայնում է, որովհետև անօրենի եղբայրը իշխանական պատվով, քաջությամբ ու արիությամբ թագավորի ընտրյալներից ու ծանոթներից էր, որից դատավորը չափազանց ակնածում էր. ուստի և նրան հանձնում է եպիսկոպոսին, ինչպես նա խընդրեց: Իսկ նրա ընկերներից մյուսներին, որոնց որ գտան, սաստիկ տանջանքներով ու ծեծով շարշարելով՝ հալածական դարձրին ու ավերեցին տները: Ժողովուրդը դատավորին օրհնեց և հանգստացած ցրվեց:

Բայց Աստծու դատաստանը շուտով հասավ նրա վրա, թեպետ պատժից փրկվեց, բայց ամենազեփ ձեռքից չկարողացավ ազատվել, որովհետև Հերովդեսի պես հանկարծակի ջերմախտով հիվանդացավ և ձեռքի մատները շորանալու պատճառով կերակրվել չէր կարողանում, իսկ տառապանքով կերածն էլ, կերակրի մուտքը փակված լինելու պատճառով, փսխում էր. այսպես շարունակվեց մինչև իր մահվան օրը. հետո էլ մարմինը գողություն մեծացավ, բայց նա չզղջաց

ու չհիշեց իր նախկին բարեպաշտութիւնը, այլ նույն դիվա-  
յին ազանդով տարվեց մինչև մեռալ<sup>208</sup>, նրա մարմնի տան-  
ջանքները միշտ հիշեցնում էին դժոխքը, ուր նա տառա-  
պելու էր:

Բայց նրանց մծղնեական գործը չափազանց աղտեղի լի-  
նելու պատճառով անպատշաճ համարեցինք գրի առնել, որով-  
հետև ամեն ոք լսողութեամբ տոկուն չէ. շատ մեղքերի հիշե-  
ցումը կարող է գրգռել լսողներին և նույնիսկ գործով էլ կա-  
տարել տալ. այդ պատճառով էլ ես խույս տվեցի գրանից:  
Ինչ որ հայտնի է և մեզ էլ կարելի է ասել, սրանք են. եկեղե-  
ցին ու նրա կանոնները ամենեին չէին ընդունում, ո՛չ  
մկրտութիւնը, ո՛չ պատարագի մեծ ու ահալուր խորհուրդը,  
ո՛չ խաչը և ոչ էլ պահեցողութեան կարգը: Բայց մենք՝ սուրբ  
երրորդութեան ճշմարիտ հավատացյալներս, ամուր պահենք  
հաստատուն լույսի դավանանքը, որ սովորեցինք սուրբ հայ-  
րերից, և նրանց աստվածուրաց միաբանութիւնից երես  
դարձնենք, անեծքներ թափելով նրանց վրա:

## Գ Լ Ո Լ Խ Ի Պ

ՏՆԵՉՆԵՐԱԷԹԶԱԿ ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՍՐՈՎ ԵՌՂԵՆՈՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Մարդկային ազգը, շատ զեզերումների ու ցնորքների են-  
թարկված, ցոփութեան ու ամբարտավանութեան պատճառով  
ապավինեց իր գործերին. կորովի ու բարձրահասակ, անդի-  
մադրելի ու անմրցակից հսկաներին նրանք իրենց աստված-  
ներ անվանեցին. ոմանք աշտարակով ամբացած, բարձրու-  
թիւնը համարելով անմատչելի, չկամեցան ճաշակել տիրոջ  
բարութեան բաժակից, ինչպես այն առաջին բազմաշխատ ու  
դուրակործան շինվածքի անմիտ կառուցողները կամ Երե-  
քովի բնակիչները, որոնք աշտարակների ամբութեան պատ-  
ճառով չհամարեցին իրենց էլ քանանացիներ և շմտածեցին,  
որ իրենց էլ է իշխում տիրոջ աջը կամ ամենակալի սուրբ կմո-  
տենա իրենց: Որովհետև տերն է, որ շինում է ու քանդում,  
սասանում է բիրդերն ու կործանում է բարձրաբերձ աշտա-

րակները. Լիբանանի սնարին գտնվող աշտարակը, որ Դավի-  
թը շինեց և սուսերով ու վահանով ամրացրեց ընդգեմ Դամաս-  
կոսի, Սողոմոնի հակառակորդ Եզերին շղիմակայեց և ոչ էլ  
խափանեց նրա հարձակումը, քանի որ ամրոցը սրբութիւնն  
է, իսկ ընտիր պարիսպը՝ աստվածապաշտական գործերը:

Սկզբից գրածի համաձայն, այժմ վերադառնանք նույն  
պատմութեանը: Թող փոքր կամ քիչ մեղք չհամարեն նրանք,  
որ չեն զղջում կամ ապաշխարում կամ անտեսում են մեր-  
ձակա ու սահմանակիցների պատիժը, որ ըստ հանցանքի է  
պատահում. նոճին պետք է ողբա մայրու համար, իսկ զժնի-  
կը՝ ձիթենու, որովհետև ոչ թե բոլորն էլ, որոնց վրա աշտա-  
րակն ընկավ, ըստ տիրոջ հրամանի, անխտիր արժանի էին  
մահվան, այլ որպեսզի մերձակաները և ուրիշները մեղքն  
ըմբռնեն, իսկ հեռավորները խրատվեն ու զգուշանան. Արծը-  
նին պատահած աղետալի դեպքերը<sup>209</sup> ո՛չ վաղուց են կատար-  
վել, և ոչ էլ նրանցից շատ ժամանակ է անցել, որ աղավաղվեն.  
Հատերն իրենց աչքով տեսան և կարիք չունեցան լսելու, որով-  
հետև շատ զավառներ ու քաղաքներ փրկվեցին այն ասպա-  
տակութիւնից. բայց ըմբոստացան ու ապստամբեցին ոչ  
թե մարդկանց, այլ Աստծու դեմ, որը բարձրաբերձ աշտա-  
րակները գետնին է հավասարեցնում և ամուր քաղաքները  
վերածում հողարլուրների. չհասկացան ու շմտաբեքեցին տի-  
րոջ ահն ու սպառնալիքները, և նրա բարկութեան ու ցաս-  
ման մրուրը, որ իջեցնում է մեղավորներին խմեցնելու հա-  
մար, սպառված համարեցին, մանավանդ Անի ամրոցն ու  
ջրշապատի իր դուստրերը, ամբարտավանութեան ավելի սո-  
վոր, ընդգեմ երկնքի ձեռք էին թափահարում, մինչև որ Աստ-  
ված իր փոխարեն շարժեց պարսից թագավորին<sup>210</sup>, տեսնե-  
լու, թե ինչ է կատարվում այնտեղ: Նա Հայոց երկրում պա-  
տերազմեց ուրիշ թագավորութեան սահմանը տիրելու և իր  
աշխարհը ընդարձակելու համար. այդ եղավ մեր՝ հինգ հա-  
յուր տասներեք թվականին:

Ահա թագավորը բազմաբյուր ու անթիվ զորքերով սպա-  
ռազինված՝ եկավ-հասավ ու մտավ մեր աշխարհը, ահ ու եր-  
կյուղ պատճառելով հեռավորներին ու մերձավորներին, ոտ-  
նատակ արեց ու ավերեց շատ զավառներ, մինչև հասավ այն

բաղաբը, որ մեղքերով կատարելութիւն սահմանին էր հասել: Իր վրանը խփեց Անի բաղաբի դիմաց, իսկ բանակները սփռեց երկրի լայնութիւնով: Ճգնում էր, հնարներ էր փնտրում երկաթե դուռն ու պղնձե նիզբեր խորտակելու, որ իր թագաւորութեան դեմ էին կանգնած, բայց ամբողջութեան հուսահատութեամբ, թեպետ կոխվել սաստկացնում էր, ուզում էր հետանալ: Չգիտեր, որ տերը պահապանների ու իշխանների միջև երկպառակութիւն, անմիաբանութիւն, խառնակում ու բաժանում է ձգել: Հենց այդ ժամանակ էլ նրանք թողած պատերազմի գործը՝ փախուստի դիմեցին և երկյուղից խուճապահար ու ահաբեկված՝ բոլորն էլ մոռացան և հարազատներին, և կարևոր բարեկամներին: Սպառազեն զորքերը, որոնք զրոյում էին կռվում, այս տեսնելով՝ իրենց հանգեց, պարսպի վրա ճանապարհ բացելով՝ ծովի փրփրադեզ ալիքների պես թափվեցին բաղաբ և պարսկական սուրը գործի դնելով՝ ոչ ոքի չխնայեցին: Տղամարդկանց ու կանանց բազմութիւնը դիմեց դեպի թագաւորական պալատ, կարծելով, թե այնտեղ կկարողանան փրկվել: ոմանք ճողոպրեցին այն ամրոցը, որ ներքին բերդ է կոչվում: Իսկ նրանց, որ բաղաբի մեջ էին ամրացել, թշնամիները երբ որ իմացան, թե անպատրաստ են, ո՛չ պատերազմող տղամարդ ունեն և ոչ էլ ուտելիք կամ ոմակիք, անմիջապէս շրջապատեցին և ահաբեկելով՝ հարկադրաբար ակամա դուրս հանեցին:

Այնտեղ պետք էր տեսնել բոլոր հասակի մարդկանց տանջանքն ու հոգեվարքը: մանուկները մայրերի գրկերից հափքուտակվելով՝ քարերին էին խփվում, իսկ մայրերը իրենց արցունքով ու արյամբ էին թրջում նրանց: հորը և որդուն նույն սուրն էր խողխողում: ծերերն ու երիտասարդները, քահանաներն ու սարկավազները միևնույն սրով մահ ճաշակեցին, այնպես որ ամբողջ բաղաբը ծայրեծայր լցվեց դիակներով, և սպանվածների մարմինները վերածվեցին ճանապարհի: կոտորվածների բազմութիւնից ու անթիւ դիակներից, այն մեծ վտակը<sup>211</sup>, որ անցնում էր բաղաբի մոտով, ներկված էր արյամբ: վայրի ու ընտանի գազանները եղան դիակների գերեզմաններ, որովհետև ոչ ոք չկար, որ թաղեր և անհրաժեշտ հողով ծածկեր խողխողվածներին: Այլև նրանում կատարված

սաստիկ անիրավութիւնից բարձրաշեն ու զեղեցկահարմար սպարանքն այրվեց, իսկ բոլոր շենքերը նմանվեցին հողաբլուրների: այն վաշխն ու նենգութիւնը, որ այնտեղ կային, վերացան:

Այս է բաժինը անիրավ բաղաբների, որոնք կառուցվում են օտարների արյամբ: փարթամանում են տնանկների քրտինքով, իրենց տները ամրացնում են վաշխով ու անիրավութեամբ, զուժ շունենալով դեպի աղքատներն ու տնանկները: սպասում են միայն զվարճութեան ու վաշխի և աղտեղի զործերից չեն խորշում, արբում են միայն իրենց համակած ցան կամուրջութեամբ: էլ ի՞նչ պիտի լինի այսպիսիներին, երբ որ հասնում է տիրոջ բարկութիւնը:— պիտի սպանվեն ու ոչնչանան, ինչպես մոմը կրակից, թե՛ թագաւոր և թե՛ իշխան, ինչպես իմացանք դրածներիցս: Պարսից թագաւորը շատ զավառների տիրելով՝ անթիւ ավարով վերադարձավ իր աշխարհը<sup>212</sup>:

## Գ Լ Ո Ւ Յ Ի Ե

ՀՈՒՆԱՅ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՉԵՐԲԱԿԱՎԵՑ ՊԱՐՍԻՑ  
ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ<sup>213</sup>

Կարիք չկա պատմել կամ զրի առնել այնպիսի բաներ, որոնց վերահասու չես, ուստի և անիրագործելի են քեզ համար, մանավանդ որ ոչ ոք քեզ նեղութիւն չի տալիս ու չի պահանջում<sup>214</sup>, որ անես, այդ պատճառով էլ այս կարգի շատ կարևոր պատմութիւններ մենք շրջանցեցինք, թողնելով ուրիշ ավելի ձեռնհաս ու գիտուն մարդկանց, թերևս մեկը պահանջի այդ նրանցից: սրանով մենք կզրզուենք կարող մարդկանց նախանձախնդրութիւնը: բայց քանի որ երկու թագաւորների պատերազմը զանց առնելուց գործը կտուժի, անհրաժեշտ ենք համարում մեծամեծ իրողութիւնները կարճատես պատմել:

Գիողենես թագաւորը, որ Կոստանդիանոս Մեծից<sup>215</sup> հետո, ըստ թագաւորների կարգի, վաթսուներորդն էր, փոքրինչ ավելի կամ պակաս, երբ տեսավ, որ պարսից թագաւոր

ըր իր թագավորութիւնից քիչ երկրներ շխեց և Հունաց կուշ  
աւակներին փախստական արավ ու ինքը մեծ ավարով ու  
գերութիւնամբ վերադարձավ իր աշխարհը, բնութիւնամբ արի ու  
նախանձախնդիր լինելով, տասը տարի հետո որոշեց պատե-  
րազմել, որպէսզի թուլամորթ ու վախկոտ շերեա և իրենից  
հետո վատ հիշատակ շթողնի: Մեծ ցասամբ ու հոխորտան-  
քով՝ ցամաքի պես անցավ ծովը և տեղակայվելով Բյութա-  
նիայում՝ անհամար բազմութիւն հավաքեց: Նա ղեռ պահում  
էր թագավորութեան լայն և ընդարձակ սահմանը՝ Փյունիկեի  
հովիտներից սկսած, որտեղ Մեծ Անտիոքն է, մինչև վան  
ամրոցը և Հերի դիմացի ամբողջ Ռշտունաց երկիրը: Թագա-  
վորը երբ տեսավ զորքերի այսքան բազմութիւն հավաքված  
մի տեղ, ամբարտաւանացավ ու հպարտացավ, մտածեց, որ  
երկրածին թագավորներից ոչ ոք չի հաղթի իրեն և շտաբե-  
րեց մարզարի այն խոսքերը, թե ո՛չ զորքերի բազմութիւնը  
և ոչ էլ իր վիթխարի զորութիւնը կարող են ապահովել թա-  
գավորին, այլ միայն ամենակալի աջն ու բազուկը:

Ահա, մի ինչ-որ անպատեհ մտադրութիւնամբ սպարապետ-  
ների ձեռքով շատ զորքեր նա ուղարկեց այլ ուղղութիւնամբ:  
Իսկ ինքը մեծ բազմութիւնամբ շարժվելով դեպի արևելք՝ եկավ  
հասավ Թեոդոսպոլիս մեծ քաղաքը և այնտեղ այրուծին կազ-  
մակերպեց: Մեղքը սոսկալի է, և գործողները զրկվում են  
իմաստութիւնից ու Աստծու որդեգրութիւնից, բայց առավել  
ևս անտանելի է ամբարտաւանութիւնը, որով գործում են իշ-  
խաններն ու թագավորները, շխարավելով նախորդ ոչնչաց-  
ված ամբարտաւանների հիշատակով: այդ շար ախտը ոչըն-  
չացնում է բոլոր իր կրողներին, որովհետև ամբարտաւանի  
հակառակորդը, ըստ առակողի, ուրիշ մեկը՝ չէ, այլ ինքը՝  
Աստված: Ուստի և սա շթողեց զորքերին հանգիստ առնել, որ-  
պէսզի մյուս բազմութիւններն էլ գային հավաքվելին, նրանց  
միանային և միմյանց քաշալերելով՝ դառնային թշնամիներ-  
րի համար սոսկալի ու մեծ բանակ, այլ միայն իր մարդկան-  
ցով ցանկացավ պատերազմում հաղթութեան հասնել: Անց-  
նելով Մանազկերտ գավառի սահմանների մոտերքով՝ շու-  
տափութի հասավ Պարսից թագավորի բանակատեղը և այն-

տեղ, Պարսից բանակի դիմաց իր արքայական վրանը խփեց,  
շուրջը ամրացրեց և պատերազմի օր նշանակեց:

Պարսից թագավորը, երկյուղից մզված, խորամանկու-  
թիւնամբ ուղում էր պատերազմն սկսել, որպէսզի ցրված զորքե-  
րը չհասնեն թագավորին; շուտեղացնեն ու նրա ղեմ պատե-  
րազմելը անհնարին շղարձնեն. ավելի լավ էր համարում կրու-  
վել երկու մասի ղեմ, քան երեքի. այդ պատճառով էլ շտա-  
պեցրեց ու արագացրեց նախապատրաստութիւնը, մինչև որ  
հույներն էլ ստիպված դուրս եկան պարսկական կազմ ու  
պատրաստ բանակի ղեմ: Եվ երբ խիզախորեն իրար վրա  
հարձակվելով՝ պատերազմական կարգով բախվեցին միմյանց,  
և ղեռ չէր երևում ոչ մի բանակի պարտութիւնը, անաստված-  
ների մի մեծ զունդ, Հունաց թագավորից ապստամբելով, ան-  
ցավ թշնամիների կողմը: Այդ պատճառով էլ շատ զորքեր  
կոտորվեցին, որից հետո անվճռականութիւնամբ էին կոլում և  
ոչ թե քաջութիւնամբ ու կազմակերպված. սրանից պարսիկները  
ողևորվելով՝ խիզախ ու անհաղթելի դարձան: Իսկ Հունաց  
թագավորը կատարվածից անտեղյակ լինելով ու պատճառը  
չիմանալով՝ բարկութիւնամբ լցվեց Հայոց զորքի ու ազգի ղեմ  
և խեթ աչքերով էր նայում նրանց. բայց երբ տեսավ նրանց  
նվիրվածութիւնամբ պատերազմելն ու քաջերի խիզախութիւնը,  
որոնք չէին վախենում Պարսից կորովի ազդեցութիւնից,  
այլ արիութիւնամբ դիմակայելով՝ թիկունք չէին դարձնում, թեև  
շատերը թագավորին լքեցին, բայց նրանք նվիրվածութիւնամբ  
մահը հանձն առան, որպէսզի մահից հետո էլ հավատարիմ  
քաջութեան բարի անուն թողնեն, ապա շափից դուրս սեր ցու-  
ցարեցրեց և շտեմնված պարզներ խոստացավ:

Թագավորն իր բազմած տեղից վեր նայելով դեպի թշնա-  
միները, տեսավ, որ իր զորքերի մի մասը խուճապահար  
փախչում է. անմիջապէս արագորեն մարտիկի նման հանդեր-  
ձավորվելով ու սպառազինվելով՝ կայծակի պէս հասավ ճա-  
կատամարտի տեղը և պարսից քաջերից շատերի դիակները  
գետին փռեց ու զորքն ահաբեկեց: Բայց նա չգիտեր, որ տի-  
րօջ զորքերի զորավարը, որ Հեսուին երևաց ու հաղթութիւն  
ավեց, իր հետ չէ. տերը դուրս շեկավ մեր զորքերի հետ ղեն-  
քով ու վահանով և սուր չհանեց մեր թշնամիների ղեմ ու շար-

գելեց նրանց. զորութեան տերը ո՛չ միջամտեց, ոչ էլ մեզ հաս-  
մար փրկութեան ու հույսի զորավիզ եղավ, այլ մեզ զրկեց իր  
զորութունից, մատնեց մեր թշնամիների ձեռքը, դարձրեց  
մեր դրացիների անարգանքի առարկան ու ոշխարի պես մոր-  
թել տվեց: Մեր աղեղները փշրվեցին, մեր զենքերը խորտակ-  
վեցին, մեր զորականները տկարացան ու թուլացան, որով-  
հետև տերը վերացրեց իր զորութունն ու քաջութեան ոգին  
մեր զորականներից ու իշխաններից. ուժն ու սուսերը նրան-  
ցից առնելով՝ տվեց թշնամիներին, նրանց անվայել վարքի  
պատճառով:

Այն աշխարհակալ մեծ գահատիրոջը վախկոտ ու հան-  
ցավոր մի ստրուկի պես ձերբակալելով՝ տարան Պարսից թա-  
գավորի առաջ: Բայց Աստված, որ վիրավորում և բժշկում է,  
որի մարդասիրական բարությունն անսահման է, ում որ  
խրատում է, բոլորովին շի կործանում, այլ սակավ փորձու-  
թյամբ ներում է, որ մենք իմանանք մեր տկարությունը,  
ինչպե՞ս ու ներեց իր պատվանդանի աթոռակալին: Պարսից  
հազանամիտ թագավորի սրտում սեր ձգեց, և սա իր սիրելի  
եղբոր նման մեծ հոգացողությամբ հանգիստ ճանապարհ  
գրեց նրան:

Բայց ում որ Աստված ազատեց այլազգու ձեռքից, յու-  
րայինները նենգությամբ խայտառակաբար կուրացրին ու  
սպանեցին և անցնջելի արյուն թափեցին այն թագավորու-  
թյան վրա: Այնուհետև վերացավ իշխանների ու զինվորների  
զորությունը, և այդ թագավորությունը հազթություն շտեմով  
իշխանները նախանձում, դավում էին միմյանց և դատաս-  
տանի արդարությունը վերացրին. աշխարհը միայն ավերում  
էին և ոչ թե փրկում: Այդ պատճառով էլ տերը բարկութեամբ  
լցված՝ բազմաթիվ ազգեր ուղարկեց նրանցից վրեժխնդիր  
լինելու համար. Լուսնալեռներից<sup>216</sup> ու այն մեծ գետի եզերք-  
ներից, որ անցնում է Հնդկաստանի հյուսիսում<sup>217</sup>, այլալեզու  
և անգութ ազգերը հորդ հեղեղի պես եկան թափվեցին մեր  
աշխարհի վրա. հիմնավորվելով Օվկիանոս ծովի եզերքին՝  
իրենց վրանները խփեցին մեծ քաղաքի դիմաց, մեր ամբողջ  
աշխարհը արյամբ ու դիակներով լցնելու և քրիստոնեական  
կարգն ու կրոնը վերացնելու համար:

Այսպիսով, Պարսից Ալեքսանյան թագավորը, տեսնելով իր  
տարած այնքան հազթությունները և վարած երեք պատե-  
րազմների հաջողությունը (թեպետև սկզբում Մանազկերտը  
անառիկ մնաց<sup>218</sup>, բայց շատ գավառներ սրով ու զերութեամբ  
քարուքանդ արեց, ապա Անին սրախողխող ու հրաճարակ՝  
ամայի անապատ դարձրեց), այդ պատճառով էլ աներկյուղ ու  
համարձակ դուրս եկավ Հունաց թագավորի դեմ: Բայց նա  
մտքում ուխտել էր, որ եթե սրան բռնի, սիրով ու պատվով  
պիտի ճանապարհ հնի դեպի իր թագավորությունը, և այդ  
ուխտը հաստատել էր երդմամբ, որպեսզի խաղաղություն լի-  
նի Պարսից և Հունաց թագավորությունների միջև: Եվ երբ  
պարզեքես դուրս եկավ նաև այս պատերազմից, ինչ որ կա-  
մենում էր կատարվեց, ումից որ դողում ու զարհուրում էր,  
մի ծառայի պես շղթայակապ կանգնեց իր առաջ, հիշեց Աստ-  
ծու հետ ունեցած իր ուխտը, և վեր կենալով սրան նստեցրեց  
իր աջ կողմում, հավատարիմ բարեկամի պես պատվեց ու  
հետը պայման կապեց, որ «Այսուհետև իմ ու բո միջև թշնա-  
մություն չպետք է լինի, այլ խաղաղությամբ դու կպահես բո  
թագավորությունը, իսկ մենք՝ պարսկական տերությունը,  
բայց ինչ որ ես պատերազմով վերցրի, կմնա ինձ, և այլևս  
ձեր երկրի վրա չենք արշավի»: Եվ մեծ պատվով նրան ճա-  
նապարհ գրեց: Սրանից հետո երբ տեսավ, որ նա դավաճա-  
նությամբ իր նախարարներից բռնվեց, աչքերից զրկվեց ու  
իր թագավորությանը չհասավ, այլ տանջահար մեռավ, ալե-  
կոծված ու բարկությամբ լցված՝ ուղեց իր սիրելու վրեժը  
լուծել, բայց մահը հասավ նրան, և նա անցնելով այս աշ-  
խարհից՝ բոլոր հողածինների հետևից գնաց այնտեղ, ուր  
թագավորներն ու աղքատները միասին են լինում:

ՍՈՒՅՆ ԳՐՔԻ ՉԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Ինչպես առիթ ունեցանք կարճապես խոսելու Աստծու նա-  
խագիտության ու անբավության մասին, այնպես էլ անհրա-

ժեշտ ենք համարում մեր սիրելի եղբայրներին հիշեցնել ու բացատրել հայանի ու ծանոթ դիպվածներ. թե ինչպես արագանաց ու աշխարհայաց, գեղեցիկ ու լուսավոր տարրը (արեգակը), որ մինչդեռ կատարելապես պայծա՜ն իր ճանապարհի մեջտեղում էր գտնվում և երկրի վրայով ճեպընթաց շտապում էր անստվեր կիսագնդով: Բազմաժամանակյա մեղքերից նյութված լայնատարած պատմուճանը իր վրա առնելով՝ այնպես թանձրամած պարուրվեց նրանով, որ նրա ճառագայթների անօրինակ փայլը խափանվեց. նա, որին աշխարհը կարողանում համարձակ նայել, աստղերից նվազ դարձավ, և միայն շրջանակն էր երևում: Նա իր օրինակով ցուցադրում էր եկեղեցու լուսավոր ու անստվեր կարգերի խավարով պատվելը և հոգու պայծառութիան ու առաքինութիան ճառագայթների անտեսանելի ու աղջամղջային դառնալը: Որովհետև, ինչպես սկզբում ասացի, դրանից հետո, որը հայոց շորս հարյուր ութսուներկու թվականն էր<sup>219</sup>, մինչև այժմ սուրբ ուխտն ու եկեղեցական կարգերը քայքայվեցին ու տպականվեցին, և ո՛չ խաղաղութիան կամ բարօրութիան ավետիք լսեցինք, ոչ էլ թագավորների ու իշխանների հաղթութիան որևէ արձան կանգնեց: Եվ ոչ միայն այդ. կրոնավորները չկորոզացան դիմակայել շարասիրտ դեկն, այլ տկարացած ու անզորացած, անժուժկալ զարձած՝ խոտորվելով ընկան թշնամիների ձեռքի տակ. երկիրը ծայրեծայր լցվեց խոռովությամբ ու շարությամբ. կամաց-կամաց ճշմարիտ մարդարեութուն դարձավ արեգակի խավարումբ. այնուհետև թըշնամիները հարձակվեցին մեզ վրա, մեզ հագցրին սգի ու տրտմութիան հանդերձ, և ուրախությունը վերացավ աշխարհից:

Եվ այսպես, աշխարհահեծ տառապանքներ, թշվառութուն ու աղետներ տարածվեցին ամբողջ երկրով մեկ, բորբոքվեց հարավային կրակը, այրեց բարձրաբերձ բերդերը և անմատչելի աշտարակները մոմի պես հալելով ոչնչացրեց, պակասելով նվազեցին թագավորներն ու իշխանները, և փրկութիան հույսը վերացավ մեզանից: Ընդհանրապես մեզ վրա տարածվեց տիրոջ բարկութունը. ազոթատներն ավերվեցին, և սուրբ յուզով օծված քարերով զրվեցին այլազգիների ապա-

րանքների հիմքերը. սուրբ պաշտամունքը մեջտեղից վերացավ, ծաղր ու նախատինք դարձանք հեթանոսներին. մաշվեցինք, կորացանք ու հողին հավասարվեցինք, դարձանք ցամաքած ոսկորների պես, որոնց մեջ չկա ո՛չ շնչի և ոչ էլ կենդանութիան հույս. մեր նախնիների հանցանքներն ամբողջապես մեզ վրա ընկան, որոնց համար յոթնապատիկ հատուցեցինք, որովհետև քրիստոնեությունն անունը ենթարկված էր նախատինքների, ծաղրուծանակի: Օրենքն ու արդարությունը վերացան մեզանից, և մեր արտասուքներին ու հառաչանքներին տեղ չկար, որովհետև նրանց բարեպաշտությունն էր մեզ զըրկելը, կողոպտել ու սպանելը: Նրանց դուր չէր գալիս մեր ամոթույթը ծածկող անհրաժեշտ զգեստը, և երբ տեսնում էին մեզ մերկ ու խալտառակ, ավելի էին հրճվում. մեզ հասած անթիվ վշտերից հալումաշ եղած, չորացած՝ երկրի վրա շրջում էինք սավերների պես, դողահար ու զարհուրած. մեր տերերի ա՛հ ու սարսափից մեր կերակուրը անզոր էր, իսկ ըմպելիքը՝ դառն, որովհետև նրանք չէին գտնում, թե մենք Աստված ունենք երկնքում, կամ մեր աղոթքն ու պաղատանքները կհասնեն նրան: Աստված կամեցավ այգայիսի խոշտանգումներով լլկել, հալածել ու շարշարել մեզ, բոլոր հասակներին էլ տանջանքի ենթարկել, որպես հանցավորների ու պատժապարտների արտաքսել, մերժել իրենից, ցրել ու տարագիր դարձնել օտար ազգերի մեջ, որպեսզի թերևս կարողանա մեր ստամբակ, անհնազանդ ու սանձարձակ բնությունը զսպել, ենթարկել մեզ իր խրատի գավազանին, ինչպես Իսրայելը՝ Նղիաշի, իսկ Սամարիան՝ Նղիսեի օրերում: Համենայն դեպս, նրանք ունեին հույսի մի նշույլ՝ թագավորների ու իշխանների խնամակալությունը և, որ ամենից զխավորն է, մարգարեների բարեշնորհ ու ավետաբեր պատգամները, որոնցով գոտեպնդվում էին և կարողանում էին դիմակայել տիրոջ հասած փորձություններին ու նեղությունը: Մեր բոլորից ավելի ծանր է ու մեծ. ըստ հոգու և ըստ մարմնի՝ անթագավոր ենք ու անիշխան, անտերունչ ու անխնամակալ և շենք կարող գտնել ապաստանի մի տեղ. տկարացած ու հնազանդված մենք ենք հեթանոսների իշխանութիան ներքո և օրըստօրե ընդունում ենք հեթանոսների իշխանութիան ներքո<sup>220</sup>. քանի



որ շժառայեցինք տիրոջը, պիտի ծառայենք այլազգիներին, քամահրեցինք տիրոջ երկյուզը, օրըստօրե պիտի տազնապենք սրանց երկյուզով. որովհետև տիրոջը պաշտեցինք հեղափոխեմ, գիշեր ու ցերեկ պիտի պաշտենք ու սպասավորենք սրանց: Նա դեռ ըստ մեր հանցանքի չպատժեց մեզ, այլ գթությամբ ու ողորմածությամբ դեցեց խրատի բովի մեջ՝ մեզ սթափեցնելու և պիտանի դարձնելու համար:

Եթե մեր մեղքերը դնես կշեռքին, ավելի ծանր կլինեն, քան այն պատիժները, որ քեզնից ընդունեցինք, և պատուհասները ավելի թեթև են, քան մեր հանցանքները. ամեն տանջանքի ու տառապանքի ենթարկի՛ր մեզ, տե՛ր, սակայն մի՛ լքիր, ամեն փորձություն ու աղետ բե՛ր մեզ վրա, միայն քո սիրուց մի՛ զրկիր մեզ, տե՛ր. ավելի լավ է ընկնել քո ձեռքը և քեզանից ստանալ խրատ ու պատիժ, քան թե քեզանից անպատիժ հեռու մնալ. ավելի լավ է քեզ մոտենալ շարժարանքով ու նեղությամբ, քան թե քեզանից հեռանալ ու ապրել անդորր ու հանգիստ. բավական է մեզ, որ պատվական արյամբդ դառնալով քո նոր ուխտի ժողովուրդն ու համարվելով ժառանգությունդ, քո սուրբ անունն ենք կրում մեզ վրա: Արդ, արարչական կամքիդ հաճությամբ ձեռքից մի՛ թող մեզ, որ քեզ ատելի հեթանոսներից անվերջ շտանջվենք, որովհետև այս բոլորը և ավելի, քան այս մատչանում գրի առածս, մեր գլխին եկան մեր մեղքերի պատճառով:

Եվ այսպես, բավական համարեցինք գրել մեր օրերում կատարված ամբողջ իրարանցումն ու աղետները և այն ամենը, ինչ որ պատահեց, ինչ որ կրեցինք հեթանոսներից, ներկայացնել ըստ յուրաքանչյուր տեղի, գավառի ու քաղաքի առանձին-առանձին: Որովհետև ոչ մի օր ու ժամանակ անդորրություն ու հանգիստ չտեսանք. մեր կյանքի բոլոր ժամանակները լի եղան խռովությամբ ու նեղությամբ, և օրըստօրե միայն ավելացան շարժարանքներն ու տառապանքները: Թեպետև շատ տարիներ ապրեցին մեզ մոտ, սակայն նրանցից ոչ մեկը բարեմիտ չեղավ մեր նկատմամբ. օձի պես նրանց բարկությունը երբեք չզսպվեց, և կրակի պես չհագեցավ նրանց ազահությունը. նրանց միտումները միշտ շար էին մեր հանդեպ, իսկ խոսքերը՝ նենգությամբ լի: Ամեն

առավոտ սկիզբ էր գրվում նոր աղետների, որովհետև նրանց բոլորի նպատակն էր բնաջնջել մեզ իբրև հնացած ձորձեր, վերացնել մեր հիշատակը իրենց միջից, որպեսզի բնավ չնայեն ու չտեսնեն մեզ կենդանի, այլ մեր գերեզմանները անհետանան իրենց ստների տակ:

Այդ պատճառով էլ պետք է լինեին հին ժամանակագիրները, որ անսխալ ի մի բերելով ներկայի ու անցյալի դեպքերը՝ ըստ պատշաճին ու իրենց վայելուչ լեզվով շարագրեին այս երկը, իրենցից հետո թողնելով կատարված իրադարձությունների հիշատակները. դրան վկա է մեր նախնիների պատմագրությունը: Իսկ ինչ որ գրվեց այս մատչանի մեջ, լրիվ չէ, այլ միայն եղած, մեր գլխով անցածների սկիզբն է, որովհետև ամբողջ կատարվածը մտաբերել ու գրի առնել չկարողացանք. իսկ այս ամենը ներկայացրինք նրա համար, որպեսզի ընթերցելով դուք իմանաք, որ մեզ պատահած բոլոր փորձությունների պատճառը մեղքերը եղան, որ նայելով մեզ՝ զարհուրեք ու վախենաք տիրոջից, զողաք նրա զորության ահից, նախօրոք խոստովանություն մեր և ապաշխարություն կանխեք պատուհասները և ոչ թե գալուց հետո դիմակայեք նրանց...

## ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մինչև 17-րդ դարը Արխատկեսը կոչվել է կաստիվեցի, սակայն հետագայում այդ անվանումը ազավազվել է՝ դառնալով կաստիվարզեցի, կաստիվարթեցի, կաստիվերզեցի, կուստովարզացի, կաստիվեր, կաստիվերտացի, կաստիվերացի:

Ըստ հեղինակի գործերի և նրա մասին հիշատակող մեր այլ մատենագիրների հին ձեռագրերի վերականգնում ենք Արխատկեսի վերադիր անվան ճիշտ ձևը՝ կաստիվեցի: (Մանրամասնությունները տե՛ս «Պատմա-քանասիրական հանդես», Երևան, 1967, № 1, էջ 134—136):

2. Ձեռագրերում այս վերնագիրը միացած է Պատմության խորագրին՝ Վենետիկյան առաջին (1844) հրատարակությունում այստեղ գրված է «Նախերգանք», իսկ վերնագիրը գրված է որդական հատվածից հետո, որտեղից և սկսվում է Ա գլուխը: Պատմության վերջին հրատարակության մեջ «Նախերգանք» վերնագիրը իրավացիորեն դուրս է գցված, իսկ ամբողջ նյութը վերցված է Ա գլխի տակ:

3. Հեղինակը, լինելով եկեղեցական, այս կյանքը համարում է անցողիկ, ւյանդիստական, իսկ «ճանդերծյալ կյանքը»՝ մշտնջենական:

4. Նկատի ունի յոթ «թափառող» լուսատուները, որոնք անդին աչքով երևում են: Յոթնաստեղք կոչված այդ լուսատուները ունեն իրենց հայկական անունները՝ Լուսին, Փայլածու, Լուսարեք, Արեգակ, Հրատ, Լուսրեթագ, Երևակ (գասավորությունը ըստ երկրից ունեցած հեռավորության):

5. Պատմության (աշխարհարար) նախորդ թարգմանիլը՝ Մ. Տեր-Պետրոսյանցը, բրայց ժամ է մեզ ի գլուխ պատմութեանս ընթանալ, և աստի սկիզբն առնել, որպես զի դիրաճան լիցի մեզ բանս» հատվածի ընդգծված տողը սխալմամբ թարգմանել է. «Որպեսզի մեզ հայտնի լինի պատճառը» (էջ 5):

6. Դավիթ Կյուրոպաղատը (մահ. 1000 թ.) գլխավորում էր Տայթի հայ-վրացական իշխանությունը: Ստեփանոս Տարոնեցու տեղեկությունից երևում է, որ նա օգնել է Վասիլ 2-րդին՝ պարտություն մատնելու ապու-

տամբ Վարդ Սկերեսին (976—79), որի համար որպես պարզև ստացել է հազոտ Առիճը, Բասենը, Հարթը, Ապահունիքը և այլ տեղեր («Պատմութիւն տիեզերական», Մ. Պետերբուրգ, 1885, էջ 192): Հավանաբար այդ ժամանակ է նրան տրվում կյուրոպաղատ կոչումը: Հետագայում Դավիթը գրավում է Մանզկերտը, այն լցնելով հայ և վրացի բնակչությամբ: Ասողիկը նրան կոչել է Դավիթ հայոց կյուրոպաղատ (էջ 266):

Ասողիկը հայտնել է Կյուրոպաղատի մահվան թվականը (հայոց 449 թ.), իսկ Վասիլ 2-րդի դալու և վերագառնալու ժամանակի մասին պարզորոշ չի հաղորդել: Լաստիվեցիին, ընդհակառակն, որոշակի էլ է Վասիլի և՛ գալը (նրա թագավորության 25-րդ տարին), և՛ նա վերագառնալը (հայոց 450 թ.): Լաստիվեցիին գիտի այլ մանրամասներ, որոնք չի հաղորդել Ասողիկը:

7. Բյուզանդական հայազգի կայսր Վասիլ 2-րդի (976—1026) թագավորության 25-րդ տարին 1000 թվականն է (Ասողիկը նրա թագավորության սկիզբը դնում է հայոց Նին (425) թ. (էջ 187, 190), 25-րդ տարին կլինի հայոց 449 թ., հետևաբար՝ 1000 թ.): Վասիլը ձևավորում էր Կիլիկիայի Տարսուս քաղաքում, երբ ստացվում է Դավիթ Կյուրոպաղատի մահվան լուրը: Անմիջապես նա դալիս է Տայթ՝ գրավելու կտակված հողերը: Ուրեմն, Կյուրոպաղատի մահը և Վասիլ 2-րդի Տայթ գալը սերտորեն կապված են իրար հետ: Ըստ Ասողիկի, Կյուրոպաղատը մահացել է հայոց 449 թ. Ձատիկին (էջ 449), իսկ այդ տարվա Ձատիկը համընկնում է 1000 թ. մարտի 31-ին: Սամվել Անեցին նրա մահը դրել է 1000 թ. (Հաւաքմունք ի գրքց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 104): Հայտնի առնելով նաև Լաստիվեցու հավելումը, կարելի է եզրակացնել, որ Դ. Կյուրոպաղատը մահացել է 1000 թ. մարտի 28-ին, որից փչն անց, նույն տարին, Վարդավաթի տոնից հետո (Ասողիկ, էջ 276), Տայթ է եկել Վասիլ 2-րդը: Իսկ 1001 թ. սկզբներին նա վերադարձել է Կ. Պոլիս:

Այստեղ և հետագայում հառոճ՛ առնելով հեղինակը նկատի ունի բյուզանդացիներին:

8. Բարձր Հայթի ինը գավառներից մեկն է, որն այժմ իր տեղադրումը համապատասխանում է Երզնկայի սարահարթին: Եկեղյաց կամ Եկեղիք գավառի պատմական նշանավոր վայրերից են Երիզա քաղաքը, որն այժմ կոչվում է Երզնկա, և Քիլ գյուղը կամ ավանը:

Ամենայն հավանականությամբ Վասիլ 2-րդը իր արշավանքի վերջում, Կարին—հազոտ Առիճ—Կ. Պոլիս ընթանալիս, անցել է Եկեղյաց գավառի Երզնկա կամ Երիզա քաղաքով: Եվ բանի որ ըստ Լաստիվեցու Արշամունիքում չէր մյուս Երիզան, այլ Հայտենից գավառում, ուստի նա փորձել է շտկել Ասողիկի հաղորդած տեղեկությունը:

9. Լուսնային և անտառապատ Տայթը «չըբջայտված էր արևմուտքից՝ Պոնտոսով, հյուսիսից՝ Լազիկայով և Եգեթթով (Ալբարիա), հյուսիս-արևելքից ու արևելքից՝ Գուգարքի Կղարջք և Այրարատի Վանանց գավառներով, իսկ հարավից՝ Բարձր Հայթով և Այրարատի Բասեն գավառով»: (Տե՛ս

Ք. Հակոբյան, «Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրություն»  
Երևան, 1960, էջ 255):

10. Լաստիվերցին երկու անգամ է հիշատակել Աղորի աշխարհը կամ  
գավառը և այնտեղ գտնվող Հավաճիչ բերդաքաղաքը:

Ուսումնասիրողների մոտ հակասական կարծիքներ կան: Ըստ Չամչ-  
յանի (նշվ. աշխ., հտր. Բ, էջ 881, 962, հտր. Գ, էջ 161) Աղորին մի  
փոքր գավառ է Տուրուբերանում, իսկ Հավաճիչը գտնվում է այդ գավա-  
ռում: Ինժինյանը (նշվ. աշխ., էջ 375) կարծի է, որ Լաստիվերցու մոտ  
Աղորին վրիպակով է, պետք է լինի Ագուրի, որը Տայրի մի գավառն էր  
2. Տաշյանը կտրականապես մերժել է այս «ուղղումը» («Հայ բնակչու-  
թյունը Սև ծովն մինչև Կարին», Վիեննա, 1921, էջ 63):

Քանի որ Վասիլ 2-րդը այդ ժամանակ Արշամունյաց գավառի ներ-  
գալում էր (ծան. 8), ուրեմն բնական է, որ նա այնտեղից պիտի դեռ  
Տուրուբերանի Հարք գավառը, ինչպես այդ կա Ասողիկի և Լաստիվերցու  
մոտ: Նա իր ուղևորության վերջում է անցել բուն Տայրով: Որպես լրա-  
ցուցիչ փաստ կարող ենք նշել Լաստիվերցու հաջորդ վկայությունը, որից  
պարզվում է, որ Լիպարիտի որդի Իվանեն իր գործողությունները ծավա-  
լել էր ոչ թե Բարձր Հայրում կամ Տայրում, այլ Տուրուբերանում, որտեղ  
էին նաև Աղորի գավառն և Հավաճիչ լեռը: Ուրեմն, Լաստիվերցու բնագրի  
հիշյալ հատվածում վրիպակ չկա, իսկ Աղորի աշխարհը կամ գավառը և  
Հավաճիչ լեռն ու քաղաքը (Ասողիկ), բերդն ու քաղաքը (Լաստիվերցի)  
գտնվում էին Տուրուբերանում, այսինքն՝ Տարոն աշխարհում՝ ինչպես այն  
հաճախ անվանվում էր: Այս կապակցությամբ ուշագրավ է արար պատմիչ  
Իրն Զաֆիրի հաղորդածը. Կարին քաղաքի արարական ուժերի ղեմ՝ պոյ-  
թարելու համար բյուզանդացիք նրա դիմաց կատուցել էին մի նոր քա-  
ղաք, որը կոչվում էր Հավճիչ (արար. «Հաֆչիչ»): (Տե՛ս Ա. Տեր-Ղևոն-  
դյան, «Արարական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում»,  
Երևան, 1965, էջ 162: Այստեղ Հավաճիչը զրված է Տուրուբերանի Մար-  
գաղի գավառում, էջ 223, նաև՝ 96 էջի քարտեզը):

11. Խոսքը ռուսական զորացնդի մասին է, որը մասնակցում էր Վա-  
սիլ 2-րդի ձեռնարկած արշավանքներին: Ասողիկը պատմում է (էջ 276—  
77), որ ռուսաց զորս (վեց հազար, ըստ Լեոյի՝ հազար, նշվ. աշխ., էջ  
631) հետևազոր կար այնտեղ, որոնք զինված էին նիզակով և վահանով:  
Վասիլը այդ զորքը վերցրել էր ռուսաց թագավորից (ի՞՞մա՛՛ Կիևյան իշխան  
Վլադիմիր Սվյատոսլավիչից, որի հետ խնամական կապերի մեջ էր:  
Կայսրը իր բրոշը՝ Աննային, կնուսթյան էր տվել նրան:

12. Այստեղ պատմիչը ակնարկել է կայսրի խոստացած ապագա պար-  
զների մասին, որոնց էլ սպասում էին: Այսինքն՝ Վասիլ 2-րդը ինքն էլ  
էր խառը Գ. Կյուրոպաղատին թունավորելու գործում, նա պարզեներ էր  
խոստացել, մի բան, որ իրապես կատարեց:

13. Գուրգենը (994—1008)՝ Բագարատ 3-րդի (978—1014) հայրը, իշ-  
խում էր Շավշեթ-Վղարշքում, Մամիսեում և Վերին-Ջավախում: Արխա-  
ղիայի թագավոր Բագարատ 3-րդը պայթարով միացնելով Քարթլին, Արև-

Պոլոյան Վրաստանը, Տառ-Կղարշքը, Կախեթի-էրեթին, ստացավ Քաղա-  
վոր Ախիսազաց և Վրաց տիտղոսը, հիմք դրեց միացյալ Վրաց պետու-  
թյան:

14. 11-րդ դարում Բյուզանդական կայսրության մեջ գոյություն ունե-  
ր պաշտոնյաներին տրվող 15 աստիճան՝ հաշված բարձրից ցածր՝ կետք,  
սելվաստ, նոմոլեոսիմոս, կյուրոպաղատ, պրոտոպրեկերոս, պրոնդրոս, մա-  
գիստրոս, վաստարքոս, վեստ, անթիպատ, պատրիկ, պրոտոպաֆիարխոս,  
սպաթարխո-կանդիկատ, սպաթարխոս, կանդիկատ (Н. Скабаланович.  
«Византийское государство и церковь в XI веке», С.-Петербург,  
1884, էջ 149—156):

Դավիթ Տաշեցուն, Գրիգոր Պահլավունուն, Անի-Շիրակյան թագավորու-  
թյան կործանման գործում (1045) ակտիվ դեր խաղացած Մարգին և  
ուրիշների տրված բյուզանդական համապատասխան աստիճանը հաստի-  
քառնում է նրանց համար մականուն՝ Դավիթ Կյուրոպաղատ, Գրիգոր  
Մագիստրոս, Վեստ Մարգին և այլն:

15. Հարքը Տուրուբերան նահանգի 9-րդ գավառն է, այժմ համապա-  
տասխանում է Բուլանիի շրջանին: Ըստ Մովսես Խորենացու՝ այս գավառը  
իր անունը ստացել է Հայկ նահապետից: Հարքը 9—11-րդ դարերում թե-  
ղրական շարժման կարևոր կենտրոններից էր:

16. Մանազկերտը գտնվում է Հարք և Ապահունիք գավառների սահ-  
մանադիմից, նիքրատի վտակ Արածանիի մոտ, աճա թե ինչու այն եր-  
բեմն հաշվում են Հարքի, երբեմն՝ Ապահունիքի մեջ: Լաստիվերցին մեկ  
այն համարում է ամուր բերդ ունեցող քաղաք Տուրուբերանի Ապահունյաց  
գավառում, մեկ անվանում է Մանազկերտի գավառ:

Արարական Սուլայմ ցեղին պատկանող կայսիկները 9-րդ դարում գրա-  
վում են Մանազկերտը, որը նրանց ամիրայության հիմնական կենտրոնն  
է զուտում: 968—969 թ. Բյուզանդիան զրավում է Մանազկերտը, հիմքից  
կործանում նրա պարիսպները: Վարդ Սկլերոսի ապստամբության (970—  
79) ճնշմանը օգնելու համար Մանազկերտը ևս տրվում է Կյուրոպաղա-  
տին, որի մահից հետո Տայրը և նրան նվիրած բոլոր հողերը, այդ թվում՝  
Մանազկերտը, Վասիլ 2-րդը միացնում է Բյուզանդական կայսրությանը:  
Լաստիվերցին մանրամասնորեն պատմում է 1045 թ. Տուրքիլի գլխավորու-  
թյամբ թուրք-սելջուկների կողմից Մանազկերտի պաշարման, քաղաքի հե-  
րասական պաշտպանության և թշնամու ետ նահանջելու մասին: 1070 թ.  
սելջուկյան հաջորդ սուլթան Ալի-Արսլանը զրավում է Մանազկերտը, գա-  
ժանորեն լուծում իր հորեզոր այնտեղ ունեցած անհաջողությունները, գա-  
ժանորեն լուծում իր հորեզոր այնտեղ ունեցած անհաջողությունները (1068—71) ետ է նվա-  
ճում Մանազկերտը, իսկ 1071 թ. այս քաղաքի մոտ նա մեծ պարտու-  
թյուն է կրում Ալի-Արսլանից և զերեվարվում: Տե՛ս ծան. 213:

17. Բագրևանդը գտնվում է Այրարատ նահանգում, այն Բագրատու-  
նիների տոհմական գավառն էր: Այժմյան Ալաշկերտի դաշտը ընդգրկում  
է Բագրևանդի տերիտորիայի մեծ մասը:

18. Ուխտեր (այժմ՝ Օլթի) քաղաքը գտնվում է Տայքի Ութաղի կամ Ուխտեր գավառում: Լաստիվերցին աչն կոչել է քաղաք և մեծ ավան, որն ունի զեղեցիկ դաստակերտ:

19. է. Պրյուգոմը Լաստիվերցու Պատմության ֆրանսերեն թարգմանությունում (Histoire d'Arménie... par Aristaguès de Lasdiverd, Paris, 1864) ծանոթագրել է (էջ 11, ծան. 3), որ Վասիլի տիրապետության 25-րդ տարին համընկնում է 1000 թ., իսկ Լաստիվերցին այն ղեկավարում էր հայոց 450 (1001) թ., փաստորեն մեկ տարվա սխալ է թույլ տվել: Սակայն Լաստիվերցու մոտ 450 (1001) թ. ոչ ին Վասիլի գալու, այլ ետ ղնալու թվականն է (ծան. 7):

Խաղաղության տասնչորս տարին պատմիչը հաշվել է հայոց 450 (1001) թ. մինչև հայոց 464 (1014) թ.:

Այս ժամանակ Վասիլին հաջողվում է հաղթել բուլղարներին և ազատորեն զբաղվել Հայաստանի ու Վրաստանի հարցով: 1014 թ. մեռնում է Միխայիլայի և Վրաստանի թագավոր Բագրատ 3-րդը, նրան փոխարինում է որդին՝ Գեորգի 1-ինը (1014—1027 թ.): Գեորգին 1015 թ. ապրտամբություն է բարձրացնում Վասիլի դեմ, նպատակ ունենալով ետ գրավել Տայքը: Նրան է միանում Անիի թագավոր Հովհ.-Սմբատը: Ինչպես երևում է Լաստիվերցու ասածից, Վասիլը Կյուրոպաղատի բաժնից հողեր էր տվել Բագրատ 3-րդին, որոնց տիրանալ է ուղում Գեորգին Վասիլը գործ է ուղարկում նրա դեմ, այնուհետև արշավում է ինքը:

20. Բագրատունյաց թագավորության վերջին հզոր թագավորն էր Գագիկ 1-ինը (990—1020), Աշոտ 3-րդի (953—977) որդին, Սմբատ 2-րդի (977—990) հորախն ու հաջորդը: Նրա մյուս եղբայրը՝ Գուրգենը, 982 թ. ժամանկում է Տաշիրը, Տավուշը և Կաշանը՝ հիմք դնելով Կյուրիկյան թագավորությանը: Գագիկ 1-ինը Լաստիվերցու իրեն թագավորն է: Նա ողբալով Հայոց աշխարհի կործանումը, երազել է հատկապես Գագիկի տիրապետության ժամանակը, երբ Հայաստանը իսկապես գտնվում էր բարվոք վիճակում: Ըստ պատմիչի՝ նրա թագավորության վերջում (չորս 14 տարի) խաղաղություն է տիրել երկրում, թերևս այս պատճառով էլ մեզ հասած աղբյուրներում քիչ բան կա այդ ժամանակի մասին: Սակայն զարմանալի է, որ Լաստիվերցին չի նշել Գագիկի մահվան, Հովհ.-Սմբատի ու Աշոտի թագավորելու կոնկրետ ժամանակը: Արդյոք սա չի՞ հուշում, որ եղել է մեզ չհասած հանրահայտ մի գործ, որտեղ արդեն զբրված է եղել այդ ամենը, որից և օգտվել է Լաստիվերցին՝ շխտանալով մանրամասներին մեջ:

21. Կաթողիկոս Սարգիս Ա Սևանցի (992—1019), նրա պատմերով Ասողիկը գրել է իր «Տիեզերական պատմությունը»:

Սարգիսը Լաստիվերցու իրեն կաթողիկոսն է, որին մեծարում է Ասողիկի ձևով: Պատմիչը քննադատում է իր ժամանակի դրամաշորթ շատ հոգևորականների, միշտ հակադրելով նրանց Սարգիս Սևանցուն և նրա օրերի վարդապետներին: Ըստ Լաստիվերցու հայոց 468 (1019) թ. Սար-

գիսը (անշուշտ՝ ծերության պատճառով) հրաժարվում է կաթողիկոսությունից՝ իր փոխարեն օծելով Պետրոսին:

22. Պատմության ձեռագրերում ավանդված կան Տիրան անուն և Տիրանոն ընթերցումները: Ուսմանցին Գագիկ 1-ինի ժամանակի նշանավոր վարդապետներից հիշատակել է նաև Տիրանոն իմաստասեր Կապանեցուն (Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 105, 179), որը հավանաբար Լաստիվերցու նշած Տիրանոն վարդապետն է:

23. Կամրջաձորի վանքը (ըստ բնագրի՝ «Կամրջացն ձորու վանք») գտնվում էր Այրարատյան նահանգի Արշարունյաց գավառում:

24. Հնձուց վանքը գտնվում է Բարձր Հայքի Կարին գավառի Հինձր գյուղի մոտ: Այն կոչվում է նաև Կարմիր վանք:

25. Ստեփանոս Տարոնեցին կոչվել է նաև Ասողիկ կամ Ասողիկ, ինչպես կարծել են, լավ երգ ասած լինելու կամ լավ տաճունք ունենալու համար: Այսպես բարձր գնահատելով Ասողիկի Աշխարհապատումը (իմա՝ «Պատմություն տիեզերական» կամ «Պատմություն ժամանակաց»), Լաստիվերցին 1000—1004 թ. պատմական զեպրեթի մասին գրելիս օգտվել է նրանից: Նկատվում է նաև ոճական ազդեցություն:

Լաստիվերցու այս տեղեկությունը տարակուսել է, քանի որ Ասողիկը իր Պատմությունը ավարտել է Գագիկի (իմա՝ Գագիկ 1-ին) մահով (1020): Այս մասին Ասողիկի Պատմության ռուսերեն թարգմանության առաջարկում գիտողություն է արել Մ. Էմինը (Всеобщая история Степанаос Таронского Асохика по прозванию, М., 1864, էջ VII—VIII): Ստ. Մալխասյանցը փորձել է բացատրել՝ տրպես թե ասված է մինչև Գագիկը ներառյալ՝ («Ստեփանոսի Տարոնեցու Ասողիկան Պատմություն տիեզերական», էջ ԻԴ):

Այնուամենայնիվ, հարցը մնում է վիճելի, քանի որ Լաստիվերցին լավատեղյակ է եղել, որ Ասողիկը սկսել է Աղամից (գրքի այդ մասից պակաս կա) և ավարտել է հիշատակված ձևով: Ասողիկը, երկար ապրելով, կարող էր ինչ-որ նյութ վախճանել իր Պատմության վերջում:

26. 11-րդ դարի նշանավոր վարդապետ Հովհաննես Տարոնեցին Կոզնոն (ուղտի ձաղ) մականունը հավանաբար ստացել է շատ ծերազրելու պատճառով (Ալիշան, Հայագատում, էջ 89): Հովհ. Կոզնոնը ուղեկցել է Պետրոս Ա կաթողիկոսին, երբ վերջինս գնաց Տրապիզոն՝ Անիի վերաբերյալ հետկարք ստորագրելու: Նա մասնակցել է տոմարական վեճերի, գրել Տոմարի մեկնություն, Վարդավառի տոնակատարման վրա մի երկար զրվածք, ինչպես նաև՝ Հավատո գիրք և հանրահայտ «Տեսիլ»-ը, որի վրա զգացվում է Լաստիվերցու Պատմության ազդեցությունը:

Կյանքի վերջին տարիները Հովհաննես Կոզնոնը անց է կացրել Երվանդում, որտեղ մահացել է և թաղվել հետագայում իր անունով կոչված «Կոզնոն գերեզմանոցում»: Այդտեղ կառուցվել է մատուռ՝ «Կոզնոն մատուռ» (Ս. Շահադիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 1187—88):

27. Կարինի է ենթադրել, որ պատմիչի խոսքը վերաբերում է Գրիգոր Նարեկացուն (951—1003): Բնագրում ասված է՝ «Գրիգոր յոյժ իմաստունն բանիւք», որը ոչ միայն նշանակում է՝ խոսքերով իմաստուն, շափազանց բանաբետ, այլև՝ շատ իմաստուն իր գրավոր խոսքերով, ստեղծագործություններով: Ուշագրավ է, որ Ուոհայնցին (էջ 179) Գաղիկ 1-ինի ժամանակի նշանավոր վարդապետների թվում չի հիշատակել ուրիշ Գրիգոր վարդապետի, բացի Գրիգոր Նարեկացուց:

28. Հովհաննես-Սմբատը (1020—1041) Անի-Շիրակյան Բագրատունյաց թագավոր Գաղիկ 1-ինի (990—1020) ավագ որդին էր. մարմնով խոշոր ու հաստ, դանդաղաշարժ, պատերազմական գործին անընդունակ, սակայն, ինչպես վկայում են աղբյուրները, խելացի ու շինարար: Աշոտը (1020—1041) նրա հակապատկերն էր՝ գործարար, ազգիկ, իսկապես այնպիսին, որի կարիքն այն ժամանակ Հայոց աշխարհը խիստ զգում էր: Սակայն, համաձայն ընդունված կարգի, թագավոր է դառնում ավագ որդին՝ նրա և Աշոտի միջև սկսվում են գահակալական վեճեր: Սպարապետ Վահրամ Պարզավունին, Արիստակիսի և Վրաստանի թագավոր Գեորգի 1-ինը (1014—1027) միջնորդում են ու հաշտեցնում նրանց: Հովհաննես-Սմբատը թագավորում է Անիի և շրջակա զավառների վրա, իսկ Աշոտը՝ «գուրջ աշխարհում»՝ Անիից ու Շիրակից գուրջ գտնվող տեղերում, որոնք սահմանամերձ էին Պարսկաստանին և Վրաստանին (Թեքեա՝ Սևանա լճի ավազանը, Արագածոտն, Նիզ, Կոտայք և այլ զավառներ):

29. Շատիկ բերդը գտնվում էր ձակասք զավառում (Ասորիկ, էջ 188), իսկ ձակասք զավառ եղել է և՛ Այրարատում, և՛ Տայրում: Չամչյանը (նշվ. աշխ., հտր. Բ, էջ 866, հտր. Գ, էջ 164), Ինճիճյանը (նշվ. աշխ., էջ 443), Արիշանը (Այրարատ, էջ 124) Շատիկը զրել են Այրարատ նահանգի ձակասք զավառում: Անիի թագավորները, ինչպես երևում է, շատ էին ձգտում տիրել Շատիկ ամրոց բերդը: Գեոևս Սմբատ 2-րդը (977—990) այն խլում է Կարսի թագավոր, իր հորեղբայր Մուշեղից (962—984/85), միայն Տայրի Կյուրոպաղատի միջնորդությամբ է ետ վերադարձնում:

30. Բարձր Հայրի Կարին զավառի հին և նշանավոր բնակավայրերից է. 387 թ. Հայաստանը երկու մասի բաժանելիս քաղաքն անցավ Հռոմեական կայսրությանը: Կայսրի անունով քաղաքը վերանվանվեց Թեոդոսի քաղաք՝ Թեոդոսուպոլիս:

7-րդ դարից այստեղ հաստատվեցին արաբական զորքեր՝ զարմնելով այն կարևոր հենակետ ընդդեմ Բյուզանդիայի նրկար պայքարից հետո ի վերջո Բյուզանդիան 949 թ. կարողացավ զրավել քաղաքը, մեծ ավերածությունների ենթարկելով այն: Ինչպես վկայում է կաստիկոսիցին, 1018 թ. Բյուզանդիան Նիկոմիդիացի (Փոքր Ասիայի Բյութանիա զավառի քաղաքներից էր Նիկոմիդիան) մի իշխանի ձեռքով վերստին կառուցել է տալիս Կարինը, զարմնելով հենակետ նոր նվաճումների համար: Չնայած ստեղծարական կարևոր ճանապարհների վրա էր քաղաքը, սակայն անընդհատ հարձակումների պատճառով լծազկեց: Թուրք-սելջուկների կողմից

1048 թ. Արձնը կործանվելուց հետո այստեղի բնակությունը տեղափոխվեց Կարին, այն կոչվելով «Հոսոմնների Արձն» («Arzanar-Rum», որից՝ Արզրում, հետո՝ Էրզրում):

31. Պետրոս Ա կաթողիկոսը (1019—58/59), որին հետագայում Գեաղարձ մականունն է տրվել, իր ժամանակի գրասեր անձնավորություններից էր: Նրա պատվերով գրվել են Պատմություն (հեղինակ՝ Հովհ. Տարսեցի), մեկնություն, արտագրվել են ձեռագրեր, նրա անունով մեզ են հասել արձանագրություններ և հիշատակարան, ինչպես նաև՝ Հանգստյան և Մարտիրոսաց շարականներ: Սակայն նա եղել է փառամոլ և արձաթասեր, նպատակ էր Հայաստանում բյուզանդական տիրապետության հաստատմանը, միաժամանակ պայքարել է բաղկեղձությունների դեմ: Կաստիկոսիցին իր Պատմությունում զուսպ, բայց հետևողականորեն քննադատել է նրան:

32. Վաղարշակերտ քաղաքը գտնվում է Այրարատ նահանգի Բագրևանդ զավառում: Այստեղի ազգությամբ վրացի եպիսկոպոսի անունն է Զարարիս:

33. Օկոմին Այրարատ նահանգի Բասեն զավառում Միրանիս կոչված լեռան մոտ հարուստ և մարդաշատ ավան էր, որի շուրջը կային գուղեր և ագարակներ: Չնայած 1021 թ. ավերումին, Օկոմին դարձյալ ծաղկում է: 1055/56 թ. վաղնաստեն ցեղերը արշավում են Բասեն զավառը և Օկոմի ավանում 30 000 մարդ սրի քաշում, ավերում ու թալանում ամեն ինչ:

34. Խաղտիքը կոչվել է ձանիվ (կա և ձանիկ ձևը), վրացերեն՝ ձանեթի, այժմ՝ Լազիստանի Ըստ Աշխարհացույցի՝ Կոզքիս կամ եզեր աշխարհի շուրջ մասերից մեկն է Խաղտիքը կամ ձանիվը, որն ունի Մեգաղոս-Պոտամոս գետը, Խաղտիքը գտնվում է Սև ծովի (Պոնտոսի) հարավարևելյան կողմում, Պարսիս լեռներից հյուսիս-արևմուտք:

35. Պատմության որոշ ձեռագրերում և վեներիկյան տպագրությունում (1844, էջ 9) գրված է, որ Վասիլ 2-րդը «հասանել ի գաւառն Վանայց, կամ ի Փորակ»: Առանձին ձեռագրեր ունեն «հասանել ի գաւառն Կարմիր (Կամիր) Փորակ»: Գեոևս Ինճիճյանը (նշվ. աշխ., էջ 432) կասկածի է ենթարկել այս, ասելով, որ Փորակը ոչ թե նույն Վանանգի այլ անվանումն է, այլ այդտեղ մի ձոր է, կամ ինչ-որ տեղու կաստիկոսիցու Պատմության երևանյան հրատարակությունում (էջ 29) այն ճշտված է՝ «հասանել Վանանգ, ի Կարմիր Փորակ»:

36. Պաղակացիքը (Հյուսիսի ծով, այժմ՝ Զըլզըր լիճ) գտնվում է Վանանգ զավառի հյուսիսում: Վրաց աղբյուրներում այն հայտնի է Ցեկի անունով:

37. Մեծ իշխան Ռատը (Ըստ) վրաց հայտնի զորավոր Լիպարիտ Լիպարիտյանի (1026—58, 1058—64) ավագ եղբայրն էր: 1021 թ. Վասիլ 2-րդը արշավում է վրաց Գեորգի I թագավորի դեմ, Ըստ այլ տեղեկության՝ ճակատամարտը լինում է Շիրիմք գյուղում (Համառոտ պատմություն Վրաց ընծայելու Զուանչերի պատմիչի, Վենետիկ, 1884, էջ 110): Մեծ

կոտորած է լինում, որտեղ սպանվում է Ռատը՝ Լիպարիտ Ճեճր որդին, Լիպարիտ Լիպարիտյանի հորալորը: (Մանրամասնությունները տե՛ս Ս. Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, պետ. համալսարանի Ն. Մառի անվան կարիքների աշխատություններ, № 2, 1947, էջ 103—149):

38. Երբայական շորս մեծ մարդարեններից մեկն է Երեմիան Աստվածաշնչում գեղեցկված են նրա Մարգարեությունը և Երուսաղեմի վերաբերյալ ասված հուշակվոր Ողբը, որը խոր ազդեցություն է թողել կաստիվերցու վրա:

39. Սև ծովի (Պոնտոսի) հարավային ափերին տարածված հռոմեական պրովինցիա Պոնտոս գավառը (Պոնտոս Կապադովկիո) 536 թ. հետո Պոզեմոնական Պոնտոսի հետ միացվեց Առաջին Հայք պրովինցիային: Պոնտոսի Տրապիզոն քաղաքում է 1021 թ. ղեկտեմբերին Պետրոս Ա կաթողիկոսը հանդիպում Վասիլ 2-րդին:

40. Հռոմեոսի վանքը գտնվում է Անիից շորս կմ. ղեպի արևելք, Ախուրյանի ափին, որտեղ երեք վանքեր կան՝ Ս. Հովհաննես, Ս. Գևորգ և Ս. Մինաս: Այլշանը կարծել է, որ ա՛մմյան Ս. Հովհաննեսը կառուցված է նախկին Հռոմեոսի վանքի տեղի վրա (Այլշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 19): Սահալն Քորամանյանը մանրամասն ուսումնասիրելով ուղղել է իսկական Հռոմեոսի վանքը Ս. Մինաս կարծված եկեղեցին՝ և Այս վանքի անունով կոչվել են նաև մյուս երկուսը (Ք. Քորամանյան, Ո՞րն է իսկական Հռոմեոսի վանքը, Այեբջանդրագրություն, 1911): Ժամանակին հուշակված այս վանքը ունեցել է հարուստ մատենադարան, ուսումնարան, աղբարներին հյուրընկալող ասպնչականոց:

41. Հայ մատենագրության մեջ Վրաստանը կոչվել է ոչ միայն Վիրք, այլև՝ Վեոհա, Իվերիա, իսկ վրացիները՝ իվերացիք, վերիացիք: Կաստիվերցին զրել է «Վիրք», «Վրաց», այստեղ՝ «վեոհացոց»:

42. Մոավիզը (իմա՝ Նիկեփոր Փոկաս) Վարդ Փոկասի (ծան. № 46) որդին էր, որը 1022 թ. Քսիֆեսի հետ զլխավորում է փոքրասիական զինվորական ազնվականության ապստամբությունը՝ ընդդեմ Վասիլ 2-րդի:

43. Մաղաղատը գտնվում է Խաղախիում: Այլշանը կարծել է, որ այս բերդը գտնվել է Վերին Բասնում (իմա՝ Վանանդում), հետագայում այն վերանվանվել է Մասսազ (Այլշան, Այբարատ, էջ 23):

44. Ուղմական փառքով հուշակված հայազգի զորավար էր Վարդ Սկլերոսը, որի քույրը բյուզանդական կայսր Հովհաննես Ա Չմշկիկի (969—976) կինն էր: Վարդը 976 թ. Մալաթիայում իրեն հայտարարելով կայսր, երեք տարի շարունակ սարսափի մեջ էր պահում կայսրությունը, նրա զեմ են հանում Նիկեփոր Փոկասի (963—969) եղբոր որդուն՝ Վարդ Փոկասին (ծան. 46):

979 թ. Հալիս գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Սկլերոսը պարտվում է, փախչում, բայց բռնվում է և շղթայակապ տարվում Բագրատ Ազատունի է, զորք հավաքում, փորձում է կովել Վարդ Փոկասի զեմ. վերջինս խաթեությունը բանտարկում է նրան: Փոկասի մահից հետո

ազատվում է, ցանկանում է կովել Վասիլ 2-րդի զեմ, բանակցությունների միջոցով հաշտվում են: Կայսրին ներկայանալիս կուրանում է, 991 թ. մահանում: (Հմմտ. Ասողիկ, էջ 190, Ուսույնցի, էջ 33—34):

45. Ասողիկը (էջ 194) գրում է, որ Վարդին տանում են Բագրատ քաղաք, որ Բարեւոնն է: Իսկ մեկ այլ տեղ (էջ 265) զգուշացնում է, որ այդ Բարեւոնը քաղաքացիների աշխարհիցը չէ: Մինչդեռ կաստիվերցին այն կոչում է քաղաքացիների (իմա՝ բարեւացիների) քաղաք: Բոլոր դեպքերում խոսքը Բագրատի մասին է, որը 762 թ. Տիգրիսի նրկու ափերին հիմնել է Արթուրյան զինաստիայի երկրորդ խալիֆ Զաֆար ալ-Մանսուրը (754—775), այն դարձնելով մայրաքաղաք:

46. Այսինքն՝ Վարդ Փոկասը, որը բյուզանդական կայսր Նիկեփոր Բ Փոկասի (963—969) եղբոր որդին էր: Վերջինս իր հորեղբոր սպանությունից հետո ապստամբություն էր բարձրացրել Ասիայում: Նոր կայսր Հովհաննես Չմշկիկը (969—976) նրա զեմ է ուղարկում Վարդ Սկլերոսին՝ Վարդ Փոկասը պարտվում է, արքունում Քրոս կղզին: Կայսրության նոր ժանր կացություն ժամին, երբ Սկլերոսը պաշարել էր Կ. Պոլիսը, նրա զեմ է հանվում այդ արտոբակներ: Վերջինս ի վերջո հաղթում է, մնում Բյուզանդիայի ափական բանակի զլխավոր հրամանատար: Սակայն 987 թ. ապստամբում է Վասիլ 2-րդի զեմ, իր կողմնակիցներից հուշակվում կայսր: Մեկ տարի ուժի հետո, 989 թ., վճռական ճակատամարտից առաջ հանկարծամահ եղավ՝ հավանաբար թունավորումից:

Կաստիվերցու Պատմության աշխարհաբար առաջին թարգմանությունում (էջ 200, ծան. 40) այս Փոկասը շփոթված է Բյուզանդիայի մեկ այլ կայսր Փոկասի հետ (602—610), որը սպանել է Մորիկ կայսրին (588—602):

47. Չամչյանը (նշվ. աշխ., գիրք Բ, էջ 1041) նկատել է, որ այստեղ վրիպակ կա: Դավիթը ոչ թե Սենեքերիմ է կոչվել, այլ նա Սենեքերիմի որդին է: Սենեքերիմը կոչվել է նաև Հովհաննես (Այլշան, Հայապատում, էջ 309, ծան. 2): Հետևաբար, բնագրում պետք է լինեն «Յովհաննես, որ Սենեքերիմ կոչվեց» կամ «Երախի որդի Սենեքերիմայ»: Վերջինը ավելի հավանական է, քանի որ այլ աղբյուրներում Նիկեփոր Մոավիզի կոթմ կամ զեմ զործել է Դավիթը: (Հմմտ. Ուսույնցի, էջ 51, Սմբատ, էջ 26): Վասպուրականը Վասիլին կարող էր հանձնել և փոխարենը ստանա, նոր հողեր, անշուշտ, Սենեքերիմը: Սակայն զործարքը կնքվել է նրա որդու՝ Դավիթի միջոցով, որը մեկնել է Կ. Պոլիս կամ Տրապիզոն՝ Վասիլ 2-րդին հանդիպելու Ճիշտ է, պատմիչը այլ առիթով է խոսել Վասպուրականի փոխանակման մասին, բայց ցավոք չի նշել զաղթի ճիշտ թվականը (1021/1022):

48. Վասպուրականը Մեծ Հայքի 15 նահանգներից 8-րդն է և տերիտորիայով՝ ամենաընդարձակը (շուրջ 40870 քառ. կմ): Այն ըստ Աշխարհացոյցի ունի 35 գավառ: Սահմանակից է Տուրուբերանին, Այրարատին, Սյունիքին, Պարսկահաջրին, Կորճեքին, Մոկեքին և Աղձնիքին: Նրա միջով են անցնում Արաքսի, Տիգրիսի և Վանա լճի ավազանների պատկանող

բազմաթիվ զեռեր ու զեռակներ: Հարուստ է Նավթով, պղնձով, կապա-  
րով, երկաթով, աղով և այլ հանածոներով: Վան զեղեցիկ լիճը և զեռ-  
տեղը հարուստ են ձկներով: Վասպուրականը հայ ժողովրդի կազմավոր-  
ման շրջանի բնօրրաններից է. պատահական չէ, որ 9—6-րդ դդ. (մ. թ. ա.)  
Տաշաղի (Վանը) Ուրարտական պետության մայրաքաղաքն էր:

Վասպուրականում իշխում էին Արծրունիները, որոնք 908 թ. այդտեղ  
հիմնում են թագավորություն, որը հզորանում է հատկապես 10-րդ դա-  
րում և 11-րդ դարի առաջին կեսին: Երևարարական մեծ աշխատանք է  
ծավալվում հատկապես Գագիկ Արծրունու (908—943) ժամանակ: Գագիկը  
Սանվել հանձարեղ ճարտարապետի ձեռքով ի թիվս այլ կոթողների կա-  
ռուցել է տալիս Աղթամարի Ս. Խաչ քանդակազարդ վանքը, որը հայ  
ճարտարապետության գլուխ-գործոցներից է: Երևարարական այդ աշխա-  
տանքների մասին հազվագյուտ տողեր է թողել Թովմա Արծրունու երկի  
շարունակողը՝ անանուն (երկրորդ) Արծրունին:

10-րդ դարի 30-ական թվականներին Ատրպատականում իշխանու-  
թյուն կազմած զելյիկները արշավում են Վասպուրական: Արշավանքները  
սաստկանում են 1016—21 թ., թուրքական հրոսակախմբերը հրի ու սրի  
են նեթարկում երկիրը: Այդ արշավանքների, բյուզանդական նվաճողական  
քաղաքականության հետևանքով և 1000-ամյակի լրանալու սարսափից Սե-  
նեբերիմ Արծրունին (1003—1026) Վասպուրականը (10 քաղաք, 72 բերդ  
ու ամրոց, 4400 դուռ, բացի վանքերից) հանձնում է (1021/1022) Վա-  
սիլ 2-րդին, փոխարենը ստանում Փոքր Հայքի Մերաստան (Սվաղ) քա-  
ղաքի իր շրջապատով: Հազարավոր մարդիկ նրա հետ դաղթում են հա-  
րենի էգերբեց՝ սրտերում կակիժ ու մրմուռ: Սելջուկները շուտով Վաս-  
պուրականը գրավում են Բյուզանդիայից, 11-րդ դարի վերջում այնտեղ  
կազմվում է Եաս-Արմենիների էմիրությունը:

49: Տե՛ս ծան. 48: Մերաստանի տեղագրության մասին մանրամաս-  
ները տե՛ս Ալիշան, Քաղաքական աշխարհագրություն, Վենետիկ, 1853, էջ  
517, 554—55, 2. Տաշյան, Հին Հայաստանի արևմտյան սահմանը, Վիեն-  
նա, 1948, էջ 152—159:

50: Ասողկի մոտ (էջ 270) հիշատակված կա Փերս անունով զորա-  
վար, որը վրաց իշխանաց իշխան Ջոջիկի որդին էր: Նա փառաբանված  
Վահրամ Պահլավունու հետ 998 թ. մեծ ջարդ է տալիս Ատրպատականի  
Աբրահամ էմիրի որդի Մամլունին: Արդյոք նո՛ւյն Փերսի մասին է այստեղ  
խոսքը:

51. Սալթորա (հետագայում՝ Սալթորի) գյուղը գտնվում է Բասեն  
գավառի արևելյան սահմանում, որից հետո սկսվում էին Հավնունիք և  
Արեղյանք գավառները: Ըստ Ալիշանի՝ այն գտնվել է Խանի-չալ և Արաքս  
զեռերի խառնման տեղում (Ալլարատ, էջ 16, 36): Հմմտ. АДОНИ, նշվ.  
աշխ., էջ 301:

52. Խաչատ Առիճը (այժմ՝ Գաղտառիճ) գտնվում է Բարձր Հայքի Վա-  
րին գավառի արևելյան սահմանում, Եփրատից հյուսիս: Այն ժայռոտ կիր-  
ճի մեջ ամուր բերդ է:

53. Եղիաշի ճիշուն տեղն անհայտ է: Ինճիճյանը (նշվ. աշխ., էջ 534)  
մտապորապես նշում է Բասեն գավառում, Սալթորա գյուղի մոտ: Ալի-  
շանը տարակուսանքով նույնպես այն սահմանակից է համարել Տալթի  
Պարտեղ (ի՛մա՛ Պարտիզաց փոք) գավառիս:

54. Այսինքն՝ ափսաղ-վրացական թագավոր Գեորգի 1-ինը (1014—  
1027):

55. Հերը (այժմ՝ Խոյ) Պարսկահայքի 9-րդ գավառն է, որը գտնվում  
է Կապուտան (Ուրմիա) լճից հյուսիս: Կոտոր զեռի մոտ մի ոչ մեծ դաշ-  
տի կենտրոնում գտնվում էր գավառին համանուն Հեր (այժմ՝ Խոյ) քա-  
ղաքը: 9—11-րդ դդ. Հեր և Զարևանդ գավառները մտնում էին Վասպու-  
րականի իշխանության մեջ:

56. Նորայր Բյուզանդացին իր «Եսասխիթ» (էջ 829) անտիպ աշխա-  
տությունում (միկրոժամակներ Մաշտոցի անվ. մատենադարանում է)  
ուզղել է այս հատվածը («այլ ի ցրտոյն վարանսն էին» կամ «այլ առ  
ցրտոյն վարանսն») «սոս ցրտոյն վարանսն» ձևով, որը հաստատվում է  
Լաստիվերցու Պատմության ամենահին ձևագրով (Մաշտոցի անվ. մատե-  
ն. № 2865, 13-րդ դ.): Նախորդ (աշխարհարար) թարգմանությունում  
(էջ 26) աղավաղված այս հատվածը մնացել է ճապարհ վիճակում:

57. 1022 թ. ափսաղ-վրացական զորքը պարսվում է, և Վասիլ 2-րդի  
և Գեորգի 1-ինի միջև կնքվում է հաշտություն, որով Կյուրուպաղատին  
պատկանած տիրույթները անցնում են Բյուզանդիային, միաժամանակ Վա-  
սիլը երեք տարով պատանդ է վերցնում փոքրահասակ թագածառանգ  
Քաղաքատին և իր հետ տանում Կ. Պոլիս:

58. Նիկիան Փոքր Ասիայի Բյուբանիա գավառի գլխավոր քաղաքներից  
է, որի բնակիչները անվամբ էլ հեղինակը կոչել է գավառը: Կոստանդինը  
(1025—1028) այս ժամանակ գտնվում էր Բյուբանիա գավառում:

59. Ըստ Լաստիվերցու՝ Վասիլ 2-րդի թագավորելու վերջին տարին  
հայոց 474 (1025) թ. է: Տե՛ս հաջորդ ծան.:

60. Կոստանդին 8-րդը իսկապես իր եղբայր Վասիլ 2-րդի գահակիցն  
էր: Նա թագավորեց Վասիլի մահից անմիջապես հետո՝ 1025 թ. զեկտեմ-  
բերի կեսերից մինչև 1028 թ. նոյեմբերի կեսերը, այսինքն՝ չորս տարի  
(ոչ ամիսների հաշվով), իսկ իրականում՝ երեք տարի: Լաստիվերցին  
ստում է, որ հայոց 475 (1026) թ. Կոստանդինի թագավորության առա-  
ջին տարին է, ուրեմն նա հայոց 474 թ. համարում է Վասիլի թագավո-  
րելու վերջին տարին, ընթացքում հայկական թվագրության այն ավարտ-  
վում է 1026 թ. մարտի 15-ին: Հնարավոր է՝ այստեղ պատմիչը առաջ-  
նորդված լինի քրիստոնեական թվագրությանը, տարեթիվը՝ հայկական  
հաշվով նշելուց անկախ:

61. Կոմիանոսը Նիկիփոր Կոմնենն է, Բյուզանդական պատմիչ Կեղ-  
րենոսը գրում է, որ այս Նիկիփոր Կոմնենոսը խոհեմ, առաքինի և քաջ  
մարդ էր: Նա նշանակվում է Վասպուրականի կառավարիչ, առանց հիմ-  
նավոր պատճառի պաշտոնանկ է արվում, տարվում Կ. Պոլիս, կուրացվում

(G. Cedreni, „Compendium“, Bonne, 1839, հտր. II, 481—482),  
կատիվբրցին մեծարում է նրան, որ նա Արճեշը (ժան. 63) իբ դասաս-  
կերտներով ենթարկել է Բյուզանդիային:

62. Կասպոզովկիան Փոքր Ասիայի գավառներից է:

63. Արճեշ քաղաքը գտնվում է Տուրքերանի Աղիովիտ գավառում,  
Վանա լճի հյուսիսային ափին: Լին Արճեշի ավերակները Վանա լճի  
բարձրանալու հետևանքով մնացել են ջրի տակ: 11-րդ դարի սկզբին Ար-  
ճեշում իշխող մահմեդականները գտնվում էին Վասպուրականի Արծրունի-  
ների ենթակա վիճակում: Սենեքերիմ Արծրունու՝ Սերաստիա տեղափոխ-  
վելուց հետո (1021/1022) այն ևս անցավ Բյուզանդիային, սակայն մահ-  
մեդականները շարունակում էին իշխել այնտեղ: Վասպուրականի կատա-  
պան Նիկիֆոր Կոմնենոսը մոտավորապես 1023—26 թ. գրավեց Արճեշը և  
վերջ դրեց տեղի մահմեդականների իշխանությունը: Լենց այս դեպքն է  
հիշատակել կատիվբրցին:

64. Պատմության ձեռագրերում և վենետիկյան (1844) տպագրությու-  
նում (էջ 22) այս անունը աղավաղվել է՝ դառնալով Նիկիտոս (բնագրում՝  
«զնիկիտոս»): Պատմության երևանյան (1963) հրատարակությունում  
(էջ 41) նշված է, որ Ն. Աղոնցը «Notes arméno-byzantines» («By-  
zantion», 1935, I, p. 180, n. 1) աշխատությունում ուղղել է ոմե Նի-  
կիտոս («զնիկիտոս»), որից և վերցվել է ուղղումը: Սակայն Մաշտոցի  
անվ. մատ. ձեռ. 3502, էջ 368բ կա՝ «զնիկիտոս» ընթերցվածը. այն չի  
նշված այս նոր հրատարակությունում: 2. Մանանդյանը կարծի է, որ  
աղճատված այդ անունը պետք է լինի Նիկոգեմոս կամ Նիկոմիդոս (նշվ.  
աշխ., էջ 26, ժան. 2):

9. Կեղերնոսը, հավանաբար, այդ անձնավորության մասին է ասում,  
որ Նիկոլայոսը նշանակվում է զլխավոր սպարապետ և սենեկապետ  
(G. Cedreni, նշվ. աշխ., հտր. II, էջ 480):

Արշավանքը տեղի է ունեցել Կոստանդին 8-րդի թագավորելու 2-րդ  
տարին՝ 1027 թ.:

65. Սիմոն ներքինին, հավանաբար, Կեղերնոսի նշած անձնավորու-  
թյունն է, որը նպաստում է Կոստանդին 8-րդի մահից հետո կայսր դառ-  
նալու Ռոմանոս 3-րդին (1028—34): Պատկերմանոսը (կամ՝ Պատակամա-  
նոս, հմմտ. Ուոհայցի, նշվ. աշխ., Երուսաղեմ, 1869, էջ 549, ժան. 3),  
հունարեն՝ Para-Koimonemos, բարձր աստիճան կամ ախտաբ. էր բյու-  
զանդական արքունիքում: Պատկերմանոսը կարելի է թարգմանել՝ սենեկա-  
պետ:

66. Կոստանդին 8-րդը (1025—28) ոչ թե երկու, այլ երեք զուտոր  
ունենր՝ Եվդոկիան, Զոյեն և Ֆեոդորան: Մեծը՝ Եվդոկիան, վաղուց վաճք  
էր մտել, փոքրը՝ Ֆեոդորան, հրաժարվել էր ամուսնանալուց, մնում էր  
50-ամյա Զոյեն, որի հետ ամուսնացողը պետք է հաջորդեր Կոստանդինին:  
Քնարությունը վիճակվեց Ռոմանոս Արգիրոսին (1028—34): Լետագալում

Զոյեի օգնությամբ դավադրաբար սպանվում է այս Ռոմանոս III կայսր,  
որի մասին պատմում է նաև կատիվբրցին:

67. «Հայրը (Հայեպ) Ասորիքի (այժմ՝ Սիրիա) մայրաքաղաքն էր, որ  
կոչվում էր Բեռիա»:

68. Միջին դարերում Սև լեռ են կոչվել Կիլիկիայի և Ասորիքի միջև  
հարավից հյուսիս ձգվող Ամանոս լեռնաշղթայի հյուսիս-արևելյան արևելյան  
թեքվող ճյուղերը, որոնք միանում են Կիլիկիայի հյուսիսից գեպի արևելյան  
ձգվող Տավրոս լեռնաշղթայի ճյուղերին: Այս լեռան վրա կային հույն և  
ասորի շատ կրոնավորների և ճգնավորների անապատներ ու մենաստան-  
ներ: Այդտեղ, հատկապես 11-րդ դարում, խույս տալով Բյուզանդիայից  
ու թուրք-սելջուկներից, հավաքվում են հայ կրոնավորներ: Զիշտապեղծ  
արշավանքի ժամանակ Ռոմանոս III կայսրը Կ. Պոլիս է տանում սիրիա-  
ցիների պատրիարք Մար-Հոհաննիս և ծաղրուծանակի ենթարկելով աք-  
սորում:

69. Պատմության վենետիկյան (էջ 23) և երևանյան (էջ 43) հրա-  
տարակություններում այս հատվածը ներկայացված է այսպես. «Զլ ինձ  
պիտոյ աղօթք նոցա, այլ գերեցել յամենայն վանորէիցն աղեղնատոր  
ի ծառայութիւն իմում թագաւորութեանս»: Բյուզանդացին ուղղել է՝ գրեցեմ  
(Նախնիք, էջ 1039): Այս ճիշտ ընթերցումն ունեն վենետիկյան կրկու,  
Մաշտոցի անվ. մատենագրաբանի 2865, 3502, 3070, 6457 թվահամարներ  
ունեցող ձեռագրերը. վերջիններս չեն նշված Պատմության երևանյան հրա-  
տարակության տարբերակումներում:

70. Քաղկեդոնը (այժմ՝ Գառը-քեռ) Փոքր Ասիայի Բյուսանիա գա-  
վառում էր, Կ. Պոլիս զինաց, ասիական ափի վրա:

71. Պատմիչը այստեղ տանիկներ տեսելով նկատի ունի արարներին.  
(Հմմտ. Ասողիկ, էջ 437, ժան. Մայիսայանցի): Սակայն կատիվբրցին  
տանիկ է կոչել նաև թուրք-սելջուկներին: Տուրքի բնիկն նկատի ունենա-  
լով՝ նա գրում է. «Սուլթան տանկաց»:

72. Նիքատի ափին գտնվող Մամոսատը (նաև Մամուսատ, Շամշատ)  
արարներից 958 թ. Բյուզանդիան ետ գրավեց: Ինչպես վկայում է կա-  
տիվբրցին, 11-րդ դարում Մամոսատը բյուզանդական արևելյան թեմերի  
կառավարիչների կամ հրամանատարների նստավայրն էր:

73. Փուրք-սելջուկները գրավել են Ուոհ (կամ Եղնիա) քաղաքը  
1086—87 թ. և սկզբանի որ հեղինակը նաև վկայում է. «Այն օրվանից  
(1032—Գ. Մ.) մինչև այժմ Ուոհ քաղաքն ընկավ Լոտոմոց ձեռքը», այսպե-  
հնարավոր էր եղրակացնել, որ նա իբ Պատմության գրելն ավարտել է  
1086—87 թ. (այս ժամանակ Բյուզանդիան Մրվանյաններից ետ գրավեց  
Եղնիան): Սակայն կան հակասակն ապացուցող հետևյալ հանդամանք-  
ները.

ա) նրա Պատմության կարևոր բոլոր ձեռագրերը չեն, որ ունեն «մինչև  
այժմ», ըն այսպե՝ արտահայտությունը (տե՛ս Մաշտոցի անվ. մատենագրա-  
բանի №№ 3160, 3502, 3070 ձեռագրերը):



բ) Այդպես կարող էր Լաստիվերցին ասել 1072—1086—87 թվականներին ցանկացած տարում. 1072 թ. համար նա հիշատակել է իր վերջին տեղեկությունը՝ Ալփ-Արսլանի մահը:

գ) Քանի որ ոչ մեկին հայտնի չէ, թե Լաստիվերցին երբ է սկսել գրել իր Պատմությունը, ապա զժվար է 1086—87 թ. վերջին ժամանակը համարել:

Չէ՞ որ այս ասված է երկի 7-րդ դիտում, զեռես մեր հեղինակն ուներ շարադրելու եռակի անգամ շատ ծավալ ունեցող մի գործ, ուրեմն նա այդ հատվածը կարող էր գրել 1032 թ. հետո, 1086—87 թ. շատ վաղ:

74. Բյուզանդական կայսր Ռոմանոս 3-րդ Արզիրուր (1028—34) իր կնոջ՝ Ջոյնի գործակցությունը 1034 թ. ապրիլի 11-ին ջրահեղձ արվեց լողաբանում:

75. Միքայել 4-րդ Պափլագրանցի, բյուզանդական կայսր (1034—41):

76. Քեսաղոնիկը (Սալոնիկ) գտնվում է էգեյան ծովի հյուսիս-արևմուտքյան կողմում, համանուն ծովածոցի մոտ: Բարեշեն, ամուր և վաճառաշահ քաղաք է: Այն համանուն թեմի կենտրոնն էր: Քեսաղոնիկ թեմը ուներ ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն, քանի որ սամանակից էր Բուլղարիային:

77. Անտիոք անունով մի քանի քաղաքներ կան, որոնց մեջ նշանավոր էր Ավագ Անտիոքը, որը Սելևկյան երբեմնի հզոր պետության մայրաքաղաքն էր: Պատմիչը Մեծն Անտիոք է կոչել, այն զենյով Ասորիքի (Միդիայ) Փյունիկիա գավառում: Այս Անտիոքը Բյուզանդական կայսրության ստիական թեմերից ամենակարևորն էր: Լաստիվերցու խոսքը, հավանաբար, նիկիտի մասին է, որին Գեմեսիկոս է անվանում: (Հունարեն՝ *domesticos*, զինվորական աստիճան է, որը տրվում էր Բյուզանդական կայսրության արևելյան բանակների զորավարին և մոտակայքային ունի սպարապետ նշանակությունը):

78. Միքայել 4-րդ կայսրը ներքինի և արեղա կոչված եղբայրը Հովհաննեսն էր. խորամանկ և քաղաքագետ մի անձնավորություն, որը փաստորեն ինքն էր տնօրինում երկրի գործերը: Լաստիվերցին տեղեկացնում է, որ եղբայրը՝ կայսրը, նրան դարձրեց Սինկլիտոս (կամ՝ Սինկլիտոս): Այս բառը նշժ-ն (հտր. Բ, էջ 714) բացատրում է՝ ծերակույտի անդամ, ավագանի, առնակալ: (Հունարեն՝ *sugkletos* = ծերակույտ, սենատ, իսկ *sugkletikos* = ծերակույտական, սենատոր Լմմտ. Մալխասյանց, Հայերենի բացատրական բառարան, հտր. II, էջ 215): Հետ այլ տեղեկության նրան առաջ է քաշել նախորդ կայսրը՝ Ռոմանոս 3-րդը (1028—34), որի դեմ այս խորամանկ ներքինին դավազություն է կազմակերպում. կամացկամաց նրա կնոջը՝ Ջոյնին, և իր նորորդ՝ Միքայելին, մոտեցնում է իրար («История Византии», М., 1967, հտր. II, էջ 264): Հովհաննես ներքինին կոչվել է նաև Օրֆանտորֆոս, այն է՝ որբերի խնամակալ, հոգաբարձու. Լաստիվերցու մոտ այն դարձել է Օռֆանոսու Պատմության երեվանյան հրատարակությունում (էջ 47) այս փոքրատառով է գրված, հա-

կառակ այն բանի, որ հեղինակը գրել է. «Ռի սեուեր Օռֆանոսու էր կոչվում» (հտրում անուն կոչիւր Օռֆանոսոս):

79. Բերկրին Վասպուրականի 7-րդ գավառ Արերբանի գլխավոր քաղաքն է, գտնվում է Վանա լճից հյուսիս-արևելք, մի քիչ արձակ դաշտում: Հետագայում այս քաղաքի անունով է կոչվել ամբողջ գավառը:

10-րդ դարի սկզբում արարական մեկ ուրիշ ցեղ՝ կայսիկները, ութմանիկներից նվաճում է Բերկրին: Վասպուրականի բյուզանդական գավառային կոստանդին Կավասիլասը համարյա գրավում է Բերկրին (1033—34), սակայն Ասորպատկանից օգնություն է ստանում քաղաքի ամիրա ետրիկը, ճակատամարտում բյուզանդական զորքը պարտվում է: Հաջորդ տարի Բյուզանդիան մեծ բանակ է ուղարկում նիկեսոս Պեդրակոսի գլխավորությամբ, որը նվաճում է Բերկրին: Հետ Ռուհայեցու (էջ 74—75)՝ Լերկրի քաղաքի դեմ ուղղված պատերազմական գործողությունը ղեկավարում էր հայ իշխան Գանձին:

80. Ղ. Ինճիճյանը Լեմազրեկ է, որ Արծակը Արծկե քաղաքն է (նշվ. աշխ., էջ 123): Լաստիվերցու Պատմության՝ Ինճիճյանի օգտագործած ձևազարմ Արծակը ինչ-որ տեղ է համարված Բերկրիում:

81. Լաստիվերցին արևի այս նույն խավարման մասին հիշատակում է նաև մեկ ուրիշ անգամ: Երկու ղեկավարում էլ հիշատակել է հայոց 482 (1033) թ., նշելով ամիրա (արաց), ցավոր, նա պարզորեն չի գրել ամաթիվը (այսուրեք ուրբաթու ի դանալ աուրեք): Մաշտոցի անվ. մատենագրանի՝ Պատմության ձեռագրերի մի մասը «ի դանալ աուրեք ընթերցման փոխարեն ունի «ի դանալ արևուրեք» (ձեռ. № 3160, 3502), ստանձին ձեռագրեր (№ № 3070, 6457) ունեն «արևուրեք»: Հավանաբար, սկզբում եղել է *արևուրեք*, որից և աղավաղված՝ *արևուրեք*, նաև՝ *աուրեք*, *արևուրեք* ձևերը: Օրմանյանը (նշվ. աշխ., էջ 1210) գտնում է, որ այստեղ խոսվում է ամասուտի մասին: Այնուամենայնիվ, չի լուծվում հիմնական հարցը. հայոց 482 թ. արաց ամսին, որը մեզ հայտնի հաշվումներով համապատասխանում է 1033 թ. օգոստոսին, արևի ոչ մի խավարում չի եղել, այն տեղի է ունեցել այդ թվականի հունվարի 4-ին, հունիսի 29-ին, զեկտեմբերի 24-ին, օրոնցից ուրբաթ է միայն հունիսի 29-ը: Գեռես Ալիշանը ասել է, որ եթե հայոց ամիսները հաշվենք հունական ամիսների հետ, այսինքն՝ հունվարին համապատասխան զենեք նավասարդը և այսպես շարունակ, ապա արաց ամիր կհամապատասխանի հունիսին, որի 29-ին, ուրբաթ օրը իսկապես արևը խավարել է (Բալամակա, 1864, էջ 163, ծան.): նույնը մի փոքր տարբերությամբ ասում է Վ. Հակոբյանը («Մանր ժամանակագրություններ», հտր. II, էջ 163, ծան. 56): Այսպիսով, եթե առաջնորդվենք այս դիտողություններով, ապա հայոց 482 թ. նավասարդի 1-ը ոչ թե կհամապատասխանի 1033 թ. մարտի 13-ին (տե՛ս է. Դյուլյորիկ, Recherches sur la chronologie arménienne, t. 1, էջ 386; Գեռեսյան, Առձեռն տոմարացույց, Երևան, 1965, էջ 19), այլ՝ հունվարի 3-ին: Այս ղեկավարում կատարվի, որ արևը խավարել է հայոց 482 թ. արաց ամսի 29-ին (հնարավոր է նաև՝ 1-ին, 8-ին, 15-ին, 22-ին. այդ



յու Կերակոսի մասին ժամանակակից պատմիչի հազորդածը: Թեև ողև այդ ժողովրդական զրույց լինի, սպա դարձյալ կմնա անստորկելի ապացույց, որ հայրենասեր և աստիվերցի խիստ դեմ էր հայկական հողերը Բյուզանդիային հանձնելուն:

Նա Անիի հանձնման վերաբերյալ կազմված հետկարը համարում է հայոց կորստյան զիր և նամակ, իսկ այն նորից Բյուզանդիային վաճառող կիրակոսներին, որպես ստոր հայրենադավներ, ամենատուր կերպով ձաղկում է:

90. Հարուստ, բայց վատանուն այս իշխանավորը Բյուզանդիայի նկատմամբ ցուցաբերած իր հավատարմության համար ստացել էր «պատրիկ», «անթիպատ», «վեստ» աստիճանները և «արևելից զուկ» պատվանունը: Իրեն «երևց կայսրերի ճորտ» համարող վեստ Սարգիսը զավեր լարելով, ցանկանում էր կործանել Բագրատունիների իշխանությունը և Բյուզանդիայի օգնությամբ ինքը թագավորել Երևանում ու շրջակա զավաներում: Նա, Պետրոս կաթողիկոսի հետ, զլխավորում էր Անիում գործող բյուզանդամուկ կուսակցությունը:

91. Քաշ և տաղանդավոր զորավար, իշխանաց իշխան Վահրամ Պահլավունին մեծ իշխան Գրիգոր Համզեի և Շուշանիկ տիկնոջ ավագ որդին էր՝ ծնված մոտ 967 թ.: Նա Բագրատունյաց Հայաստանի հզոր սպարապետն էր, Անիի հայրենասիրական թևի հողին և ուղղություն ավողը, Բագրատունյաց դինաստիայի հարատևելու զլխավոր կողմնակիցն ու պաշտպանը: 988—1029 թ. իր կառուցած Մարմաշենի հույակապ վանքի վրա թողած արձանագրությունում Վահրամ Պահլավունին անանձնահատուկ հպարտությամբ է շեշտել իրենց հավատարմությունը հայկական կենտրոնական պետության նկատմամբ: Նա Հովհաննես-Սմբատի և Աշոտի մահից հետո ղեկավարում է պայքարը Անին ուժով գրավել ցանկացող բյուզանդական բանակների դեմ, կազմակերպում է Աշոտի որդի Գագիկ 2-րդին Բագրատունյաց գահի վրա հաստատելը, կովում հայրենադավ կուսակցության դեմ՝ լցանկանալով, որ երիտասարդ թագավորը մեկնի Կ. Պոլիս: Այնուհետև նա էր ղեկավարում իրենց հույակապ քաղաքը պաշտպանելու ելած անցյիների պայքարը: Անին Բյուզանդիայի կողմից նվաճվելուց հետո (1045), ութսունամյա զորավարը զենքը ձեռքին դարձյալ կովում է հայրենի երկիրը ավերող մի այլ թշնամու՝ Գվինի էմիր Աբու-լ-Ասվարի դեմ: Հենց այդ մարտում (1047) նա իր Գրիգոր որդու հետ սպանվում է՝ մեծ վիրտ պատճառելով հայոց աշխարհին: Պահլավունու մասին շատ մատենագիրներ են գրել, բայց ամենաստատույն ու զեղեցիկը նրա եղբորորդու՝ Մագիստրոսի մի նամակն է՝ ուղղված Սյունյաց Հովհաննես արքեպիսկոպոսին (տե՛ս Կ. Կոստանյանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 36—52):

92. Սովորաբար ընդունվում է, որ Աշոտի և Հովհաննես-Սմբատի մահից հետո (1041) անցնում է մոտ երկու անիշխանության տարի, մինչև զահ է քարձրանում 17 կամ 18-ամյա Գագիկ 2-րդը (1042—1045), սակայն աղբյուրներում եղած տեղեկությունները հակասական են: Այսպես,

Աշոտի որդի Գագիկ 2-րդի զահակուման սկիզբը Ուսանյացին ղնում է 1041 թ., Մ. Անեցին՝ 1043 թ., Սմբատ պատմիչը՝ 1042 թ.: Օրմանյանի հաշվումներով այդ եղել է 1043 թ. սկզբին (նշվ. աշխ., էջ 1224): Ըստ Հաստիվերցու՝ հայոց 493 (1044) թ. մահանում են Աշոտն ու Հովհաննես-Սմբատը, իսկ հայոց 494 (1045) թ. Կոստանդին Մոնոմախը խաբուսությամբ զրավում է Անին: Ուրեմն, Գագիկ 2-րդը երկու տարի էլ չի թագավորել, իսկ երկու տարվա անիշխանության մասին նրա մոտ խոսք անգամ չկա: Գագիկ 2-րդը 1044 թ., Բյուզանդիայից և Անիի հայրենադավ կուսակցության կողմնակիցներից խաբված, ուղևորվում է Կ. Պոլիս, ստիպումով Բյուզանդիան նրանից համաձայնություն է վերցնում Անին հանձնելու մասին, բնակության այլ տեղ տալով: Այս ապագայիս և հայրենակարոտ թագավորը 1079 թ. մայիսի 5-ին սպանվում է օտարության մեջ:

93. Սուրմառի բերդաքաղաքը (այժմ՝ Սուրմալի) Այրարատյան նահանգի ձակատը զավառում է, Արաքսից աջ, նշանավոր Կողբից արևելք: Այն կռվել է նաև Սուրբ Մարի:

94. Սա ցույց է տալիս, որ իսկպես կաստիվերցին զիտակցաբար և նպատակազրված է դիմել նման հակադիր ոճի, որն իր պատմածը դարձրել է ողբական ու ցնցող:

95. Այս կաստիվերցու սիրած ոճերից է՝ նա այժմ է ասում՝ նկատի ունենալով ոչ թե այն պահը, երբ ինքը գրում է այդ տողերը, այլ այն ժամանակը, որի մասին պատմում է: Նրա այս և հաջորդ տողերը ամփոփում են ամբողջ Ժ գլուխը:

Այստեղ հիշատակված զերի և կալանավոր թագավորը Գագիկ 2-րդն է, իսկ հայրապետը՝ Պետրոս Գետազարձը, որը նույնպես տարվում է Կ. Պոլիս:

96. Տե՛ս ծան. 89:

97. Տաշլանը նկատել է, որ կաստիվերցին այս տողերը վերցրել է երկարի հմաստության կամ հրատների հայերեն թարգմանության մի հին օրինակից («Մատենադարանի մանր ուսումնասիրությունը», մասն երկրորդ, Վիեննա, 1901, էջ 1029—1030, 1136): Բյուզանդիայի կողմից Անիի գրավման թվականը այդտեղ Տաշլանը նշել է հայոց ՆՂԹ (1050) թ., մինչդեռ կաստիվերցին գրել է հայոց ՆՂԳ (1045) թ.:

98. Վասակ Հուլումի (մահ. 1021 թ.) որդի, նշանավոր մատենագիր և իշխան Գրիգոր Մագիստրոսը՝ Գրիգոր-Մարցեն Պահլավունին կամ Բջենցին (≈ 990—1058), թողել է գրական հարուստ ժառանգություն՝ թղթեր, տաղեր, դանձեր, շարականներ, պոեմ, մեկնություններ, թարգմանություններ և այլն, որոնք ցարդ մանրագին չեն ուսումնասիրված: Անգամ վերջնականապես չի պարզված՝ 11-րդ դարում մե՞կ, թե՞ երկու Գրիգոր Մագիստրոս է եղել: Հավանաբար, այստեղ զեր է խաղացել ոչ միայն նրա մեղ հասած գործերի բարդ լեզուն, ընդգրկած հարցերի բազմազանությունը, այլև այն, որ Մագիստրոսը մեղադրվում էր Բագրատունյաց Հայաստանի մալրաքաղաք Անին Բյուզանդիային հանձնելու գործում մեղսակից լինելու, ուրիշ խոսքով, հայրենադավության մեջ: Զգալի դեր է խաղացել

նակ նրա կողմից թոնդրակեցիներին հալածելու հանգամանքը: Սակայն եթե մոտենանք պատմականորեն և խղճի մտքը, մեր մեծատաղանդ մատենագիրը կազատվի շատ մեղադրանքներից:

99. Պատմության վեներաբլան հրատարակությունում գրված է. «Եւ յերկարիլ խնդրոյս այտորիկ, Գրիգոր որդի քաջին Վասակայ, ելեալ և նա զնաց առաջի բազատօրին. քանզի այր իմաստուն էր և խելամուտ յոյժ աստուածային զրոց, որպէս թէ ո՛չ այլ ոք: Իբրև ևտես, եթէ ոչ են թողլոց զԳագիկ ի տեղի իւր...» (էջ 41):

Այդպես էլ թարգմանված է այստեղ: Սակայն Պատմության երևանյան հրատարակությունում (էջ 62) արհեստականորեն նախադասությունները անջատված են այսպես. «Եւ ի յերկարիլ խնդրոյս այտորիկ, Գրիգոր որդի քաջին Վասակայ, ելեալ և նա զնաց առաջի բազատօրին: Եւ քանզի յւր... արպէս թէ ո՛չ այլ ոք, իբրև ևտես եթէ ոչ են թողլոց զԳագիկ ի տեղի իւր...» (ընդգծումները մերն են—Գ. Մ.): Այս բացատրությունը գրուք է գալիս, որ Լաստիվերցին համակիր է եղել Մագիստրոսին՝ սեփական տիրույթները Բյուզանդիային հանձնելու գործում: Կարծեք մի մեծ իմաստություն էր պետք հասկանալու, որ Գագիկին այլևս չեն թողնի: Մինչդեռ պատմիչն ասում է՝ քանի որ Գրիգորը բոլորից ավելի խելացի էր, ուստի և ինքն է գնում թագավորի մոտ: Իսկ Բջնին (այժմ՝ Հրազդանի շրջանում) մի ոչ մեծ գյուղ) և մյուս հողերը հանձնում է՝ հասկանալով, որ այլևս Գագիկին չեն թողնի Հայաստան վերադառնալու: Այս բացատրությունը մոտենում է հենց իր՝ Մագիստրոսի ասածին: Նա ժամանակի կաթողիկոս, իր մտերիմ Պետրոսին գրած նամակում ասել է, որ իրքը այլ հնարավորություն չունենալով, ընթացել է բոլորի կտակից՝ հայրենի հողերը հանձնել Բյուզանդիային (Կ. Կոստանյանց, Գր. Մագիստրոսի թղթերը, էջ 140): Կամ մեկ այլ տեղ (էջ 13) արտույտի հանրահայտ առակով բացատրում է իր վիճակը: Անշուշտ, մենք այստեղ չենք դնում Մագիստրոսին մեղադրելու կամ պաշտպանելու խնդիրը, այլ բացատրում ենք, որ, ընդհանրապես, Լաստիվերցին հայրենի հողերը Բյուզանդիային հանձնելը կամ ընկալառել է, կամ լուել: Հետևաբար, նա չէր մեծարի Մագիստրոսին այդ գործողության համար: Նշենք նաև, որ Լաստիվերցին շատ-շատ հարցերում խիստ հակադիր է եղել Մագիստրոսին, չնայած այդ բացահայտորեն չի շարադրել:

100. Ուրեմն, ըստ Լաստիվերցու Գրիգորը մագիստրոսություն է ստացել 1044—45 թ., մինչդեռ Գեղարդի մոտ, Հավուց թառի վանքի արձանագրությունում հայոց ՆԿԹ(1013) թ. հիշատակված կա Գրիգոր Մագիստրոս (Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 354, նաև էջ 259, Կեչառուքի արձանագրությունը):

Քանի որ չի պարզված՝ 11-րդ դարում մե՞կ, թե՞ երկու Գր. Մագիստրոս է եղել, ապա ղո՞վար է վիճարկել պատմիչը այս վկայության արժանահավատությունը:

101. Պատմության վեներաբլան (էջ 42) և երևանյան (էջ 62) հրատարակություններում գրված է, որ Անիի մեծամեծները «խորհեցան եր-

բմեմ ի Գաիթ տալ զհաղաքն ի Դունացին, քանզի քոյրն Դաթի կին էր նորս» (իմա՝ Գագիկ 2-րդի), իսկ մեկ այլ վկայություն՝ «Երբեմն ի Գաիթ տալ քաղաքն, երբեմն ի Դունացին», գրված է տողատակում:

Ստացվում է, որ Լաստիվերցին ընդունել է ինչ-որ Դաթի Դվնեցու գյուղությունը: Պատմաբաններից ու բանասերներից ոմանք այս ընդունել են (Ալիշան, Աճառյան, Երեմյան), ոմանք մերժել՝ Դաթիին ու Դվնեցուն համարելով տարբեր անձնավորություններ (Չամչյան, Առ, Պրյուզում), ոմանք էլ տատանվել են (Ղ. Մովսիսյան, Ա. Տեր-Ղևոնդյան): Սակայն մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ «երբեմն»-ը առանձին ձևագրերում դուրս են թողել գրիչները: Մինչդեռ Մաշտոցի անվ. մատենագրանի վեց, այդ թվում Պատմության ամենահին (№ 2865, ԺԳ դար), 1840 թվականին 1214 թ. օրինակից արտագրված № 6457, վեներաբլան երկու և Երուսաղեմի № 341 (1599 թ.) ձևագրերում այդ խաթարումը չկա: Եթե Դաթիին և Դվնեցուն մի անձնավորություն դիտենք, ապա կհակասենք Լաստիվերցու հաղորդած մյուս տեղեկություններին: (Մանրամասնությունները տե՛ս Երևանի պետ. համալսարանի «Երիտ-աշխատող» հանդեսում, 1968, № 7, էջ 196—199): Հմմտ. ծան. 164:

102. Վրաց և ավիսթանաց թագավոր Բագարատ 4-րդը (1027—72) ծագումով Բագրատունի էր, իսկ նրա մայրը՝ Մարիամ թագուհին, Վասպուրականի թագավոր Սենեբերիմ Արծրունու դուստրն էր, Հովհաննես-Սմբատի և Աշոտի քրոջ աղջիկը: Ըստ վրաց «Քարթլիս ցխովրթա»-ի, Անիի մեծամեծները ի վերջո քաղաքը հանձնում են Մարիամ թագուհուն:

103. Գագիկ 2-րդին Անիի և շրջակա գավառների փոխարեն, ըստ օտար աղբյուրների, տվեցին մագիստրոսի կոչում, թղթակ, Կ. Պոլսում մի պալատ և հողեր Կապադովկիայի, Ղարսիանի, Լիկանոսի և Կայունպաղատի մեջ, ինչպես նաև Պիզու փոքր քաղաքը: Իսկ ըստ հայկական աղբյուրների՝ նրան տվեցին Խավարտանները, Պիզուն, Կայունպաղատը, Կեսարիան, Մամնդավը: Սենեբերիմի որդի Դաթիթ Արծրունու դստեր հետ ամուսնանալով էր նա ստացել Կեսարիան, Մամնդավը և Խավարտանները: Սակայն այս երեք քաղաքները այլ կավածքների հետ 1065 թ. տրվում են Գագիկ Աբասյանին՝ Բյուզանդիային հանձնած Կարսի փոխարեն: Ըստ որում, սկզբում խոստանում էին Գագիկ 2-րդին տալ Մելիտանի (այժմ՝ Մալաթիա) քաղաքը և շրջակա գավառները:

104. Դաթիթ Արծրունին (1025—35) հոր՝ Սենեբերիմ Արծրունու մահից հետո փոխարինեց նրան: Վարդ Փոկասի որդի Մուսիղին սպանելու համար որպես նվեր Վասիլ 2-րդից ստացավ Կեսարիան, Մամնդավը և Խավարտանները: (Ուսհայեցի, էջ 51, Սմբատ, էջ 58):

105. Ասիտը (Միքայել Իսախոսե) Արևելքի (իմա՝ Իրեքիա թեմի) կուսակալն էր:

106. Այստեղ հակասություն կա: Մի տեղ (էջ 61) Լաստիվերցին հայոց 494 (1045) թ. է դնում Բյուզանդիայի կողմից Անիի գրավելը: Այնուհետև պատմում է, որ Ասիտը (Միքայել Իսախոսե) նվաճում է երկիրը ու շարժվում Դվինի ամիրա Ապուստարի (Ապուլ-Ավար) դեմ: Ծանկատամարտում

սպանվում են Վահրամ Պահլավունին և նրա որդին: Սակայն այստեղ ասում է, որ հայոց 493(1044) թ. Ասիտին փոխարինում է Կամենասը (Կատակալուն Կեկավմենոս): Փաստորեն հիշյալ թվերը իրար չեն համապատասխանում: Կատակալուն Կեկավմենոսը պետք է 1045 թ. կամ դրանից հետո փոխարիներ Իսախանին: Հավանաբար, «ՆՂԻ»-ն (494) չփոխվել է «ՆՂԳ»-ի (493) հետ: Ուշագրավ է, որ Ուեսայիցին (էջ 115) Վահրամ սպարապետի սպանությունը դնում է հայոց ՆՂԻ (1045) թ.: Ուսումնասիրողներից շատերը 80-ամյա հերոսի և նրա որդու զոհվելը գրել են 1047 թվականին:

107. Արծնը Բարձր Հայքի Կարին գավառի կարևոր քաղաքներից մեկն էր, որը դարգացման գաղափնակետին հասավ 11-րդ դարի առաջին կեսին: Կարինից (Քեղոսուպոլիս) ոչ հեռու, Արևմտյան Եփրատի ափին գտնվող այս խոշոր քաղաքը պարսպաներ չուներ, որովհետև բնակչությանը անընդհատ աճում էր: Առևտրի և արհեստագործության կենտրոն այս հարուստ և նոր քաղաքը 1048 թ. նվաճվում է սելջուկներից և հրի ու սրի մատնվում (տե՛ս ծան. 30):

108. Այստեղ բանտարկված հաշիկ Բ Անեցին (1058—65) Պետրոս Ա կաթողիկոսի աթոռակիցն էր, իսկ հետո (1047) նրանից ձեռնադրվեց կաթողիկոս: Լաստիվերցին մեծարել է հաշիկ կաթողիկոսին՝ ակնարկելով նրա հայրենաշեն և եկեղեցաշեն գործերը:

Սև քարը, հավանաբար, հաջոտ Առիճի բերդից մեկն էր (Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1234):

109. Այս ներքինին բուզանդական զորավար Կոստանդինն է (Կուրտ), որը Պետրոս Ա կաթողիկոսի քրոջ որդի Անանիային՝ հաշիկ Ա Անեցու ավագ զորորդ, նախապես տարել էր Կ. Պոլիս: Այնտեղ Անանիային տալիս են սինկելոս (պատրիարքի տեղակալ) փողոսը: Նա, ի վերջո, Պետրոս կաթողիկոսի հետ գնաց Սեբաստիա:

110. Ձեռագրերի մեծ մասը այս վերնագիրը չունի, սակայն Պատմության հրատարակություններում իրավացիորեն այն վերականգնված է: Լաստիվերցին Սմբատայեցու կամ Սմբատաբերդ լեռը գրել է Բարձր Հայքի 5-րդ գավառ Մանանդիում: Այստեղ հայոց 497 (1048) թ. սելջուկ-թուրքերը մեծ ու անզուլ կոտորած են անում, որի ողբալի պատմությունը գրել է Լաստիվերցին:

111. Վաղարշավանը (այժմ՝ Քլուֆրի-քեոյ) գտնվում է Այրարատյան նահանգի Բասեն գավառում, Մուրցի (այժմ՝ Հասանկալա) և Նրասխի գետախառնուրդում:

112. Հայոց 497 (1048) թ. հեղինակը մեր գերության երկրորդ տարին է համարել, ուրեմն՝ թուրք-սելջուկների առաջին արշավանքը եղել է հայոց 496(1047) թ.: Մաշտոցի անվ. մատենադարանի մի շարք զրազրություն (№ 3160, էջ 243բ, 3502, էջ 387ա, 3070, էջ 184բ, 6457, էջ 42բ), նաև ՍՍՀՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի (Լենինգրադ) մեկ ձեռագրում (B—66, էջ 33ա) թուրք-սելջուկների երկրորդ արշավանքի համար նշված է հայոց ՆՂԸ (498) թ., ըստ որի առաջին արշավանքը եղել է

է հայոց 497(1048) թ.: (Տե՛ս Երևանի պետ. համալսարանի նշվ. հանդես, էջ 199):

113. Սպիլը Բարձր Հայքի 7-րդ գավառն է, որը գրավում է Ճորոխ գետի վերին հոսանքի շրջանը: Նշանավոր է Ճորոխ գետի ափին գտնվող Սպիլ (այժմ՝ Իսպիր) քաղաքը, որը գավառի կենտրոնն է: Գավառը հրաշակված է ոսկու հարուստ հանքերով:

Արշարունիքը Այրարատի 5-րդ գավառն է, գտնվում էր Արաքսի ձախ ափին:

Հաշտյանքը 4-րդ Հայքի 2-րդ գավառն է:

114. Խորձյանը Զորորդ Հայքի առաջին գավառն է, գտնվում էր Գայլ գետի (այժմ՝ Քզի) վերին և միջին հոսանքի ձորահովտում, ուներ կարևոր ամրություններ, որոնցից հայտնի են Կեղի և Կողորբեղ (այժմ՝ Քզի) և Մորմրյան գյուղի բերդերը:

Հավանաբար, արևելքից՝ Վասպուրականի վրայով են արշավել թուրք-սելջուկները, մտել են Բասեն և Կարին գավառները, արշավել երեք ուղղություններով: Բնագրում (վեներտիկյան տպ., էջ 47, երևանյան տպ., էջ 67) և միջև ի գալառն Հաշտենից բառերից հետո պետք է ավելացնել ստորակետ, որպեսզի հաջորդ տեղեկությունը՝ միջև յանտառն Խորձյան անշատի, ինչպես վարվել է Ինճիճյանը (նշվ. աշխ., էջ 43):

115. Նկատի ունի հայոց 496(1047) թ. կամ ըստ առանձին ձեռագրերի՝ հայոց 497(1048) թ.: (Ման. 112):

116. Ընդունված հավանությունը հայոց ՆՂԸ (1048) կամ ՆՂԸ (1049) թվականի նավասարդի մեկը համընկնում է մարտի 9-ին: Եվ քանի որ հեղինակն ասում է՝ այդ արշավանքը եղել է ի զալ միսում ամին...յամսեանն սեպտեմբերի, ապա պետք է հասկանալ ոչ թե «մյուս տարվա սկզբում», այլ՝ «զալի տարի...սեպտեմբեր ամսին»:

117. Պատմության ձեռագրերում և սպագրություններում ժԱ գլուխը անբնական ձևով է բաժանված հաջորդ ժԲ գլխից: Փաստորեն միևնույն բառը նախադասությունը երկատված է, որտեղ գրվել է այս վերնագիրը: Միջնադարի հեղինակը ժԱ գլուխը ավարտել է, սակավով՝ Այլ ու վասն լեռինն այնպիսի շար համբալ պատմութիւնն էր՝ զկայ առցէ, թէպէտ ի բազմաց սակալ ինչ ասացի: Այնուհետև գրվել է ժԲ գլխի վերնագիրը, որից հետո՝ Աստաճօր ի մեքս դարձուցից զոն բաճի պատմութեանս, որը ոչ միայն կարող է նշանակել աստվածաշնչյան տողերից անցնում է իր սեփական ոճին, կամ բռն նյութին՝ ինչպես կա Անիի զրավման մասին պատմությունց առաջ, այլև անցնում է իր հայրենի քաղաք Արծնի պատմությանը (Հմմտ. Երևանի պետ. համալսարանի նշվ. հանդես, էջ 201—202): Նման վերակառուցումը պարզություն է մտցնում՝ վերացնելով մտքի խաթարումը: Հավանաբար, մեզ չհասած նախադասափար ձեռագրում այդ վերնագիրը գրված է եղել լուսանցքում, այնուհետև մուծվել է բնագիր, բայց մի փոքր տեղաշարժումով: Քարգամանված է այս ուղղումով:

118. Եղել են ողբասաց կանայք, որոնք հրավիրվել են ողբական երգեր երգելու, լաց ու կոծ անելու մահացածի վրա: Նրանք կոչվել են

ողբասաց, ձայնարկու, ողբերգակ կույսեր, սևագոգեստ, «աշխարող» (ողբացող, լացող, սգացող) կանայք, մեկը եզել է «եղերամայր» կամ «մայր ողբոց», գլխավորելով մյուսներին:

119. Պատմության վեներիկյան (էջ 53, 91) հրատարակությունում «մի քանի ձեռագրերում «առնողք» բառը դարձել է «օղնողք» (հավանաբար, «առնողք»)»-ը շփոթվել է «ալնողք» բառի հետ, որից աղավաղվել է բնագիրը, քանի որ ոչ թե աղգերի թագավորները զնորդներ են, այլ՝ օղնողներ: Նորայր Բյուզանդացին այս ուղղել է («Նախիբ», էջ 722):

120. Հին հունական փիլիսոփայության մեջ սկեպտիցիզմի հիմնադիր Պյուճոսը (մոտ 365—275 թ. մ. թ. ա.) գտնում էր, որ ճշմարտության ճանաչողությունից պետք է ձեռնապահ մնալ, քանի որ աշխարհն անճանաչելի է: Պյուճոսը Պատմության Ֆրանսերեն թարգմանությունում (էջ 80, ծան. 3) նշել է, որ պինդունացի ասելով պետք է հասկանալ ոչ թե հույն հուշակավոր սկեպտիկի հիմնադրած աղանդի ճանաչողներին, այլ՝ առհասարակ բոլոր նրանց, որոնք կասկածի տակ էին դնում կրոնի ճշմարտությունները, կամ՝ կատիվներին նկատի է ունեցել անհավատներին, ինչպես անվանել են նրանց հայ պատմիչները:

Ձեռագրերում բերված են՝ Սեֆարցիի, Սեֆարցիի, Սեֆարցիի, Սիֆարցիի ընթերցումները, վեներիկյան տպագրությունում՝ Սեֆարցիի (էջ 53):

Ն. Բյուզանդացին «Հայկական բառաքննություն»-ում (Կ. Պոլիս, 1880, էջ 89) ուղղել է՝ Սեֆարցիի, որը և վերցված է Պատմության երևանյան հրատարակությունում (էջ 75): Պյուճոսը Պատմության Ֆրանսերեն թարգմանությունում (էջ 80, ծան. 1) գրում է, որ իր որոնումները՝ բացատրելու այս բառը, արդյունք չեն տվել:

Պետք է կարծել, որ սրանք Սեքստ-էմպիրիկիոսի (2—3-րդ դ.) հետևորդներն են: Հույն նշանավոր այս փիլիսոփան քարոզում էր աշխարհի անճանաչելիության գաղափարը՝ գտնելով, որ որևէ բանի մասին չպետք է ասել՝ այո՛ կամ ո՛չ: Սեքստ-էմպիրիկիոսը իրեն նախորդած Պյուճոսի մասնակցությունից և ազնոսությունից կարկառուն ներկայացուցիչներից էր հին հունական փիլիսոփայության մեջ: Ուշագրավ է, որ նա գրել է մի հատուկ աշխատություն «Պյուճոսական ակնարկներ» խորագրով: (Տե՛ս Գ. Ջարրհանալյան, Պատմության մատենագրության լուսաց, հոտվածյեցուց և հարց եկեղեցույ, Վենետիկ, 1836, էջ 250), Յ. Շելլեր, *Oчерк истории греческой философии*, М., 1913, էջ 283):

Ար. կատիվները մոտ կողք-կողքի դրված Սեֆարցիի և Պյուճոսի փիլիսոփայական նույն հոսանքի տարբեր անվանումներն են: Պատմիչը այդ հատվածը քաղելով Գրիգոր Աստվածաբանի ճառերից, քննադատել է այն հոգեբանականներին, որոնք հարել էին թոնդրակեցությունը, կամ ավելի արծաթասեր էին, քան թե աստվածասեր:

121. Պատմիչների վկայության համաձայն Արծնը ուներ մոտ 300000 բնակիչ, որից թուրք-սելջուկները 1048 թ. սպանեցին 140000 (G. Ce-

dreni, հտր. II, էջ 577), կամ 150000 (Ուսույնացի, էջ 103) մարդ, մոտավորապես վերածելով քաղաքը: Կեդրենուր և կատիվներին Արծնի ավերումը դնում են 1048 թ., իսկ Ուսույնացին՝ հայոց ՆՂԸ (1049) թ.: Վերջինս ավելի մանրամասն է շարադրել կատարված անցքերը (էջ 102—103):

122. Կամենսուր (իմա՝ Կատակալոն Կեկավմենսուր), ինչպես վկայում է նաև կատիվներին, փոխարինել էր Արևելքի կողմի (իմա՝ Իբրիա թեմի և այդ թեմին միացած Հայաստանի) կուսակալ (կատակալ) Ասիտին (Միքայիլ Իսախոս): Թեմի կենտրոնը դարձել էր Անին: Կեկավմենսու նշանակում է այրված, կատիվներին թարգմանել է կրակ:

123. Վասպուրականի կուսակալը Ահարոն Բուլղարն էր, իմա՝ բուլղարական Վլադիսլավ թագավորի որդի Առնը, որը հետո դարձավ Անիի (կամ Հայաստանի) կառավարիչ (տե՛ս ծան. 165):

124. Բյուզանդական բանակին օգնության է շտապում նաև Միչագետքի զորս զարձած Գրիգոր Մագիստրոսը:

125. Այս կիպարիտը կիպարիտ Օրբելյանը չէ, ինչպես ընդունել են որոշ հայագետներ, հենվելով Ստ. Օրբելյանի համապատասխան վկայության վրա («Պատմություն նահանգին Սիսական», Քիֆլիս, 1910, էջ 374): Ինչպես ապացուցում է Հայկ. ՍՍՀ ԳԱ անդամ Ս. Տ. Երեմյանը (տե՛ս Երևանի պետական լայնաբանի՝ Մատի անվան կարինետի աշխատություններ, № 2, 1947, էջ 103—140), այս քաջ զորավարը, քաղաքական և զրական տաղանդավոր զործիչը ծագում է Արգվեթի և Թրիալեթի տեր Բաղուշի կիպարիտյան ֆեոդալական տոհմից:

126. Այս պատմությունից ինչպես պարզ երևում է, իր զինքը գրելու պահին դարձյալ շարունակվել են թուրք-սելջուկյան ավերիչ արշավանքները, ու Հայաստան աշխարհը դարձյալ ծվատվել է նրանց զիշատիչ ճանկերում: Արյունարբու Ալի-Արսլանին հաջորդած նրա որդին՝ սուլթան Մելիք-Ջահը (1072—92), վարում էր համեմատաբար մեղմ քաղաքականություն: Պետք է կարծել, որ նման քաղաքականությունը Մելիք-Ջահը ձեռնարկեց ոչ ի սկզբանե: Հավանաբար, հենց այդ տարիներին էլ (1072—79) իր երկը շարադրել է պատմիչը:

127. Հստ Ուսույնացու (էջ 102), թուրք-սելջուկյան զորապետներն էին Աբրեխմը և Գելմուշը: Աբրեխմը (Իբրահիմ իբն Ինալ) Տուղրիլ սուլթանի հորեղբոր որդին էր: 1048 թ. սեպտեմբերի 18-ին Բասենի դաշտում, Արշլուխի Կապուտու բերդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, ըստ կատիվներին, պարտվում է բյուզանդական-հայկական և վրացական միացյալ բանակը: Թուրք-սելջուկները զերում են 100000 մարդ, 10000 սալլով տանում ավարը:

128. Մմբատ պատմիչի հաշվումները (էջ 71) մոտավորապես համընկնում են կատիվներու ասածին: Նա Պետրոսի կաթողիկոսության ժամանակը 32 տարի է հաշվել, այսինքն՝ մինչև 1053 կամ 1054 թ.:

129. Ատոմը Սենեբերիմ Արծրունու որդին էր, որը 1035 թ. հաջորդեց իր եղբայր Դավթին: Արծրունիները Սեբաստայում կախման մեջ էին Բյուզանդական կայսրությունից:

130. Լաստիվերցու Պատմութեան աշխարհաբար թարգմանութիւնում (1893, էջ 216, ծան. 98) սխալմամբ Սերաստուպոլիսը համարված է Ափիազաց աշխարհի մի քաղաք, որը գտնվում է Սև ծովի ափին և կոչվել է նաև Դիոսկուրոս: Սակայն այդ Սերաստուպոլիսը (հնում՝ Դիոսկուրիա, այժմ՝ Սուխումի), ոչ մի կապ չունի պատմիչի նշած նույնանուն քաղաքի հետ: Պատմաբանները այդ նույնացրել են Փոքր Հայքի Սերաստիա նշանավոր քաղաքի հետ: Պետք է սասել, որ Փոքր Հայքում, Սերաստիայից արևմուտք եղել է Սերաստուպոլիս (այժմ՝ Սուլու-Սարու գյուղ) անունով մի քաղաք, որն անվանվել է նաև Կարանա, Հերակլեոպոլիս: Այն գտնվել է Սերաստիա թեմի մեջ (10-րդ դ.): Հետևաբար, Լաստիվերցին կարող էր զանազանել այս երկու բնակավայրերն իրարից: Նա տեղեկացնում է, որ Սենեքերիմ Արծրունուն Վասպուրականի փոխարեն տվեցին Սերաստիա քաղաքը և նրա շրջակա գավառները: Մի՞թե նա այստեղ նկատի չունի նաև Սերաստուպոլիսը: Եթե ընդունենք, որ Սերաստուպոլիսը Սերաստիան է, այդ դեպքում պետք է ճիշտ շահմարներ պատմիչին, որովհետև այստեղ Ս. Նշան եկեղեցին կառուցել էր ոչ թե Առոժ Արծրունին, այլ հայրը՝ Սենեքերիմը:

131. Սենեքերիմ Արծրունին Վասպուրականից տեղափոխվելով Սերաստիա (1021/22), այնտեղ կառուցեց նոր վանք և եկեղեցի՝ կոչելով Ս. Նշան: Վանքը գտնվում է Սերաստիայի եվդոկիա գավառի Պիզոր գյուղի մոտ: Սկզբնապես այն կոչված է Ս. Նշան կամ Ս. Խաչ, ապիւյի ուշ՝ Ս. Ոսկերեքան: (Տե՛ս Հ. Ոսկյան, Սերաստիայի, Խարրերդի, Տիարպեթի ու Տրապիզոնի նահանգներու վանքերը, Վիեննա, 1962, էջ 28—34):

132. Տարնտա կամ Տարնտա (այժմ՝ Տարնտե), Խաչիկ Բ Անեցու (1058—65) նոր աթոռանիստը ըստ Ուսայեցու (էջ 138) գտնվում է Թավարլուում (Թավրլուր), որը հավանաբար Տարնտայի մոտ նրան տրված երկու վանքերից մեկն էր (Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1263, Ա. Աբուլաճյան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հտր. Ա, էջ 445): Տարնտան Կապադովկիայի հայ թագավորների սահմանում չէր, այլ հունական մի կուսակալութեան մեջ էր, որի մասին Սմբատ պատմիչը (էջ 73) գրում է. «Ե սահմանս Կովքստեի»:

133. Կարսը, որը հիմնված էր 962 թ., Վանանդի թագավորութեան գլխավոր քաղաքն էր (տե՛ս ծան. 146): Դեպքը տեղի է ունեցել 1054 թ. հունվարի 5-ի լույս 6-ի զիշերը:

134. Այս գլխից Ալիշանը հրատարակել է մի ընդարձակ հատված, սկզբում գրելով. «Ողբասաց պատմիչ հեղինակիս շատ գեղեցիկ և սրտաշարժ մեկ կտոր գրուածն է այս» («Շալապատում», էջ 329):

135. Այս նույն՝ հայոց 503(1054) թ. է նշում նաև Ուսայեցին (էջ 718), սակայն փոքր-ինչ տարբեր ձևով ներկայացնելով կատարվածը: Իսկ արշավանքի ժամանակը կոնկրետացնող ամսի և ամսաթվի մասին Լաստիվերցու դիտողությունը, երևի, ոճական նշանակություն ունի: Քանի որ ըստ նրա՝ թուրք-սելջուկների հիշատակված արշավանքը տեղի է ունեցել

1048 թ. սեպտեմբերին, ս. Խաչի տոնին, շորեքշաբթի, իսկ այս նոր արշավանքը եղել է 1054 թ. հնձի ժամանակից առաջ:

136. Արշավանքը այս անգամ անձամբ գլխավորում էր թուրք-սելջուկյան սուլթան Տուղրիլը (1038—1063), որի անունը Լաստիվերցին չի հիշատակել:

137. Ըստ Ուսայեցու (էջ 118), Տուղրիլը ոչ թե շրջանցել է Բերկրին ու Արձնշը, այլ առաջինը գրավել է, սրի քաշել բնակչությունը, իսկ երկրորդը պաշարել է ութ օր և մեծ փրկագին առնելով՝ խաղաղ գրավել:

138. Ըստ «Աշխարհացույց»-ի Պարխար (այժմ՝ Բարխալ-դաղ) գրտնրվում է Տայքից արևմուտք, սահմանակից է այդ նահանգի Արսյաց Փոքր գավառին: Այնտեղից հոսում է Վոհ գետը (Ճորոխ), որն իր մեջ առնելով մի շարք գետակներ, թափվում է Պոնտոսի ծովը:

139. Իմա՛ Խաղտիթի անտառները (տե՛ս ծան. 34):

140. Հայկական Տավրոսը կամ նրա մի մասը կոչվել է նաև Սիմ լեռ կամ Սիմ սար (Հմմտ. Խորենացի, էջ 116):

141. Ալնարկում է Աստվածաշնչի մի նկարագրությունը (Դանիելի մարգարեություն, Գ. 22, 46—48, Երեմիայի մարգ., ԻԹ. 22):

142. Բնագրում ասված է. «Ոչ չնու. հնձող որայի զգիրկս», որը Պատմութեան աշխարհաբար նախորդ թարգմանությունում (էջ 94) իրավացիորեն զարձկած է. «Հնձողները չնն լցնում իրանց գիրկը խրճեթով»: Հնարավոր է, որ հնձողները իրենց հավաքած խրճեթը ոչ թե զիզեն, այլ՝ բարձնել: Ուշագրավ է՝ մեկ այլ տեղ հեղինակը համանման տողեր քաղելով Աստվածաշնչից (Սաղմ. ՇԻԸ. 7—8), թերևս ակնարկում է հունձը ձեռքով կամ մանգաղով անելու փաստը: Պատկերավոր ձևով առատութեան ընդգծումը կա այդ և հաջորդ տողերում:

143. Բնագրում գրված է. «Ո՛չ ծանրանան պահտոք ի ստոմանաց» (կամ՝ «ի ստոմանաց»): Նշվում (հտր. Բ, էջ 584, 747, 839) կապված կա, որ «պակառ»-ը կամ «պահառ»-ը եղած լինի «տակառ»: Ալիշանը հակված է ընդունելու «պահառ»-ը («Շալապատում», էջ 329), Բյուզանդացին ընդունում է «պահառ» ընթերցումը («Նախնիք», էջ 695): Անշուշտ, ճիշտը «պահառ»-ն է՝ պահարան իմաստով, որը ծանրացել է ստոմաններից, այսինքն՝ խեցեղեն անոթներից, սափորներից:

144. Բարբրոզ (Բալտրեբոզ) կամ Սմբատավանք (այժմ՝ Բալտրոթ) գտնվում է Ճորոխ գետի ձախ ափին, Բարձր Հայքի Սպեր գավառում: Այստեղ 1054 թ. ճակատամարտ է եղել թուրք-սելջուկների և բյուզանդական զորքերի (իմա՛ վրանդների կամ ֆրանկների) միջև:

145. Լաստիվերցու Պատմութեան երկու ձևագրում (Մշտոցի անվ. մատ., ձեռ. № 2865, 13-րդ դ., Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 341, 1599 թ.) կա վրանգ ընթերցումը (Վերջինիս մասին տե՛ս Երևանի պետականալսարանի նշվ. հանդես, էջ 199—200): Իսկ մնացած ձևագրերում գրված է՝ ֆրանգ, ֆրանկ, Պատմութեան վենետիկյան տպագրությունում՝ փրանկ, երևանյան հրատարակությունում՝ վրանգ: Վրանդները (варяги) ուս-սկանդինավյան վարձկաններն էին,

իսկ ֆուանգները՝ հարավ-իտալական նորմանները, նրանք ծառայում էին բյուզանդական բանակի շարքերում: Լաստիվերցին, անշուշտ, նշել է նրանցից մեկի անունը, սակայն, ինչպես տեսանք, ձեռագրերում շփոթ է առաջացել: Ո՛րն է ճիշտը: Ահա այս հարցին է նվիրված պատմ. գիտ. թեկնածու Կ. Յուզբաշյանի հետազոտությունը (ՏԵՆ «Բանբեր Մատենադարանի», Երևան, № 4, 1958, էջ 77—82): Ինչպես նշում է բյուզանդական պատմիչ Գ. Կեղրեսոսը, այդ նախատմամբին մասնակցում էին ֆուանգներ և վուանգներ: Այս փաստը վկայակոչելով, միաժամանակ նշելով, որ 11-րդ դարի կեսերից վուանգների հետ մեկտեղ բյուզանդական բանակում սկսում են ծառայել նաև ֆուանգներ, Յուզբաշյանը այստեղ ճիշտ է համարում վուանգ ընթերցումը: Սակայն այդ հաստատուպես պրնցիբու համար, մեղ թվում է, կովանները թույլ են: Նա գրում է, որ Լաստիվերցին թարգմտել է արտահայտվել. «զուկո մի ի զորացն հոռոնց, որ կոչին ֆուանգք» («Հոռոնների զորքերից մի զուկո, որ կոչվում են ֆուանգներ»): Իսկ «ֆուանգները Հայաստանում հայտնի էին անվազը Երակացու ժամանակներից» (էջ 78), հետևաբար, դրանք վուանգներն են, ոչ թե ֆուանգները, ապացույց ծառայել չի կարող: Այդ Լաստիվերցու օտմորական ոճն է: Ռուսական զորագնդի մասին, որոնց Յուզբաշյանը համարում է հենց այս վուանգները, պատմիչը նույն ձևով է արտահայտվել՝ «արևմտական զորն, որ կոչի ռուզք» (էջ 23): Ոչնչով չի հիմնավորված, որ Լաստիվերցին նույն զործի մեջ միևնույն զորագնդին երկու անունով կարող էր կոչել, թեկուզև բյուզանդական աղբյուրներում դուզահետարքը կային ոտս և վուանգոս հոմանիշները: Թեև պատմիչին հայտնի էր, որ դրանք նույն ռուսական զորքերն են (էջ 82), ապա էլ ինչու էր թարգմտում արտահայտվում» և այլն: Այսուհանդերձ, մենք չենք ձգտում առաջնությունը տալու վուանգներին կամ ֆուանգներին, այլ ցանկանում ենք ասել, որ եղած փաստերը վերջնական եզրահանգման համար թերի են:

146. Գագիկը (1029—64) վանանդի կամ Կարսի թագավոր Արսաի (984—1029) որդին էր: Նա վախենալով թուրք-սելջուկներից, 1065 թ. Կարսը հանձնում է Բյուզանդիային, փոխարենը հողեր է ստանում Փոքր Հայքի արևմուտքում (տե՛ս ծան. 103):

147. Չամչյանը (նշվ. աշխ., հտր. Բ, էջ 955), նրա հետևությունները Պատմության աշխարհագրոր առաջին թարգմանողը (էջ 219, ծան. 107) և Աճառյանը (նշվ. աշխ., հտր. Բ, էջ 259) այս Թաթուրի համարել են Կարսի «Գագիկ թագավորի քաջ սպարապետը»: Մինչդեռ պատմիչը նրա մասին ասում է՝ «զմի ոմն յազատացն», այսինքն՝ «ազատներից մեկին» (ազատ՝ ազնվական, իշխան, ոստանիկ): Թաթուր քաջ ու սպարապետսեր զորայան էր, որը կոչվում էր հայրենիքի փրկության համար՝ արժանանալով պատմիչի գովասանքին:

148. Բնագրում՝ «զի միով տամբ խաղաց»: Ալիշանը ենթադրում է, որ «միով արամբ» («մի մարզով») պետք է լինի («Հայագատում», Բ մաս, էջ 325):

149. Տվարածատափը (այժմ՝ Ղարայազի դաշտ) Տուրուքերանի 7-րդ գավառն է, որը շրջապատում են արևմուտքից՝ Մարդազի, հարավից՝ Վարածունիք, արևելքից՝ Գալառ և հյուսիս-արևելքից՝ Գասնավորը գավառները:

150. 1054 թ. Տուրիլը պաշարեց Ալեքսի (այժմ՝ Ալեքսի գյուղ) նշանավոր բերդը, որը գտնվում է Բասենի ընդարձակ դաշտի հարավարևմուտքում:

151. Գու գյուղը գտնվում է Բասեն գավառում, Աղբերականը կամ Արծաթ աղբյուրները կոչվող դաշտի մոտ:

152. Մեկ այլ տեղ (էջ 66) պատմիչը հիշատակում է Մանազկերտ քաղաքի վերակացու իշխանի անունը՝ Վասիլ: (Հմմտ. Ուտհայնցի, էջ 119):

153. Փիլիկուանը (կամ՝ փիլիկոն) պատերազմական մեքենա է, որով քարեր էին նետում թշնամու վրա: 11-րդ դարում գործածված պատերազմական գործիքների, զենքերի վերաբերյալ ուշագրավ այլ տեղեկություններ ևս կան Լաստիվերցու մոտ:

154. Անանիա Երակացուն վերագրված մի աշխատանքում մեկ լիտրը հաշվվում է 326,4 գրամ: Հետևաբար, վաթսուն լիտրը կլինի մոտ 20 կգ: Արդյո՞ք 11-րդ դարի Հայաստանում մեկ լիտրը ավելի ծանր չէր, մի բան, որը ենթադրելի է պատմիչի ասածից:

155. Մի շարք ձեռագրեր բամբակի բառի փոխարեն ունեն բազմակի ընթերցվածքը, որը, թերևս, բնագրային է:

156. Պատմության նախորդ հրատարակությունում (1844, էջ 69) այս մասը ընթերցված էր. «Որտիմեզ՝ որ զօրուն իշխանն էր», այսինքն՝ «Որտրմեզ զորավորը»: Երևանյան (էջ 92) տպագրությունում ուղղված է «որ Գեյմից զօրուն իշխանն էր», այսինքն՝ «որ Գեյմից զորավորն էր»: Աշխատատեղը՝ Կ. Յուզբաշյանը, «Գեյմիկները Արիստակես Լաստիվերցու Պատմության մեջ» հոդվածում («Բանբեր Մատենադարանի», Երևան, 1960, № 5, էջ 307—311) մանրամասն խոսել է իր այդ ուղղման մասին, գիտողություններ արել զեյմիկների և նրանց՝ Հայաստան կատարած արշավանքների մասին:

Գեյմիկների մասին հայկական աղբյուրներում շատ տեղեկություններ կան: Գեյլամիները կամ զեյլեմիտները իրանական ժողովուրդ էին, որոնք բնակվում էին Կասպից ծովից դեպի հարավ-արևմուտք: 1021 թ. զեյմիկները արշավում են Հայաստան, կողոպտում Գլինը: Այդ արշավանքը վերագրում էին թուրք-սելջուկներին, սակայն, ինչպես ապացուցել է Մանազկանը (նշվ. աշխ., հտր. Գ, էջ 38, 39), դրանք զեյմիկներն էին: Նորայր Բյուզանդացին մեկ այլ առիթով «զեյմից» բառը ուղղել է «զեյմիկ» ձևով («Նախնիք», էջ 394):

157. Ալիշանը ծանոթագրել է լուր հունաց և լատինաց՝ լուր կամ հրաման բերող-տանող («Հայագատում», Բ մաս, էջ 92):

158. Արծկե քաղաքը Տուրուքերանի Բզնունիք գավառում էր, վանա լճի հարավարևմտյան ափին: Լաստիվերցու ասածից երևում է, որ լճի ջրերը բարձրանալով՝ ցամաքի և քաղաքի միջև ստեղծել էին ծանծաղուտ: Տուրիլը բեկը, լկարողանալով գրավել Մանազկերտը, իր գալուստը թափում



է այս քաղաքի և բնակչութեան վրա (1054 թ.): Քաղաքի դիմաց գտնու-  
վում է համանուն կղզին:

159. Բզնունյաց ծով է կոչվել Վանա լիճը՝ Բզնունիք զավառի անու-  
նից:

160. Կոստանդին Մոնոմախը թագավորից 1042 թ. հունիսից մինչև  
1055 թ. հունվարի 11-ը: Կեղրենուր գրում է, որ Թեոդորան զահ է բարձ-  
րանում հաջորդ օրը՝ 1055 թ. հունվարի 12-ին (հտ. II, էջ 619): Հե-  
տևաբար, պատմիչը ճիշտ է հաշվել Կոստանդին Մոնոմախի իշխելու տա-  
րեքանակը: Սակայն ընդունված թվականների վերածելիս մի երկու տարվա  
հակասություն է առաջանում: Նա գրել է, որ Կոստանդինի թագավորու-  
թյան սկիզբը հայոց 490 թ. է, այնուհետև՝ թագավորել է 13 տարի  
(490 + 12 = 502 թ.): Մեկ տարի պակաս ենք գումարում, քանի որ հայոց  
490 թ. նրա թագավորելու առաջին տարին է: (Հայոց ՆՂ (490) թ. նա-  
վասարդի 1-ը համընկնում է 1041 թ. մարտի 11-ին, ՇԲ (502) թ. նա-  
վասարդի 1-ը՝ 1053 թ. մարտի 8-ին): Ուրեմն, առաջնորդվելով հայտնի  
հաշվումներով, դուրս է գալիս, որ ըստ կաստիվերցոս՝ Կ. Մոնոմախը թա-  
գավորել է ոչ թե 1042—55 թ., այլ՝ 1041—1053 թ.:

161. Խոսքը թուրք-սելջուկյան սուլթան Տուղրիլը բեկի մասին է:

162. Պատմության Երուսաղեմի № 341 ձևագրում՝ Դ (չորս) դահե-  
կան:

163. Հայոց 504 (1055) թ. իսկապես Տուղրիլը գրավում է Բաղդադը:

164. Պատմիչի հաղորդած այս փաստը մասնավորապես հաստատվում  
է նրանով, որ Արուս-Ասվարը իր որդիներից մեկին տվել էր նրա պապի  
անունը՝ Աշոտ (արաբ. բնագրում՝ Աշութ): (Տե՛ս Տեր-Ղևոնդյան, Նշ.  
աշխ., էջ 181):

165. Պատմության աշխարհարար նախորդ թարգմանությունում ևս  
(էջ 110—111) այս հատվածը այսպես է բացատրված՝ օխկ Տարոնի կող-  
մերում Ահարոնի որդի Թեոդորոսը, որին Ավան էին կոչում իրանց լեզվով,  
զավառի իշխանն էր, բայց առանց հաստատուն գրի: ՆՃԲ-ն (հտ. II,  
էջ 584) այլ կերպ է մեկնել այս տողը. «Թեոդորոս որդի Ահարոնի, զոր  
Աւանն (կամ՝ Ատանն) կոչէին ըստ իւրեանց լեզուին, զգիրն (հ) պակաս  
ունելով»: Ուրեմն՝ Ահարոնն է Ավան կոչվել, քանի որ բուլղարներնում  
պակաս է եղել «հ» տառը: Բնագրում, հավանաբար, վրիպակով է տրված  
«Աւան» անունը, քանի որ այս Ահարոնը Անիի մայր նկեղծցու վրա թո-  
ղած արձանագրությունում իրեն կոչել է «Ատան» («Ատոն»): (Տե՛ս Ար-  
շակ, Շիրակ, էջ 70):

166. Գյուղիս տեղը մեզ անհայտ է, պետք է ենթադրել, որ այն  
գտնվում էր Հարթ զավառում, Արածանի գետի ափին:

167. Բնագրում (էջ 98) ասված է. «Չորք աթոռք թագաւորութեան  
ունէր Հայք, թո՛ղ թէ զԿիւրապաղատին իշխանութիւն, և զոր ի Հոռոմոց»,  
կաստիվերցու Պատմության ֆրանսերեն թարգմանիչ Պրյուդոմը (էջ 105)  
բնագիրը համեմատաբար ազատ է թարգմանել. «Հայաստանում կային  
չորս թագավորություններ» բնագրային տողին ավելացնելով՝ «Նույնքան»

մայրաքաղաքներով»: Նա շեղ թէ զԿիւրապաղատին իշխանութիւն, և զոր  
ի Հոռոմոց» տողերը թարգմանել է «չհաշված Կյուրապաղատի իշխանու-  
թյունը և Հոռոմների ունեցվածքները»: Մանթապարտի մեջ (ժան. 1, 3)  
տեղեկացնում է, որ «չորք աթոռք»-ներն են՝ Շիրակը (մայրաքաղաքը՝  
Անի), Վանանը (մայրաքաղաքը՝ Կարս), Հայկական Աղվանքը (մայրա-  
քաղաքը՝ Լոն), Վասպուրականը (մայրաքաղաքը՝ Վան):

Հայաստանում Բյուզանդիայի տիրույթները նա համարում է երկրի  
արևմտյան մասում եղած հողերը, որոնք սահմանազատված են  
հյուսիսից և արևելքից փոքրիկ թագավորություններով, իսկ Միջագետքի  
կողմից՝ Բաղդադի և Դիարբեքրի արաբ կամ բուրջ և այլ իշխանու-  
թյուններով:

Մ. Տեր-Պետրոսյանը թարգմանել է հետևյալ կերպ. «Հայաստանն  
ունեն թագավորության չորս աթոռներ, բացի Կյուրապաղատության իշ-  
խանութից, որը Հոռոմներից էր» (էջ 113): Օրմանյանը մի փոքր այլ  
բացատրություն է տվել («Ազգայատում», 1959, էջ 1252): Սակայն նա  
էլ թագավորության չորս աթոռները դնում է Վանում, Անիում, Կարսում  
և Գուգարքի մեջ: Մեզ թվում է՝ այդ չորս աթոռներից պետք է բացառել  
Լոռու թագավորությունը, որովհետև Լոռու Կյուրիկյան թագավորությունը  
կաստիվերցու ժամանակ գոյություն ուներ: Մինչդեռ հեղինակը մի քանի  
տող ներքև (էջ 98) գրել է այդ չորս աթոռների մասին. «Որ թագաւորացն  
աթոռք, ահա ոչ երևի(ն)»: Ինչպես հայտնի է, պատմիչը հիշատակել է,  
որ Հովհ.-Սմբատի եղբայր Աշոտին տրվում է առանձին տիրապետություն՝  
որ հայի ի վերայ Պարսից և Վրաց» (էջ  
27): Աշոտը բյուզանդական օգնական զորքով ընդարձակում է ժիր աշ-  
խարհի» սահմանները և բոլորից հզոր է դառնում (էջ 28): Եստ ճնա-  
րավոր է, որ կործանված թագավորական չորս աթոռներից մեկը այս  
Աշոտինը լինի: Պատահական չէ, որ այստեղ չի հաշվվում Սյունյաց Կա-  
պանի իշխանությունը, քանի որ այդ ժամանակ այն դոյատևում էր:

Անկասկած է, որ «Կյուրապաղատի իշխանություն» ասելով նա նկատի  
ունի Դավիթ Կյուրոպաղատին և նրա իշխանությունը Տայքում: Տարակու-  
սելին «և զոր ի Հոռոմոց» արտահայտությունն է: Անշուշտ, Կյուրոպա-  
ղատությունը Դավիթը ստացել էր Բյուզանդիայից, սակայն սա հիմք չի  
տալիս հատվածը թարգմանելու Տեր-Պետրոսյանցի պես: Կարող է այն  
բացատրվել է Պրյուդոմի պես (էջ 105, ժան. 3), սակայն հնարավոր են  
և այլ բացատրություններ: Կարող է խոսքը Բյուզանդիայի կողմից փո-  
խարինաբար տրված իշխանություններին է վերաբերում (Սեբաստիա,  
Մամեդավ և այլն): Կարող է խոսքը վերաբերի ապստամբած Վարդ  
Փոկասի դեմ Կյուրոպաղատին՝ օգնության համար Վասիլ 2-րդի տված  
զավառներին, որի մասին տեղեկացնում է Ասողիկը (էջ 192—93):

168. Բնագրում զրված է. «Ձառ ի սմանէ մանկունս է տեսանել, որ  
ի դրունս սորա բնակիտ ի ձեռս առեալ...» (էջ 99): Տեր-Պետրոսյանցը  
սխալմամբ «բնակիտ»-ը թարգմանել է բնակվել, որով աղավաղվել է  
ամբողջ հատվածը: «Բնակիտ»-ը (նույնն է՝ պնակիտ) ՆՃԲ-ն (հտ. Բ, էջ

656) բացատրում է, որ պեղակաձև տախտակ է, որի վրա գրում են, նկարում: Ըստ Աճառյանի (Արմատ. բառ., հտր. 6, էջ 1091) «պնակիտ»-ը այբուրեն սովորելու տախտակ է՝ բնակիտ ձևով կա չաստիվերցու Պատմությունում և Հայաստանի պատմությունում («Յայամ», ապր. 4):

169. Վարդապետ պատմիչը խոսքը ուղղում է հոգևորականներին, նրանց կոչելով եղբայրներ: Մեզանում վանքերը կոչվել են եղբայրանոցներ, իսկ կրոնավորները՝ եղբայրներ:

170. Զեռագրերի մեծ մասում գրված է. «Յագատրութիւն Քեղոսին, որ Յարգմանի աստուածո՛հի»: Քեղոսրան հաջորդել է Կոստանդին 9-րդ Մոնոմախին՝ վերջինիս մահից մեկ օր հետո՝ 1055 թ. հունվարի 12-ին: Քեղոսրան մահացել է 1056 թ. օգոստոսի 31-ին:

171. Այստեղ որոշ շափով կրկնվել է նախորդ գլխում (Ժէ) պատմված նյութը:

172. Միրանիս (Միրանիք կամ Միրանյաց) լեռը (այժմ՝ Կանդիլ) գտնվում է Հասանկալայի հյուսիսային կողմը: Ինճիճյանը այս լեռը նույնացրել է Հասանկալայի լեռան հետ («Ընախօսություն», Վենետիկ, 1835, էջ 98):

173. Միքայել VI, Բյուզանդիայի կայսր (1056—1057):

174. Բյուզանդական զորավար Կոմիանոսը (իմա՝ Իսահակ Կոմնեն) Փոքր Ասիայի խոշոր մագնատներից էր, որը գեոևե կայսրուհի Քեղոսրայի ժամանակ հանվում է իր պոստից: Միքայել 6-րդի դեմ զինվորականները ապստամբություն են բարձրացնում՝ որոշելով դահը հանձնել Իսահակ Կոմնենին: 1057 թ. հունիսի 8-ին Պափլագոնիայում նա հռչակվում է կայսր: Նիկիայի մոտ հակառակորդ ուժերի միջև տեղի է ունենում արյունալի մարտ, հաղթանակում է Կոմնենը: Մեպտեմբերի 1-ին նա հաղթականորեն մտնում է մայրաքաղաք:

175. Դիքտոնը (ինդիկտոն, ընդիկտոն) տասնհինգամյա տոմարական շրջան է, որի ընթացքում երեք անգամ հոտմայեցիք տուրք էին հավաքում նվաճված ժողովուրդներից: Այն սահմանվեց 313 թ.: Ենթադրվում է նաև, որ ինդիկտոնը սկսվել է մ. թ. 3 տարի առաջ, որից էլ՝ ինդիկտոն գտնելու հետևյալ կանոնը՝ մ. թ. գումարում ենք 3 և այն բաժանում 15-ի վրա: Քանորդը ցույց է տալիս, թե քանի այդպիսի շրջան է անցել, իսկ մնացորդը կլինի ինդիկտոնը: Ըստ կաստիվերցու այդ դեպքը եղել է հայոց 506 թ., հոտմեական դիքտոնի 10-ին: (506 + 551 (հայոց թ.) + 3 : 15 = 70: Մնացորդը՝ ինդիկտոնը, կլինի 10): Պատմիչի հաշվումները ճիշտ են: Հույների մոտ եղած երեք ձևի ինդիկտոններից հայերը միայն մեկն են վերցրել, որն սկսվում է սեպտեմբերի 1-ին (Պրյուզոմ, Պատմության ֆր. թարգմ., էջ 109, ծան. 2):

176. Իվանեն վրաց նշանավոր զորավար Լիպարիտ Լիպարիտյանի որդին է: Հոր գերեզմարտից հետո (ծան. 125, 127), Բագրատ 4-րդը նրան ճանաչում է հայրենի կալվածքների տեր: Իվանեն էրիթավաց էրիթավա՛ է դառնում 1059—74 թ.:

177. Տե՛ս ծան. 8:

178. Եղանց բերդը կամ Եղնուտը Տուրուբերանի Տարոն գավառում ամուր բերդ էր (տե՛ս Հովհ. Մամիկոնյան, Պատմութիւն Տարոնոյ, Երևան, 1941, էջ 189):

179. Այս քաղաքը Եկեղյաց գավառի հռչակավոր Երիզան է (Չամչյան, նշվ. աշխ., հտր. Բ, էջ 963): Տե՛ս ծան. 8:

180. Այս ատում է հայոց 506 (1057) թ. դեպքերը պատմելիս: Ուրեմն, 506 թ.—13=493 (1044) թ.: Նկատի ունի Բագրատունյաց երկու թագավորների՝ Աշոտի և Հովհ.—Սմբատի մահվանից հետո ընկած ժամանակը: 1045 թ. Բյուզանդիան գրավում է Անի, և այնուհետև դժբախտությունները հաջորդում են միմյանց:

181. Հայաստանի տարբեր գավառներում կային Բյուր անունով մի քանի գյուղեր ու ավաններ, ահա թե ինչու պատմիչի հիշատակած այս Բյուրս գյուղը երբեմն ցույց է տրվում մեկ այլ տեղ: Լաստիվերցին, սակայն, այս գյուղը միանգամայն որոշակի դնում է Կարին գավառում, որտեղ նույն անունով այն գոյատևում է մինչև նոր ժամանակները:

182. Չամչյանը (նշվ. աշխ., հտր. Բ, էջ 964) կարծել է, որ այս քաղաքը կոչվել է Հատավ կամ Հարավ: Ինչպես տեսանք նախորդ գլխում, Լաստիվերցին շեք նշել Եկեղյաց գավառի մի շատ նշանավոր քաղաքի՝ Երզնկայի անունը, որը նույնպես ավերում են այս բարբարոսները: Կարծում ենք, պատմիչը այդպիսի նշանավոր մի քաղաք էլ այստեղ նկատի ունի, որը անպարսպատ է եղել հռչակավոր Արծնի պես: Ուոհայեցու Պատմության ձեռագրերում այդ մասին երեք տարբեր ընթերցումներ կան՝ «Գհասավ, Գհարու, Գհատու»: Ըստ է. Դյուլորիեի (Chronique de Mathieu d'Edesse, Paris, 1858, էջ 107) այդ քաղաքը գտնվում է Մելիտինեի հարավում, իսկ ըստ Պրյուզոմի (էջ 177, ծան. 1), Եփրատի ձախ ափին է:

183. Տե՛ս ծան. 174:

184. Իմա՝ 1057 թ.:

185. Ըստ Աստվածաշնչի Մովսրը Ղովտի որդին էր, որի անունից էլ Մովսր տեղանունը և մովսրացիք:

186. Այս վշտաբեր տարին հայոց 506 (1057) թ. էր, իսկ արեղ ամսի մեկը համընկնում է այդ տարվա հոկտեմբերի 3-ին: Ըստ Ուոհայեցու (էջ 128) դեպքը եղել է հայոց 505 թ., հարձակվող հրոսակախումբը զիսավորում էր Դինար ամիրան:

187. Սկզբնապես այս կոչվել է Դարանաղի, որը Բարձր Հայքի 1-ին գավառն է, գտնվում է Եկեղյաց գավառի արևմտյան կողմում, Եփրատի՝ դեպի հարավ թեքվող հատվածում: Կամախը միաժամանակ բնակատեղի էր գետի ձախ ափին, աջ ափին գտնվող Անի ամրոցին կից:

188. Կողոնիան կամ Կոլոնիան (այժմ՝ Գեղիտ շայ) Գայլ գետի հովտում է, այդտեղ էր նաև համանուն քաղաքը, որը այժմ գյուղ է (Կուլի-հիսար):

189. Հարձակումը տեղի է ունենում 1057 թ. հոկտեմբերի սկզբին, գրավում են կատարում, 12 օր մնում Մելիտինեում, շարժվում են Եկեղյաց գավառից ներքև գտնվող բնակավայրերով: (Ըստ Ուոհայեցու (էջ

130) անցնում են Եփրատ գետը, ձմեռում Հանձեթում): Համարյա ամբողջ հողատեղերը զբաղված են լինում գրավումներով, մինչև հաջորդ նավասարդը (1058 թ. մարտի 7-ը նավասարդի մեկն է) իսկապես մնում է 125 օր, այն է՝ հինգ ամիս՝ հաշված հայկական ամիսներով: Այսպիսով, նրանք ձմեռում են 1057 թ. նոյեմբերից մինչև 1058 թ. մարտի սկիզբը, երբ դարձյալ ձյուն է եղել Խորձյան գավառում:

190. Սասունցի քաչերին գլխավորում էր Մուշեղ Մամիկոնյանի որդի Քոստիկը (մահ. 1075/78), որը Գրիգոր Մագիստրոսի փեսան էր: (Հմմտ. Ուռնայեցի, էջ 130): Այս ժամանակ անկախ էր Սասունի իշխանությունը, որի մեջ էր գտնվում նաև Տարոն գավառի մի մասը:

191. Ապահունիք գավառում է գտնվում Քոնդուրակ (Քոնդուրակ, Քոնտուրակ, Քոնդուրակ) գյուղը (այժմ՝ Քոնտարաս), որի անունով է կոչվել միջնադարի սոցիալական հզոր շարժումներից մեկը:

192. Նիկիա քաղաքում (ծան. 58) տեղի ունեցած եկեղեցական առաջին տիեզերական ժողովը (325 թ.) զատապարտում է Արիոս Ալեքսանդրացուն՝ Քրիստոսի անձի վերաբերյալ նրա ընդունած տեսակետի համար: Հնդունվում են 20 կանոններ (տե՛ս Կանոնագիրք հայոց, Երևան, 1964, էջ 114—130), որոնց ակնարկ է պատմիչը:

193. 428 թ. Կ. Պոլսի պատրիարք Նեստորը ժխտեց Մարիամի աստվածածին լինելը, առաջ քաշելով Քրիստոսի երկու տարբեր բնություն ունենալու հարցը՝ մարդ և աստված: Կյուրեղ Ալեքսանդրացու գլխավորությամբ 431 թ. Եփեսոսում գումարվեց եկեղեցական երրորդ տիեզերական ժողովը, որը բանադրեց Նեստորին, կարգալուծ՝ արեց նրան և արտորեց: Հալածվեցին նաև Նեստորի կողմնակիցները: Հայոց եկեղեցին նույնպես առաջնորդվեց այդ կանոններով:

194. Մծղենական կամ Մեսայան աղանդը ծագել է Ասորիքում կամ Միջագետքում: Այդ աղանդի հետևորդները մերժում էին եկեղեցական խորհուրդները, ժխտում մկրտությունը և հգնակեցությունը: Մծղենությունը Հայաստանում բորբոքվեց 5-րդ դ. կեսերին, որոնց համար 444 թ. Եսհապիվանի ժողովը ընդունում է ծանր պատիժներ: (Տե՛ս Կանոնագիրք հայոց, հտր. Ա, էջ 461—466): Մծղենական աղանդի սկզբունքները անցնում են պավլիկյաններին, իսկ նրանցից էլ՝ թոնդրակեցիներին: (Տե՛ս Ե. Տեղ-Միխայան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1958, էջ 73—85):

195. Տե՛ս ծան. 21:

196. Մուհարիկներ (Մուֆարիկներ, Մարտիրոսաց քաղաք, Նփրկերտ, Ֆարկին և այլն) մոտ 77 թ. (մ. թ. ա.) հիմնել է Տիգրան Մեծը՝ կոչելով իր անվամբ՝ Տիգրանակերտ: Սա Աղձնիքի Նփրկերտ գավառի գլխավոր քաղաքն էր: 7-րդ դարից այն նվաճում են արաբական ցեղերը, իսկ 10-րդից՝ քրդերը՝ Մրվանյանները: Քաղաքում գերակշիռ թիվ էին կազմում հայ և ասորի բնակիչները:

197. Հմմտ. Եղիշե, Վարդանանց պատմությունը, թարգմ. Ե. Տեղ-Միխայանի, Երևան, 1958, էջ 126:

144

198. Վերնագրից երևում է, որ Պատմության այս գլխում հիշատակված Երևնի բերդաքաղաքը, Կաշե և Աղյուսո գյուղերը, Պախրա (Գալլախազուտ) լեռը, Բազմադարյուր (Խաշ) բնակավայրը, Ջերմ գյուղաքաղաքը գտնվում են Մանանդի գավառի սահմանում:

199. Բնագրում՝ ջամուկ փոխանակ՝ ջատուկ: (Ճիշտ ընթերցումը տե՛ս նշք, հտր. Բ, էջ 671: Նորայր Բյուզանդացի, Հայկ. բառաքնն., էջ 19, Նախնիք, էջ 489):

200. Բնագրում (էջ 126) գրված է. «Առ սոսա գայր իշխանս այս յամենայն ամի ի պահս քառասնորդացն, և հանդիսակից լինէր նոցա մինչև յաւուրս մեծի պասեֆին...»: Մեծ պասեք ասելով նկատի ունի մեծ Ձատիկը, որը տոնվում է գարնան զիշերահավասարին հաջորդող լուսնի լրումից հետո: Քառասնորդաց կամ Մեծ պահքը նախորդում է Մեծ պասեքին՝ Ձատիկին:

201. Ինչպես Գրիգոր Նարեկացին, այնպես էլ լատիվներին սուր քրե-նագատել են թոնդրակեցիներին, որ նրանք իբրև թե խառնակեցությունը են զբաղվել, մի բան, որ հիմնավոր լինել չի կարող:

Այդ պարզ երևում է Պարեկացու՝ Կեավա վանքին ուղղած մի թղթից, որտեղ գրում է, որ թոնդրակեցիները մերժում էին եկեղեցական ամուսնությունն ու պսակը, ընդունում «սիրտ ազատությունը» («Գիրք թղթոց», էջ 499—500):

202. Հունարեն Պենտեկոստեն Հիսուսը կամ Հիսնիբյակ է նշանակում, մեզանում սուրբաբար օգտագործվում է Հիսուսը: Սա Հոգեգալատյան տոնն է, որը կատարվում է Մեծ պասեքից կամ Ձատիկից հետո: Սուրբաբար Ձատիկի կիրակին համարվում է նաև Հիսուսի առաջին կիրակին: Իսկ Ձատիկ և Հիսուսի՝ Պենտեկոստի ութերորդ օրը կոչվում է Կրկնագատիկ կամ Նոր կիրակի: Ահա թե ինչու լատիվներին Պենտեկոստի օրերից մեկը (այսպես պիտի հասկանալ) համարել է նոր կիրակի: (Հմմտ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1170): Այստեղ, ուրեմն, ընդօրինակողներից առաջացած սխալ լվա, ինչպես կարծել է Պատմության (առաջին) աշխարհաբար թարգմանիչ Տեղ-Պետրոսյանցը (էջ 159): Թերևս բնագրում պետք է «յաւուրս»-ի վրա ավելացնել հոգնակի հայցականի «ս» հոլովակերտը՝ յաւուրս («Մեծ Պենտեկոստի օրերում, կամ օրերին, օրերից մեկում...»): Չամյանը այս դեպքը գրել է 1005 թ. (նշվ. աշխ., հտր. Բ, էջ 891), Օրմանյանը՝ 1011 թ. ապրիլի 1-ին:

203. Աամվելը (հայրապետ, եպիսկոպոս, «գլուխ եպիսկոպոսացն») Մանանդի (ոչ թե Եկեղաց) (հմմտ. Աճառյան, Հայոց անձն. բառ., հտր. Դ, էջ 384) գավառի մեծ եպիսկոպոսն էր և ոչ թե կաթողիկոսը, ինչպես կարծվել է (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 357 ր):

204. Մանանդի գավառը գրավված էր Բյուզանդիայի կողմից, ահա թե ինչու բյուզանդական կայսրն է (հավանաբար՝ Վասիլ 2-րդը) ուղարկում Եղիա անունով դատավորին, կամ ժողովին ներկա է լինում հոռոմ եպիսկոպոս Եպիստատուր:

145

205. Մանանադի գետը (այժմ՝ Թուրքու շալ) Եփրատին է խառնվում Մանանադի և Եկեղյաց գավառների սահմանում, բավականին մոտ Գերշանին:

206. Եփրատի մյուս ափին, Եկեղյաց գավառի սահմանում գտնվում էր Կոթնի (այժմ՝ Քյութուր) ավանը:

207. Այժմ՝ Եփրատի արևմտյան ափին գտնվող Փիրիզ քաղաքի եպիսկոպոսարանը:

208. Հմմտ. Եղիշե, նշվ. աշխ., էջ 126:

209. Տե՛ս ծան. 121:

210. Պատմիչը հետազայում վկայում է, որ պարսից թագավոր կոչված թուրք-սելջուկյան սուլթան Ալի-Արսլանն էլ Անիի գրավման ժամանակի վերաբերյալ տարակարծություններ կան: Լաստիվերցին այն իրավացիորեն դնում է հայոց 503 (1064) թ., Ս. Անեցին՝ 504 թ. «ի տօնի տիրածօր աւուր երկուշարթոջ» (էջ 112), այսինքն՝ 1065 թ. օգոստոսի 16-ին, Ուսնայեցին՝ հայոց ՇԺԳ (1064) թ. (էջ 144, 146): Ըստ Գանձակեցու տեղեկության (էջ 86) թուրք-սելջուկները Անին գրավել են 27 օր պաշարելուց հետո:

211. Խոսքը Արաքսի վտակ Ախուրյանին է վերաբերում (հմմտ. Ուսնայեցի, էջ 147), որի աջ ափին գտնվում էր Անին:

212. Պատմության ձեռագրերի մեծ մասը այսօր (բնագրին կից կամ լուսանցքում) ունեն Վերկորդ Գալթի թուականն ՇԶԳ, երրորդ Գեորգի թին ՈԺ, ի ՈԶն թաթարն էտո ղԱնի և ղամենայն տիեզերս»: Պատմության հիմք ձեռագրերից մեկում (Մաշտոցի անվ. մատ., ձեռ. № 2865, էջ 306ա) հավելում կատարող նկատի է ունեցել Անիի գրավումները տարբեր ժամանակներում. վրաց թագավոր Գավթի 4-րդը (1039—1125) հայոց ՇԶԳ (1124) թ. գրավել է Անին, հայոց ՈԺ (1161) թ. վրաց թագավոր Գեորգի 3-րդը (1156—1184) վերցրել է Անին, իսկ հայոց ՈԶն (1236) թ. թաթար-մոնղոլները Չարմաղանի ղախվորությամբ արշավել են Հայաստան և Վրաստան, գրավել Անին, բնակչության մի զգալի մասին սրի քաշել: (Մանրամասները տե՛ս Երևանի պետհամալսարանի նշվ. հանդես, էջ 195—196):

213. Ռոմանոս 4-րդ Գիտզենես բյուզանդական կայսրը (1068—1071) 1068 թ. սելջուկների դեմ հաջող մարտեր է մղում Սիրիայում և Կապադովկիայում:

1070 թ. Ալի-Արսլանը արշավանք է ձեռնարկում դեպի Սիրիա և Հայաստան, գրավում անպաշտպան Մանազկերտը՝ լուծելով Տուղրիլի կրած պարտության վրեժը: Ռոմանոս կայսրը մեծ զորքանակով զալխ է արեվելք, ետ նվաճում Մանազկերտը: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում 1071 թ. օգոստոսի 19-ին, Մանազկերտի մոտ, ուր բյուզանդական բանակը խայտառակ պարտություն է կրում, Ռոմանոսը գերի է ընկնում, ազատվում է մեծ գումարի ռազմատուգանքով: Ըստ կնքված պայմանագրի՝ Բյուզանդիան սելջուկներին էր զիջում Մանազկերտը, Եղեսիան և այլ հողեր: Մինչև գերի կայսրի ազատվելը Կ. Պոլսում արգեն կայսր

էր հռչակված Միքայել է Գուկասը (1071—78): Ռոմանոսին կուրացնում են, իսկ Ալի-Արսլանի հետ կնքված պայմանագրերը չեղյալ հայտարարում: Ահա այս ամենի մասին է պատմում Լաստիվերցին Պատմության սույն գլխում:

214. Սա ցույց է տալիս, որ Լաստիվերցին չի ունեցել իր Պատմության մեկնեսարը:

215. Իմա՛ կոստանդին I (306—337):

216. «Աշխարհացույց»-ում Լուանի լեռը տեղադրված է Եթովպիայի հարավում:

Այստեղ խոսքը ներդոս գետի, Միջերկրական ծովի և Կ. Պոլսի մասին է:

217. Ըստ Պրյուդոմի (նշվ. աշխ., էջ 146, ծան. 1) Լաստիվերցին Հեղկաստան սահմել նկատի է ունեցել Հաբշտանը:

218. Լաստիվերցին շնայած չի տվել Տուղրիլի անունը, սակայն մինչև 1063 թ. պատերազմական զործողությունները, այդ թվում նաև Մանազկերտի անհաջող պաշարումը, վերագրել է սուլթանի կամ տանկաց սուլթանի, իսկ Անիի գրավումը (1064) ղեկավարել է պարսից թագավորը, որի անունը (Ալի-Արսլան) պատմիչը տվել է Մանազկերտի (1071) ճակատամարտի կապակցությամբ: Այսպեսով, նա բնագրում զանազանել է երկու անձնավորություն՝ «Սուլտան տանկաց» և «Մագաուրն պարսից» կամ «թագաուրն պարսից Ալրասլան»: Իսկ թե ինչու է այս հատվածում Տուղրիլի կողմից Մանազկերտի անհաջող պաշարումը (1054) վերագրվում Ալի-Արսլանին, մեզ համար անբացատրելի է:

219. Տե՛ս ծան. 81, 82:

220. Տե՛ս ծան. 126:

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաս—58:  
 Աբիսողոմ—28:  
 Ագազ—32:  
 Ախնի—92:  
 Ահարոն—51, 52, 66:  
 Աղյուսո—94:  
 Աղորի—2, 74:  
 Աղվանք—91:  
 Ամովս—40:  
 Անանիա—38:  
 Անանիաս—25:  
 Անդրեաս—92:  
 Անդրոնիկ—13:  
 Անի—6, 32, 35, 36, 37, 53, 66, 75, 98, 99, 100, 105:  
 Անտիոք—19, 23, 102:  
 Աշոտ [Գագիկ 1-ինի որդի]—6, 30, 32, 66:  
 Աշոտ [3-րդ]—5:  
 Ապահունիք—25, 55, 91:  
 Ապուսուար—37, 65:  
 Ասիտ—37:  
 Ասորեստան—3:  
 Ավան—տե՛ս Ահարոն:  
 Ավնիկ—60:  
 Ատոմ—53:  
 Արծանի—66:  
 Արծակ—24:  
 Արծկե—64:  
 Արծն—37, 46, 51, 55, 77, 99:

Արծրունյաց զավատ, Արծրունյաց աշխարհ—16, 23:  
 Արճեշ—18, 55:  
 Արշարունիք—41:  
 Արսուրան—59:  
 Ափյազ— տե՛ս Գեորգ 1-ին:  
 Ափյազնեք—3, 4, 6, 8, 25, 36, 56:

Բ

Բարեւոն, Բարեւացվոց աշխարհ—11, 56, 65, 71:  
 Բարեբրդ—58:  
 Բագարատ [3-րդ]—3, 4:  
 Բագարատ [4-րդ]—36:  
 Բագրատունիք—5:  
 Բաղրեանդ—3:  
 Բազմադրյուր—94:  
 Բաղասմ—61:  
 Բաղակ—61:  
 Բասեն—7, 10, 12, 38, 41, 51, 60, 71:  
 Բարսեղ—23:  
 Բերկրի—23, 55:  
 Բզնունյաց ծով—64:  
 Բլուրս—77:  
 Բլուսնիա—102:  
 Բուլղարաց աշխարհ, Բուլղարաց թագավորութուն—3, 4, 23, 51:  
 Բուլղարաց բռնակալ—4:  
 Բուլղարի որդի—տե՛ս Ահարոն:  
 Բշնի—36:

Գ

Գագիկ [Աբասի որդի]—58—59:  
 Գագիկ [1-ին]—5:  
 Գագիկ [2-րդ]—32, 35, 36, 37:  
 Գալլախաղուս—տե՛ս Պախրա:  
 Գանձակ—65:  
 Գեղքու—45:  
 Գեորգ [1-ին]—4, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 18:  
 Գորդիաթ—52, 63:  
 Գորգեն [Աշոտ 3-րդի որդի]—5:  
 Գորգեն [Բագարատ 3-րդի հայրը]—3, 13:  
 Գրիգոր—տե՛ս Լուսավորիչ:  
 Գրիգոր [Մագիստրոս]—36, 51, 85:  
 Գրիգոր [Նարեկացի]—5:

Դ

Դամասկոս—99:  
 Դանիել [մարգարե]—22, 70:  
 Դավիթ [Արծրունի]—տե՛ս Սենեքերիմ [Արծրունի]:  
 Դավիթ Դվնեցի—36:  
 Դավիթ Կուրապաղատ—2, 4, 11, 13, 15:  
 Դավիթ [մարգարե]—2, 17, 20, 28, 29, 35, 46, 49, 51, 52, 63, 66, 68, 72, 81, 90, 96, 99:  
 Դավիթ [Սենեքերիմի որդի]—37:  
 Դեմեստիկոս—23, 26:  
 Դերջան—58:  
 Դիոգենես թագավոր—101:  
 Դու—60:  
 Դվին—37, 65:

Ե

Եզրիպոս—16, 51, 81:  
 Եղեբ—99:  
 Եզկիա—52:  
 Եզեկիել—67, 83, 87:

Եկեղյաց զավատ—2, 7, 25, 58, 76, 84, 95:  
 Եղանց բերդ—74:  
 Եղիա [դատավոր]—95:  
 Եղիա [մարգարե]—45, 61, 88, 107:  
 Եղիսե—107:  
 Եղնուտ—75, 85:  
 Ենովթ [վարդապետ]—5:  
 Եպիստոստ—97:  
 Եսայի—90:  
 Եսայի [մարգարե]—3, 30, 46, 47, 48, 51, 57, 69:  
 Եվսերիոս—25:  
 Երեմիա [մարգարե]—8, 34, 41, 46, 57, 69, 74, 90:  
 Երիզա—74:  
 Երիթով—95, 98:  
 Երկրորդ Հայք—54:  
 Երուսաղեմ—25, 35, 46, 48, 49, 69:  
 Եփրատ—77, 95, 96:

Չ

Չաքարիա եպիսկոպոս—13, 14:  
 Չոյի—19:

Ր

Րոստ—8:  
 Րոուղբ—2:

Ք

Քաթուլ [վանանդեցի]—59:  
 Քեոզոս [կալսը]—27:  
 Քեոզոս [Սամվելի եղբորորդի]—96:  
 Քեոզորա—26, 65, 70:  
 Քեոզորոս [Ահարոնի որդի]—66:  
 Քեոզուպոլիս—7, 102:  
 Քեսաղունիկե—23:  
 Քոնդրակ—91:  
 Քոնդրակեցիներ—86:  
 Քուրքեստան—38, 66, 81, 82:

Ի

Իսրայել—14, 24, 28, 29, 30, 45, 52, 67, 83, 107:  
Իվանն [Լիպարիտի որդի]—74, 75:

Լ

Լիրանան—99:  
Լիպարիտ—52, 53, 74:  
Լուսավորիչ—5, 35, 54, 68, 87, 90:  
Լուսնալեռներ—104:

Խ

Խաղտյաց գավառ—7, 9, 41, 58, 75:  
Խաղտո Առիճ—13, 38:  
Խաչ—94:  
Խաչիկ [կաթողիկոս]—38, 53, 54:  
Խլաթի գավառ—66:  
Խլաթի լեռ—91:  
Խորձյան—41, 57, 79, 85:  
Խոր Վիրապ—68, 87:  
Խորիկ—24:  
Խրթի—75:

Մ

Միրանիս—71:  
Սոավիզ [Նիկեփոր Փոկաս]—11:

Կ

Կամախ—83:  
Կամարա—92:  
Կամենաս—37, 51, 72:  
Կամրջաձորի վանք—5:  
Կաշե—94:  
Կավասիլաս—24:  
Կարին—38, 60, 75:  
Կարին [գավառ]—7, 13, 37, 41, 77, 90:  
Կարմիր ծով—82:

Կարմիր Փորակ—7:  
Կարս—54:  
Կիրակոս Երեց—31:  
Կոթեր—96:  
Կողոնիա—84:  
Կոմիանոս [կայսր]—72, 80:  
Կոմիանոս [Վասսուրականի վերակացու]—17:  
Կովկաս—56:  
Կոստանդիանոս Մեծ—101:  
Կոստանդին Մոնոմախ—27, 30, 64, 70:  
Կոստանդին [8-րդ], Կոստանդիանոս [8-րդ]—17, 18, 19, 31, 65:  
Կոստանդնուպոլիս—12, 14, 16, 18, 20, 23, 38, 53, 54, 65, 91:  
Կունծիկ—91, 92:

Հ

Հարել—87:  
Հալպ—19:  
Հակոբ [առաքյալ]—87:  
Հակոբոս Կպիսկոպոս—86:  
Հայել—63:  
Հայոց աշխարհ, Հայաստան—1, 5, 15, 21, 25, 30, 31, 32, 33, 35, 37, 41, 51, 53, 54, 65, 66, 67:  
Հանձեթ—57, 79:  
Հաշտենից գավառ—41, 74:  
Հավաճիչ—2, 74—75:  
Հարթ—15, 25, 66, 86:  
Հեղարել—45, 47:  
Հեսու—95, 103:  
Հեր—15, 102:  
Հերմոն—45:  
Հերովդես—97:  
Հինձք—5:  
Հնդկաստան—104:  
Հոր—9:  
Հողոփեռներ—63:

Ղ

Ղազարոս—83:

Ճ

Ճանեթ—56, 75:  
Ճորթիս—58:

Մ

Մազդատ—11:  
Մահճեղ—68:  
Մանազկերտ—56, 59, 60, 64, 105:  
Մանազկերտ [գավառ]—3, 102:  
Մանանադի—25, 43, 76, 79, 91:  
Մանանադի [գետ]—95:  
Մանկան Գոմ—66:  
Մանյակ—21:  
Մանյակ [որդի]—27, 29:  
Մարիամ—96:  
Մելիտինե—36, 81, 84:  
Միխայել [4-րդ Պափլագոնացի]—22, 23, 25, 32:  
Միխայել [6-րդ]—72, 80:

Միջագետք—36, 79:  
Մովսր—82:  
Մովրացիներ—14:  
Մովսես—16, 29, 45, 47, 63, 81, 83, 92:  
Մորմրյանս—85:  
Մուհարկին—91:

Ն

Նարովթ—47:  
Ներքին բերդ—100:  
Նիկիական կանոններ—89:  
Նիկիտ—18:

Շ

Շատիկ—6:  
Շիրակ—32:  
Շիրնի—91:  
Շղիա—13, 14:

Ո

Ովգ—63:

ՈՒ

Ուխտյաց քաղաք, ավան—3, 4, 7:  
Ուռնա—20, 21:

Պ

Պախրա—94:  
Պաղակացիս—8:  
Պարխար—56:  
Պարսկաստան—6, 13, 15, 18, 24, 34, 40, 66, 74, 75, 81, 83, 104, 105:  
Պետրոս [առաքյալ]—35, 88:  
Պետրոս [Գետաղարձ]—7, 9, 10, 35, 36, 37, 53, 54:  
Պիղատոս—40:  
Պողոս [առաքյալ]—29, 81, 94:  
Պոնտոս—9, 10:

Ջ

Ջերմա—95:

Թ

Թշտունյաց երկիր—102:  
Թորովամ—72:  
Թոմանոս—19, 21, 22, 23:

Ո

Օալամա—21:  
Օալքորա—12—13, 14:  
Օամարիա—107:  
Օամուսատ—21, 36:  
Օամսոն, Օամփսոն—21, 36, 88:  
Օամվել հայրապետ—95, 96:  
Օամվել վարդապետ—5:  
Օանասունք—85:  
Օառա—67:  
Օավուդ—28, 32—33, 52:  
Օարզիս վարդապետ—5:  
Օարզիս [Վեստ]—32, 36:  
Օարզիս [Օարզիս Ա Սևանցի]—  
5, 7, 10:  
Օերաստիա, Օերաստուպուլիս—  
12, 53:  
Օելովմ—3:  
Օենեքերիմ Արծրունի—12, 37,  
53:  
Օիմ լեռ— 56, 85:  
Օիմովն—18:  
Օինա—45:  
Օիովն—34, 48:  
Օիսակա տուն—41:  
Օիսար—63:  
Օմբատ [2-րդ]—5:  
Օմբատի լեռ, Օմբատաբերդ—38,  
43, 45, 46:  
Օոդոմ—49:  
Օոդոմոն—17, 64, 98, 99:  
Օուլթան [Տուրքի]—55, 59, 60,  
61, 63, 64, 65, 70:

Օուրր Գրիգոր [Եկեղեցի]—86:  
Օուրր Կարապետ [վանք]—85:  
Օուրր Նշան [վանք]—53:  
Օուրմադի—32:  
Օպեր—41:  
Օտեփանոս Տարնացի Աստղիկ—  
—5:  
Օևանա կղզի—5:  
Օև լեռ—19:  
Օև քար—38:

Վ

Վահրամ [Պահլավունի]—32,  
36, 37:  
Վաղարշակերտ— 7, 13:  
Վաղարշավան—38:  
Վան—102:  
Վանանդ—7, 58:  
Վասակ [Պահլավունի]—36, 85:  
Վասիլ [2-րդ]—2, 4, 12, 15, 17,  
18, 19, 65:  
Վասիլ իշխան—64:  
Վասպուրական—12, 18, 24, 38,  
51:  
Վարդ Սիկլարոս, Սկլերոս—11:  
Վրաստան, Վրաց գավառ, Վրաց  
աշխարհ—6, 7, 18, 34:  
Վրվեռ—92, 93, 95, 97:

Տ

Տարել—3:  
Տաճկաստան—23:  
Տալան—51:  
Տալթ, Տալոց աշխարհ—2, 3, 4,  
8, 10, 41, 58:  
Տարնտա—54:  
Տարոն—41, 66, 85:  
Տիրանուն [վարդապետ]—5:  
Տվարածատափ—60:

Քորեք—45:

Քրիստոս, Հիսուս—10, 25, 29,  
47, 50, 51, 58, 59, 69, 81, 86,  
88, 94:

Ք

Քարեք—63:  
Քաղկեդոն—20:  
Քրիստոս—61:

Փ

Փկոմի—7, 71:  
Փոքանորոս—23:  
Փվկիանոս ձով—104:

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան—Գուրգեն Մանուկյան . . . . .	III
Գլուխ Ա.— Հայոց աշխարհում կատարված անցուղարձերը . . . . .	1
Գլուխ Բ.— Հայոց թագավորության մասին . . . . .	5
Գլուխ Գ.— Թե ինչպես թագավորը երկրորդ անգամ արշավեց Տայոց աշխարհի վրա, որի ժամանակ պարտվեցին վրաց զորքերը . . . . .	10
Գլուխ Դ.— Շղփալում եղած վերջին պատերազմի մասին . . . . .	13
Գլուխ Ե.— Կոստանդինի թագավորությունը . . . . .	17
Գլուխ Զ.— Թե ինչպես թագավորեց Ռոմանոսը . . . . .	19
Գլուխ Է.— Ուոհա քաղաքի առումը . . . . .	20
Գլուխ Ը.— Ռոմանոսի մահը . . . . .	22
Գլուխ Թ.— Միխայելի թագավորությունը . . . . .	22
Գլուխ ժ.— Թեոդոսի որդի Մոնոմախ կոչված Կոստանդինի թագավորությունը . . . . .	27
Գլուխ ժԱ.— Այն կոտորածի մասին, որ եղավ Բասենի գավառում և Սմբատի կոչված լեռան վրա . . . . .	38
Գլուխ ժԲ.— Արծնի անողորմ կոտորածի մասին . . . . .	46
Գլուխ ժԳ.— Այն մեծ պատերազմի մասին, որ եղավ Բասենի դաշտում, որտեղ հուռմանը պարտվեցին . . . . .	51
Գլուխ ժԴ.— Թե որչափ մնաց Պետրոս հայրապետը Կոստանդնուպոլսում կամ ինչպես վերադարձավ . . . . .	53
Գլուխ ժԵ.— Թե ինչպես շարաշար պատժվեց այն հղփացած քաղաքը, որ Կարս է կոչվում . . . . .	54
Գլուխ ժԶ.— Սուլթանի գալու մասին . . . . .	55
Գլուխ ժԷ.— Մոնոմախի թագավորության վերջը . . . . .	64
Գլուխ ժԸ.— Թեոդորայի (որը թարգմանվում է Աստվածատուր) թագավորությունը . . . . .	70
Գլուխ ժԹ.— Միջագետքի ու նրանում եղած քաղաքների ավերման ու անչափ կոտորածի մասին . . . . .	79

Գլուխ Ի.— Կոմիանոսի թագավորությունը . . . . .	80
Գլուխ ԻԱ.— Մելիտինե վաճառաշահ քաղաքի կործանումը . . . . .	81
Գլուխ ԻԲ.— Թոնդրակեցիների շար աղանդի մասին, որը երևաց Հարթ գավառում և մոլորեցրեց շատերին . . . . .	86
Գլուխ ԻԳ.— Թե ինչպես բորբոքվեց այն մոլորության հրդեհը նաև Մանանդիի սահմաններում . . . . .	91
Գլուխ ԻԴ.— Տիեզերահաղակ Անի քաղաքի սրով խողխողման մասին . . . . .	98
Գլուխ ԻԵ.— Հունաց թագավորի մասին, որ ձերբակալվեց պարսից թագավորի կողմից . . . . .	101
Սույն գրքի եիջատակալեանը . . . . .	105
Մանրագրություններ . . . . .	110
Հատուկ անունների ցանկ . . . . .	148



ԱՐԻՍՏԱԿԵՆ ԼԱՍՏԻՎԵՐԳԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



Հրատ. խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան  
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Ա.Ն. Վ. Գասպարյան  
Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան  
Վերատուգող սրբագրիչ՝ Չ. Կ. Աղասյան

Հանձնված է շարվածքի 15/VII 1971 թ.:  
Ստորագրված է տպագրության 17/I 1972 թ.:  
Քուղթ տպագրական № 1, 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>, տպագ.  
4,87 մամ. = 8,19 պայմ. մամ., հրատ. 8,4 մամ.:  
ՎՖ 07604: Պատվեր 161: Տպարանակ 20 000:  
Գինը՝ 77 կ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9,  
Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետս-  
կան կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության  
վարչության № 1 տպարան, Երևան,  
Ալավերդյան № 65: